

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ГОРИСА
ЦЕНТР АРМЯНСКИХ ИССЛЕДОВАНИЙ СЮНИКА

THE MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF RA
GORIS STATE UNIVERSTIY
SYUNIK CENTRE OF ARMENIAN STUDIES



ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔ
2016, թիվ 1

СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
АРМЯНОВЕДЕНИЕ
СЮНИК
2016, N 1

COMPILATION OF SCIENTIFIC ARTICLES
ARMENIAN STUDIES
SYUNIK
2016, N 1



Երևան • Երևան • Yerevan
ՆՈՐ ՏՊԱԳՐԻՉ • NEW PRINTER • НОВЫЙ ПРИНТЕР
2016

ՀՏԴ 94 (475,25):80:391/395(=19)
ԳՄԴ 63.3(5Հ)+80+63.5(5Հ)
Գ602

Հայագիտություն. Սյունիք գիտական նյութերի ժողովածուի հիմնադիրն է «Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ծրագիրը: Տպագրված է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրով:

Երաշխավորվել է տպագրության Գորիսի պետական համալսարանի Գիտական խորհրդի 27.12. 2016թ. թիվ 9 նիստի որոշմամբ:

Գլխավոր խմբագիր՝ Բ.Գ.Թ., դոցենտ **Քումունց Մ.Ս.**

Գիտական նյութերի ժողովածու:

Գ 602 Հայագիտություն: Սյունիք, 2016, թիվ 1.-Եր.: Նոր Տպագրիչ, 2016.- 281 էջ:

ՀՏԴ 94 (475,25):80:391/395(=19)
ԳՄԴ 63.3(5Հ)+80+63.5(5Հ)

ISBN 978-9939-9147-5-6

© Հայագիտություն. Սյունիք
©Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Երևան, 2016

Գիտական խորհուրդ՝

Նախագահ՝ Ա. Ղուկասյան՝ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳՊՀ-ի ռեկտոր, **անդամներ՝** Մ. Քումունց՝ Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ /Գորիսի պետական համալսարան/, Է. Մկրտչյան՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /Հայկական պետական մանկավարժական համալսարան/, Լ. Ներսիսյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ /Գորիսի պետական համալսարան/, Հ. Մարտիրոսյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու (Լեյդեն, Վիեննա), Հ. Մուսայելյան՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /Արցախի պետական համալսարան/, Ա. Ղուլյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ /ԼՂՀ Կրթության, գիտության և սպորտի նախարարություն/, Օ. Խնկիկյան՝ պատմական գիտությունների դոկտոր /ՀՀ ԳԱԱ Ազգագրության ինստիտուտ/, Գ. Գրիգորյան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /ՀՀ ԳԱԱ Ազգագրության ինստիտուտ/, Գ. Ստեփանյան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ/, Վ. Բալայան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /Արցախի պետական համալսարան/, Ա. Մաղալյան՝ պատմական գիտությունների թեկնածու /ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ/, Հ. Գևորգյան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան/, Մ. Թելունց՝ պատմական գիտությունների թեկնածու /Գորիսի պետական համալսարան/, Ս. Հախվերդյան՝ դոցենտ /Գորիսի պետական համալսարան/, Ա. Հակոբյան՝ պատմական գիտությունների դոկտոր /ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ/:

Խմբագրական խորհուրդ՝

Լ. Ներսիսյան, Ա. Գրիգորյան, Հ. Քումունց, Ի. Մարգարյան

Բովանդակություն • Содержание • Contents

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ • ЛИНГВИСТИКА • LINGUISTICS

<p>Հրաչ Մարտիրոսյան (Վիեննա) ՀԱՅԵՐԵՆ ԸՍՆԴԱՐԻ «ՍՈՍԻ» ԲԱՌԸ Грaч Мaртирoсян /Виенн/ Армянское слово «Чандари» /соси/ Hrach Martirosyan (Wien) Armenian <i>čandari</i> 'plane tree'</p>	8
<p>Հրաչ Մարտիրոսյան (Վիեննա) ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Грaч Мaртирoсян /Виенн/ Этимология диалектов Сюник и Арцах Hrach Martirosyan (Wien) Etymological studies in the dialects of Syunik' and Arc'ax:</p>	26
<p>Սիեր Քումունց (Գորիս) ԶԱՆԳԵԶՈՒՐ ՏԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ Мгер Кумунц (Горис) Вокруг этимологии наименования Зангезур Mher Kumunts (Goris) Around the etymology of the name Zangezur</p>	40
<p>Սիեր Քումունց (Գորիս) ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՆՇՈՂ ԳՐԱԲԱՐՅԱՆ ՇԵՐՏԻ ԲԱՌԵՐԸ ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ Мгер Кумунц (Горис) Слова габара, обозначающие явления физического мира, в диалектах Сюника и Арцаха Mher Kumunts (Goris) Grabar words pointing to physical world in Syunik-Artsakh dialects</p>	59
<p>Լուսինե Ներսիսյան (Գորիս) ԳՐԱԲԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ԹԱԳՈՒԷԻՆ ՀԱՅՈՑ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ Лусине Нерсисян (Горис) Лексика габара в исторической повести «Царица армянская» С. Ханзадяна Lusine Nersisyan (Goris) Grabar expressions in S. Khanzadyan's "Queen of Armenians" historic novel</p>	73
<p>Ինգա Մարգարյան (Գորիս) ԶԵՒԱԲԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԴԵՐԸ Ս.ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ Инга Маргарян (Горис) Лингвостлический роль морфологических реалий в прозе С. Ханзадяна Inga Margaryan (Goris)</p>	83

The linguistic-stylistic role of morphological facts in S. Khanzadyan's prose	
<p>Էդիտա Կարապետյան (Գորիս) ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ՏՈՒՐ ԶԵՆՔՂ, ԿՅԱՆՔ» ՎԵՊՈՒՄ</p> <p>Эдита Карапетян (Горис) Смысловое-стилистическое значение фразеологизмов в романе Сурена Айвазяна «Дай руку, жизнь!»</p> <p>Edita Karapetyan (Goris) Notional and stylistic meaning of phraseological units in Suren Ayvazyan's novel "Give your hand, life!"</p>	90
<p>Հասմիկ Գրիգորյան (Կապան) ՄԻՎԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆԻ «ԻՆՉ ԲԱՅԱԿԱ ՉԴՆԵՔ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ</p> <p>Асмик Григорян (Капан) Односоставные предложения в сборнике стихов Амо Сагияна "Не считайте меня отсутствующим! "</p> <p>Hasmik Grigoryan (Kapan) One_member sentences in Hamo Sahyan's collection of poems " Don't mark me absent "</p>	99

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ • ЛИТЕРАТУРА • LITERATURE

<p>Ռիմա Ստեփանյան (Գորիս) ՄԻՖԱԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ՀՈՐՄ ՀԵՏ ԵՒ ԱՌԱՆՑ ՀՈՐՄ» ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԻՊԱԿՈՒՄ</p> <p>Рима Степанян (Горис) Применение мифа в автобиографической повести С. Ханзадяна «С моим отцом и без него»</p> <p>Rima Stepanyan (Goris) The use of myth in "With my father and without my father" autobiographical novelette of S. Khanzadyan</p>	109
---	-----

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ • ФОЛЬКЛОР • FOLKLORE

<p>Լուսինե Ներսիսյան (Գորիս) ԳՈՐԻՍԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>Лусине Нерсисян (Горис) Фольклор Гориса</p> <p>Lusine Nersisyan (Goris) Goris folklore</p>	126
<p>Սոնա Ալավերդյան (Գորիս) ԴԵՒԻ ՀՈՒՍԱՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ԳՈՐԻՍՈՒՄ ԳՐԻ ԱՌՆՎԱԾ ԵՐԿՈՒ ՀԵՔԻԱԹՈՒՄ</p>	138

<p>Տոնա Ալաւերձյան (Գորիս) Гуманистические аспекты демона в двух сказках написанных в Горисе Sona Alaverdyan (Goris) The demon's humanistic aspects written in two tales in Goris</p>	
--	--

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ • ИСТОРИЯ • HISTORY

<p>Համլետ Գևորգյան (Երևան) Էջեր ՋԱՆԳԵԶՈՒԻԴՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ. 1906թ. Гамлет Геворгян (Ереван) Страницы зангезурских сражений! 1906г. Hamlet Gevorgyan (Yerevan) Pages of Zangezur battles, 1906y.</p>	145
--	------------

<p>Մալիկ Թելունց (Գորիս) ՍՅՈՒՆԻՆՔԻ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1722-1730թթ. ԵՎ ԴԱՎԻԹ ԲԵՎԸ՝ ՈՐՊԵՍ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ (ԴԱՎԻԹ ԲԵՎԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՆՆԴԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ) Телунц Малик (Горис) Освободительное движение Сюника и Арцаха в 1722-1730-годах и Давид Бек как предводитель освободительного движения (о личности и месте рождения Давид Бега) Malik Telunts (Goris) The liberating movement of Syunik region and Artsakh in 1722 -1730 and Davit Bek as a leader of the liberating movement (about Davit Bek and his place of birth)</p>	168
---	------------

<p>Գրիշա Սմբատյան (Կապան) ԴՐՎԱԳՆԵՐ ԿԱՊԱՆՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ Гриша Смбатян (Капан) Эпизоды из истории школы Капана Grisha Smbatyan (Kapan) Extracts from Kapan schools history</p>	178
---	------------

<p>Ժիրայր Միրումյան (Գորիս) ՍՅՈՒՆՅԱՅ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՄԻՆՉԵՒ 5-ԸՂ ԴԱՐԻ ՎԵՐՋԸ Жирайр Мирумян (Goris) Сюникский княжеский дом до 6-го века Jirayr Mirumyan (Goris) The princely house of Syunik till 6th century</p>	203
---	------------

<p>Հրայր Պետրոսյան, Մհեր Քումունց (Գորիս) ՏԱԹԵՒԻ ՋՐԱՆՑՔԻ ԵՒ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱՏ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ Грайр Петросян, Мгер Кумунц (Goris) О Татевском канале и нескольких явлениях, связанных с ним Hrayr Petrosyan, Mher Kumunts (Goris) On Tatev canal and some matters regarding to it</p>	222
--	------------

<p>Չոհրաբ Շոռոյան (ԼՂՀ, Բերձոր)</p>	
--	--

<p>ՀԱՍՄԱՌՈՏ ԱՎԼԱԴԿ ՀՈՉԱՆՑ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՑ</p> <p>Յօրաբ ԲԿոյան (Берцор, НКР) Краткий обзор из истории села Очанц Zohrab Erkoyan (Bercor, NK) A brief overview from the history of Hochants village</p>	234
<p>Սերգեյ Հախվերդյան (Գորիս) ԳՈՐԻՍԻ ՀԻՆ ՏՆԵՐԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԸ</p> <p>Сергей Ахвердян (Горис) Ворота старых домов Гориса Sergey Hakhverdyan (Goris) The gates of the old houses of Goris town</p>	240
<p>Աշոտ Միմոնյան (Վայոց Ձոր) ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԸ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ</p> <p>Ашот Симонян (Вайоц Дзор) Гарегин Нждех в Вайоц Дзоре Ashot Simonyan (Vayots Tsor) Garegin Njdeh in Vayots Dzor</p>	248

ՄԵԹՈԴԻԿԱ • МЕТОДИКА • METHODOLOGY

<p>Սուսաննա Գրիգորյան (Գորիս) «ՍՊԻՏԱԿ ԳԱՌԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ</p> <p>Сусанна Григорян (Горис) Изучение рассказа „Белый ягненок “ Susanna Grigoryan (Goris) The study of the story “White Lamb”</p>	272
--	-----



Հրաչ Մարտիրոսյան
(Լեյդեն / Վիեննա)

hrch.martirosyan@gmail.com

Հայերեն *ճանդարի*-ի բառի հիմնական իմաստն է՝ ‘սոսի, չինար’։ Այն վկայված է Եղիշեին վերագրվող «Արարածոց մեկնութիւն» երկում, որը մեզ է հասել գանձակեցի Վարդան Արևելցու երկում մեջբերված հատվածների տեսքով։ Այս բառի ևս երկու վկայություն է մեզ հասել Հայաստանի արևելյան շրջաններից՝ Կիրակոս Գանձակեցի (13-րդ դար) և Զաքարիա Սարկավագ Քանաքեռցի (17-րդ դար)։ Հատկապես կարևոր է Գանձակեցու «Հայոց պատմության» 21-րդ գլխում առկա վկայությունը, որտեղ *ճանդարի*-ն հիշատակվում է որպես *սոսի* ծառանվան (տեղական) համարժեք։ *ճանդարի* բառի իրանական ծագումն ակնհայտ է, թեև ստուգաբանական մանրամասները պարզ չեն։ Ղարաբաղի բարբառի *տընջըրի*/է բառը, որ նշանակում է ‘սոսի’ ու ‘բարդի’ և վկայված է «Բառգիրք հայոց» կոչված ուշմիջնադարյան բառարանում, ծագում է *ճանդարի* ձևից՝ դրափոխությամբ։ *ճանդարի* > **ճընդըրի*՝ > *տընջըրի*՝ / *տընջըրէ*՝ Գանձակեցու, «Բառգիրք հայոց»-ի և Ղարաբաղի բարբառի տվյալները միասին վկայում են Արցախի տարածքում այս բառի առկայությունն ու շարունակական զարգացումը և ցույց են տալիս, որ նշված դրափոխությունը տեղի է ունեցել 13-ից մինչև 16-17-րդ դարերն ընկած ժամանակահատվածում։

1. Վկայակոչումներ

Ա. Եղիշեին վերագրվող «Արարածոց մեկնութիւն» երկը մեզ է հասել գանձակեցի Վարդան Արևելցու երկում մեջբերված հատվածների տեսքով։ Այստեղ *ճանդարի*-ն նույնացվում է սոսի ծառին.

¹ Այս հոդվածը որոշ կրճատումներով թարգմանված է հետևյալ աշխատանքից՝ Կ. Martirosyan, Armenian *čandari* ‘plane tree’. In: *Iran and the Caucasus* 18.1, 2014, 51-63: Անգլերենից թարգմանեցին Զարուհի Գրիգորյանը և հեղինակը՝ Հրաչ Մարտիրոսյանը։

ասուսի, գոր ջանդարի (var. *ճանդարի*) *ասեն* (ՄեկնԱրար 2003, 852):

Բ. Չաքարիա Սարկավագ Քանաքեոցու (17-րդ դար, Երևանի և Աշտարակի շրջաններ) երկում երկիցս գործածված է *ճանտարի* ձևը՝ որպես *ջինար*-ի (սոսու) հոմանիշ (ՀԱԲ 3, 183-4):

Գ. Կիրակոս Գանձակեցու (13-րդ դար, Գանձակ) «Հայոց պատմության» 21-րդ գլխում *ճանդարի* բառը հիշատակվում է Գանձակի ավերմանը նախորդած մարգարեական ահազդու տեսիլքի նկարագրության մեջ (Մելիք-Օհանջանյան 1961, 235-236)։

Այս քաղաքս բազմամբոխ լցեալ պարսկօք, այլ սակաւ և քրիստոնէիւք. յոյժ թշնամի էր սա Քրիստոսի և երկրպագուաց նորա, անարգիչ և հայհոյիչ խաչի և եկեղեցւոյ, այպանիչ և նախատիչ քահանայից և պաշտօնէից: Վասն որոյ իբրև լցաւ չափ մեղաց նոցա, էլ աղաղակ չարութեան նոցա առ տէր. երևեցան յառաջագոյն նշանք աւերման նորա, որպէս ի վերայ Երուսաղէմի յառաջ քան զաւեր նորա, նոյնպէս և յայսմ քաղաքի. քանզի յանկարծ պատառեալ երկրի արտաքս էլեալ ջուր սեաւ. և ծառ մի սօսի, գոր ճանդարին կոչէին, մեծ յոյժ՝ հուպ առ քաղաքն, տեսին զնա՝ յանկարծակի շրջեալ իւրովի. և ի տեսիլ նորա դրդեցաւ ամենայն քաղաքն. և դարձեալ տեսին զնա՝ կանգնեալ, որպէս յառաջն: Այս եղեալ երկիցս և երիցս և ապա անկաւ և այլ ոչ կանգնեցաւ:

Դ. Անանուն Սեբաստացու «Ժամանակագրութիւն» (13-րդ դար)։

և ծառ մի էր սոսի, գոր ճանդարի ասեն (Հակոբյան 1951-56, հտ. 2, 139):

2. ճանդա՞ր, ճանդարի՞, թե՞ ճանդարին

«Արարածոց մեկնութիւն»-ում և Անանուն Սեբաստացու ու Չաքարիա սարկավագ Քանաքեոցու երկերում բառը հանդես է գալիս ծառանուններ կազմող *-ի* ածանցով: Իսկ Կիրակոս Գանձակեցու տեքստում հանդիպող ծառի անվանումը ներկայացվում է *ճանդար* (ՀԱԲ 3, 183b) կամ *djandar* («un djandar ou platane gigantesque», Brosset 1870, 116-117) տես քով: Մակայն քննական տեքստում² գտնում ենք *ճանդարին* ձևը. *և ծառ մի սօսի, գոր ճանդարին կոչէին*: ՄիջՀայԲառ 2009, 468b-ում, ինչպես նաև Խանլարյանի 1976 ռուսե-

² Մելիք-Օհանջանյան 1961, 235, տող 13 և հաջ.:

րեն թարգմանության մեջ բառը ներկայացված է նույն *ճանդարին* ձևով («называемый чандарином»):

Սակայն բառավերջի *ն*-ն հոդ է և ստուգաբանական արժեք չունի: Հմմտ. հոդի այդպիսի գործածության հետևյալ օրինակները.

- *Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ* (Մովսէս Խորենացի 2.լր [1913=1991, 165]).

- *լցին զՄիմն ասացեալ լեառն* (Մովսէս Խորենացի 1.իգ [1913=1991, 70]).

- *յաղագս Տարօնոյ և Միմն կոչեցեալ լերինն* (Մովսէս Խորենացի 2.հդ [1913=1991, 212]).

- *երթեալ յեզր գետոյն, որու Ախուրեանն կոչեն* (Անանիա Շիրակացի, տես Աբրահամյան 1944, 321).

- *որում Աստեղն կոչեն բլուր. <...>. Չ դախն անուանեցելոյ* (Մովսէս Կաղանկատուացի, տես Առաքելյան 1983, 99).

- *գոր Շիդարն կոչեն* (Վանական Վարդապետ, տես Խաչիկյան 1941, 166a):

Այսպիսով՝ բոլոր վկայություններում բառի ուղիղ ձևը *ճանդարին*-ն է:

3. Բարբառներ

Աճառյանը (ՀԱԲ 3, 184a) հիշատակում է հետևյալ ձևերը. Թիֆլիս *ճանդարի*՝ բարդի՝, Մուշ *ճանդար*՝ գերան՝. նաև *ճանդարի*՝ սոսի՝ (հղ. «Հովիւ» 1906, 430):

4. Ստուգաբանություն

Ճանդարի բառի իրանական ծագումն ակնհայտ է, թեև ստուգաբանական մանրամասները պարզ չեն (հմմտ. ՀԱԲ 3, 184a և Ջահուկյան 2010, 488b՝ երկուսն էլ առանց իրանական ձևերի մատնանշման ու առանց ստուգաբանության):

Տարբեր լեզվական ավանդույթներում բարդին ու կաղամախին³ զուգորդվում են սոսու հետ: Օրինակ՝ *նփի*՝ բարդի, կաղամախի՝ բառը Ղարաբաղում նշանակում է՝ սոսի՝ (*հուփէ*), իսկ Մեղրիում (*հուփփի*) և Կարճևանում (*հուպպի*)՝ բարդի⁴: Հմմտ. նաև հայ. *կա-*

³ Բարդու և կաղամախու սերտ առնչակցության շուրջ տես Normier 1981; Friedrich 1970, 49-53; Friedrich apud Mallory/Adams 1997, 33; Гамкрелидзе / Иванов 1984, 2, 626-627:

⁴ Տես ՀԱԲ 3, 619-620; Witczak 1991: Ա. Սարգսյանը (2013, 445a) գրանցում է Ղարաբաղ *հուփ(փ)է*՝ բարդու մի տեսակը՝

դամախի vs. հուն. *καλαμί νδοαρ· πλάτανος ή δονειδς* ‘սուսի’ (Հեսիքիոս)⁵: Այս ծառերի տերևներն ամենաթույլ քամուց անգամ օրորվում են ու սուսափում (հմմտ. օրինակ լիտվ. *drebulė* ‘դողդոջուն կաղամախի’ < *drebėti* ‘դողալ, երերալ, թրթռալ’; անգլ. *to quake/tremble like an aspen leaf* «կաղամախու տերևի նման դողալ»), ու ստի դրանք հաճախ առնչվում են ոգիներին: Հիշենք Մովսես Խորենացու (2.ի [1913=1991, 63-64]) հայտնի դրվագը.

Արայեանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմին, թողլով արու զաւակ ամենահարուստ և շատահանճար յիր և ի բան՝ զԱնուշաւանն Սօսանուէր: Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ որ յԱրմաւիր. գորոց զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն, և թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, և այս ցրագում ժամանակս:

Այս տվյալների լույսի տակ առաջարկում եմ հայերեն *ճանդարի* բառը համարել փոխառությունն իրանական **čand-dār-* ‘դողացող ծառ’ բաղադրությունից, որ կարող էր կազմված լինել միջ. պարսկ. *čandīdan*, *čand-* ‘դողալ, երերալ, թրթռալ’⁶ և *dār* ‘ծառ’ բառերից: Մյուս կողմից՝ պետք է մտածել նաև միջ. պարսկ. և նոր պարսկ. *čīnār* ‘oriental plane tree’ բառի համեմատության շուրջ: Հնարավոր է ենթադրել իրան. **čana(h)-dāra-* նախաձև (հմմտ. Eilers 1971, 607 fn. 45, որտեղ առաջարկվում է **ča/inā-βara-* ‘favour-bringing, favorable’)⁷, որ մի կողմից տվել է պարթև. **čan(a)dār-* (միջնավանկի վաղ անկմամբ), իսկ մյուս կողմից՝ միջ. պարսկ. *čē/inār* [cyn’l] < **čēnyār* (y-միջնահավելված) < **čanyār* (syncope) < **čanayār* (միջձայնավորային -d- > -y-):

5. Կիրակոս Գանձակեցու վկայությունը և Ղարաբաղի բարբառը

Կիրակոս Գանձակեցու տեքստում հիշատակվում է Գանձակ քաղաքի մոտակայքում աճող հսկայական սուսի ծառը, որն անվանվում է *ճանդարի*: Սա, ըստ երևութիւն, տվյալ տարածքում գործածվող խոսակցական տարբերակն է, որի և՛ հնչյունական ձևը, և՛

⁵ ՀԱԲ 2, 492; Ջահուկյան 1987, 310, 437, 612; Martirosyan 2010, 347-348. 2013, 114:

⁶ Իրանական տվյալները տես Henning 1937, 82; MacKenzie 1971, 21; Nyberg 1974, 53a; Boyce 1977: 31; ЭтимСловИран 2, 2003, 219; Durkin-Meisterernst 2004, 126a:

⁷ Այս հղման և հարակից քննարկման համար պարտական եմ իմ լեյդենյան գործընկեր Johnny Cheung-ին:

ստուգաբանությունը ցույց են տալիս, որ այն ունի իրանական ծագում: Գանձակը (ավելի ուշ՝ Ելիզավետպոլ, Կիրովաբադ) բնակեցված էր ոչ միայն պարսիկներով, այլև քրիստոնյաներով (*Այս քաղաքս բազմասերոյս լցեալ պարսկօք, այլ սակաւ և քրիստոնէիք*), այսինքն՝ հայերով⁸: Եվ դա բնական է. այն եղել է պատմական Հայաստանի Ուտիք նահանգի Շակաշեն գավառի տարածքում⁹: Հետևաբար կարելի է այդ բառի հետքերը փնտրել Արցախի և հարակից տարածքների արդի բարբառներում:

Ազուլիսի, Մեղրիի և արցախյան բարբառներում շեշտը սովորաբար վերջընթեր է¹⁰: Բացառություններից է ծառանունների *-ի* վերջածանցը, որ Մեղրիի տարածքում սովորաբար շեշտվում է, օր.՝ Կարճևանի բարբառում *խինձիրի՛, կաղնի՛, հրոնի՛* (‘ուռենի’), *սիկիվիլի՛, տընձի՛* և այլն.¹¹ կամ Կաքավաբերդի բարբառում՝ *խընձիրի՛, ծիրանի՛, կաղնի՛, հոռի՛, հուփի՛, սիկիվիլի՛, տանձի՛ / տընձի՛* և այլն. բացառությունները սակավաթիվ են¹²:

Ղարաբաղում ծառանունների *-ի* վերջածանցը սովորաբար անշեշտ է, օրինակ՝ *թէղէ, կաղնըէ*¹³: Սակայն կան նաև վերջնաշեշտ ձևեր, օրինակ՝ *թուզնի, թուզի* (հմմտ. Լոռի *թըզընքի*); *ճըղպըրի՛, ճըղպըրէ՛, ճուղպըրէ՛* < *ճողպուրի*¹⁴: Հավանաբար ծառանունների շեշտված *-ի* վերջածանցը հնում բնորոշ է եղել ավելի լայն՝ Մեղրի-Արցախ տարածքին, սակայն հետագայում Արցախի մեծ մասում ծառանունների շեշտը համաբանությամբ դարձել է վերջընթեր, մինչդեռ հին վիճակը պահպանվել է Մեղրիում:

Հետևաբար մի քանի դար առաջ *ճանդար-ի* ծառանունը Արցախում կարող էր հնչել **ճանդարի՛*, որն էլ նախաշեշտ ձայնավորների օրինաչափ թուլացմամբ կդառնար **ճընդրի՛*: Այս վերականգնված

⁸ Հմմտ. Մելիք-Օհանջանյան 1961, էջ ԺԸ-Ի; ՀայՏեղԲառ 1, 1986, 785-786:

⁹ ՀայՏեղԲառ 1, 1986, 785-786: Ստրաբոնի, Պտղոմեոսի, «Աշխարհացոյց»-ի և այլ սովյակների շուրջ տես Hübschmann 1904, 352-353, 457 (հայ. թարգմ.՝ Հիւբշման 1907); Adontz 1970 (<1908), 324-325, 495; Աճառյան 1940, 13, 37, 55; Мнацаканян 1969, 15-64; Երևմյան 1963, 73a; Hewsen 1992, 143-144, 146, 194, 260-262, 262 172A; ՀայՏեղԲառ 4, 1998, 49:

¹⁰ Մուրադյան 1982, 67-72; Vaux 1998, 132-136, 141-144; Weitenberg 2001:

¹¹ Մուրադյան 1960, 167, 195b, 196b, 202b, 204b, 206a; Weitenberg 2001, 66:

¹² Մուրադյան 1967, 16, 173a, 175a, 182a, 186a:

¹³ Աճառեան 1913, 357b; ՀԱԲ 2, 171-172; Դավթյան 1966, 356; Martirosyan 2010, 283-284:

¹⁴ ՀԱԲ 2, 171b, 496a. 3, 211a; Դավթյան 1966, 353, 357; Martirosyan 2010, 295:

տարբերակը զարմանալիորեն նման է Ղարաբաղի *տընջըրի*՝ խոշոր լեռնային ծառ՝ բառին, որ հիշատակում է Աճառյանը (1913, 1036-1037)՝ առանց իմաստաբանական կամ ստուգաբանական ճշգրտումների: Սակայն ակնհայտ է, որ այս արցախյան բառի հիմնական իմաստն է ‘սոսի, չինարի’: Բացի այն, որ *Տընջըրի* է անվանվում Սխտորաշեն գյուղի հոչակավոր սոսին (հմմտ. և նրա տակից բխող *Տընջըրու* աղբյուրը), այս ծառանվան բազմաթիվ վկայություններ կան Ղարաբաղի բանահյուսական և ազգագրական գրականության մեջ հենց ‘սոսի, չինարի’ իմաստով, երբեմն էլ՝ ‘բարդի’¹⁵: Եվ վերջապես, Սարգսյանն իր ընդարձակ բառարանում (2013, 728c) *տընջըրի* բառը գրանցում է ‘չինարի, սոսի’ իմաստով:

Արցախյան *տընջըրի* ‘սոսի’ բառն ամենայն հավանականությամբ սերում է **ճընդըրի* < *ճանդարի* ‘սոսի’ բառից՝ ատամնային պայթաշփականի ու պայթականի դրափոխությամբ¹⁶:

6. «Բառգիրք հայոց»

«Բառգիրք հայոց» կոչվող ուշմիջնադարյան բառարանում, որ 16-17-րդ դարերում կազմել կամ խմբագրել է Երեմիա Մեղրեցին (ըստ այլ տեսակետի՝ Սարգիս Եվդոկիացին), և որը լի է Ղարաբաղի, Մեղրիի և հարակից բարբառներին հաստուկ բառերով ու բառաձևերով¹⁷, *սոսի* բառը ներկայացված է հետևյալ կերպ. *տնջրի, որ է չինարի* (Ամալյան 1975, 296): Ինչ պես տեսնում ենք, գործ ունենք մեկ բառի՝ նույն տարածքում երեք տարբեր ժամանակահատվածներում շարունակական ներկայության հետ՝ 1) Կիրակոս Գանձակեցի, 13-րդ դար (*ճանդարի*). 2) «Բառգիրք հայոց», 16-17-րդ դարերից ոչ ուշ (*տնջրի*). 3) ներկա բարբառավիճակ (*տընջըրի*):

7. Դիցաբանական ակնարկ

Ըստ ավանդության՝ Սխտորաշենի հայտնի ծառի մեջ մի հսկայական օձ է բնակվում¹⁸: Կարելի է ենթադրել, որ այս նշանակալից ծառը՝ *տընջըրի*-ն (< *ճանդարի*), իր համանուն ստորերկրյա աղբյուրի հետ միասին ինչ-որ կերպ գուգորդվել է Տիեզերական ծառի կամ Տիեզերական օվկիանոսի հետ: Այս կապակցությամբ հե-

¹⁵ Հայժողձեք 7, 1979, 343; Լ. Հարությունյան 1991, 335; Լալայան 2, 1988 (< 1897-1898), 161; Խաչատրյան 1988, 118-119; ՀայՏեղԲառ 4, 1998, 628c. 5, 2001, 89b:

¹⁶ Գուցե այդ դրափոխությանը որոշ չափով նպաստել է բառի վերաիմաստավորումը որպես «տուն ջրի» (հիշենք *Տընջըրու* աղբյուրը):

¹⁷ Martirosyan 2010 passim:

¹⁸ Լալայան 1897, 212 (= Լալայան 2, 1988, 170): Այս ծառի շուրջ տես 5-րդ բաժինը:

տաքրքիր է *Անդնդային* *օձ*-ը, որ հիշատակվում է Կիլիկիայի և Բուրսայի տարածքներում գրառված հետևյալ հմայական աղոթքում՝ օձի ու կարիճի դեմ¹⁹, և ստուգաբանական բաղադրիչներով նույնական է վեդայական դիցաբանության *Ahi- Budhnyā*- «Խորքի օձ» անվամբ պերսոնաժին, որի ծագումն ու բնակատեղին ջրերի մութ հատակն է (RV 7.34.16-17):

Ակնա Կամ(ա)րկապ գյուղի քահանան պատմել է մի սովորության մասին, որ դրանից հարյուր տարի առաջ, որպես հեթանոսական, արգելվել է: Ըստ դրա՝ Կադանդի օրը գյուղի հարսները գնացել են «Չորս ծորակ» (թուրք. *Տէօրթ լիլէ*) վայրը և երգել.

Ջրին բարին, ջրին մորին.

Անդնդային թագավորին.

Ջուր կաղընտե՞ր էս:

Վերջին խոսքի հետ ձևացրել են, թե մկրատով կտրում են ջուրը²⁰:

Ուշագրավ է, որ Ռիզվեդայում (RV 1.24.7) Վարունա թագավոր-աստվածը անհատակ տարածության մեջ (*abudhné*) պահում է Տիեզերական ծառի կատարը: Այստեղ անհատակ տարածությունը բնութագրված է *a-budhná*- ‘անհատակ’ բառով, որը սերում է հնդեվրոպական **ǵ-bʰudʰno*- ‘անհատակ’ կազմությունից և հետևաբար *ան-դունդ* բառի հստակ ցեղակիցն է: Փաստորեն՝ Վարունային կարող ենք համեմատել մեր *Անդնդային թագաւոր*-ի հետ:

Նույն Ակնա տարածքում գրառված մի հմայական աղոթքում²¹ կարդում ենք.

Անդնդային ծառ մի կար.

Ան ծառը սև օձ մի կար:

Տղացկանների թշնամի՝ օձի մազերով իգական ոզի ալքերի դեմ հմայական աղոթքներում նույնպես հիշատակվում է *թագաւորն յանդունդս*²²:

¹⁹ Աղոթքը տես Հարությունյան 2006, 152a, № 200ա:

²⁰ Ճանիկեան 1895, 48-49: Տես նաև Քէչեան / Պարսամեան 1952, 78; Ղանալանյան 1969, 110, № 304; Օղաբաշյան 1974, 52; 1978, 58 (*Ջուր կաղընդէ իս*):

²¹ Ճանիկեան 1895, 167; Հարությունյան 2006, 91a, № 38դ:

²² Ալիշան 1910, 242; Russell 1987, 448; Հարությունյան 2006, 130-139: Ալքե րի նկարագրության համար տես նաև Աճառեան 1913, 53b:

Այսպիսով՝ հայկական ու վեդայական տվյալները վկայում են Անդնդային ծառի և նրա արմատների մոտ՝ մուլթ ջրերի Անդնդային օձի վերաբերյալ պատկերացումների մասին: Հայկական ավանդազրույցում այն, ինչպես տեսանք, կոչվում է *Սև օձ*: Հմմտ. նաև մեկ այլ հնդեվրոպական ավանդության մեջ՝ հին իսլանդականում հայտնի *Níðhoggr* օձը՝ *Yggdrasil* կոչվող տիեզերական ծառի հետ: Այս օձը նկարագրվում է որպես *inn dimmi dreki fljúgandi* «մուլթ՝ թռչող օձ» (*Völuspá* 66): Վեդայական «Անդունդի օձի» բնակատեղին, ինչպես տեսանք, ջրերի մուլթ հատակն է: Մա մեզ տանում է դեպի «Սև ջուրը»՝ Քառասյին օվկիանոսը կամ Անդունդը, որն ըստ հայկական հավատալիքների կարող է դուրս հորդել և վերացնել աշխարհը²³: Այս կապակցությամբ հիշենք, որ Կիրակոս Գանձակեցու նկարագրած՝ Գանձակի կործանումը կանխատեսող սարսափագրու տեսիլքում *Ճանդարի* ծառի եռակի անկմանը նախորդում է ստորերկրյա սև ջրի հորդելը հողից. *քանզի յանկարծ պատատեալ երկրի՝ արտաքս ելեալ ջուր սեաւ* (տես § 1):

Անփոփում

Հայերեն ճանդարի բառի հիմնական իմաստն է՝ ‘սոսի, չինար’ (բարբառներում կա նաև ‘բարդի’ իմաստը): Այն վկայված է Եղիշեին վերագրվող «Արարածոց մեկնութիւն» երկում, որը մեզ է հասել գանձակեցի Վարդան Արևելցու երկում մեջբերված հատվածների տեսքով: Այս բառի ևս երկու վկայություն է մեզ հասել Հայաստանի արևելյան շրջաններից՝ Կիրակոս Գանձակեցի (13-րդ դար) և Զաքարիա Սարկավազ Քանաքեռցի (17-րդ դար):

Հատկապես կարևոր է Գանձակեցու «Հայոց պատմության» 21-րդ գլուխը, որտեղ Գանձակի ավերմանը նախորդած մարգարեական ահագորու տեսիլքի նկարագրության մեջ *Ճանդարի*-ն հիշատակվում է որպես *սոսի* ծառանվան (տեղական) համարժեք:

Ճանդարի բառի իրանական ծագումն ակնհայտ է, թեև դրա ստուգաբանական մանրամասները պարզ չեն: Տարբեր լեզվական ավանդույթներում բարդին ու կաղամախին զուգորդվում են սոսու հետ: Այս ծառերի տերևներն ամենաթույլ քամուց անգամ օրորվում են ու սոսափում (հմմտ. օրինակ լիտվ. *drebulė* ‘դողողուն կաղամախի’ < *drebėti* ‘դողալ, երերալ, թրթռալ’; անգլ. *to quake/tremble like*

²³ Նոյնիսյան 1902, 2632; Սասնա ծռեր Ա, 1936, 282; Հարությունյան 2000, 9-11, 186:

an aspen leaf «կաղամախու տերևի նման դողալ»), ուստի դրանք հաճախ առնչվում են ոգիներին: Հիշենք Մովսես Խորենացու (2.ի) հայտնի դրվագը:

Այս տվյալների լույսի տակ հայերեն *ճանդարի* բառը կարելի է համարել փոխառություն իրանական **čand-dār-* ‘դողացող ծառ’ բաղադրությունից, որ կարող էր կազմված լինել միջ. պարսկ. *čandīdan*, *čand-* ‘դողալ, երերալ, թրթռալ’ և *dār* ‘ծառ’ բառերից: Մյուս կողմից՝ պետք է մտածել նաև միջ. պարսկ. և նոր պարսկ. *čīnār* ‘oriental plane tree’ բառի համեմատության շուրջ: Հնարավոր է ենթադրել իրան. **čana(h)-dāra-* նախաձև, որ մի կողմից տվել է պարթև. **čan(a)dār-* (միջնավանկի վաղ անկմամբ), իսկ մյուս կողմից՝ միջ. պարսկ. *čē/inār* [cyn’l] < **čēnyār* (*y*-միջնահավելված) < **čanyār* (syncopé) < **čanayār* (միջձայնավորային *-d- > -y-*): Բոլոր դեպքերում մեր այս հայերեն բառն անզնահատելի դեր ունի իրանական բառագիտության համար:

Ագուլխի, Մեղրիի և արցախյան բարբառներում շեշտը սովորաբար վերջընթեր է: Բացառություններից է ծառանունների *-ի* վերջածանցը, որը Մեղրիի տարածքում սովորաբար շեշտվում է, օր. *խինձիրի՛, կաղնի՛, սիկիվիլի՛, տընձի՛* և այլն: Հավանաբար ծառանունների շեշտված *-ի* վերջածանցը հնում բնորոշ է եղել ավելի լայն՝ Մեղրի-Արցախ տարածքին, սակայն հետագայում Արցախի մեծ մասում ծառանունների շեշտը համաբանությամբ դարձել է վերջընթեր, մինչդեռ հին վիճակը պահպանվել է Մեղրիում:

Հետևաբար մի քանի դար առաջ *ճանդար-ի* ծառանունը Արցախում կարող էր հնչել **ճանդարի՛*, որն էլ նախաշեշտ ձայնավորների օրինաչափ թուլացմամբ կդառնար **ճընդրրի՛*: Այս վերականգնված տարբերակից աստամային պայթաշփականի ու պայթականի դրափոխությամբ կարող էր սերել Ղարաբաղի բարբառի *տընջըրի՛* ‘սուխ’ բառը:

«Բառգիրք հայոց» կոչվող բառարանում, որ 16-17-րդ դարերում կազմել կամ խմբագրել է Երեմիա Մեղրեցին (ըստ այլ տեսակետի՝ Մարգիս Եվդոկիացին), և որը լի է Ղարաբաղի, Մեղրիի և հարակից բարբառներին հատուկ բառերով ու բառաձևերով, *սուխ* բառը ներկայացված է հետևյալ կերպ. *տնջրի, որ է չինարի*: Ինչպես տեսնում ենք, գործ ունենք մեկ բառի՝ նույն տարածքում երեք

տարբեր ժամանակահատվածներում շարունակական ներկայության հետ՝ 1) Կիրակոս Գանձակեցի, 13-րդ դար (*Ճանդարի*). 2) «Բառգիրք հայոց», 16-17-րդ դարերից ոչ ուշ (*տնջրի*). 3) ներկա բարբառավիճակ (*տընջրի*):

Ըստ ավանդության՝ Մխտորաշենի հայտնի *տընջրի* (< *Ճանդարի*) ծառի մեջ մի հսկայական օձ է բնակվում: Հետաքրքիր է նաև, որ Կիրակոս Գանձակեցու նկարագրած՝ Գանձակի կործանումը կանխատեսող սարսափազդու տեսիլքում *Ճանդարի* ծառի եռակի անկմանը նախորդում է ստորերկրյա սև ջրի հորդելը հողից. *քանզի յանկարծ պատատեալ երկրի՝ արտաքս էլեալ ջուր սեալ*: Այս տվյալները կարող ենք դիտարկել համաշխարհային օվկիանոսի մութ ջրերի *Անդնդային օձի* կամ *Սև օձի* և *Անդնդային ծառ*-ի հավատալիքների համատեքստում:

Գրականություն

Աբրահամյան, Աշոտ Գարեգինի

1944 Անանիա Շիրակացու մատենագրությունը. ուսումնասիրություն. Երևան. ՀՍՍՌ Մատենադարանի հրատարակչություն:

Ալիշան, Ղևոնդ

1910 Հին հուատք կամ հեթանոսական կրօնք Հայոց. Վենետիկ. Ս. Ղազար:

Աղայան, Է. Բ.

1954 Մեղրու բարբառ. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Աճառյան Հ.

1913 (Աճառեան) Հայերեն գաւառական բառարան. Թիֆլիս («Էմիներան ազգագրական ժողովածու», հտ. Թ):

1940 Ստրաբոն (թարգմ. և ծնթ.). Երևանի համալսարանի հրատարակչություն:

1971-79 (ՀԱԲ), Հայերեն արմատական բառարան, 4 հատորով (2-րդ հրատ.). Երևանի համալսարանի հրատարակչություն [1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով]:

Ամալյան, Հ. Մ.

1975 Բառգիրք հայոց. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Առաքելյան, Վարազ Դավթի

1983 *Մովսէս Կադանկատուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի (քննական բնագիր և ներածություն). Երևան. Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն:

Դավթյան, Կ. Ս.

1966 Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Երեմյան, Ս. Տ.

1963 Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա). Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Լալայեան, Ե.

1897 Վարանդա. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար. *Ազգագրական հանդէս*. 2-րդ տարի, Բ գիրք, Թիֆլիս, 1897. 4-244:

1983-, 1- (Լալայան) Երկեր. հտ. 1, 1983 (Ջավախք). հտ. 2, 1988 (Արցախ). Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն. հտ. 3, 2004 (Բորչալուի գավառ). Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:

Խաչատրյան, Հայկ

1988 Սոսյաց անտառ. վիպակ, պատումաշար. Երևան. «Արևիկ»:

Խաչիկյան, Լ. Ս.

1941 «Յաղագս տարեմտին ի Վանական Վարդապետէ սասցեալ» . *Գիտական նյութերի ժողովածու* (Մատենադարան) 1. 151-169:

ՀԱԲ, տես Աճառյան 1971-79

Հակոբյան, Վազգեն Ա.

1951-56 Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. (հտ. 1, 1951; հտ. 2, 1956). Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

ՀայԺողձեք 1-

1959 Հայ ժողովրդական հեքիաթներ. հտ. 1, 1959 – հտ. 14, 1999, Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն; հտ. 15, 1998, Երևան.

«Ամբոց»:

ՀայՏեղԲառ 1-5

1986-2001 *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան*, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հտ. 1, 1986; հտ. 2, 1988; հտ. 3, 1991; հտ. 4, 1998; հտ. 5, 2001. Երևանի համալսարանի հրատարակչություն:

Հարությունյան, Լևոն

1991 Նշխարներ Արցախի բանահյուսության. Երևանի համալսարանի հրատարակչություն:

Հարությունյան, Սարգիս Բ.

2000 Հայ առասպելաբանություն. Բեյրութ. «Համազգային», Վահէ Սէթեան տպարան:

2006 Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ. Երևանի համալսարանի հրատարակչություն:

Հիւբշման, Հ.

1907 Հին Հայոց տեղոյ անունները. Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով (Hübschmann 1904-ից թարգմ. Հ. Բ. Պիլեզիկճեան). Վիեննա. Մխիթարեան տպարան («Ազգային մատենադարան» ԾԳ):

Ղանալանյան, Արամ Տիգրանի

1969 Ավանդապատում. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Ճանիկեան, Յ. Կ.

1895 Հնութիւնք Ակնայ. Թիֆլիս. Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի (Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութիւն, 89):

Մելիք-Օհանջանյան, Կ. Ա.

1961 *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

ՄեկնԱրար

2003 «Մեկնութիւն արարածոց գրոց Եղիշէի վարդապետի». *Մատենագիրք Հայոց*, Ա հատոր (Ե դար). Անթիլիաս – Լիբանան. 765-929:

ՄիջՀայԲառ

2009 *Ռ. Ս. Ղազարյան և Հ. Մ. Ավետիսյան*, Միջին հայերենի բառարան (2-րդ բարեփոխված հրատարակություն). Երևանի համալսարանի հրատարակչություն:

Մուրադյան, Հ. Դ.
 1960 Կարճևանի բարբառը. Երևան. ՀՍՍՌ ԳԱ
 հրատարակչություն:
 1967 Կաբավաբերդի բարբառը. Երևան. ՀՍՍՀ ԳԱ
 հրատարակչություն:
 1982 Հայոց լեզվի պատմական քերականություն. հտ. 1,
 Հնչյունաբանություն. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
 Նժդեհեան, Գ.
 1902 Պառուաշունչ. *Ազգագրական հանդես*. 7-րդ տարի, IX
 գիրք. 263-271:
 Զահուկյան Գ. Բ.
 1987 Հայոց լեզվի պատմություն. նախագրային
 ժամանակաշրջան. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
 2010 Հայերեն ստուգաբանական բառարան (խմբագրությամբ
 և առաջաբանով՝ Վահան Սարգսյանի). Երևան. «Աստղիկ»
 հրատարակչություն:
 Սասնա ծռեր Ա-Դ
 1936 Սասնա ծռեր. խմբ. Մ. Աբեղյան և Կ. Մելիք-
 Օհանջանյան (հտ. Ա, 1936; Բ 1-2, 1944 և 1951), Երևան. Պետական
 հրատարակչություն; խմբ. Ս. Հարությունյան և Ա. Սահակյան (հտ.
 Գ, 1979; Դ, 1999), Երևան. ՀՍՍՀ ԳԱ (ՀՀ ԳԱԱ) հրատարակչություն:
 Սարգսյան, Արմեն Յուրիկի
 2013 Ղարաբաղի բարբառի բառարան. Երևան. «Էդիթ
 Պրինտ»:
 Քէչեան, Առաքել և Պարսամեան, Մկրտիչ
 1952 Ակն եւ ակնցիք. Փարիզ:
 Օդաբաշյան, Ա. Ա.
 1974 Ամանորի ծիսական երգերից. *ԼՀԳ* 1974, № 4. 43-53:
 1978 Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում. *Հայ
 ազգագրություն և բանահյուսություն*. հտ. 9. Երևան. ՀՍՍՀ ԳԱ
 հրատարակչություն. 5-72:
 Гамкрелидзе, Т. В. и Иванов, Вяч. Вс.
 1984, 1-2 Индоевропейский язык и индоевропейцы:
 реконструкция и историко-типологический анализ праязыка и
 протокультуры. С предисловием Р. О. Якобсона. Тбилиси:
 Издательство Тбилисского Университета.

Мнацаканян, А. Ш.

1969 О литературе Кавказской Албании. Ереван: Издательство АН Армянской ССР.

ЭтимСловИран 1ff

2000ff В. С. Расторгуева, Д. И. Эдельман, Этимологический словарь иранских языков. Москва: «Восточная литература» РАН. Том 1, 2000; 2, 2003; 3, 2007; 4, 2011; 5 [1-н], 2015.

Adontz, N.

1970 Armenia in the period of Justinian: the political conditions based on the *naharar* system (translated with partial revisions, a bibliographical note and appendices by Nina G. Garsoïan). Lisbon: Calouste Gulbenkian Foundation.

Boyce, Mary

1977 A word-list of Manichaean Middle Persian and Parthian (with a reverse index by Ronald Zwanziger). Leiden: E.J. Brill; Téhéran-Liège: Biliothèque Pahlavi. (Acta Iranica 9a, Série 3 – “Textes et mémoires”, vol. 2-supplément).

Brosset, M.

1870 Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, XIII^e s., Histoire d'Arménie; Oukhtanès d'Ourha, X^e s., Histoire en trois parties. St.-Pétersbourg.

Durkin-Meisterernst, Desmond

2004 Dictionary of Manichaean Middle Persian and Parthian. Turnhout: Brepols. (Corpus Fontium Manichaeorum; 3.1).

Eilers, Wilhelm

1971 Iranisches Lehngut im Arabischen. In: *Actas. IV Congresso de Estudos Árabes e Islâmicos*. Coimbra-Lisbon, September 1-8, 1968. (Congress of Arabic and Islamic Studies, 4). Leiden: E. J. Brill. (pp. 581-660).

Friedrich, Paul

1970 Proto-Indo-European trees: the arboreal system of a prehistoric people. Chicago, London: Chicago University Press.

Henning, W. B.

1937 A list of Middle-Persian and Parthian words. In: *BSOS* 9.1: 79-92.

Hewsen, Robert H.

- 1992 The Geography of Ananias of Sirak (*Ašxarhac'oyc'*): the long and the short recensions. Introduction, translation and commentary. Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag. (Beihefte zum Tubinger Atlas des Vorderen Orients. Reihe B, Geisteswissenschaften; 77).
- Hübschmann, H.
- 1904 Die altarmenischen Ortsnamen. In: *Indogermanische Forschungen* 16: 197-490 (+ Karte).
- MacKenzie, D. N.
- 1971 A concise Pahlavi dictionary. London, New York, Toronto: Oxford University Press.
- Mallory, J. P. & Adams, D. Q.
- 1997 (eds.), *Encyclopedia of Indo-European culture*. London, Chicago: Fitzroy Dearborn Publishers.
- Martirosyan, Hrach Kayosiki
- 2010 *Etymological dictionary of the Armenian inherited lexicon*. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 8).
- 2013 The place of Armenian in the Indo-European language family: the relationship with Greek and Indo-Iranian. In: *Journal of language relationship* (*Вопросы языкового родства*) 10: 85-137.
- Normier, Rudolf
- 1981 Zu Esche und Espe. In: *Die Sprache* 27: 22-29.
- Nyberg, H. S.
- 1974 A manual of Pahlavi. Part 2. Wiesbaden: Otto Harrassowitz.
- Russell, James R.
- 1987 *Zoroastrianism in Armenia*. Cambridge: Harvard University Department of Near Eastern Languages and Civilizations and National Association for Armenian Studies and Research. (Harvard Iranian Series, 5).
- Vaux, Bert
- 1998 *The phonology of Armenian*. Oxford: Clarendon Press.
- Weitenberg, Jos J. S.
- 2001 Thoughts on early Armenian accentuation. In: *Annual of Armenian linguistics* 21: 65-73.
- Witczak, K. T.
- 1991 Armenian *op'i* 'white poplar, *Populus alba* L.' and the development of **ps* in Armenian. In: *Annual of Armenian linguistics* 12: 65-75.

Hrach Martirosyan
(Wien)

Armenian *čandari* ‘plane tree’
Summary

The Armenian word *čandar-i* appears in two basic meanings: ‘plane tree’ and ‘poplar, aspen’. It is attested in a Commentary on Genesis attributed to Elišē . This text is only known from excerpts in a compilation by the thirteenth century author Vardan Arewelc’i (native of Ganjak). The other two attestations of the word also come from authors originating from eastern parts of Armenia: Kirakos Ganjakec’i (thirteenth century) and Zak’aria Sarkawag K’anak’erc’i (seventeenth century).

Particularly important is the testimony from Chapter 21 of Kirakos Ganjakec’i who mentions *čandari* in his description of a terrifying vision that prophesied the destruction of the city of Ganjak. This city was located in Šakašēn, a district in the province of Utik’ belonging to Armenia since the ancient times. It was primarily inhabited by Persians, as well as Christians to a lesser degree. It was extremely hostile to Christ and his worshippers and for this reason was to be destroyed. In this vision, underground black water emerged out of the earth, and a gigantic plane close to the city of Ganjak, referred to as *čandari*, the local equivalent of *sawsi* ‘plane tree’, came crashing to the earth. Then it stood up, only to topple again. On the third fall, it remained and never rose again.

The Iranian origin of the Armenian tree name *čandar-i* is obvious, though the etymological details are unclear. The semantic interchange between the poplar/ aspen and the plane is also observable in a number of other examples and is motivated by their association with spirits. It is therefore tempting to treat *čandar-i* as a loanword from an unattested Iranian tree name, **čand-dār-*, literally ‘quaking tree’. Compare Lith. *drebulė* ‘quaking aspen’ from *drebėti* ‘to quiver, tremble’, and Arm. *saws-i* ‘plane’ vs. *sawsaw-iwn* ‘murmur, rustle’ (cf. Movsēs Xorenac’i 1.20). On the other hand, it may be derived from a Middle Iranian **čan(a)-dār*, possibly ‘tree of favour’, continued by Middle Persian and New Persian *činār* ‘oriental plane tree’. The vocalic developments

involved in this explanation are not entirely clear, so the former solution seems somewhat preferable. However, a disadvantage of this solution is that it seems to force us to reject the connection between this word and the Middle Persian synonymous *čīnār*. In either case, this Armenian word provides indispensable evidence for Iranian lexicology.

In the Armenian dialects that are spoken in eastern and southeastern peripheries of the Armenian-speaking territories, namely Agulis, Meṭri, and most Ęarabał dialects, including Hadrut' and Goris, the word accent in polysyllables normally occupies the penultimate position. There are a number of exceptions to the penultimate accentuation pattern, one of them being the tree suffix *-i*, which is mostly accented in, e.g., Karčewan; cf. *xnjor-i* 'apple tree' > *xinjirí*; *kałni* 'tree' > *kałní*; *ur-eni* 'willow' > *hər'ní*; *serkewl-i* 'quince tree' > *sikivilí*; *tanj-i* 'pear tree' > *tənjí*. The same is observable in Kak'avaberd: *xənjirí*, *kałní*, *hər'í*, *sə/ikivilí*, *ta/ənjí*. There are few exceptions, e.g. *ciran-i* 'apricot tree' > Karčewan *cirāní*; Kak'avaberd has both *ciraní* and *cirāni*.

In Ęarabał we mostly find tree names with a non-accented *i*-suffix, e.g. *t'ət-i* 'elm tree' > *t'ət*, *ciran-i* 'apricot tree' > *cə/éráne*, *mor-i* 'bramble' > Ęarabał *mórə* 'strawberry', *ur-i* 'willow' > *hórə/í*. In addition, there are also forms with final accentuation: *t'zeni* 'fig tree' > *t'üzni*, *t'uzí* (cf. also Lori *t'əzən-k'-i*), *t't-eni* 'mulberry tree' > *t'ut'né*, *čəłəpur-i* 'walnut tree' > *čəłpərí*, *čəłpəré*, *čəłpəré*; note also Ęaradał *t'í* from *t'ət-i* 'elm tree'. One may assume that originally the accented feature of this *i*-suffix was peculiar to the whole Meṭri-Ęarabał area; later the accentuation of tree names analogically became mostly penultimate in Ęarabał whereas the accented *i*-suffix has been preserved in Meṭri practically intact. Thus, the tree name *čandar-i* might have yielded **čəndərí* or **čəndəré* in Ęarabał and surrounding areas. This hypothetical form astonishingly resembles and should be identified with Ęarabał *tənjərí/é*, which refers to both 'plane tree' and 'poplar'.

The word *tənjri* 'plane tree' is attested in the late medieval Armenian dictionary entitled *Bərgirk' hayoc*, which was compiled or edited in the 16-17th centuries by someone who was native of (or had informants from) the Meṭri-Ęarabał area or surroundings. Many lexical entries in this dictionary contain or are glossed by words that are dialectally restricted to these areas. One of them is, thus, *tənjri*. This

form derives from *čandari* through metathesis, *čandari* > **čəndəri* > *tənjəri/é*. The combined evidence from Kirakos Ganjakec'i, *Bərgirk' hayoc'* and the Łarabał dialect testifies to the existence and unbroken development of the word in the territory of Łarabał and surroundings and shows that the metathesis (*čandari* > *tənjəri/é*) took place at some stage between the 13th and 16-17th centuries.

The famous plane tree in the village of Sxtorašen, *Tənjəri*, with its underground triple spring and the huge snake traditionally believed to dwell in it, may have been associated with the Cosmic Tree of the Cosmic Ocean. Note the Armenian folk belief about *Andndayin Oj*, the Abyssal Serpent, sometimes represented as a black serpent (*sev oĵ*) at the abyssal tree (*andndayin car*).

It is also remarkable that in the terrifying vision which prophesied the destruction of the city of Ganjak as described in the above passage from Kirakos Ganjakec'i, the triple overthrow of the tree was anticipated by emergence of underground black water (*ĵur seaw*) from the earth. This is reminiscent of *Sewĵur*, "Black water", of the Chaotic Ocean or the Abyss, which, according to Armenian folk beliefs, can rise up and destroy the world.



Հրաչ Մարտիրոսյան
(Լեյդեն / Վիեննա)

hrch.martirosyan@gmail.com

Ներածություն

Սյունիքի և Արցախի տարածքների բարբառներում բազմավանկ բառերի սկզբնավանկի ձայնավորը թուլանում է: Օրինակ՝ Գորիս *սըրանօ/ուց* ‘ձիթահանք’ (հմմտ. *սասիք* ‘ձիթահանքում բանող բանվոր’)¹, Ղարաբաղ *սըրանուց*, սեռ. *սըրընուցու* ‘ձիթահանք’² բառը սերում է միջին հայերեն *սասարանոց* ‘ձիթհան արհեստանոց գործատուն’ բառից³: Հմմտ. նաև.

ածելի (5-րդ դ.) > Գորիս, Ղարաբաղ, Շամախի *ծի չի*; հմմտ. Ագուլիս *ծէ չի*, Արարատյան *ածլի*, *առծըլի*, Մուշ *արձըլի* և այլն⁴.

սկանատ ‘թակարդ’ (Եփրեմ, «Վարք հարանց» և այլն) > Ղարաբաղ *կա նատ* ‘թոչուն որսալու թակարդ’⁵.

միջ. հայ. *հացհան* ‘կեռ ծայրով երկաթե ձող (ակիշ)’ թոնրի մեջ ընկած հացը հանելու համար’ (16-րդ դարի ձեռագիր հիշատ.)⁶, *հացահան* (Զաքարիա Քանաքեռցի, 17-րդ դար) > Գորիս, Ղարաբաղ *ծըհան*; հմմտ. Շամախի *ծահան*, Վան *խասխան* ևն⁷:

Ղարաբաղի բարբառի *րեքնակ* (vs. գրաբար *արեգակն*) բառածևը երբեմն մեկնաբանվում է որպես բառասկզբնային **r*-ով հնդեվրոպական նախաձևի հնատիպ արտացոլում, հմմտ. սանսկրիտ *ravi*- ‘արև’⁸: Մակայն *րեքնակ*-ի կողքին *ըրեքնակ*, *ըրիքնակ*, *ըրիհյնակ* ու այլ ձևերի⁹ և վերը բերված օրինակների հիման վրա

¹ Մարգարյան 1975, 376b, 469b:

² Մարգարյան 2013, 670a:

³ Ավագյան 1978, 28-32; ՄիջՀայԲառ 2009, 78a:

⁴ ՀԱԲ 1, 101-102; Մարգարյան 1971, 211, 1975, 311b:

⁵ ՀԱԲ 1, 107-109:

⁶ ՄիջՀայԲառ 2009, 417b:

⁷ ՀԱԲ 3, 65a; Մարգարյան 1975, 112, 406b; Մարգարյան 2013, 308b:

⁸ Հովհաննիսյան 2000, 122; Երվանդյան 2007, 26:

⁹ Դավթյան 1966, 319:

կարող ենք *ռէքնակ* ձևում նույնպես արձանագրել բառակզրի ձայնավորի անկում: Հայ. *արեւ* (սեռ. հոլ. *արեգ* < **արեգ-ի*-) բառը ծագում է **h₂rey-i-* նախաձևից և ցեղակից է սանսկրիտ *ravi-* ‘արև’ բառին, հմմտ. նաև խեթ. *haru(ua)nae-zī* ‘լուսանալ’: Հայերենում բառը չի կարող սկսվել *ր*-ով, ուստի թե՛ *հ*-ե. **Hr*-ի, թե՛ որևէ փոխատու լեզվի բառակզրնային **r*-ի դեպքում հայերենում ունենք *էր*- կամ *ար*-: Սա համահայկական օրինաչափություն է, և մենք ամուր հիմք չունենք մտածելու, թե որևէ բարբառ խուսափել է դրանից¹⁰:

Սյունիքի ու Արցախի տարածքների բարբառային բառեր ստուգաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել քննվող օրինաչափությունը. բաղաձայնասկիզբ բառերը կարող են ածանցվել բազմավանկ ձայնավորասկիզբ բառերից՝ բառակզրնային ձայնավորի կամ սկզբնավանկի անկմամբ կամ թուլացմամբ: Այս հոդվածում կներկայացնեմ այդ սկզբունքի կիրառմամբ ստուգաբանական փորձեր:

1. *ժրմածենք, ժրմածանք*՝ իրիկնամուտ, մթնշաղ՝

Գորիս *ժրմածանք* ‘իրիկնամուտ’, *ժրմրժանքել* ‘երեկոյանալ’ (Մարգարյան 1975, 393-394);

Վայոց ձոր *ժամ(հ)ածանք* ‘երեկոյան մթնելու ժամը’ (Վարդանյան 2004, 136);

Բանանց / Գանձակ *ժմածանք* ‘իրիկնապահ’ (Ամատունի 1912, 229a), նաև Գանձակ *ժժմանքին*, բացատրված՝ «աղջամուղջին» (Լալայան 2, 1988, 443, երկու տող վերև՝ *ժամածանքին*); *ժամածանք-ին* ձևը հանդիպում է նաև Արեշում և այլուր¹¹;

Ղարաբաղ *ժմաժենք, ժիմժենք, ժիմժերք, ժիժմէրք, ժիրժէք* ‘իրիկնադեմի կիսամութ’ (Աճառեան 1913, 390a; հմմտ. նաև Ամատունի 1912, 229a՝ Ղարաբաղ *ժմածենք*, բացատրված՝ «ճրագվառոց»); Ա. Մարգարյանը (2013, 153c) գրանցում է հետևյալ ձևերը. *ըժրմամժենք, ըժրմածանք, իժիմամժենք, ժրմամժենք, ժիրժինք* (բցռ. հոլ. կամ մակբ. *ըժրմրժենքան* նև) ‘աղջամուղջ, մթնշաղ’, բայական ձևեր՝ *ըժրմրժա՛ենքիլ, ժիրժինք՛իլ* նև;

¹⁰ Տե՛ս Martirosyan 2010, 135-137, 714-716, 740-741:

¹¹ Տեքստային վկայություններ՝ նաև Քամալեանց 1893, 35, 45, 65; Լուսենց 1982, 248:

Հաղորութի ժի մաժէնք, բացատրված՝ «ժամաժամք» (Պոդոն - պյան 1965, 15);

Շամախի ժամաժամք՝ երեկո, երեկոյի և գիշերվա միջև եղած պահը՝ (Բաղրամյան 1964, 237);

Մեղրի ժրմաժունք՝ վերջալույս՝ (Աղայան 1954, 299);

Արարատյան ժամեժամք՝ մութ՝ (Աճառեան 1913, 390a), ժամաժամք՝ իրիկնապահ, երբ կիսամութ-կիսալույս է՝ (ՀայԼեզԲրբԲառ Բ, 2002, 154a):

Աճառյանը (1913, 390a) գրանցում է Ղարաբաղի ժմաժէնք, ժիմժէնք, ժիմժէրք, ժիմժէրք, ժիմժէրք ձևերը՝ «երեկոյեան դէմ արևը մտնելէն անմիջապէս յետոյ, երբ դեռ կէս լոյս, կէս մութ է» իմաստով, և մեկնաբանում է հետևյալ կերպ՝ *ժամ-ա-ժամ-ք «ժամի (եկեղեցոյ) ժամանակ» (հմմտ. նաև ՀԱԲ 2, 223b): Բառնասայանն (2009, 39) ընդունում է այս ստուգաբանությունը: Նույն մեկնությունն է, թերևս, ակնարկում Մարգարյանը (1975, 393-394), որն արձանագրում է Գորիսի ժրմաժանք գոյականը և ժրմաժանքէլ բայը՝ հետևյալ իմաստային բացատրություններով՝ «ժամաժամք՝ իրիկնամուտ» և «ժամաժամքէլ՝ երեկոյանալ»:

Սակայն այս ստուգաբանությունը բավարար չէ հետևյալ պատճառներով.

1) Բառաձևերից շատերը երկրորդ ժ-ից հետո ունեն ոչ թե մ, այլ՝ ն (ժրմաժ-անք, -էնք, -ունք):

2) Կան նույնիսկ առհասարակ առանց ոնգայինի ձևեր (ժիմժէրք նն):

3) իժի մաժէնք և ըժրմաժամի/էնք ձևերի բառակզբնային ձայնավորը դժվար բացատրելի է: Կարելի է մտածել, թե այն գուտ հնչյունական նախահավելված է ժմ հնչակապակցությունից առաջ: Սակայն սա այնքան էլ հստակ չէ, քանի որ ձայնավոր կա նաև այդ հնչակապակցության մեջ: Ուստի խնդիրը լրացուցիչ քննության կարիք ունի:

4) Բարբառագիտական գրականության մեջ այս բառի բոլոր գրանցումներում բուն իմաստային նկարագրության մեջ ընդգծվում է մթությունը, օրվա մութ կամ կիսամութ պահը. չի ընդգծվում հենց ժամ՝ եկեղեցու գնալու պահը կամ ժամերգությունը՝ դրա ժամանակը: Այլ խոսքերով՝ եկեղեցի գնալու հետ բացահայտ կապ չի ներկայացվում: Բացի այդ, ժամերգություն կատարվել է օրվա տարբեր

պահերին, ուստի այնքան էլ պարզ չէ, թե ինչու պիտի «ժամերգության կամ ժամ գնալու ժամանակ»-ը իմաստափոխվեր հենց «իրիկնային մթնշաղ»-ի:

Իհարկե, այս առարկություններն առանձին-առանձին վճռորոշ չեն: Օրինակ՝ կարելի է ենթադրել *-մք > -նք* հնչյունափոխություն, որին կարող էր նպաստել *-այն / -էն* ածանցի (տես ստորև) ազդեցությունը: Ինչ վերաբերում է իմաստային զարգացմանը, ապա կարելի է մտածել, որ քննվող բառն ակնարկում է Երեկոյան ժամերգությունը, որը կատարվել և կատարվում է ժամը 17:00-ից: Սա այն ժամանակն էր, երբ մարդիկ ավարտում էին աշխատանքը և մասնակցում ընդհանրական պաշտամունքին¹²:

Տարվա մեծ մասի ընթացքում այդ ժամանակը դեռ հեռու էր մթնշաղից: Իհարկե, երկու «*ւ*»-երով ձևերը (*ժամաժամք*, *ժրմաժեմք* և այլն) ցույց են տալիս, որ նման զուգորդում այնուամենայնիվ եղել է: Բայց քանի որ վերը նշված հնչյունային ու բառակազմական ինդիքներն էլ են մնում անհստակ, ապա նման զուգորդումը կարող էր մասնակի եղած լինել: Ուստի **ժամաժամք*-ը (միակ) ելակետային ձև համարող ստուգաբանությունն իր ամբողջության մեջ բավարար չափով համոզիչ չէ: Հետևաբար այլընտրանքային ստուգաբանության փորձերն անտեղի չեն:

Բոլոր ձևերի համեմատությունը թույլ է տալիս արձանագրել **ժամՎժ*- տիպի հիմք, որտեղ *V*-ն նշանակում է որևէ ձայնավոր: Մենք պետք է գտնենք հին հայերեն որևէ բառ՝ իրիկնամուտ, կիսամութ, մթնշաղ, աղջամուղջ՝ իմաստով, որ քննվող տարածքներում կարող էր համապատասխան հնչյունափոխություններով տալ **ժամՎժ*։ Հիշելով «Ներածության» մեջ ներկայացված նյութը՝ կարող ենք կանգ առնել *աղջամուղջ* բազմավանկ բառի վրա: Իմաստը կատարյալ է: Քննենք հնչյունական զարգացումները:

Հայերեն *աղջամուղջ* ‘մթություն, մթնշաղ, կիսամութ’ բառը¹³ կարող էր Սյունիքի ու Արցախի տարածքներում զարգացնել **աղժ(ը)մուղջ/ժ*- ձևը: Չայնորդին հաջորդող պայթաշփականի շփականացման համար հմմտ. *արձակ > հայրզակ* և *դերձան >*

¹² Այս դիտարկման համար պարտական եմ Զաքարիա վարդապետ Բաղումյանին:

¹³ Բանասիրական ու ստուգաբանական հանգամանակից քննության համար տե՛ս ԱՄԲ 1, 335-336; Martirosyan 2010, 37-39:

*տեղքան*¹⁴: Այս օրինակները վճռորոշ չեն, քանի որ 1) դրանք կարող են նոր պարսկերենի ազդեցության հետևանք լինել. 2) կան օրինակներ առանց շփականացման, օրինակ՝ *մրջիմն* > *մըրջէմնը*: Մակայն քննվող բառում շփականացմանը կարող էր նպաստել նաև բաղաձայնական կուտակումը՝ *-ղջ(ը)մ-* > *-ղժ(ը)մ-*: Նկատենք, որ անշեշտ ձայնավորն այնքան թույլ է եղել այստեղ, որ որոշ տարբերակներում լրիվ է ընկել ու նույնիսկ հանգեցրել է *մժ* > *ժմ* դրափոխության, հմմտ. Գանձակ *ժժմանք* և Ղարաբաղ *ժիժմէրք*: Այդ հնչյունական զարգացմանը կարող էր էլ ավելի նպաստել **ժամաժամ* ժողովրդական ստուգաբանությունը:

Այնուհետև **աղժ(ը)մուղջ/ժ-* ձևի բառասկզբի կրճատումով¹⁵ կստանանք **ժ(ը)մուժ-* ձևը, որից էլ՝ **ժ(ը)մըժ-ա(յ)նք* / **ժ(ը)մըժ-էնք*. ածանցաձևերի համար հմմտ. այլ ժամանականիշ բառեր, օրինակ՝ ոսկեդարյան *առ-ժամ-այն*, *նոյն-ժամ-այն*, *գիշեր-այն*, *վաղորդ-այն*. ուշ՝ *հրամ-էն(-ք)* vs. *հրամ-գահ*: Զուգահեռաբար կազմվել է նաև *-էրք* հոգնակի-հավաքականով ձև՝ *ժիմժ-էրք*.

Եվ վերջապես, բառը տեղ-տեղ ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է **ժամաժամք* / **ժրմաժէք*, իբրև ‘ժամի՝ եկեղեցու (կամ ժամերգության) ժամանակ’: Հիշենք, որ *ժամ* բառը ‘ժամանակ’ իմաստով Գորիսում ու Ղարաբաղում դարձել է *ժէմ*, մինչդեռ ‘եկեղեցի’ իմաստով մնացել է անփոփոխ՝ գրական լեզվի ազդեցության պատճառով (ՀԱԲ 2, 223b):

Այսպիսով՝ Սյունիքի, Արցախի ու որոշ հարակից տարածքների **ժ(ը)մըժ-ա(յ)նք* / **ժ(ը)մըժ-էնք* ‘իրիկնային կիսամութ, մթնշաղ, աղջամուղջ’ բառը կարող է համարվել հին հայերեն *աղջամուղջ* ‘մթություն, մթնշաղ, կիսամութ’ հոմանիշի արտացոլում: Բազմավանկ բառի անշեշտ սկզբնավանկն ընկել է,

¹⁴ ՀԱԲ 1, 324-325, 657; Դավթյան 1966, 57, 320; Մարգարյան 1975, 79, 316, 322:

¹⁵ Գարեթի է ենթադրել *աղ* սկզբնավանկի կրճատում, որ համեմատելի կլինի *ծիլի* ‘ածելի’ բառին, եթե այն անմիջականորեն սերում է ոչ թե *ածելի* ձևից, այլ՝ *արծելի*-ից (տես «Ներածություն»): Այս խնդրի քննարկման համար շնորհակալ եմ Մարգիս Ավետյանին: Մյուս կողմից, կարծում եմ, քննվող բառի սկզբնամասի կրճատմանը կարող էր նպաստել նաև բազմավանկ բառի նախաշեշտ ձայնավորների կրճատման հետևանքով ստեղծված բաղաձայնական կուտակման պարզեցումը. **աղջամա / ուղջա՛յն-ք* > **ըղջ(ը)մ(ը)ղջ-*: Նկատենք, որ այդ կրճատումը տեղ-տեղ լիակատար է եղել (հմմտ. *-ժմ-* > *-մժ-* դրափոխությամբ ստեղծված Գանձակ *ժժմանք* և Ղարաբաղ *ժիժմէրք* ձևերը):

բայց նրա հետքը կարող է պահպանված լինել *ի՛ժի՛մսիժէնք* և *ըժըմսի՛մսի՛նք* ձևերում (եթե հետագա քննությունները չպարզեն, որ այստեղ բառակազմային ձայնավորն ընդամենը հնչյունական հավելում է մի բան, որ առայժմ այնքան էլ հավանական չի թվում ինձ): Որոշ տարածքներում բառը ժողովրդական ստուգաբանությամբ վերահիմաստավորվել է որպես *ժամաժամք*, բառացի՝ ‘ժամերգության ժամանակը’: Հնարավոր է նույնիսկ մտածել, որ գործ ունենք ծագումնաբանորեն տարբեր կազմությունների հետ՝ 1) **(ըղ)ջ/ժամու(ղ)ջ/ժ-այն / -էն-ք*՝ իրիկնային կիսամուրթ, մթնշաղ, աղջամուղջ՝ (սերում է հին հայերեն *աղջամուղջ* բառից) և 2) *ժամաժամ-ք*՝ ‘ժամի՝ եկեղեցի գնալու կամ ժամերգության ժամանակը’, որոնք ձևական ու իմաստային ակնհայտ նմանությունների պատճառով բաղարկվել են և ենթարկվել հնչյունական ու իմաստային փոխազդեցությունների:

2. *ճըռավանդ* ‘տանիքի հաստ գերանները’

Գորիս *ճըռավանդ* ‘տանիքի հաստ գերանները’ (Մարգարյան 1975, 434a); Ղարաբաղ *ճըռավանդ* ‘տանիքի հաստ գերանները’ (Մարգարյան 2013, 471c)

Աճառյանն (1913, 734b) արձանագրում է այս բառը Ղարաբաղի բարբառում և այն ներկայացնում **ճռուանդ* տեսքով՝ առանց ստուգաբանական կամ բառակազմական դիտարկումների: ՀԱԲ-ում էլ չեմ գտնում այս բառը կամ նրա հնարավոր բաղադրիչները:

Կարծում եմ այս բառը կազմված է *աճառ* ‘տանիք’¹⁶ և **վանդ* ‘հյուսվածք, հյուսված բան’ բաղադրիչներից: Դրանցից առաջինն ամենայն հավանականությամբ առնչվում է միջին հայերեն և բարբառային *օ/ոճոռք* ‘առաստաղ’ բառին, թեև ձայնավորների հարցն անհատակ է¹⁷: Իսկ երկրորդն առկա է *վանդակ* ‘թելերից ճյուղերից կամ այլ նյութից հյուսված որևէ բան (վանդակ, զամբյուղ, կասկարա, ուռկան և այլն)’ և *հրաւանդ* ‘կրակի կասկարա’ (*զհրաւանդս-ն*, Բ Գիրք մնացորդաց դ.16¹⁸) ոսկեդարյան բառերի¹⁹

¹⁶ Տե՛ս ՀԱԲ 1, 140a; հմմտ. նաև ՄիջշայԲառ 2009, 35b՝ *աճառ*:

¹⁷ ՀԱԲ 1, 140a; ՄիջշայԲառ 2009, 609a, 824-825:

¹⁸ Տե՛ս Խալաթեանց 1899, 60:

մեջ: Քննվող բարբառային բառի իմաստի առնչությամբ հետաքրքիր է հատկապես *վանդակ* բառի վերնատան վանդակապատ մաս՝ իմաստը (ՆՀԲ 2, 782):

Կարող ենք վերականգնել, այսպիսով, **աճառ-ա՛ւանդ* կամ **ո/օճոռ-ա՛ւանդ* բաղադրությունը՝ տանիքի գերանների վանդակահյուս հորինվածքը, գերանապատ՝ գերանակապ տանիք՝ բնիմաստով: Այն միանգամայն օրինաչափորեն դարձել է *ճրռավանդ*՝ բառակցքի *ա*-ի անկումով և շեշտին նախորդող ձայնավորի թուլացմամբ, ճիշտ ինչպես՝ *ասարանոց > սրբա նոց*:

3. տրհանե/իլ ‘հևալ’

Գորիս *տիհանեղ*²⁰, Ղարաբաղ *տրհանե/ի/ալ*, *տիհանե/իլ* ‘հևալ, շնչարգել լինել, արագ շնչել’²¹

Աճառյանը (1913, 1032) սա գրանցում է որպես զուտ բարբառային բայ՝ առանց մատենագրական վկայության և ստուգաբանական որևէ նշման: Իմաստը ներկայացնում է այսպես՝ «հևալ (յոգնութենեն, կամ հիւանդի կարճ ու արագ շնչելը)»:

Լ. Հովհաննիսյանն (1979, 56) այս բայը բխեցնում է հնդեվրոպական **dʰu(e)n-* ‘ձայն’ արմատից (հմմտ. իւեթ. *tuhhai* ‘հևալ’)՝ ենթադրելով **տանիլ* ելակետային ձև, ընդ որում *h-*ի ներմուծումը նա կապում է «շնչի, հազագի արտահայտության հետ, որպես բնաձայնություն»²²:

Այս ստուգաբանությունը խնդրահարույց է մի շարք պատճառներով: Հեղինակը չի անդրադառնում հնդեվրոպական արմատի կարգավիճակին և հիշատակում է միայն իւեթական ցեղակիցը: Սակայն **dʰu(e)n-* արմատը, որի իմաստը վերականգնվում է որպես ‘հնչել, ձայն արձակել, թնդալ (tönen, dröh-

¹⁹ ՀԱԲ 4, 304-305: Հմմտ. նաև *ապաւանդակ*, *բարձրաւանդ(ակ)*, *դարաւանդ* ևն (ՀԱԲ 1, 232b, 427-428, 635-636): Այս արմատի ստուգաբանության շուրջ տես ՀԱԲ 4, 305; Զահուկյան 1987, 515, 545, 2010, 68b, 704a; Olsen 1999, 250:

²⁰ Մարգարյան 1975, 484a:

²¹ Գրիգորյան-Սպանդարյան 1971, 471a; ՀայԼեզԳրբԲառ Զ, 2010, 182a, 194b; Մարգարյան 2013, 724a: Բացի այս աղբյուրներից, բառը գործածված է նաև, օրինակ, արցախյան հետևյալ առածում. *Շնոր հչիլան տհանիլ չի* (Հարությունյան 1991, 205; բառացանկում՝ *տհանալ*, էջ 377):

²² Հովհաննիսյան 1979, 56, 2000, 120:

nen)²³, ձևով ու նշանակությամբ այնքան էլ մոտ չէ քննվող բարբառային բառին: Խեթ. *tuhhae-zi* բայն ամենայն հավանականությամբ նշանակում է 'ծխալ, ծուխ արձակել' և սերում է հնդեվր. **d^huh₂-*արմատից²⁴: Բացի այդ, **d^hu(e)n-* արմատը չէր կարող Սյունիքի ու Արցախի բարբառային տարածքներում տալ **տան-*, որը ենթադրում է հին հայկական **ղան-*: Համոզիչ չէ նաև *h*-ի ներմուծման բացատրությունը:

Ավելի ուշ, Լ. Հովհաննիսյանը (2000, 120) ներկայացնում է նույն ստուգաբանությունը և զուգահեռաբար ընդգրկում է մեկ այլ արմատ՝ հնդեվր. **anə-* (իմա **h₂enhi-*), հմմտ. սանս. *āniti* 'շնչել', գոթ. *uz-anan* 'արտաշնչել' և այլն²⁵: Հեղինակը գրում է. «Հավանաբար այս արմատից է և բարբառային *թանչիլ* 'հնալ'–ը: Հնդեվրոպական այս զուգահեռը արդարանալու դեպքում *տհ(թ)*–ն կարելի է դիտել որպես բնաձայնության դրսևորում»: Հնչյունական մանրամասները, սակայն, մնում են ամբողջովին մութ:

Մահմանափակ տարածում ունեցող բարբառային բառերի դեպքում գերադասելի է քննությունը ներքին ստուգաբանությամբ սկսելը: Կարծում եմ կարելի է վերակազմել **օղ-ա-հան-իլ* **օղը հանվել, օղից զրկվել'* բաղադրությունը²⁶: Աճառյանի հնչյունական օրենքի համաձայն այն կդառնար **օղաիհանիլ* > **օղաիհանիլ* (ձայնավորների առնմանությամբ) > **օթը/իհանիլ*: Հնչյունական զարգացման համար հմմտ. *ղաղարել* > Գորիս *թիթայրել*²⁷, Ղարաբաղ *թըթարել/իլ*²⁸: Այնուհետև **օթը/իհանիլ*–ը տվել է **(օ)տը/իհանիլ*, որտեղ *-թ-* շնչեղ խուլը շնչեղության տարնմանական կորստով դարձել է *-տ-*: Նույն զարգացումը տեղ է գտել *հացահան* > *ծրհան* օրինակում (տես «Ներածություն»):

Եթե **օղահանիլ* > *տրհանել/իլ*–ը համեմատաբար նոր կազմություն լիներ՝ նույն *օթ* (< *օղ*) և *հան-* բաղադրիչներից, ապա

²³ Slez Pokorny 1959, 277; LIV 2001, 158; Mallory / Adams 1997, 533-534:

²⁴ Հանգամանակից քննարկման համար տես Kloekhorst 2008, 886-889; de Vaan 2008, 597; Beekes 2010.1, 567-568: Հմմտ. LIV 2001, 158:

²⁵ Lehmann 1986, 385; Mayrhofer EWAia 1, 1992, 72:

²⁶ Նույն բաղադրիչներով բայց այլ իմաստով ունենք *օղահան* 'օղը մի տեղից դուրս հանող, օղը դատարկող' նոր բառը (Մալխասեանց ՀԲԲ 4, 601c; հմմտ. նաև ՀԱԲ 4, 608a):

²⁷ Մարգարյան 1975, 77, 321:

²⁸ Դավթյան 1966, 339:

հնարավոր չէր լինի Աճառյանի օրենքով բացատրել *-ալ-* ձայնավորը:

Գրականություն

Աղայան, Է. Բ.

1954 Մեղրու բարբառ. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Աճառյան Հ.

1913 Հայերեն գաւառական բառարան. Թիֆլիս («Էմինեան ազգագրական ժողովածու», հտ. Թ):

1971-79 (ՀԱԲ), Հայերեն արմատական բառարան, 4 հատորով (2-րդ հրատ.). Երևանի համալսարանի հրատարակչություն [1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով]:

Ամատունի Սահակ վարդապետ

1912 Հայոց բառ ու բան. Վաղարշապատ:

Ավագյան, Սուրեն Արտեմի

1978 Վիմական արձանագրությունների բառաքնություն.

Երևանի համալսարանի հրատարակչություն:

Բաղրամյան, Ռ. Հ.

1964 Շամախիի բարբառը. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Բառնասյան, Ջեմմա

2009 Ժամանակակից բառերը հայերենի բարբառներում.

Երևան. «Նաիրի»:

Գրիգորյան-Մպանդարյան, Մարգարիտ

1971 Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը. Երևան. Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Դավթյան, Կ. Ս.

1966 Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Երվանդյան, Զուխրա

2007 Ղարաբաղի բարբառի բառային կազմի հաստատման գործընթացը. Երևան. հեղինակային հրատարակչություն:

Լալայան, Ե.

1983-, 1- Երկեր. հտ. 1, 1983 (Ջավախք). հտ. 2, 1988 (Արցախ).
Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն. հտ. 3, 2004 (Բորչալուի
գավառ). Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:

Լուսենց, Աշոտ Ղուկասի

1982 Արեշի բարբառը. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչու-
թյուն:

Խալաթեանց, Գրիգոր

1899 *Գիրք մնացորդաց* ըստ հնագոյն հայ թարգմանութեան.
Մոսկուա. Տպարան Վարվառէ Գատցուկ:

ՀԱԲ, տես Աճառյան 1971-79

Հայժողձեք 1-

1959 Հայ ժողովրդական հեքիաթներ. հտ. 1, 1959 – հտ. 14,
1999, Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն; հտ. 15, 1998, Երևան.

«Ամբոց»:

ՀայԼեզգրբԲառ Ա-Է

2001-12 Հայոց լեզվի բարբառային բառարան (խմբ. Ա.
Սարգսյան և ուրիշներ). Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատարակչություն:

Հարությունյան Լևոն

1991 Նշխարներ Արցախի բանահյուսության. Երևանի
համալսարանի հրատարակչություն:

Հովհաննիսյան, Լ. Շ.

1979 Բառային հնաբանություններ Ղարաբաղի բարբառում.
ԼՀԳ 1979, № 9. 52-60:

2000 Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագոյն
շերտերը. ԼՀԳ 2000, № 1. 117-122:

Մալխասեանց, Ստեփան

1944-45 (ՀԲԲ 1-4), Հայերէն բացատրական բառարան.
Երևան (վերատպ. 1955-56 և 1983, Պէյրուք. «Սևան»):

Սարգսյան, Ա. Ս.

1975 Գորիսի բարբառը. Երևանի համալսարանի
հրատարակչություն:

ՄիջՀայԲառ

2009 *Ռ. Ս. Ղազարյան և Հ. Մ. Ավետիսյան*, Միջին հայերենի
բառարան (2-րդ բարեփոխված հրատարակություն). Երևանի
համալսարանի հրատարակչություն:

ՆՀԲ 1-2

1979-81 *Գ. Աւետիքեան, Խ. Միրումէեան, Մ. Աւգերեան*, Նոր քառգիրք հայկազեան լեզուի. Վենետիկ. Սուրբ Ղազար, 1836-1837. 2-րդ հրատ. Երևանի համալսարանի հրատարակչություն:

Պողոսյան, Ա. Մ.

1965 Հաղորթի բարբառը. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Ջահուկյան Գ. Բ.

1987 Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

2010 Հայերեն ստուգաբանական բառարան (խմբագրությամբ և առաջաբանով՝ Վահան Սարգսյանի). Երևան. «Աստղիկ» հրատարակչություն:

Սարգսյան, Արմեն Յուրիկի

2013 Ղարաբաղի բարբառի բառարան. Երևան. «Էդիթ Պրինտ»:

Վարդանյան, Արտակ Վարդանի

2004 Վայոց ձորի միջբարբառը. Երևան. «Տիգրան Մեծ»:

Քամալեանց, Ս.

1893 Ծովինար. հեքեաթ (2-րդ տպագրություն). Թիֆլիս:

Beekes, Robert S. P.

2010 *Etymological Dictionary of Greek* (with the assistance of Lucien van Beek). 2 vols. Leiden: Brill.

Kloekhorst, Alwin

2008 *Etymological dictionary of the Hittite inherited lexicon*. Leiden, Boston: Brill. (LeidIEEDSer, 5).

Lehmann, Winfred P.

1986 *A Gothic Etymological Dictionary* (based on the 3rd ed. of Feist's dictionary). Leiden: E. J. Brill.

LIV

2001 *Lexikon der indogermanischen Verben: die Wurzeln und ihre Primärstambildungen* (ed. by Helmut Rix, Martin Kümmel, et al.). Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag.

Mallory, J. P. & Adams, D. Q.

1997 (eds.), *Encyclopedia of Indo-European culture*. London, Chicago: Fitzroy Dearborn Publishers.

Martirosyan, Hrach K.

2010 Etymological dictionary of the Armenian inherited lexicon. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 8).

Mayrhofer, Manfred

1992-01 (EWAia) Etymologisches Wörterbuch des Altindoarischen (3 vols). Heidelberg: Carl Winter Universitätsverlag.

Olsen, B. A.

1999 The noun in Biblical Armenian: origin and word-formation – with special emphasis on the Indo-European heritage. Berlin, New York: Mouton de Gruyter. (Trends in linguistics. Studies and monographs; 119).

Pokorny, Julius

1959 Indogermanisches etymologisches Wörterbuch, vol. 1. Bern, Stuttgart: Francke.

Vaan, Michiel de

2008 Etymological dictionary of Latin and the other Italic languages. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 7).

Hrach Martirosyan
(Wien)

**Etymological studies in the dialects of
Syunik‘ and Arc‘ax: Reduction of initial vowel**

Summary

In the dialect areas of Syunik‘ and Arc‘ax the initial unstressed vowel of polysyllabic words is reduced or lost. For instance:

akanat ‘trap’ > Լարախ *kánat* ‘net for catching birds’

asaranoc ‘oil-mill’ > Goris, Լարախ *sərano/uc*;

a(r)celi ‘razor’ > Goris, Լարախ *cíli*;

hac‘ahan ‘an implement for taking out the baked bread’ > Goris, Լարախ *cəhan*.

The assumption that Լարախ *ɾk‘nak* (vs. Classical *aregakn* ‘sun’) is an archaic reflex of the IE proto-form allegedly with an initial **r-* is untenable. First, the proto-form of the word for ‘sun’ is now reconstructed as **h₂reu-i-* rather than **reu-i-* (compare Skt. *ravi-* m. ‘sun, sun-god’ and Hitt. *ḫaru(ṽa)nae^{-zi}* ‘to become bright, get light, dawn’). Second, Proto-Armenian (probably also Proto-Indo-European) did not tolerate a word-initial **r-* and in such cases always acquired a prosthetic vowel, an augment *e-* or *a-*, so it is extremely difficult to imagine how a word in a modern dialect would have escaped this rule. Third, *ɾk‘nak* is a marginal form; *aregakn* is reflected in Լարախ mostly as *írík‘nak*, *íríhynak*, *ərék‘nak*, *əríhynak*

In this paper I will apply this rule to etymologize three words of these dialects.

1. *žmaženk‘*, *žməžank‘* ‘evenfall, twilight’

Syunik‘, Լարախ *žmaženk‘* / *žməžank‘* ‘evenfall, twilight’ may be derived from Old Armenian *atjamulj* ‘darkness, twilight’. The initial syllable *at-* has mainly been lost, but its trace may be observed in the by-forms *əžməženk‘* / *əžməžänk‘*. In some areas the word has been reinterpreted as *žamažamk‘* ‘time for divine service’. One might even assume a blend of two etymologically different formations, (1)

**(əł)j/žamu(ł)j/ž-ayn / -ēn-k* ‘evenfall, half-darkness, twilight’; (2) *žamažam-k* ‘time for divine service’.

2. *čŕavand* ‘thick beams as part of the ceiling’

Goris *čŕavand* / Łarabał *čŕavānd* ‘thick beams as part of the ceiling’ may be interpreted as *a(w)čar* ‘ceiling’ + the conjunction *-a-* and **vand-* ‘a framework of wooden bars, a wooden trellis-work’, cf. *vand-ak* ‘a wicker basket, net; a wooden trellis-work’. Thus: **a(w)čar-a-vand* ‘wooden framework of the ceiling’ > **(a/ō)čarāvand* > *(ə)čŕāvand*, exactly as in *asarānoc* ‘ > *(ə)səránoc* ‘.

3. *tihānel / tōhānel* ‘to pant, breathe hard’

Goris *tihānel* / Łarabał *tōhānel* ‘to pant, breathe hard’ has been etymologized on Indo-European grounds. These etymological treatments may be worthy of consideration, but I do think we should start with an assumption that this verb might simply be a recent formation, for example, a compound of *ōd* ‘air’ and *han-* ‘to take/bring away, draw/pull out, remove’ with the conjunction *-a-*; thus: **ōd-a-hanil*, lit. ‘to be out of breath / air’. A development **ōd-a-han-* > Łarabał *tōhan-* would match that seen in *hac’ahan* ‘an implement for taking out the baked bread’ > Goris / Łarabał *cōhan*.



Մհեր Բումունց
Գորիս
prof1972@mail.ru

Տեղանունների ստուգաբանությունը միշտ էլ կարևորվում է ոչ միայն լեզվաբանական, այլև պատմաաշխարհագրական, ինչպես նաև քաղաքական տեսանկյուններից:

*Զանգեզուր տեղանվան ստուգաբանությունը, ինչպես երևում է, մտահոգել է պատմաբան-բանասերների և ընդհանրապես հայագետների տարբեր սերունդներին: Ետխորհրդային և խորհրդային ժամանակաշրջաններում եղած որոշ կարծիքներ, որ բավական թուր էին ու զուրկ լեզվաբանական մանրամասն քննությունից, ցավոք, այսօր էլ փորձում են շարունակել տիրապետող դերը: Ըստ էության՝ վերջին շրջանի ուսումնասիրությունները նոր ոչինչ չեն ավելացնում **Զանգեզուր** տեղանվան ստուգաբանության հարցում: Հին կարծիքների հավաքագրմամբ և ընդհանրացմամբ, ոչ գիտական մոտեցմամբ թանձրացնում են աղավաղումներն այս հարցի շուրջ: Եղած սխալ կարծիքների ժխտման նպատակ է հետապնդում այս ուսումնասիրությունը: Փորձ է արվել մանրամասն քննելու և անդրադառնալու եղած բոլոր կարծիքներին: Զանգեզուր տեղանվան ստուգաբանության վերաբերյալ առաջ են քաշված առավել հնարավոր տեսակետներ, որոնցից ոչ մեկը դեռևս չենք համարում վերջնական:*

Դեռևս Ղ. Ալիշանը նկատել է, որ **Զանգեզուր** տեղանունը նույն **Չագեձորն** է, որ աղավաղվել և հետագայում դարձել է Զանգեզուր. «10-րդ դարի առաջին կեսին Մեծ Փիլիպեի թոռ Փիլիպեն տիրում է Հաբանդին: Հին բերդի անունով Չագեձոր եմ նշում, որ այլագգիների բռնազբոս ծոմոումով հետին դարերում և մինչև այժմ այս Հաբանդ գավառը կոչում են Զանկյ/եագոր կամ Զանկեզուր, ինչպես հնում հակառակ ձևով բերդը՝ գավառի անունով»¹:

¹ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 255:

«Զանգեզուրի հայերը» գրքի հեղինակ Ստ. Լիսիցյանը հետևում է Ղ. Ալիշանի կարծիքին՝ ամրապնդելով նշված տեսակետը ու ավելացնելով, թե դա հայկական **Զագեձոր** տեղանվան աղբյուր-ջանական ձևն է, քանի որ բառի վերջին բաղադրիչը համարժեք է հայերենի **ձոր** բառին, ինչպես Աստագուր /Վանաձոր/, Այնագուր /Աղավնաձոր/ և այլ անուններ²:

Զանգեզուր գավառին վերաբերող պատմական ուսումնասիրությունների մեջ բառի ստուգաբանական վերլուծություններից մեկում՝ Ե. Լալայանի «Զանգեզուրի գավառ» աշխատանքում, կրկնվում է Ղ. Ալիշանի և Ստ. Լիսիցյանի կարծիքը այն մասով, որ **Զանգեզուր**-ը առաջացել է Զագեձորից: Հեղինակը թերևս ավելացնում է, որ **Զագեձորն** էլ նույն **Մակեձորն** է, որ չի առաջացել **Զագ** նահապետի անունից, ալ **ծակ-ձորից**. «Գորիսից քիչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենախիս բնակությունը, կոչվում է «ծակերի-ձոր», այդտեղ գտնվող բազմաթիվ «ծակեր»՝ արհեստական քարայրի պատճառով»³: Այս տեսակետն էլ ամբողջական չէ, քանի որ, կարծելի է, որ **Զագ** նահապետի անվան հետ կապելը և **ձորի** այդպես՝ **Զագ /-ի, -իկի, -ա/** կոչվելն էլ հավանական է, քանի որ **ծակ**-ը դարձել է **Զագ**՝ անձնանունից անցած տեղանուն, որ, անշուշտ, ավելի հին է և կապված է ժողովրդական ավանդության հետ, ինչպես՝ Հայկ-Հայաստան, Գեղամ-Գեղարքունիք, Միսակ-Մյունիք և այլն:

Գորիսի պատմության ուսումնասիրության մեջ մեծ վաստակ ունեցող Ս. Հախվերդյանը աշխատանք ունի Զանգեզուր տեղանվան ստուգաբանության վերաբերյալ, որ կքննվի ստորև:

Լեզվաբաններից հարցին անդրադարձել են Ար. Ղարիբյանը, Հ. Աճառյանը, ապա Ալ. Մարգարյանը:

Մեր շատ սիրելի Ալ. Մարգարյանը հետևում է տիրապետող կարծիքին, ապա տալիս ստուգաբանությունը. «...թուրքերի՝ Զագեձոր ներխուժելու պատմական տխուր իրողությամբ պայմանավորված՝ այդ բուն հայերեն անվանումը նրանց լեզվի հնչյունական օրենքներին ենթարկվելով՝ այլափոխվել, դարձել է Զանգեզուր:

Այսպիսով,- եզրակացնում է բազմավաստակ լեզվաբանը,- միանգամայն պարզ է, որ Զանգեզուրը իրոք Զագեձոր//Զագաձոր-ի

² Տե՛ս Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Ե., 1969, էջ 19:

³ Ե. Լալայան, Զանգեզուրի գավառ, «Ազգագրական հանդես», հ., Բ, Թիֆլիս, 1899, էջ 8:

այլափոխված ձևն է, որ առաջ է եկել նախ ձ հնչյունի, որից, ինչպես հայտնի է, գուրկ է թուրքերենը, գ-ի փոխարկմամբ և ապա Ձագեձոր>Ձագեգոր-ում գ ձայնեղից առաջ ն ձայնորդի հավելմամբ ու օ/<n/>ու հնչյունական փոփոխությամբ: Արդյունքը եղել է այն, որ ուշ ժամանակներում առաջ եկած այդ՝ Ձանգեգուր ձևը չճանաչելու չափ հեռացել է իր բուն՝ Ձագեձոր//Ձագաձոր նախավոր ձևից և հիմք դարձել ժողովրդական կեղծ ստուգաբանության համար, որ իբր Ձանգեգուր տեղանունը իր ծագմամբ կապվում է **զանգ** (=զանկ) բառի հետ և նշանակել է կա՛մ «Ձանգը-գոռ», այսինքն **զանգը** գորավոր է, կա՛մ «Ձանգն է գուր»⁴:

Մեր կողմից ընտրված հարցի լուծման առաջադրումը պետք է մերժի վերոնշյալ կարծիքները, և հատկապես Ալ. Մարգարյանի ստուգաբանությունը, որին հետևել են նաև կեղծ ստուգաբանություններ, թե իբր **Ձանգեգուր**-ը **Ձագեձոր** բառի աղբբեջանական կամ մի այլ օտար անվանումն է:

Այստեղ պետք է հիշենք, որ ստուգաբանությունը լեզվաբանության այն բարդ բաժինն է, որ պատահականություններ չի սիրում: Ամեն ասված կամ վերծանված բառ կամ իմաստ պետք է պատճառաբանելի լինի: Ստուգաբանությունը առանձնակարգ գիտություն է, ունի իր հիմնական մեթոդները, սակայն խնդիրներ միշտ էլ լինում են հատկապես հատուկ անունների ուսումնասիրության մեջ. դժվար է միանգամայն կարծիք հայտնելը. «Այս տեսակի բառերի մասին կարելի է անել միայն անապացուցելի ենթադրություններ, նույնիսկ եթե ճիշտ էլ լինեն, և նրանցից ոչ մի եզրակացություն չի կարելի հանել»⁵:

Ձանգեգուր տեղանվան ստուգաբանության վերաբերյալ մեր քննության մեթոդները տարաբնույթ են ու համակողմանի՝ նյութի լիարժեք ուսումնասիրության թելադրությամբ, բայց չենք բացառում նրանում թեական հարցերի հնարավոր առկայությունը:

Ալ. Մարգարյանը նշում է, որ **ձ** հնչյունը գոյություն չունի թուրքերենում, այդ պատճառով **Ձագեձոր** տեղանվան **ձագ** և **ձոր** արմատներում նշված հնչյունները դարձել են **գ**, բայց նմանատիպ օրինակներ այս տարածաշրջանի տեղանունների համար չեն բերվում: Ձանգեգուր տեղանվան՝ ուշ շրջանում առաջացած և գուտ

⁴ Ալ. Մարգարյան, Ստուգաբանություններ, Ե., 2015, էջ 184:

⁵ Ն. Աճառյան, Հայոց լեզվի համեմատական քերականություն, հ., VI, Ե., 1971, էջ 766:

օտար ազդեցությամբ ձևավորված լինելու կարծիքին հետևելով՝ ոմանք ավելի հավանական են համարում այն, որ *Չազեձոր*-ը ռուսերենի հնչողությամբ է դարձել Չանգեզուր. ձ-ն ռուսերենի տառադարձությամբ և հնչողությամբ տալիս է *ՃՅ/դզ-ձ-զ/*. *Չազեձոր-Zangezur-Ճзангедзор*. Մակայն ձ հն չուն չունի և ռուսերենը,- Այ. Մարգարյանի ստուգաբանության եզրահանգմամբ շարունակում է Ս. Հախվերդյանը,- բայց հետազոտողներից որևէ մեկն ուշադրություն չի դարձրել, որ բառի ծագմանն ու տարածմանը կարող էր նպաստած լինել Չազեձորի՝ Դզագեղգոր (*Ճзангедзор*) ռուսերեն անվանումը: Տրամաբանորեն կարևորվում է, թե երբևէն ճ է Չանգեզուր տեղանունը սկսվում գործածվել»⁶: Ապա հետևում է եզրակացությունը. «Եթե Չանգեզուրը լիներ *միայն* (ընդգծումը մերն է՝ Մ.Բ.) թուրքերենի ազդեցությամբ ստեղծված բառ, ապա այն վաղուց՝ թերևս 17-րդ դարից պիտի լիներ գործածական»⁷: Ինչպես մյուս, այս վերջին կարծիքը նույնպես ժխտելի է հետևյալ պատճառներով.

ա/ Խոսելով *ձ>զ* հնչյունների փոփոխության մասին՝ պետք է նկատել, որ փոխանցումներ պատահել են մեր լեզվի մեջ: Բառերում *ձ>զ* անցում կամ կիրառություններ հանդիպել են թե՛ փոխառություններում, թե՛ ստացվածքային բառերում, թե՛ բարբառներում և թե՛ վաղնջահայերենում: Հ. Աճառյանը այսպիսի օրինակներ է բերում. «*Մարձել* բառի դեմ *մարզել* համարում ենք տարբեր ժամանակի փոխառություն»⁸, «*Ոզնի* բառի դեմ ունենք նաև *ռձնի*. որովհետև կարելի չէ ոզնիից դուրս բերել ոձնի, և որովհետև հնիս. *g՝h տալիս է թե՛ ձ և թե՛ զ, ուստի և ոձնի համարում ենք հին բարբառային ձև: Այս ձևի գոյությունը պատճառ է դառնում, որ նաև կորինձ ձևը կորիզ բառի դեմ՝ ընդունենք իբր հին բարբառային ձև»⁹, «*Ղերձակ* և *ղերձան* բառերը /որոնց ծագումը լավ պարզված չէ/ պարսկերենի ազդեցությամբ ուշ ժամանակ դարձան *ղերզիկ* և *ղեր-*

⁶ Ս. Հախվերդյան, Չանգեզուր տեղանվան ստուգաբանության և գործածման ժամանակի հարցի շուրջ, ՀՊՃՀ-ի տարեկան գիտաժողով, Նյութերի ժողովածու, հ. 3, Ե., 2005, էջ 876:

⁷ Նույն տեղում:

⁸ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951, էջ 426:

⁹ Նույն տեղում, էջ 427:

զան»¹⁰: Գ. Ջահուկյանը նշում է, որ հ.-ե. ց'հ /ձ/-ի դիմաց հայերենն ունի **զ** կամ **ձ**, ինչպես՝ **ձող-զոխ** և այլն¹¹:

բ/ Խոսքը վերաբերում է ոչ միայն մեկ հնչյունի փոփոխությանը, այլև հնչյունների: Գրաբարյան **զանկ** «կոչնակ» արմատի վերջադիր **կ**-ն նոր հայերենի որոշ բարբառներում **ն** ձայնորդի ազդեցությամբ հնչում է **զ** հմմտ. **թանկ>թանզ, բանկ>բանզ** և այլն: Նշվածին հետևում է, որ **զանզ** արմատում հնչյունի ոչ մի հավելում չկա, ինչպես նշում է Ալ. Մարգարյանը: Մավելին, գրաբարի համեմատությամբ միջին հայերենում և հետագայում էլ **ն** հնչյունի անկման երևույթը վերջնահանգային և դրա ազդեցությամբ այլ դրսևորումներում ակնհայտ էր, քան հակառակը. «Որոշ աղբյուրներում **ն**-ի անկում նկատելի է նաև բառամիջի դիրքում: Այսպես, օրինակ՝ Վայոց ձորի վիմական արձանագրություններում **կանզնել** բայը շատ հաճախ վկայվում է **կանզնելյ|կանկել** ձևերով՝ երկրորդ **ն**-ի կորստով. այս ձևերի հաճախականությունը նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ դրանք սովորական և ընդունելի բառաձևեր էին այդ վայրի հայերի համար: Մի երկու օրինակ. «...Ես Ալամս կանկեցի զխաչս» (Դեվ. III, 46, 1200թ.), «...կանզեցաք զխաչս» (ն.տ. 45, 1283թ.), «...Ես Յովանես ու Բարեթքս կանկեցաք իաչս» (ն.տ. 50, 1284թ.) և այլն»¹²: **Չանզեզուր** տեղանվան բազմազան տարբերակներից և ոչ մեկում չի նկատվում **ն**-ի անկում, իսկ մեծամասնության մեջ **զ**-ն փոխարինում է **կ**-ով՝ **Չանկեզուր, Չանկեզոռ, Չանզյազուր, Չանզազոռ** և այլն: Հայերեն տեղանունների մեջ սովորաբար **զ-կ-ք** պայթականներից առաջ չի նկատվում **ն**-ի հավելում, իսկ **Չազեձոր**-ը միշտ հիշատակվել է առանց **ն**-ի՝ **Չազեձոր**, այլ ոչ թե **Չանզեձոր**:

գ/ Չազեձորը, կարծում ենք, անվան հնարավոր փոփոխություն կարող է կրած լինել ավելի վաղ, և ժխտելի չէ, որ անցած լինի փուլեր: Օրինակ՝ դեռևս 17-րդ դարի կեսերին՝ մինչ ռուսական ազդեցությունը, այս տեղանքի համար գործածվում է **Շազաձոր** երկրանունը և ոչ քաղաքը կամ բերդը. «Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ մեղապարտ Մովսէս սուտանուն իրիցոյ, որ եմք

¹⁰ Նույն տեղում, էջ 424:

¹¹ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե. 1972, էջ 250:

¹² Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 148:

բնական ի յերկրէն Ղափանայ, ի միւս երկրէն **Օազաձորոյ**¹³ (ընդգծումը մերն է՝ Մ.Ք.), ի գեղջէն Գորիսոյ...»¹⁴: Նույն հեղինակը հետագա հուշագրոյան մեջ գործածում է նաև **Չազաձոր** ձևը: Դրանից հետո՝ 18-րդ դարի երկրորդ կեսին, գործածվում է նաև **Չանկազոռ** տեղանունը¹⁵, որ համընկնում է **Չանգեզուր** տեղանքին: Ղ. Ալիշանն էլ առկախ է թողնում Չանգեզուր անվան գործածոյան բուն ժամանակաշրջանը, բայց և հաստատում, որ այն գործածվել է թուրք-պարսկական տիրապետոյան շրջանում. «Երբ և ում կողմից է սա (**Չազէձոր=Չանկէազոր**՝ Մ.Ք.) գլխավորը եղել շէներում և Չանկազոր անունը ստացել պարսից և թաթարաց իշխանոյան օրոք, չեմ կարող ասել»¹⁶: Փաստորէն, ինչպէս նկատում ենք, Ս. Օրբէլյանի ժամանակաշրջանից սկսած՝ **Չանգեզուր** տեղանվան համար, ժամանակային հերթագայութեամբ, գործածվում են **Չազաձոր > Օակաձոր||Չազաձոր > Չանկազոռ > Չանգեզուր** ձևերը: Սկզբնական տարբերակը՝ **Չազաձորը**, գրքային ձևն է, որին հաջորդում է բարբառայն տարբերակ/ներ/ը՝ **Օակաձօր-Չազաձոր**: Սա նաև համընկնում է այն ժամանակաշրջանին, երբ բարբառները մեծացնում են տարբերակիչ հատկանիշները մյուս բարբառների և գրականի նկատմամբ, սրանց էլ **/Չազէձոր> Օակաձօր/** հաջորդում են ժողովրդական ստուգաբանութեամբ ձևերը, տարբերակները՝ **Չանկազոռ, Չանգազոռ, Չանկեզուր, Չանկեզուռ, Չանգազուր, Չանկազօր** և այլն, քանի որ **Չազաձորը** մթազնել է նշանակւոյթունը բարբառային արտասանութեան հետևանքով: Ս. Հախվերդյանը չի ժխտում, որ **Օազաձոր-Չազաձոր**-ը նույն Չանգեզուրն է. «Այս ձեռագրից, - հղում է մի ձեռագիր, որտեղ նշված է **Օազաձոր** անվանումը,- իմանում ենք այն կարևոր տեղեկւոյթունը, որ Խնձորեսկը մտնում է Չազաձորի (գործածութեան ձևը հեղինակինն է՝ Մ.Ք.) մեջ»¹⁷: Այստեղ էլ առաջ է գալիս մի

¹³ Ինչ-որ **Օակաձոր** անվամբ գյուղի տեղադրոյան հարցն էլ առկախ է, որ նույնացնում են Շորին ձոր բնակավայրի հետ: Այս անվանումով Ս. Օրբէլյանը գյուղատեղ չի նշում:

¹⁴ Հայերէն ձեռագրերի ԺԷ դարերի հիշատակարաններ, հ. Գ, Ե., 1984, էջ 488 /գրված 1652թ./:

¹⁵ Հայ-ռուսական հարաբերութեանները XVIII դարում, /ռուսերէն/, հ. 4, Ե., 1990, էջ 222 /հղումը կատարված է Ս. Հախվերդյանի «Գորիսի ամփոփ պատմութեան» գրքից/:

¹⁶ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 262:

¹⁷ Ս. Հախվերդյան, Գորիսի ամփոփ պատմութեան, Ե., 2005, էջ 140:

այլ հարց, ըստ որի՝ տեղանվան մեջ հնչյունափոխվել են ոչ թե **ձ<զ** /**ձազ...զանգ-ձոր-զուր**/ ձևերը, այլ **ծ<զ** /**ծակ/զ/...զանգ-ծոր-զուր**/-ը, այսինքն՝ **Չանգեզուրը** պետք է առաջացած լինի **Շագաձոր-Չագաձոր**-ից: Այս հնչյունափոխությանն էլ կարող ենք անդրադառնալ, բայց առայժմ խուսափում ենք առաջացող ավելորդ շփոթությունից, որ արդեն հարուցված է լեզվաբանական հիմքերի բացակայության պայմաններում¹⁸:

1. Արևելյան լեզուներից անցած փոխառյալ կամ հայերեն՝ թուրքերենի հնչողությամբ (թերևս նաև արտասանական հնչյունադարձությամբ) բառերում, որքան մեզ ծանոթ է, չի հանդիպում **զ** ձայնեղից առաջ **ն** ձայնորդի հավելում: Նման հնչյունափոխություն հնչյունական ի՞նչ օրենքով կարող էր տեղի ունենալ և այն էլ տեղանունների մեջ, որոնք, մյուս բառերի համեմատությամբ, ավելի հսկելի են, հաճախական, ընդհանրական:

2. **Չանգեզուր** բառի երկրորդ բաղադրիչի ձայնավորի մասին պետք է ասել, որ **o/n/>ni** որոշակիորեն կանոնավորված հնչյունափոխություն գոյություն ունի Գորիսի բարբառում /**որոճ>արուճ, քոռ>թուռնատեր** և այլն/ և ենթաբարբառներում, հատկապես Շինուհայրի /**փոր>փուր, խօզ>խուզ, կօվ>կուվ** և այլն/, բայց նույնը չի տարածվում կամ ընդհանրական չէ հայերենի մյուս բարբառային ձևերի համար, որ նշում է Ստ. Լիսիցյանը **Աստագուր /Վանաձոր/, Այնագուր /Աղավնաձոր/** բառերի համար, ինչն էլ ընդունելի է Ալ. Մարգարյանի կողմից: Եթե հայերենի **ձ**-ն թուրքերեն հնչողությամբ դառնում է **զ**՝ թուրքերենում այդ հնչյունի բացակայության պատճառով, ապա ինչ տրամաբանությամբ է **o /n/-**ն դառնում **ni** ի՞նչ է, թուրքերենը **n /o/** հնչյունն էլ չունի^o: Հնչյունների փոփոխության համար կարելի է նկատի ունենալ նաև ժամանակաշրջանը: Հայերենի գրեթե բոլոր շրջաններում նշված **n>ni** անցումը նկատվել է: Ընդ որում, այդ անցումը առավելապես վկայված չէ օտար կամ օտար հնչողությամբ հայերեն բառերում: Բարբառային օրինակներին հավելենք միջին հայերենի ժամանակաշրջանի դեպքեր. «Ո հնչյունը հնչյունափոխվում և վերածվում էր ...ու-ի՝ յուներ-յօնքեր, քու-քո, քարքուտ-քարքարոտ, գում-գոմ, խուղ-հող,

¹⁸ **Չանգեզուր** անվամբ տեղանունը պաշտոնական ճանաչում է ստանում Թուրքմենչայի պամանագրով՝ 19-րդ դարի առաջին կեսին, բայց նման կամ նույն ձևով գործածվել է ավելի վաղ:

գնուրդ-գնորդ և այլն»¹⁹: Այս հնչյունափոխու թյունը՝ **ձոր||ծոր>գուր** առաջացել է մյուս հնչյունների ազդեցությամբ՝ գուր /իզուր/ իմաստին հանգեցնելու միտումով: Նախնական ձևերում դեռևս հանդիպում են **Չագաձոր > Ծակաձոր//Չագաձոր > Չանկագոր**, հետո նոր միայն, հավանաբար 19-րդ դարի սկզբից ընդգծվածները արդեն չեն հանդիպում /փոխարենը՝ **գուր**/:

3. Եթե հետևենք **Չանգեգուր** տեղանվան **Չագեձոր**-ից թուրքական կամ այլ լեզվի աղավաղումով առաջացած լինելու փաստին, ապա ենթադրելի է, որ Հայկական բարձրավանդակի՝ Չանգեգուր կոչված մյուս տեղանունները նախապես եղել են **Չագեձոր** /կոնկրետ դեպքում՝ **Չագիկի ձոր**/: Նշենք, որ **Չանգեգուր** անվամբ եղել է ավերակ բերդ Արևմտյան Հայաստանում՝ Էրզրումի նահանգի Բայազետ գավառում, որ չպետք է շփոթել նույնանուն ավանի հետ, որ ավերվել ու անմարդաբնակ է դարձել 1877-1878թթ.՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ²⁰: Ավանդու - թյունը պատմում է, որ Հաբանդ գավառի (իմա՝ Չագեձոր) բնակավայրերից մեկում՝ Վարարակն գետի ափին, եղել է **Չանգրգոր /Չանգրգոր** վանք: Վանքի գոյության մասին նշվում է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»²¹, և պատմում են Ս. Խանգաղյանը ²², պունեցիները ²³, իսկ

¹⁹ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, գ. Ա, Ե., 1960, էջ:

²⁰ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 2, Ե., 1988, էջ 264:

²¹ Նույն տեղում, էջ 266:

²² Ս. Խանգաղյան, Միխթար Սպարապետ, Ե., 1961, էջ 490:

²³ Ահա դրանցից մեկը. «Երբ Լենկ-Թեմուրը գալիս հասնում է Արաքսի ափը, դեռ գետը չանցած՝ նրան ներկայանում է Մեհրի անունով մի իշխան և ասում. «Լենկ-Թեմուրն ապրած կենա, եկել եմ քեզ ծառայել»: Թեմուրի հարցին, թե ինչով նա կարող է ծառայել իրեն, իշխանը պատասխանում է. «Քանի Խոտ գյուղի գլխին գտնվող վանքի մեծ զանգը կա, դու չես կարող գրավել այս երկիրը, թշնամուն հեռվից տեսնելուն պես հնչեցնում են այդ զանգը և ժողովրդին հանում նրա դեմ»:

Լենկ-Թեմուրը մի քիչ մտածելուց հետո ասում է. «Գնա, էդ զանգը վառի, փչացրու, ես քեզ շատ ոսկի ու իշխանություն կտամ»: Դավաճանը գնում է իր նման մի քանի ուրիշների հետ գիշերով զանգի տակ կրակ են վառում և կտրում նրա ձայնը: Լենկ-Թեմուրը գորքով անցնում է Արաքսը: Իմանալով այդ մասին՝ վանահայրը կանչում է զանգահարին ու կարգադրում շտապ զանգը տալ: Չանգահարը ինչքան փորձում է, զանգը ձայն չի հանում: Վազում է վանահոր մոտ և ասում. «Ամեն բան գուր է, զանգը ձայն չի տալիս...»: Լենկ-Թեմուրը գալիս և գիշերով գրավում է ողջ Մյունյաց երկիրը, սկսում ավերն ու կոտորածը: Գյուղերում մարդիկ զարմանքով հարցնում են

զանգ և **ձոք** արմատներով տեղանունները շատ են, որոնք, սակայն, հիմնականում աղավաղումներ չեն կրել: Այստեղ նշելի են նաև **Չագ** արմատով այլ և բավականին շատ տեղանուններ, որոնք հնարավոր դեպքերում կրել են փոփոխություններ, այսպես՝ **Շագ=Չագ, Չաք** /-Քյուչուք շեհիր թուրքական անվամբ/ գյուղ Արևմտյան Հայաստանում²⁴, **Չագ=Չագ**՝ ավան Արովյանի շրջանում, **Չագ=Չյագ**՝ գետակ Արաքսի ավազանում, **Չագ**՝ գետ Սևանի լճի ավազանում, **Չագ=Չագ, Չյագ, Չյակ, Չյաք**՝ գյուղ արևմտյան Հայաստանի Էրզրումի գավառում, **Չագ**՝ գյուղ Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգում, **Չագ**՝ գյուղ Երևանի նահանգում, **Չագ=Չագ, Չյակ**՝ գյուղ Կարսի մարզում²⁵: **Չագ** ձոք Սյունիքում հիշատակում է հայագետ, ճանապարհորդ Սեն-Մարտենը, որը տեղակայում է **Չագաձոք** գավառում: Հեղինակը նկատի ունի **Չանգեզուրի** գավառը այդ գրությամբ, իսկ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» նշում է, որ Սյունիքում այդպիսի տառադարձությամբ տեղանուն այլ հեղինակների մոտ չի հանդիպում. «Ամենայն հավանականությամբ հեղինակը նկատի է ունեցել Չագաձոք ձորը»²⁶: Ինչ է պարզվում. Ա/ հնարավոր չէ՝ **Չագ=Չագ** բոլոր տեղանունները առաջացած լինեն Չագիկ նախահոր անունից, Բ/ բոլորը չէ, որ ունեցել են ձ>զ անցում: **Չագ** /արմատը/ ավանդվել է նախալեզվից՝ *g'hâg²h>«ձագ/ձագուկ», այլև՝ «տեղ, ծակ» իմաստներով/: **Չ>զ** անցումը հայտնի է հ.-ե լեզվից: Հ. Աճառյանը հնչյունական այս անցումը /ձ>զ/ կանոնավոր է համարում հիմնականում ձայնավորից հետո կամ երկու ձայնավորի միջև. «Չայնավորից հետո կամ երկու ձայնավորի միջև /ձ/ տալիս է գ. ...*dig'h-տիգ, *eg'h-եգ, *eg'h-եգր...»²⁷: Նշենք սակայն, որ ձ>զ անցում եղել է նաև բառակազմի համար ոչ միայն նախալեզվում, ինչպես *g'heiem > ձմեռն-zima, այլև հայերենի որոշ բարբառներում՝ որպես հին լեզվից ավանդված հնչյունափոխ մնացուկ՝ *g'hoi-ձող /ցողում/, Գորբբ.՝ ձօղ, գօխ./ և այլն: Գ/ Հայերենի տարբեր բարբառներում, հատ-

միմյանց. «Բա գանգը ինչո՞ւ չտվին»: Ոմանք էլ պատասխանում են. «Չանգը գո՞ւր է, գանգը գո՞ւր է...»: Դրանից հետո գավառի անունը մնում է «Չանգեզուր» /այս մասին տե՛ս sarc.am/:

²⁴ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 828:

²⁵ Նույն տեղում, էջ 471-472:

²⁶ Նույն տեղում, էջ 472:

²⁷ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ., VI, էջ 539:

կապես Գորիսի բարբառում, հայտնի է **ձ>ծ**, այլև **ծ>զ** անցումը, հմմտ.՝ զօխ>ծօղ, զօլ/զօլ՝ «նեղ ու երկար շերտ», >ծնլ /Գորիսի բարբառում/, ծընգալ-զընգալ, ծըլընգոց-զընգոց և այլն:

4. Կարծես սովորական են դարձել ավանդույթները, դրանց հետ կապված հեղինակային որոշակիորեն մշակված պատումները համարել ոչ հավաստի, գիտականից դուրս: Ժողովրդական բանահյուսությամբ մեզ են հասել բազմաթիվ պատմություններ, այդ թվում նաև Ջանգեզուրի մասին: Վերջինիս մասին բանապատումը պատմական կամ տարեգրական հիշատակության չարժանացած լինելու համար կարող է համարվել ավանդույթ, բայց անհնարին չէ, որ եղած լինի կրոնական մի **զանգ**, որի կոչնակները ազդարարել են ժողովրդին սպասվող վտանգը: Ընդ որում՝ նման մի պատմություն էլ շարադրում է Ս. Օրբելյանը, թե իբր Ջալալեդդինը գալիս է Հայաստանը ավերելու: Հայ և վրաց ռազմական ուժերը խմբավորվում են, «իրենց համար դետք ու ազդարարիչ են նշանակում ոմն Շալվեի ու Գրիգոր կոչնակին», սակայն մեր գործին «հարձակվեք» ազդարարումը կոչնակով հայերի ականջին փոխվում է «փախեք»-ի²⁸: Այս և նման պատմություններ կարող են շրջիկ դառնալ տարբեր տարածքներում, փոխվել և նույնիսկ տեղանվան նշանակություն ստանալ: Հայկական շատ տեղանունների մեծ մասի ավանդությամբ ծագումը չեն կարող ժխտել ո՛չ «ամենալուրջ» ստուգաբանությունները և ո՛չ էլ «ամենասթափ գիտությունները»: Ժողովրդի կողմից տեղանունների հնչյունական փոփոխությունը միշտ էլ տանում է որևէ նշանակության. հիշենք, որ ժողովրդական կամ կեղծ ստուգաբանությամբ առաջ եկած հնչյունափոխության ձևը շատ տարածված է: Եթե **Ջանգեզուրի՝ Ջանգն է իզուր, Ջանգն է գորավոր** (որն էլ պատահի) ժողովրդական մեկնությունները գուտ ավանդապատումի կամ բանահյուսության արդյունքն են, ապա ինչպես ստուգաբանենք Տաթևը, Արցախը, Ղարաբաղը, Խոր Վիրապը և այլն, որոնք նախապես ունեն ծագման բուն սկզբնադրյուր, հետագայում ժողովրդական հնչողությամբ ու ստուգաբանությամբ վերափոխվել են:

5. **Ջազեձոր** տեղանունը հիշատակարաններում հիմնականում գործածվում է ոչ թե գյուղի, այլ երկրամասի համար:

²⁸ Ս. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 321:

Մյունիքին առավել քաջածանոթ Ս. Օրբելյանը իր պատմության մեջ **Չագաձոր-Չագեձոր** տեղանունը մեծամասամբ գործածում է երկրամասի համար. «...ձորը կոչեց Չագեձոր, բերդն էլ Չագեձորո բերդ»²⁹, «... ջուրը բերել էր Չագեձորո լեռներից»³⁰, «Նա իր բանակով նստած էր Հաբանդ գավառում, Չագաձորի մուտքի վրա»³¹, «...իշխան Փիլիպեից գնում է Չագեձորի» Վարարակն կոչված ջուրը³²» և ապա որպես գյուղ ու լեռ՝ «...ջուր բերեցի Չագեձորի լեռից»³³ և հարկացուցակում որպես գյուղանուն: Իհարկե, Չագեձորը եղել է ամբողջ ձորը՝ որպես Ծակե/-ի/ի+ա=ե/ կամ -երի/ծոր: Գորիսը հնում իր ամբողջ շրջակայքում ունեցել է բնակավայրեր: Այս ժամանակ արդեն Գորիս /Գորայք/՝ անվանումը կար՝ որպես **Չագեձորի** առանձին բնակավայր, նշվում է նաև հարկացուցակում, որը իբրև բնակավայր տարբեր շերտեր է ունեցել՝ Լաստի խութի փեշի ծակոտ լեռնազանգվածը, Խաչի աղբյուրի տարածքն ու ներքևի ձորը, ապա Ղալա բերդի տարածքը ու դիմացի սարը և այլն: Այստեղից ավելի հյուսիս գտնվում է Ծակեձոր հին բնակատեղին, նրանից հյուսիս՝ Սինդարա բնակատեղին, ավելի արևմուտք՝ դեպի Վերիշեն և Ակներ, էլի հին բնակավայրեր կան, բայց արդեն ոչ թե ձորի, այլ տափարակ տեղերում: Հին Կյորեսից հարավ և արևելք նույնպես բնակատեղիներ կան: Ցավոք, սրանցից ոչ մեկը հնագիտական ուսումնասիրության չի արժանացել, Տաթևի հարկացուցակում նշված գյուղերի տեղադրության շուրջ կարծիքները միասնական չեն:

Մենք հակված ենք այն տարբերակին, որ **Չագեձորը** նախապես եղել է երկրանուն, հետո երկրամասում տարբեր բնակավայրեր ստացել են ինքնուրույն անուններ: Թե սրանցից որն է ստացել **Չագեձոր** տեղանունը, դժվար է միանգամից որոշելը: Ոմանք պնդում են, թե Չագեձորի բերդն ու գյուղը գտնվելիս են եղել Վերիշեն գյուղի մասերում: Գուցե այստեղ եղած լինի մի բերդ, որի նշանակալից լինելու համար ասած լինեն Չագեձորի /երկրամասի/ բերդ, հետագայում բերդի անունից բնակավայրի անուն

²⁹ Նույն տեղում, էջ 71:

³⁰ Նույն տեղում, էջ 226:

³¹ Նույն տեղում, էջ 325:

³² Նույն տեղում, էջ 226:

³³ Նույն տեղում, էջ 327:

առաջանար, բայց այդ հարցն էլ դեռ ուսումնասիրության կարիք ունի: Չազեձորի լեռներ ասելով էլ, կարծում ենք, պետք է հասկացվեր երկրամասի ձորերը շրջապատող լեռնազանգվածը:

Գալով Չանգեզուր բառի առաջին բաղադրիչի վերլուծությանն ու ստուգաբանությանը՝ նկատում ենք, որ **զանգ**-ը ծագում է պահլավերենից՝ **zang** 1. «**զանգ**», «երաժշտական գործիք», 2. «ոտք», «սրունք»³⁴: Չար մանավիորեն այս երկրորդ նշանակությամբ հանդիպում ենք թուրքերենում **zengi** - «ասպանդակ», հավանաբար այս ձևից էլ՝ արդեն միջին հայերենում՝ **զանկու**՝ նույն նշանակությամբ: Խ. Աբովյանի «Վերքում» հանդիպում է նաև **չանգ/կ/**. պրսկ. **čank** «երաժշտական գործիք», նոր պրսկ.՝ **čangi** «երգիչ», թուրք. **can** - «**զանգ**»³⁵ (**չանգ/կ/**՝ նաև «մառախուղ» իմաստով /**չանգ ու դուման, չանգը կոխել** - «մառախլապատել»³⁶: Չենք կարծում, թե **Չանգեզուրի** տեղանքի թխպոտ լինելու համար վայրը պիտի անվանված լիներ **Չանգի ձոր**՝ «թխպոտ ձոր», որ, համենայն դեպս, ավելի հավանական կարող է թվալ **Չազեձոր**-**Չանգեզուրի**-ի համեմատությամբ: Բայց քանի որ բառերի հնչյունական անհամապատասխանությունը գիտականորեն չի ապացուցվում, ուստի հարցի քննությունը չի շարունակվում):

6. **Չանգ** բառի պահլավական ծագման մասին նշում է նաև Հր. Աճառյանը, բերում բառի պարսկական տարբերակները՝ «**զանգակ**», «բոժոժ, փոքր **զանգակ**» իմաստները, ապա ուրիշ լեզուներում տարածված ձևերն ու իմաստները. «...**zanga** «հնչյուն» , քրդ. **zenk, zengil, zangel, zangil** «բոժոժ», **zengeluk** «կոկորդ, կոկորդի ոսկոր» ուս. **qmng**, օսս. **zangarak**»³⁷, այստեղից միջին հայերենում **զանկասպան** /պիլ. **zangpan**/ «ոնապան» և այլն: **Չանգ** բառի այս իմաստն էլ խորհելու տեղիք է տալիս. **zang** «կոկորդ», նախնական որոշ իմաստներ վերականգնելով կամ ընդլայնելով՝ ընդունել է նաև «սոնակ», «առանցք», «սոնի»՝ «վզային երկրորդ ող» և այլ իմաստներ: **Չազեձոր-Չանգեզուրի** աշխարհագրական տեղադրությանը

³⁴ Տե՛ս Գ. Նալբանդյան, Պահլավերեն-հայերեն բառարան, Ե., 1994, էջ 175:

³⁵ Турецко-русский словарь, Москва, 1945, ст.108 /բառը թուրքական չէ, չնայած այս և մյուս բառարաններում նշված չէ փոխառու լեզուն. հավանաբար անցել է պարսկերենից/:

³⁶ Այս մասին կարելի է տեսնել մեր թեկնածուական ատենախոսության մեջ, ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի գրադարան, Ե., 2004, էջ 135:

³⁷ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, II, Ե., 1973, էջ 79:

հետևելով՝ նկատում ենք, որ այդ վայրը իր անունը ստացած պիտի լինի **zang** բառի վերջին իմաստներից. «Ս. Օրբեյանը Հաբանդի գյուղացուցակում նշում է Ձագաձոր գյուղը, որը 12 միավոր հարկ էր տալիս Տաթևի վանքին: Նշում է, որ Վարարակնի ջուրը ջրանցքով Տաթև են տարել Ձագաձորի լեռից: Ուրեմն, պետք է հասկանալ, որ լեռն էլ է կոչվել Ձագաձոր: Այն գտնվում է Վարարակնի հովտի հյուսիսային վերջնամասում: Լեռան լանջին՝ ժայռաբեկորի վրա, մինչև օրս մնում է ջրանցքի վերանորոգմանը (1294թ.) վերաբերող արձանագրություն: Ձագաձոր գյուղը և Ձագաձորի բերդը Ձագաձորի երկրամասում են եղել: Այսպիսով, Ձագաձորի բերդի և գյուղի տեղադրման ճշտման ձգտումը մեզ ակամա տանում է հովտի հյուսիսային կողմը, որով և հաստատվում է Ղ. Ալիշանի այն ենթադրությունը, որ Ձագաձորի բերդը եղել է հին Գորիսի (Վերին շեն) շրջակայքում»³⁸: Մենք էլ սկզբնական շրջանում մոտ էինք այս տեսակետին, բայց հետո, երբ մեր կողմից հավաստի դարձավ, որ հին Գորիսը Վերիշենի տարածքը չէ, հրաժարվեցինք Ձագաձոր բնակավայրի անվան՝ այս տարածքում փնտրելու փորձերից: Չենք կարող ժխտել, որ Վերիշենից քիչ հյուսիս-արևմուտք՝ Ակներ (սա Սո. Օրբեյանի Մյուս Բաղք ավանի գյուղ Ակնը չէ), նույնն է՝ Բռուն թուրք. **h/u/run** «քիթ» (այս բնակավայրի անվանումները հավաստում են, որ Վարարակնի ակունքը այստեղ է) գյուղից ներքև ընկած տարածքը՝ մինչև ներկայիս Գորիս քաղաքի հյուսիսային մասը, խաչմերուկային նշանակություն ունի և այսօր. Հայաստանում Արցախի և հարավային բնակավայրերի հետ կապող հիմնական «առանցքն» է: Ենթադրելի է, որ **zang -զանգ** «կոկորդ», «առանցք» + **ի** (սեռ. հոլով) + **ա** (հոդակապ)=**ե+ձոր** (որը գտնում են, թե թուրքերենի հնչողությամբ դարձել է **զուր**) բարդու թյունն է, ասել է թե «**ձորի առանցք** կամ **առանցքային ձոր**»< «**Ջանգու ձոր**» (որը մեզանում այլ տեղանվան համար արդեն իսկ շատ հայտնի է): **Ջանգ-սեռ** հոմանշային գույգի վերջին՝ բարբառային տարբերակով հայերենում ունենք բավականին շատ բարդություններ՝ «**սոնակալ**», «**սոնակապ**», «**սոնաձայր**», «**սոնապան**», «**սոնամեխ**» և այլն, որն էլ վկայում է բառի՝ այլ բարդություններ ստեղծելու հնարավորությունը: **Ջանգ**-ի «Արմատականում» նշված բարբառային տարբե-

³⁸ Ս. Հախվերդյան, Գորիսի պատմություն, Գորիս, 1996, էջ 25:

րակները՝ Ալսց. Կր. **գանկ**, Ալշ. Երև. Խրք. Մշ. Ջղ. **գանգ**, Գոր, Շմ. Լ. Տիգ. **գանգ** և այլն, հավաստում են, որ բառը ընդհանրական տարածում է ունեցել՝ բոլոր տարբերակներում էլ, զարմանալիորեն, հիմնականում պահպանել արտաքին կազմն ու իմաստը³⁹:

7. Հր. Աճառյանը հիշատակում է նաև «Հանդես ամսօրեայում» նշված **գանգ/կ/** բառի առաջացման մի տարբերակ ևս՝ «զ նախդիրով անկանիլ բայից»⁴⁰: Նույնին վերաբերող օրինակներ են բերվում **«անկանիլ»** բառահոդվածի տակ. «...գանգել, գանգանել «խառնել, միառորել, շաղուել, իրարու յարել»...գանգում «բաղադրություն, խմոր, ձուլ, հայս», գանկանիլ «մի բանի յարիլ»⁴¹» և այլն: Գրաբարի **անկ-անկումածոյ** «հյուսած, գործած, ասեղնագործած», **անկանեմ** «հյուսել, գործել» և **անկ-անկանիմ** «ընկնել» և այլն արմատներից Գորիսի բարբառում պահպանվել է **անցյալ** «ալարկոտ»^{42*}, **ինգլ** /գրք. անկանիլ/ «ընկնել» ձևերը: **Ջ** նախդիրի կցմամբ և **անկ** հիմքից կարող է առաջ եկած լինել **գանկ** արմատը, որի վերջադիր **կ-**ն դարձել է **գ**, քանի որ «գրաբարում երկգրու թյուն ունեցող բառերի մեջ **գլլկ-**ի դիմաց **ն-**ից հետո բարբառս անխտիր գործածում է **գ**»⁴³: Գորիսի ամբողջ մասը՝ հյուսիսից մինչև համարյա Որոտանի կիրճը, ձորահյուսքի դիրք ունի, այստեղ են բեկվում բազմաթիվ մեծ ու փոքր ձորեր, այստեղից՝ **Ջանկ/գ/+**ի /նախդիր, որ բարբառում կորցրել է նշանակությունը և մյուս բառերի համաբանությամբ բառավերջի դիրքում դարձել է **ե/ե**/⁴⁴. Ֆերջնավանկի (կոնկրետ դեպքում՝ **գան-կի** - Մ.Ք.) **ի-**ն մի խումբ բառերում տալիս է **ե**, ինչպես՝ **ապրիլ > ապրել**, **բծիծ > պրզեզնը**⁴⁵: Կառուցվածքային այս բարդությամբ ձևը մերժվում է, երբ դրանից հետո անդրադառնում

³⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁰ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 79:

⁴¹ Նույն տեղում, հ. II, էջ 198:

⁴² Բառը Ալ. Մարգարյանի «Գորիսի բարբառում» ընդգրկված է փոխառյալ բառերի բառարանում՝ իբրև թուրք.-պրսկ. փոխառություն. «Անգլալ (թուրք. պարսկ.), ած., գ., ծուլ, չաշխատող մարդ» /նշվ. աշխ., էջ 503/: Թերևս կարող է շփոթմունք եղած լինի, քանի որ այն բնիկ հայերեն բառ է և ոչ թե փոխառություն:

⁴³ Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառ, Ե., 1975, էջ 87:

⁴⁴ Բացառականի հետ **զ** նախդիրի կիրառությամբ գրաբարի պատմական հոլովը նշված ձևում /գ+անկ+ե/ե//, չի տարածվում՝ բառակապակցություններում և բարդության կազմում «վերաբերության, մասին» պաշտոն-դեր մատնանշելու պատճառով, ինչպես՝ գմանե-նրա մասին և այլն:

⁴⁵ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 50:

ենք **գոր-ձոր** ձևությին, որը դեռևս լիովին պարզված չէ⁴⁶: **Անկ-զանկ** «ընկնել» իմաստի և **գոր** արմատի կցմամբ էլ կարող է առաջ գալ «**խոր ձոր**», «**Մեծ, ուժեղ, խոր անկմամբ ձոր**» բարդու թյունը, որը նույնպես քիչ հավանական ենք համարում: Վերջին նշված երկու տարբերակներն էլ, իսկապես, հնարավոր չեն, քանի որ ինքնին ճշտված չէ **զ+անկ-ի** տարբերակը, հաշվի է առնվում բառի գործածության ժամանակը, չնայած որ, ինչպես պարզաբանման մեջ է նկատվում, հնարավոր է վերոնշյալի համար և ընդհանրապես:

8. Բարբառների համար գործածական է նաև **զանգա/կ/ք**-ը «նրբաձայն», «քաղցրահնչյուն» իմաստներով: Գ. Ջահուկյանը այն ընդգրկում է իրանական փոխառությունների շարքի **զանգակ** բառահոդվածի տակ. «Չնագակ <*zangak. հմմտ. պ. zang, zangul(a), սսոր. (<իրան.) zagga «**զանգակ, zanga**» Ֆն յուն»⁴⁷: **Չանգ** բառի այս իմաստին հետևելով՝ կարող ենք առաջ քաշել տեղանվան ծագման մի այլ վարկած, որ խոր ձորերը տարածքում բավական շատ են, արձագանքել են կենդանի բոլոր ձայներին՝ ձորն էլ դարձրել խոսուն, հնչուն, և բնակավայրի բնական այս հատկությունն էլ նրա անվան բաղադրիչն է դարձել՝ **հնչուն ձոր /զանգ/ + ե /աձանց/+ձոր**՝ հմմտ. քարի հունչ՝ Քարահունջ⁴⁸, ինչպես **Չանգագետ**՝ Արաքսի ձախակողմյան վտակը և այլն: Ի դեպ՝ այս վերջին իմաստի նմանությամբ բառեր էլ կան թուրքերենում՝ **zangurdamak /դողալ, սարսռել, թրթռալ/, zagurdamak /դողացնել, սրսռացնել, թրթռացնել/, zangır zangır /թրթռուն ձայնով/⁴⁹, որոնց արմատը թուրքական չէ. այս հնչյունով բառերի մեծագույն մասը թուրքերենում փոխառություն է: Տարածաշրջանում շատ են բնական հատկանիշներից ծագած տեղանունները. հմմտ.՝ **Մթնաձոր, Կոռնիձոր, Հալիձոր** և**

⁴⁶ Այս աշխատանքը գրվել է մինչ Գորիս տեղանվանը վերաբերող մեր ստուգաբանությունը /այժմ տե ս նույն հեղինակի «Հնդեվրոպական *g^houoro- արմատը տեղանունների հիմք» հոդվածում /տպագրության ընթացքում/, նաև՝ www.sarc.am:

⁴⁷ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 525:

⁴⁸ Մենք հակված չենք այս տեսակետին, ուղղակի որպես ժողովրդական ստուգաբանության տարբերակ է նշվում:

⁴⁹ Турецко-русский словарь, ст. 686.

այլն⁵⁰: Այս տեսակետին, չնայած գիտականորեն ոչ պակաս հիմք է դրսևորում, նույնպես հակված չենք. տակավին փորձում ենք հարագատ մնալ համեմատաբար տարածված **Ջանգեզուր** տեղանվան ձևին և իմաստին, ըստ այդմ էլ ստուգաբանել, քանի որ **Ջանգեձոր** ձևով բառը պատմական տեղանքի համար չի հանդիպում: Այս տեսակետում առկախ է մնում **ձոր-գու/ո/ր** բառ/եր/ը:

9. **Ջանգ** բաղադրիչով տարածված տեղանուններ Հայկական լեռնաշխարհում շատ են՝ **Ջանգա**, **Ջանգաթել**, **Ջանգախ**, **Ջանգակ**, **Ջանգակի** լեռ, **Ջանգավա**, **Ջանգելան**, **Ջանգավա (Ջանգել)**, **Ջանգի**, **Ջանգիբազ/ս/ար**, **Ջանգիբարչայ**, **Ջանգիբուտու**, **Ջանգիգուլիս**, **Ջանգիգոր**, **Ջանգիթափա**, **Ջանգիլար**, **Ջանգիմար**, **Ջանգինարլու**, **Ջանգիշալը**, **Ջանգիչայ**, **Ջանգիրա**, **Ջանգոկ**, **Ջանգու**, **Ջանգուն** և այլն⁵¹: Այս բոլորը, նորից հիշենք, չէին կարող առաջացած լինել **Չագիկ /Չագ/** բառի թուրքական հնչողությունից: Մրանցից ամեն մեկը տեղանվան նշանակություն է ստացել տարբեր ճանապարհներով՝ կապված ժողովրդական ավանդույթ-ավանդությունների, պատկերավորումների, համեմատությունների և այլնի հետ: Մի դեպքում տեղանքը նմանեցրել են զանգակ ծաղկին, մի այլ դեպքում՝ բոժոժի, նկատի ունեցել գետի կամ ձորի հնչեղությունը, ձայն-արձագանքը, տեղանքի ակունք-առանցքային դիրքը և այլն: Բարբառներում ժողովրդական բնույթի փոխառություններից հայտնի է պրակ. **զանգի /zangi**, թուրք. **/zengin/** – «հարուստ» բառը: Եթե նկատի ունենանք Ջանգեզուր բառի գործածության ժամանակաշրջանը, ապա, թվում է, պարզաբանված է տեղանվան ծագումը՝ **Ջանգի/ե/ձոր** – «հարուստ ձոր»: Թուրքական ու պարսկական փոխառությունների՝ բարբառումս ունեցած առատությունն ու կենսունակությունը չեն ժխտում, որ այգիներով, արոտավայրերով, ջրերով հարուստ տարածքը հորջոզվել է «հարուստ», ինչպես, կարծում ենք, **Ջանգիբազ/ս/ար** – «հարուստ շուկա» և այլն,

⁵⁰ Նկատենք, որ սրանցից ոչ մեկն էլ, որ ավելի հեշտ կարող էին կրել փոփոխություն, ազդվել օտար արտասանությունից, չի ստացել **Մթնագուր**, **Կռնիզուր**, **Հալիզուր** անվանումները, չի փոխել անվան վերջին բաղադրիչը:

⁵¹ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 264-267:

իսկ **ձոր**-ն էլ, ասենք, իբր թուրքերենի հնչողությամբ՝ **զոր**: Միննույն ժամանակ ժխտելի չէ, որ ինչպես հայկական մյուս տարածքներում, այստեղ նույնպես որոշ տեղանուններ կարող էին փոխակերպվել, փոխարինվել օտար անուններով՝ Ուշ թափա և այլն: Մեր կողմից առաջադրված ինչպես մյուս, այս տեսակետը նույնպես բացահայտվում ու չի ընդունվում: Տեղանունների օտարացման երևույթը համեմատաբար քիչ է դրսևորվել այս տարածաշրջանում: Ստ. Օրբելյանի նշած տեղանուններն այսօր էլ հիմնականում պահպանվել են, պատճառը օտար տարրի՝ այս տարածքում սակավությունն է եղել:

10. Չանգեզուր տեղանվան վերաբերյալ մյուս կարծիքները չեն քննվում անգամ վարկածից դուրս դիտվելու պատճառով: **Մակ** ձևից անցումը **Չագի-ձակի-զանգի** խիստ անհավանական է լեզվաբանական և պատմական առումով, ինչպես հակառակն է պնդում Ա. Ղարիբյանը, թե իբր **սակ** ցեղանունից առաջացել է **Չագ**-ը: Ստրաբոնը Ք.հ. I դարում Հայաստանի **Շակաշեն** գավառանունը բխեցնում է **սակ** կամ **շակ** ազգի անունից: Արտաքուստ, ինչպես նշում է Հ. Աճառյանը⁵², ստուգաբանությունը կարծես շատ պարզ է՝ սակ+շեն: Մակայն **շեն** բառը, որպես պահլավերեն *šēn/շեն-գյուղ*, բնակավայր/ փոխառություն, հայերենին անցել է առաջին դարում, իսկ սակերի կամ շակերի արշավանքը եղել է Ք.ա. IV, VI, VIII դարերում: Բացի այդ՝ նույն Ստրաբոնը նշում է այլ տեղանուններ՝ - եննե, -են/-դոդ, -դո/ վերջավորություններով՝ Կոմիսենե /Κομισσηνη/, Գորդիենե /Γορδοσηνη/ և այլն: Ստացվում է, որ Շակաշենում ոչ թե շակ+շեն բառերն են, այլ Շակաշ+են, իսկ շակաշ-ը անհասկանալի է: Բացի այդ՝ հայ. սկայ, հ-սկայ բառերի աղբյուրը համարում են Σακιοί ցեղանունը, որ բխեցվում է հ.-ե *skāi - «լուսավոր» արմատից. «Այս դեպքում ավելի քիչ հավանական է երևում Գ. Ղարիբյանի կարծիքը /հ/ըսկայ բառի՝ սակերի անունից ծագելու մասին: Հիշյալ ստուգաբանությունը հաստատվում է Սկայորդի անձնանվամբ, որ տալիս է Խորենացին»⁵³: Չանգեզուրի վերաբերյալ այլ կարծիքներ էլ եղել են և շարունակվում են: Այստեղ պետք է նշենք պատահական նմանության մասին, որ էտրուսկ. *Sacu, Saxu*, լատ. *Saccus*, սկյուր. *Σακαι* հ.-ե. *k'āk /սակ/ -«կարողանալ, օգնել»

⁵² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ., VI, էջ 765-766:

⁵³ Գ. Ջահուկյան, Շայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Ե., 1979, էջ 67:

ձևերը հայասերենում ունեն *Zag/g/a* դիցանունը, որ իբր պետք է կարծել, Չանգեզուրի առաջին **Չագ** բաղադրիչը պետք է լինի, որ հետագայում միայն վերականգնվել է⁵⁴: Մաստիկ «աղքատ» և ոչ գիտական լինելու համար այդ գրվածքները չենք քննում, ինչպես «**Չագ Հարանդեցի**» և այլն:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, դեռևս չկա միանշանակ կարծիք Չանգեզուր տեղանվան ծագման վերաբերյալ: Բայց և ժխտվում են ցայսօր եղած հիմնական տեսակետները: Շարունակում ենք, առայժմ, տիրապետող դիրքում չթողնել որևէ այլ կարծիք այն հույսով, որ պատմական և լեզվաբանական հետագա ուսումնասիրությունները լուրջ հիմքեր կստեղծեն **Չանգեզուր** տեղանվան ծագման հարցի վերջնական լուծման համար: Պետք է նշել, որ դեռևս առկախ է մնում նաև տեղանվան բուն գործածության ժամանակաշրջանը:

⁵⁴ St' u Г. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Е., 1964, ст. 56.

Мгер Кумунц
Горис

Вокруг этимологии наименования Зангезур
**/Комплексное исследование/
Резюме**

Есть несколько исследований о происхождении слова **Зангезур**, однако они не выражают правильную позицию. В данной работе отвергаются все существующие до этого мнения, и представляются новые, более возможные варианты: слова происходит от имени монастыря **/Занг+зор/**, **/Чанги+дзор/-**, или местонахождения **/Занге+дзор/**. Однако, мы пока не считаем ни один из этих вариантов преобладающим. Разъяснены всевозможные фонетические изменения и значения слова **Зангезур**, а также то, что слово **Дзагедзор** не смогло быть искажено под влиянием турецкого или другого языка и стать **Зангезуром**.

Из всех точек зрения более возможным является то, что **Зангезур** – это народная этимология слова **Цахкедзор**.

Mher Kumunts
Goris

Around the etymology of the name Zangezur
**/ Complex research analyzis/
Summary**

There are several research papers on the origin of the name **Zangezur**, however, they do not give a proper view of the issue. This work rejects all the opinions existing up to now; new and more possible variants are presented: the name is derived from **Zang+zor** monastery, **/Changi+dzor/-**, or from the name **Zange+dzor**. However, we do not consider any of these variants dominant yet. The possible phonetic changes and meanings of the name **Zangezur**, as well as the fact that the word **Dzagedzor** could not have been distorted by Turkish or other language and become **Zangezur**, are already clarified.

The most possible variant is that **Zangezur** is the popular etymology of the word **Tsakhedzor**.



Մհեր Քումունց
Գորիս
prof1972@mail.ru

Արդի հայերենի բարբառների խորն ու բազմակողմանի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հայագիտության համար: Դա կարևոր է հատկապես լեզվի պատմական քննության ժամանակ, երբ անհրաժեշտություն է լինում բարբառների տեղն ու դերը ճշտել հայերենի համակարգում:

Լեզվի բառապաշարի իմաստաբանական խմբերի բաժանումը և քննությունը կարող են բավականին տեղեկություններ հաղորդել ոչ միայն լեզվաբանությանը, այլև պատմությանը, ազգագրությանը և այլ գիտաճյուղերի: Լինելով բառագիտության կարևոր ուսումնասիրություններից մեկը՝ բառապաշարի իմաստային /թեմատիկ/ խմբերը մեծապես նպաստում են բառապաշարի ձևավորման հարցերի լուսաբանմանը, քանի որ խնդրահարույց են ոչ միայն բառերի առկա և գործուն իմաստների ծագումը, այլև գործածության բնագավառներում տեղորոշելը՝ համաժամանակյա և տարաժամանակյա կտրվածքով: Ճիշտ է նկատված, որ Արցախի և մերձակա տարածքների բարբառները հայտնի են բազմաթիվ հնաբանություններով, որոնց նշանակությունը հայոց լեզվի պատմության ուսումնասիրման գործում շատ մեծ է:¹

Հայ լեզվաբանության մեջ բառապաշարի թեմատիկ խմբերի բաժանումը գրեթե բացակայում է բարբառագիտական աշխատանքներ կատարելիս: Քիչ են նաև այն աշխատանքները, որոնցում քննված լինեն բարբառային բառերի և նրանց իմաստների ձևավորման ակունքները: Մյուսիք-Արցախ տարածքային բարբառների բառապաշարում առկա **ֆիզիկական աշխարհ** մատնանշող բառերի իմաստային խմբի համաժամանակյա և տարաժամանակյա քննությունը նպատակ ունի լրացնելու այն բացը, որ առկա է բարբառա-

¹ Հր. Մարտիրոսյան, Հայոց լեզվի պատմականությունը Արցախի և Ուտիքի տարածքներում, էջ 2 /հեղինակային/:

գիտական աշխատանքներում: Մյունիք-Արցախ բարբառախմբին գրաբարից անցած բառերի շուրջ ուսումնասիրություններ համեմատաբար քիչ չեն,² և դրանցից ցանկալի է առանձնացնել Ալ. Սարգսյանի «Գորիսի բարբառը», որտեղ, օրինակ, հեղինակը կազմել է առանձին բառացանկ և հիշատակել մոտ 3000 բառ, որ Գորիսի բարբառին անցել է գրաբարից³: Ընդհանրապես բառապաշարի իմաստաբանական խմբի բաժանման վերաբերող աշխատանքները բավականին շատ են: Այս աշխատանքը առանձնահատուկ է ոչ միայն բարբառային բառապաշարի իմաստաբանական միայն մի խմբի՝ **Ֆիզիկական աշխարհ** նշող բառերի քննությամբ, այլև այդ խմբում գրաբարյան շերտից տեղ գտած բառերի պատմական զարգացման նկարագրությամբ: Այս առանձնահատկությունները թույլ են տալիս գործածելու ուսումնասիրության մի մեթոդ, որ տարբերվում է բառապաշարի իմաստաբանական խմբերի բաժանման բնագավառում:

Կ. Բաքի իմաստային խմբերի բաժանման մեջ կարևորված են բառիմաստների՝ գլխավոր և ավելի մանր բաժանումները⁴: Սա նույնպես կարող է օգտակար լինել բարբառագիտական աշխատանքներում, քանի որ քննությունը տարվում է ոչ թե մեկ բարբառի, այլ բարբառային մեծ խմբի շրջանակներում: Իհարկե, բառերի իմաստային մեծ տարբերություններ չեն ակնկալվում բարբառային խմբերի շրջանակում, բայց հնարավոր դեպքերն էլ կարևոր են բարբառների և ենթաբարբառների տարբերակման գործառնություն: Հ. Աճառյանը բառապաշարի թեմատիկ խմբերի բաժանում կատարել

² Եղած աշխատանքներից բացի այս աշխատանքի համար օգտակար եղան Հր. Աճառյանի Քննություն Ղարաբաղի բարբառի, Վաղարշապատ, 1899, Ա. Պողոսյանի Հաղորդի բարբառը, Ե., 1965, Է. Աղայանի Մեղրու բարբառը, Ե., 1941, Կ. Դավթյանի Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, Ն. Մկրտչյանի Բուրդուրի բարբառը, Ե., 1971, Լ. Հովհաննիսյանի Գրաբարի և Ղարաբաղի բարբառի աննշության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, № 1, Ե., 1977, էջ 141-152, Բ. Մեծունցի Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Ե., 1989, Ա. Սարգսյանի Ղարաբաղի բարբառի բառարան /այսուհետև՝ ՂԲԲ/, Ե., 2014 և այլն:

³ Տե՛ս Ալ. Սարգսյան, Գորիսի բարբառը, Ե., 1975:

⁴ Այս մասին տե՛ս C. Buck, A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages-A Contribution to the History of Ideas (1988 (1949)), որտեղ հենց առաջին մասը հատկացված է «Ֆիզիկական աշխարհը իր մեծ առումով» իմաստաբանական խմբին. 1.87 տեսակների մեջ են ընդգրկվում հենց այդ բառերը՝ աշխարհ, երկիր, ավազ և այլն / C. Buck, A Dictionary..., p. 12-77.

է հունական փոխառությունների շուրջ՝ **բնության և նրա զորության մասին, մարդ և մարմնի մասեր** և այլ խմբերով⁵: Գ. Ջահուկյանը բառերի իմաստաբանական խմբի բաժանում կատարել է տարբեր առիթներով՝ հայերենի հնդեվրոպական ծագմամբ բառերի, փոխառությունների շրջանում: Հայերենի բառապաշարի հիմնաշերտը քննելիս առաջին մասը հատկացրել է **Ֆիզիկական աշխարհ** խմբին⁶: Այս բաժանումը բավականին օրինակելի է մեր քննության համար, քանի որ անհրաժեշտաբար տրվում են խմբում ընդգրկված բառերի բացատրությունները՝ ըստ ծագման, իմաստային նրբերանգների և այլն, «քանի որ կան բազմիմաստության, իմաստափոխության հետաքրքիր իրողություններ»⁷:

Ֆիզիկական աշխարհ նշող և գրաբարից բարբառին անցած բառապաշարի շերտում կան բառեր, որոնք, պատմական ճանապարհ անցնելով, երբեմն այնքան են աճել գործածությամբ, որ հեռացել են նախնական իմաստից կամ հիմնական իմաստի կողքին ձեռք են բերել ուրիշ իմաստներ և նրանցով կազմություններ, օրինակ՝ գրաբարի **անկանիմ**՝ «Անկանիմ առաջ քո և խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց»⁸ /**անկանիլ**⁹ բառի բազմաթիվ իմաստներից բարբառում մնացել է **անգյալ** «ծուլ, անկարող» նոր բառը, բայց դրա դիմաց բարբառախումբը ունի նաև **ընկնել/ինգել/ըղնել/ինգնիլ/** բառը՝ հնչյունային տարբերակներով, որ առանձնապես չի աղերսվում «ծուլ» իմաստին: Ֆիզիկական աշխարհ նշող բառերի կարելի է հանդիպել նաև իմաստաբանական մյուս խմբերում: Բառերը բազմիմաստության շնորհիվ, իմաստային ընդլայնմամբ կարող են գործածական լինել տարբեր խմբերում, այլև ոճերում: Իհարկե, բարբառային բառապաշարը ինքնին խոսակցական և առավելապես բանավոր տարածված մի ոճ է, բայց այնտեղ էլ գործում են միևնույն

⁵ Տե՛ս Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 2013, էջ 34-46:

⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն /նախագրային շրջան/, Ե., 1987, էջ 258-259:

⁷ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ, էջ 141-152:

⁸ Երաժշտական երգեցմունք հոգեերականք, Ամստերդամ, 1685, էջ 207:

⁹ Ն. Աճառյանը այս բայի մասին գրում է. «Ընդարձակ գործածութիւն ստացած, բազմաթիւ ոճերու մէջ մտած, պարզ կամ յ և ց նախդիրներով աճած և բազմաթիւ ու բազմազան նշանակութիւններով զարգացած մի բառ է» /տե՛ս Ն. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, այսուհետև՝ ՀԱԲ, էջ 197/:

բառի տարբեր իմաստներ: Այդ է պատճառը, որ այդպիսիք կարող են ընդգրկվել երկու, նույնիսկ երեք իմաստային խմբերում, օր. **ունջ/օնջ** բառը ունի յուրահատուկ իմաստներ Սյունիք-Արցախ բարբառային խմբի տարբերակներում: Գրաբարում ունեցած «տակը, խորքը, հատակ» իմաստներով ընդգրկվում է ֆիզիկական աշխարհ մատնանշող թեմատիկ խմբի տարբեր ենթախմբերում՝ նաև «Ժանգ» իմաստով **նյութ** ենթախմբի ներքո¹⁰, իսկ «սարդոստայն» իմաստով **կենդանիներ և նրանց հետ կապված երևույթներ** մատնանշող բառախմբում¹¹:

Քանի որ բարբառային բառերի իմաստաբանական խմբերի հետագա քննության ժամանակ որոշ բառեր կարող են հանդիպել նաև թեմատիկ այլ խմբերում, ուստի նպատակահարմար է նշել իմաստի ընդլայնում ստացած բառերի գործուն իմաստները, ընդգծել սվյալ խմբին վերագրվող իմաստը կամ նրբիմաստը, ոճական արտահայտությունը, և եթե բարբառախմբի ոչ բոլոր տարբերակներում է տարածված, ապա կարևոր է նշել նաև այն գործածող բարբառային տարածքը:

Ֆիզիկական աշխարհ նշող գրաբարից ավանդված բառերը խմբավորելիս հաշվի են առնվել որոշ հանգամանքներ.

- Գրաբարի բառապաշարը բավականին հարուստ է, և եթե հետևենք, օրինակ, «Նոր հայկազյան բառարանում» տեղ գտած բառահոդվածներին, ապա մեկ աշխատանքի սահմաններում դրանց քննությունը անհնարին է: Այդ է պատճառը, որ հնարավոր է որոշ բառերի դուրս մնալը: Եվ քանի որ այս աշխատանքը շարունակական բնույթ ունի, ուստի հնարավոր է, որ հետագայում ուսումնասիրությունից դուրս մնացածները նույնպես հաշվի առնվեն:

- Անհրաժեշտ դեպքում հնարավոր է նշել որոշ բառերի ստուգաբանական պատմությունը՝ իմաստաբանական հատկանիշները ճշգրտելու նպատակով:

- Բարբառի իմաստաբանական խմբերի համար կարևոր է նաև հետևել բառի արտաքին ձևին՝ բարբառային հնչյունական ձևին

¹⁰ Տե՛ս նաև Ն. Աճառյան, Հայերենի գավառական բառարան, այսուհետև՝ ՀԳԲ, Թիֆլիս, 1913, էջ 867:

¹¹ Այս և նման հարցերի մասին կարելի է տեսնել Ջ. Երվանդյան, Հնագույն բառարանները Ղարաբաղի բարբառում, Լրաբեր, № 1, Ե., 2004, էջ 108-117:

համապատասխան:

- Առաջնային է նաև որոշելը բառի կազմության հետ կապված հարցերը: Իհարկե, դա հնարավոր չէ ամբողջացնել տարբեր բաժանումների համակարգում, և կազմության համար սովորաբար նպատակահարմար է առանձին բաժանում, սակայն իմաստային քննությունը հաճախ պահանջում է պարզաբանում նախահայերենի, գրաբարի և լեզվի մյուս շրջանների ու տարբերակների նկատմամբ որոշելու հնաբանություններն ու նորաբանությունները, այսինքն՝ թե բարբառում առկա բառը կամ արմատը նախնական ինչ իմաստ է ունեցել, իսկ հետագայում ինչ նոր իմաստ է ստացել, գուցե նաև տեղի է ունեցել իմաստի շրջում, ընդլայնում կամ նեղացում: Հենց այս առումով բառակազմական վերլուծությունը անմիջականորեն աղերսվում է իմաստաբանական հարցերին:

- Տրվում են ֆիզիկական աշխարհի խմբին պատկանող ելակետային բառերը, ապա նրանց բարբառային ձևերը, այդ թվում՝ տարբեր վայրերում առկա կամ գրառված անվանողական կամ իմաստային գուգաբանությունները, դարձվածքները, ոճական այլ արտահայտությունները:

Այսպիսով՝ Սյունիք-Արցախի բարբառային տարածում ֆիզիկական աշխարհի մատնանշող գրաբարից ավանդված բառերից են՝

ՔԱՐ - ածուխ /անձուղ/, աղ, բլխամ /բլղամ/¹², գոիճ /կըոճ/, ժայռ /ժեռ/, խիճ /խեճ/, խունկ, կաշկառ /քաշկառ/, կաւ /կավ «մսավող»/, կաւիճ /կավիճ/, մարմարիոն /մնամնոն/, շիպ «պաղլեղ» /շպլեղ /շիբլեղ/, որձաքար /վրրցաքար/, չեչաքար /չիչաքար/, սալ, սատապ /սնդանփ/, քար, քարուտ /քրրքարուտ/:

Կաշկառ /քաշկառ/ 1. «քարերի կույտ, որ գոյանում է արտերը, այգիները մաքրելուց», 2. «քարերի կույտ որ գոյանում է հանգած հրաբխային ապարներից, կամ փլվածքից»։ «Նաև ի թանձրամած **կաշկառուտին** ի նոյն ձորին կայր եկեղեցի մի յանուն սրբոյ հայրապետին...» /Մ.Օ., 254/: Այս իմաստները առկա են միայն Գորիսի բարբառում: **Կըշկոռ, քըշկոռել**, սրանցից **քըշկոռ քիցել, քըշկոռ ինգել** բառերը գործածական են այլ իմաստներով, այսպես **քըշկոռել** 1.

¹² Քիչ հանդիպող բառ է: Նոր հայկազյան բառարանը /այսուհետև՝ ՆՀԲ/ նշում է որպես բարբառային բառ. «Պալգամ. Զմրովխտն է դահանակ, և գորութիւն ունի ի վերայ բլխամաց: Հնվն (յուտեղեաց)՝ մագաս առնէ, որ է բլղամ. Ոսկիփոր: Տուն նորա է թոքն յորո գոյանա բլղամն. Մխ. Ապար» /ՆՀԲ, էջ 491-492/:

«հանգուցել», 2. փոխ. «կաշկանդել», «մեկին խիստ խոսքերով լռեցնել», **քրշկոն**¹³ 1. «կապ, հանգույց», 2. փոխ. «բարդ դրություն, իրավիճակ»: Այս բառիմաստային ձևերը տարածված են Սյունիք-Արցախում, բայց սրանց դիմաց **քաշկառ**-ը թե որքանով է աղերսվում գրաբարից ծագած «քարակոյտ» իմաստին, դժվար է ասել: Հր. Աճառյանը բառի կազմությանը Արցախում գործածական է նշում «ձու կշկոել»-ը՝ «հաւիւն փոքրին մէջ մանր մանր ձուիկներ ծլիլը» և «Բկումը կշկոուիլ»՝ «կերածը մոլոր երթալ» իմաստով¹⁴: Վերջինս թերևս մոտ է «հանգույց, կապ» իմաստին, բայց առաջինը, կարծում ենք, առավելապես մոտ է «կոյտ, քարակոյտ» իմաստներին: ՆՀԲ-ն նշում է **կաշկառ**՝ «կարկառ քարանց», կաշկառիլ «կառչիլ ընդ միմեանս. լինել իբր կարկառ քարանց խոնելոց ընդ միմեանս»: Նկատելի է, որ գրաբարի այս իմաստից է առաջ եկել «թելի կապ, թնջուկ» իմաստները¹⁵: Հ. Աճառյանը ՀԱԲ-ում «կաշկառ»-ը հղում է **կառ** արմատին և նշում «քարակոյտ» իմաստը¹⁶:

Ածուխ-անձուղ: ՆՀԲ-ում առկա է «որպէս սևացած մի բան» իմաստը¹⁷, որից և ծագած է համարում **քարը՝ ածխաքար**, ՀԱԲ-ում Հ. Աճառյանը նշում է գրաբարի մատենագրության մեջ հանդիպած ձևերը, տալիս մեկնությունները և նշում որպէս փոխառություն լազերենից՝ «ծոլա, մծոլա»՝ «ծուխ» իմաստով¹⁸: Բարբառներում հիմնականում գործածվում է **ան**- հնչյունախմբի նախադրությամբ¹⁹, ինչպէս Սյունիք-Արցախ բարբառային տարածքում: Գործում գործածվում է նաև «ածուխ», որ, կարծում ենք, գրականի ազդեցություն ունի: Արցախի բարբառներում գործածական է **անձող, անձուղ** ձևերով՝ **նը** հավելադրումով: Այս բառով բաղադրություններ համարյա չեն հանդիպում, եղածներն էլ գրականից անցած են ու համեմատաբար նոր, ինչպէս՝ **ըծխասփոտ** և այլն: Սրան զուգահեռ Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում լայն տարածում ունեն

¹³ Է. Աղայանը **կար/կարաւանդ/** բառի իմաստը նույնացնում է **քրշկոն**-ի հետ՝ կար «հանգույց» արմատով: /Տե՛ս Է. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 82/:

¹⁴ Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 582:

¹⁵ ՆՀԲ, էջ 1053:

¹⁶ ՀԱԲ, էջ 518-519:

¹⁷ ՆՀԲ, էջ 21:

¹⁸ ՀԱԲ, էջ 102-103:

¹⁹ ՂԲԲ, էջ 50:

«**քյօմնօր**»-ը: Այն գործածվում է նաև «սև, մուր, մուգ» իմաստներով, որոնք ածուխ բառին ամբողջովին չեն տրվում: Այսօր **քյօմնօր** բառը ածուխ իմաստով գրեթե չի գործածվում, պատկերավոր ձևերում, սակայն, պահպանված է «ածուխ» իմաստը, ինչպես՝ «էնքան սև ա, հէնց ա քյօմնօր ինի»: Հավանաբար թուրք. kömür «ածուխ» բառի մուտքագործումից հետո **ածուխ** բառը իմաստային նեղացում է ստացել՝ որպես **քար**, բայց և՛ **փայտի սև մնացուկ**, որ նման է ածուխի՝ **քյոգ**: Գրաբարի շրջանում արդեն **ածուխ**-ն ուներ «մոխիր, մուր» իմաստները:

Աղ: Թեքված ձևերում գործածվում է նախադիր **ա>ը** փոփոխություն: Բաղադրություններ ունի բառերի և ածանցների հետ: Լինելով բառապաշարի գործուն շերտի մեջ՝ բավականին բարդություններ են կազմվել ինչպես գրաբարում, այնպես էլ բարբառային խմբում, այսպես՝ **ըղահամ**, **ըղաճնօր** /սրանով հարադրություններ են՝ **ըղաճնօր տալ /խըմցնել/ փոնել/** և այլն: Բարբառային բաղադրություններ են **ըղաքըսակ**, **ըղաքար**, **ըղապարկ**, **ըղատեղ**, **ըղըկալի**, **ըղըթթօ**, **ըղըկօծ**, **ըղընալի**, **ըղըկծօ**, **ըղըվօնջ** (՞) «շատ աղի բան», «լեղի» /այստեղ գուցե աղու բառն է/ և այլն: **Աղ** արմատով քիչ չեն նաև կայուն և ազատ կապակցությունները՝ **աղ անել**, **աղավ անել**, Արց.՝ **աղավ ընելու** «տհաս, դեռահաս»²⁰, **աղավ հանած-պի/ե/րանծ** «շատ աղ սիրող», **աղավ պեռնած** 1. «ծանր», 2. «ծանր կացության մեջ»²¹, Արց.՝ **աղեն ու կինձին ա** «հարմար առիթի սպասել», **աղը լնց ինիլ** «աղը խոնավանալ», **աղը չօր** «հարուստ», Գորի. Արց.՝ **աղը պակաս** «աղքատ», **աղ տինիլ** «պանիր, բանջարեղեն և այլն աղով անել ու պահել», Արց.՝ **աղու նման հնլվիլ** 1. «արագ սպառվել», 2. «ամաչել», 3. «խիստ նիհարել», **աղու նման լնուց տալ** «մեկին անչափ սիրել», Արց.՝ **աղու յըրա քինիլ** 1. «բնագողով գնալ, գործել», 2. «արագ և ցանկալի մի բանի համար գնալ», Գոր.՝ **կլծխը աղ տինել** «ոչնչացնել», Միս. «մեռցնել, սպանել»²², Արց.՝ **աղավ տա/ը/խտեղավ ընել** 1. «կերակուրը համեմել», 2. «հանցավորին պաշտպանելու ելնել»²³, Արց., Գորի.՝ **խելքը աղավ ը/ա/նել** «ասվում է հիմար բան ասողին

²⁰ ՂԲԲ, էջ 36

²¹ ՂԲԲ, էջ 37

²² ՀԳԲ, էջ 71:

²³ Նույն տեղում:

կամ անողին»²⁴, ասույթներից՝ **ծեռքունը աղ չկա/կա** «արած լավությունը տեղ /չ/ունենալ»²⁵, **կամ աղն ա պակաս, կամ մաղը** «մի բանի պահանջ ունենալու ու դիմելու ժամանակ է ասվում» և այլն: Սրանց դիմաց գրաբարը ունեցել է այնպիսի կապակցություններ, որոնք բարբառախմբում բացակայում են, օր.՝ **Աղ ուխտի, ուխտ աղի, աղ կնքեալ** «հաստատուն բարեկամություն, դաշինք»²⁶ և այլն: **Աղ** բառի իմաստաբանական առանձնահատկությունները, ինչպես նկատելի է, դուրս են ֆիզիկական աշխարհի մատնանշող նյութական իմաստից: Այն հիմնականում ընդարձակվել է «համ» իմաստի շրջանակներում, իսկ նախնական իմաստը գրեթե մթագնած է շատ կազմություններում /կարելի է նշել **քար** և **համ** իմաստները, դարձվածքային իմաստները և այլն/:

Գոիճ /կրոճ/: Ասվում է մանր հատիկից գոյացած ապարային գնդին՝ շաքար, քարաղ և այլն: Առկա են **կրոճ տառնալ, կոճ-կրոճ** հարադրությունները, ածանցով ձևերից՝ **կրոճավուն, կրոճանալ**: Թե ինչ առնչություն կա **կրո** «կեղևը պինդ ընկույզ» բառի հետ, դժվար է ասել: Հ. Աճառյանը ՀԳԲ-ում նշում է այն որպես ծաղրական անուն՝ տարածված Երևանում, Թբիլիսիում, որ տրվում է տաճկահայերին: Հավանաբար այն «պինդ» իմաստից է բխում: Գանձ. առկա է «հաց պահելու սնդուկ, արկղ» իմաստը, որ բարբառախմբի մյուս տարբերակներում բացակայում է:

ԵՐԿԻՐ - **աղբ /ախայ/, աշխարհ /ըշխարք, ախշարք/, արտ, արօտ, բակ /պակ/, բանդ /բանդ/, բուր /պոլուր/, բորբոս /փրփեշնր, փրփոսնր, պրպոսնր/, գոգ /կյօք, կօք/, դար /տիհաիր, տրհաիր, տիլեր/ /«բարձր տեղ», դեզ /տեզ, տիզ/, դուռն /տուռնը, տուռը/ դուրս /տուս, տօս/, երկիր /յերգիր/, թեղ «կույտ» /թեղ /տալ//, թեք, լանջ /լինջ/, խանդակ /խանդակ, խինդակ/, խուր /խուր/, ծագ /ծեք/ «...ի ծագաց գաւառն ամրագունի» / Մ.Խ., Պ.Հ., 65/, «...ն ահ զօրութեան ձերոյ եհաս մինչև ի ծագս երկրի» / Մ.Խ., Պ.Հ., 261/, ծայր /ծեր/ «...ի ծայրի այսպիսոյ բարձրութեան» / Մ.Խ., Պ.Հ., 75/ ծնակ /ծըմակ/, կաճան /կե/ա/ճան/, կատար, կոյտ /կուտ, կյուտ/, կոպար /կուպար «արահետ, նեղ ճանապարհ»/, կոր||կորակոր||կորի կոր /կօռ, կրօրկօռ, կրկօռ/,**

²⁴ Նույն տեղում

²⁵ Աճառյանը նշում է այլ իմաստ՝ «կտուի երբ մեկը միշտ աղի կերակուրներ պատրաստե» /տե՛ս ՀԳԲ, նույն տեղում:

²⁶ ՆՀԲ, էջ 31:

հող /վեղ, վօղ/, հոր /վօր, վօրե/, ձոր /-ակ /ծօր/-ակ//, ճեղք/ /ճեղ/, նեխել/նեխիլ /նեխել/ «Մի ըզփրտութիւն նեխութեան ցաւոցս ինձ տնկակից մահու մնացուցես» /Գ.Ն., Մ.ե., 116/, նոսր /նօսրը/, շարժ /ծածօք/ «Ոչ ես ի կամս շարժեալ սատակման...» /Գ.Ն., Մ.ե., 206/, ուր /հի/նի/լօր/, ունջ /օնջ/, ուրդ /հօրթ/, չոր, սահման /սահման, զահման/, սայր /սեռ, սեռը, սեռնը, սեռող/, սար, սեամ /շեմք/, սեռն /սըռնե/, սոնի /զըռնե/, սոր /սօր/, տախտ, տափ, տափարակ /տափլակ/, ցամաք, ցեղ /ցեխ/, փոս /փօս/, փուլ /փօլ կյնլ/, փտել /փըթել/ և այլն:

Աշխարհ /ըշխարք, ախշարք/: Հայերենում ունեցած իմաստների կողքի Սյունիք-արցախ բարբառներում ձեռք է բերել այլ նշանակություններ: ՂԲԲ-ն նշում է բազմաթիվ դարձույթներ աշխարհ բաղադրիչով, որոնք գրեթե բացակայում են հայերենի մյուս տարբերակներում, ինչպես՝ **աշխարհք անձիլ** «արժեք ունենալ», **աշխարհքը աշկեն մըթնել/արվանալ/քանդվիլ** «դժբախտություն լինել», **աշխարհքը կըլխեն մըթնել**, **աշխարհքը դըղըղդացընել** «աղմուկ բարձրացնել», «համբավ տարածել», **աշխարհքը ըպրողներեն թափշուր անել**, **քիսել** «մեռնել, հրաժեշտ տալ», **աշխարհքը մընաս պարավ ասել**, **աշխարհքը ըրօտալ** «որևէ լուր ամենուր տարածել», **աշխարհքը խեղքավ ըն կերալ** «հնարամտյամբ ամեն ինչի հնարավոր է հասնել», **աշխարհքը կլխեն հըվաքել** «աշխարհքով մեկ անել», **աշխարհքս դըղի-դ/բ/ուղի ըղնել/քիցել** «իբարանցում ստեղծել», **աշխարհքը մըննան քըցիլ** «հմայվել, դյուրվել», **աշխարհքը մօրեխ օտել**, **մին կըպեկավ ծասկած ինիլ** «անիշխանություն, անարդարություն տարածել», **աշխարհքը յըէսձե շինիլ** «անիշխանություն տարածել», վերջին իմաստով նաև՝ **աշխարհքը յըրտըվերտըր ինիլ**, **աշխարհքը նըմանը ծընալ չի** «միակը լինել դրական և բացասական առումներով», **աշխարհքը շօ կյալ/չափել**, **աշխարհքը վըէնը տակը տալ** «իմաստուն լինել, տեսած լինել», **աշխարհքը պուք կյալ**, **ըշխարհքես վերչը կյալ** «կործանում լինել», **աշխարհքը տալ մինին** «ուրախություն պատճառել», **աշխարհքը տանին-պիրին գլիդալ չի/վեչը չի** «անտեղյակ լինել», **աշխարհքը ուրանը ինիլ/տըլեռնալ** «անչափ ուրախանալ», **աշխարհքը ուրուրօցավ անձեյ /տալ/ քըցիլ** «տակնուվրա անել», **աշխարհքը փալաքան ա. մինը պիցըրանում ա, մինը քըշանում** «աշխարհի փոփոխական լինելը», **աշխարհք կյալ/պիրիլ, քըցիլ** «ծնվել, ծնել, երևալ», **աշխարհք տեսած**,

ըշխարհքաս բելխաբար «միամիտ», ըշխարհքաս խրոով քյինալ, ըշխարհքաս ծըւերը յըւր պնէլ/քաշել «կյանքի նկատմամբ հետաքրքրությունը կորցնել», ըշխարհքաս կըտորվէ «անտեղյակ մնալ», ըշխարհքաս կոշտ, ըշխարհքաս հրոէ, ըշխարհքաս չինէլ, ըշխարհքաս պէն չի կըլիաու ըղնէլ «միամիտ մնալ», ըշխարհքէս աշկը հաննէլ «կյանքը վայելել չնայած հանգամանքներին», ըշխարհքէս դարդէրը յըւր օնէլ «հոգսաշատ դառնալ», ըշխարքէս ըռաշկէն «բոլորի աչքի առջև», ըշխարհքէս ըրըւխըն ըղնէլ/քյիցէլ «խոսակցության նյութ դառնալ», ըշխարհքէս իրեսէն/տակէն, ըշխարհքէս լէփը կըլիսէն ածէլ, ըխարհքէս խէրան-շառան կըլիաու ըղնէլ «տեղեկացված լինել», ըշխարհքէս համ տակը գիդալ, համ տիյէրը, ըշխարհքէս մաչը թըվան-ցըն ա նըմըրդօթուն քըցալ «բոլոր անօրինությունների պատճառը զենքն է», ըշխարհքս յէլի «ուրիշների հետևել» և այլն: Համադրական բաղադրություններ բարբառներում գրեթե չկան:

ԵՐԿԻՆՔ - աստղ /աստղը, աստղը նը/, արեգա կն /ըրեքնակ, իրիքնակ, իրիթնակ, իրէքնակ/, աղտ /յէխտ/ «...Ջաղտ...դիւացն...ի բաց քերէր» /Կ., Վ.Մ., 27/, երկինք /յերգինք/, ժամ, լուսին /լուսընցյա, լուսինցյա/, լուսնեակ /լուսնիյակ/, կարկուտ, ձմեռ /ծմէռնը, ծմէրը/, ուրոտալ /ըրօտալ/:

ՀԱՄ - անալի /նալի/, մզլահոտ /մըկլավօտ, մըկլավէտ/, քաղցր /քախծըր/ /3 բառ/:

ՁՈՒՐ - աղբյուր /ախպո՛ւր/, անջուր /անճո՛ւր/, անջրդի /ան - ճ/ը/իրդի/, գետ /կէտ, կյէտ/, գետամէջ /կյիտա մէջ/, գիջանալ /կյիճանալ/, թաց, թոռ, թրջել /թիրջէլ, թըռջէլ/, ծով /ծօվ/ «...որով կոչի և ծովն» /Մ.Խ., Պ.Հ., 41/, կաթիլ, ծփալ /ծըթալ, ծըփծըփալ/ «...ի սաստկութենէ ծփանաց...» /Մ.Խ., Պ.Հ., 74/, հալէլ, նամ, նալթ /նօթ/, շաղ, շաղէլ, պղտոր /պնւրտօղ, պնւրտօր, պիրտօղ/, ջորդան /շուտըթկան/, ջուր /ճնւր/, ջրահեղեղ /ճըրրհեղէղ, ճըրահեղէղ/, ոռքուն /ըռօք/, վարար, տամուկ /տըմկ/էլ/, ցայտ/թ/ /ցէթ/, փրփուր /փրփօր/:

Թոռ: Գրաբարի աղբյուրներից բառը նշվում է միայն Երեմյան բառարանում և նրանից Հայկազյանում: Բնիկ հայերեն բառերից է՝ *s/ter-: Այն տարածված է հիմնականում Սյունիք-Արցախ բարբառներում՝ Ղազախ, Գանձակ, Շամախի, Գորիս և այլն: Ունի նոր

²⁷ Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1941:

կազմություններ՝ **թռակախել** «անձրևի պատրաստվել», **թռաթակ** «անձրևահար», **թռուաջուր**, **թռացնել**, **թռռել**, **թռալին** և այլն: Կարելի է կարծել, որ այն թորել-թուրմ-թուր/ջ/, թրջել բառախմբի հետ միասին նույն ծագմամբ է, որ նշված բարբառային խմբում ենթարկվել է հնչյունական փոփոխությունների: Կարծում ենք՝ բաղարկություն է, ինչպես **ջաղաց**, **Լոջիյագի** և այլն: Բարբառախմբի հարադրական ձևերից են՝ **թորը կլիկա կըճիրի** «ասում են ծուլ մարդկանց հասցեին», **թոռ թակել** «անձրևի տակ երկար մնալ», **թոռ թակած**, **արել էրած**, **թոռու պրբանել** «անձրևային եղանակներ սկսել», **թոռ օրը կօլատ յըր կալ**, **արև օրը չօխատ** «եղանակը խաբուսիկ է լինում և պետք է պատրաստ լինել», **թոռ օրը հրվերին ճյուր տվող շատ կլինի** «կարիք չլինելու դեպքում օգնողները շատանում են», **թոռ-թոռ**, **թոռ ու թաց**: Համանուններ և նման բառեր են՝ **թորակ** «փոքրիկ թաղ բնակավայրում», **թորը/թօրը/**, **թօն/ն/**, **թօն**:

ԼՈՒՑՍ- գիշեր /քըշեր, քիշեր/, լոյս /լնս, լիս/, խաւար «...և ջնջելոյ զխաւար կռապաշտութեանն...» / Մ.Խ., Պ.Հ., 242/, **կանուխ**, **մատ /մրո>մրոքիսած «մթնած, սևացած, թուխպով պատված»/28**, **մրթախառն /մրթնրխառնր/, մթացուցանել /մրթնրցնել/, մթին /մրթէն/, մութ /մրթէն/, մուտ /ցիրգյսմուտ/, շոռ/ք/ /շոխկ/ր//, պայծառ, պսպղալ /պըղպըճալ, պըճպըճալ/, ցերեկ /ցիրեկ/:**

Մուտ/ցիրգյսմուտ: Կիրակնամուտ, կիրակնամուտք և այլն: Շաբաթվա վեցերորդ օրն է: Նրանով առանձնապես կազմություններ շատ չեն, ինչպես՝ **կրրկյամուտ անել** «լողանալ», **կյերկյամուտը օրփաթան ճելի յեկավ** «նախատեսածից մի բան շուտ լինել»: Հետաքրքրական է, որ այս օրվա հետ կապված հավատալիքներ շատ կան, որ արգելքի, ահագանգի նշանակություն ունեն, ինչպես՝ գիրգյամուտին ճրագը վառ կպահեն, գիրգամուտին գործ չեն անի, տուն չեն մաքրի, կար չեն անի և այլն: Սա հավատալիքներում այն օրն է, երբ գործերում չարը կարող է խառնվել, այդ պատճառով գործերը պետք է պարապ մնան, հակառակ դեպքում կարող է խափանվեն, այլև խախտողները պատժվեն: Ամեն շաբաթվա սկզբին չարը շարժվում է դեպի մարդու աշխատանքը՝ միջամտելու բարի գործին, փչացնելու այն: Եվ հենց միայն գիրգամուտին

²⁸ Տարածքային բարբառներում **մատ**-ը գործածված է մի քանի իմաստներով՝ 1. մանր փուշ, որ մատն է մտնում, 2. Մշուշապատ, մթամած, 3. տխուր, 4. դաժան:

է հասնում մարդուն: Տեսնելով, որ աշխատանք չկա, նա նորից շրջում է, մինչև հաջորդ գիրգամուտ:

ՕՂ - երաշտ /արաշտ/, թուղբ /թօխպ/, թուն||թոնի /թունի, թօնի/, մեղմ /մըղմեղումը, մեղումը/, շունչ /շունչ, սունչ/ «Շնչոյս ողջունի կապեալ ընդ շնորհիդ...» /Գ.Ն., Մ.ն., 57/, շուք /շօք/, պարզկա, ջերմ /ճերմը/, սատ /սատը, սատնը/, սատնամանիք /սրոնրմանիք/, սարսուռ, տաք, տենդ /տենդ/, ցուրտ /ցօրտ/, քամի, օդ /օթ/:

ԿՐԱԿ - այրել /էրել/, բով /պօվ, պել/, բորբ /պէփ, պէփ ա՛ վանել/, բոց /պէց, պից/, խանձ, ծուխ /ծօխ/ «...ընդ եղեգան փող ծուխ ելաներ...» /Մ.Խ., Պ.Հ., 86/, կայծ /կեծակն /կեծակ, կեծակնը, կեծակը/, կրակ, ճարճատել /ճըրճատել/, ճրագ /ճըրաք/, մարմանդ /մարմանդ, մըրմանդ/, մղեղ /մըղեղնը/, մղլակ /մըղլակ/, մոխիր /մօխէր/, մուլ /մօլ/, մուխ /մօխ/, մրկել /մըրկել/, մուր /մօր/:

Սղեղ /մըղեղնը/: «Մոխիր, կայծ, փռշի» իմաստներով նշվում է նաև գրաբարում: Բնիկ հայերեն բառերից է, որ պահպանված է Սյունիք-Արցախ բարբառներում, նախաձևը՝ *mol: Հ. -ե. լեզուներում առկայացած է «մանրել, փշրել» իմաստներով: Այս արմատը, ըստ իս, հայերենում նույնանում է մաղել-ի հետ, բայց բարբառներում «մանր մոխիր» իմաստը այնքան է հեռացել, որ նույնության եզրերը մթազնել են: **Սոլ-մուռ** բարբառային բառերի հետ առնչակցությունը ակնհայտ է՝ **օռու**: Հայերենի բոլոր բարբառներում նույն իմաստը տարածված չէ, այսպես, Տարոնում տարածված է մղեղ, մռելի, Խարբերդ՝ մրեղ, Հաճնում՝ մաղող, Երևանում՝ մղմեղ, բոլորում էլ «հարդի մանր փշուր» իմաստներով: Խարբերդում և Ջեյթունում այս բառից ածանցված են «ոչնչացնել, քանդել», «կորչել, անհետանալ» իմաստները, որ բացակայում են Սյունիք-Արցախում:

ՄԵՏԱՂ - արծաթ, երկաթ /արկաթ/, ժանգ /ժէնգ/, ոսկի /վէսկի/, պղինձ /պըղինձ/:

Ժանգ /ժէնգ/ «մետաղի խոնավությունից արտադրված դեղնավուն նյութ»։ Սրանով կազմված են ոչ միայն բարդություններ, այլև փոխաբերական գործածություններ, որ հարստացրել են բարբառների պատկերավորման համակարգը: Այսպես՝ գրաբարում չվկայված իմաստներից և կազմություններից են՝ **ժանգ-ժանգ, ժանգժանգ ինել, ժանգյանալ**, Արցախում՝ **ժանգյանա** 1. «կոպիտ, մռայլ, անտաշ», 2. լավկան, թնկթնկացող: Այլաբանական վերոնշյալ իմաստները առաջացել են համաբանությամբ, ինչպես՝ **նեխել, գրգժնել**,

թթվել և այլն, այսինքն՝ առարկայի մի վիճակից վատթար վիճակի վերածվելու երևույթը: Ունի նույնանիշը՝ **ժանգ/ժանցյալ** «ոչ պիտանի բույս»: Ունի հարադրությամբ կազմություններ **Գոր.**, **Ղազախ.**, **Արց.**՝ **ժանգ ու ժենգ, ժանգ ու ժունգ**, դարձվածքներ՝ **ժանգ ու ժունգը գցել, կապել, դնել, ժանգը կպնել, թխել** «բույսերի մի տեսակ հիվանդություն», **ժանգը իրեսան կրցած, ժանգը թափել, ժանգը յեր ածել, ժանգերը խառնել, ժանգ փռնել, ժանգը օտել** և այլն:

Ոսկի /վէսկի/: Բարբառախմբում նույն կերպ է գործածվում՝ հնչյունական որոշ տարբերություններով: Բացի ուղիղ իմաստից, բառը փոխաբերությամբ շատ դարձվածքներ է առաջ բերել, որ տարածված են ընդհանրապես բարբառներում: Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում դարձվածքային և այլաբանական, ասույթային իմաստով գործուն են **վէսկի ծեռքեր, վէսկի մաններ, վէսկեն չօփավ պրանել, վէսկավ խաղ անել, վէսկի սարեր խօսք տալ, վէսկին վէսկավ վըսկըճիրել, վէսկին ցեխի մէջին ալ ա պլստրատին տամ**, Արցախում՝ **վէսկի կացինն էլ ա ծըմակը քընում, վէսկի անում, վէսկի մարդ** և այլն: Համադրական և ածանցավոր կազմությունները հավանաբար բարբառին անցել են այլ տարբերակներից՝ **վէսկիմագ, վէսկէճուր, վէսկավուն** և այլն:

Ֆիզիկական աշխարհ նշող թեմատիկ խմբի ենթախմբերի բաժանումը խիստ պայմանական է, բայց և **ՔԱՐ /մոտ 20 բառ/, ԵՐԿԻՐ /մոտ 54 բառ/, ԵՐԿԻՆՔ /մոտ 26 բառ/, ԼՈՒՅՍ /մոտ 15 բառ/, ՕԴ /մոտ 16 բառ/, ԿՐԱԿ /մոտ 18 բառ/, ՄԵՏԱՂ /մոտ 5 բառ/** մատնանշող բառերը կազմում են հիմնական մասը: Մրանցից, ըստ վիճակագրության, առավելապես շատ են երկիր նշող բառերը, որոնց առկայությունը հավաստումն է այն բանի, որ Սյունիքը երբեք անմասն չի եղել հայ ժողովրդի կյանքի և գոյության պայմաններից:

Ֆիզիկական աշխարհ նշող բառերը բարբառներում հիմնականում լայն տարածում են ունեցել և նրանցով կազմվել են նոր բառեր, բաղադրություններ, դարձվածքներ և ասույթներ: Դրանցից քչերն են փոփոխություններ կրել կազմության և իմաստային առումներով, իսկ հիմնական մասը այսօր էլ շարունակում է կազմել Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարի գործուն շերտը:

Мгер Кумунц
Горис

**Слова grabara, обозначающие явления физического мира, в
диалектах Сюника и Арцаха
Резюме**

Подгруппы слов, обозначающие явления материального мира, довольно условны, однако слова, обозначающие КАМЕНЬ /около 20 слов/, ЗЕМЛЯ /около 54 слов/, НЕБО /около 26 слов/, СВЕТ /около 15 слов/, ВОЗДУХ /около 16 слов/, ОГОНЬ /около 18 слов/, МЕТАЛЛ /около 5 слов/ составляют основную часть. Слова, обозначающие ЗЕМЛЯ, особенно распространены. Их существование является доказательством того, что Сюник никогда не был в стороне от жизни армянской нации.

В диалектах слова, обозначающие явления материального мира, широко распространены, и с их помощью создаются новые слова, выражения и фразеологические сочетания. Очень немногие из них подверглись структурным и значимым изменениям, и основная их часть продолжает составлять фундамент лексики Сюника и Арцаха.

**Mher Kumunts
Goris**

**Grabar words pointing to physical world in Syunik-Artsakh dialects
Summary**

The subgroups of the words pointing to the physical world are quite conditional, however, the words pointing to STONE /around 20 words/, LAND /around 54 words/, SKY /around 26 words/, LIGHT /around 15 words/, AIR /around 16 words/, FIRE /around 18 words/, METAL /around 5 words/ constitute the main part. The words pointing to LAND are especially spread. Their existence is the proof that Syunik has never been aside from the life of the Armenian nation.

In dialects, words pointing to the physical world were widespread, and new words, expressions, and phraseological units were created with their help. Very few of them have undergone structural and meaningful changes, and the main part continues to be the fundamental base of Syunik-Artsakh lexicon.



Լուսինե Ներսիսյան
Գորիս
gorpetham@mail.ru

Արդի գրական հայերենը պատմական զարգացման, մշակման ու կատարելագործման, գրական ժառանգորդության, արտաքին ու ներքին ազդակների արդյունքում ձևավորված մի հարստություն է, որի անսահման հնարավորություններից օգտվել և օգտվում են հայ գրողներն ու բանաստեղծները՝ ըստ ստեղծագործական նպատակադրման և ժանրային ու ռճական առանձնահատկությունների՝ երբեմն նաև ներագդելով լեզվի բառապաշարային փոփոխություններին, որոնք լեզվի զարգացման ու կատարելագործման գրավականն են: Փոփոխություններն առկայանում են ներքին՝ լեզվական օրինաչափություններով և արտաքին ազդակներով: Վերջիններս կապված են հասարակական կյանքի տեղաշարժերի հետ: Հասարակական-քաղաքական փոփոխությունները հանգեցնում են տվյալ բառով արտահայտված իրողության չգոյության, որի հետևանքով ակտիվ բառապաշարից դուրս են մղում նաև համապատասխան բառերը: Փաստորեն՝ հնանում են երևույթները, որոնք արտահայտող բառերը ոչ թե փոխարինվում են նորերով, այլ գործածվում են անհրաժեշտաբար, պատմական անդրադարձի թելադրանքով:

Լեզվի ներքին օրինաչափություններով պայմանավորված փոփոխությունները շատ ավելի բազմաբնույթ են՝ պատճառաբանված լեզվի միօրինականացման, մշակման ու կատարելագործման գործոններով: Այս դեպքում բառերը, իրոք, հնացած են և փոխարինվում են նորերով, ինչպես՝ **կորուսվել** /271/՝ «կորչել», փերեզակ /193/ «չարչի», **ածու** /238/ «մարգ, փիսբ. ազգ», **արքայուհի** /221/ «թագուհի», **հեղակարծ** /297/ «հանկարծակի», **տիրուրաց** /314/ «տիրադավ», **այր** /314/ «տղամարդ», **հոլով** /298/ «շատ», **ծիրանի** /314/ «պատմուճան», **պարմանուհի** /201/ «պատանի», **բոկ** /180/ «բոբիկ», **դետք** /157/ «գի-

¹ Բոլոր օրինակները քաղված են Ս. Խանգադյանի Երկերի ժողովածուի VI հատորից, Ե., 1983:

տորդ», **ոթել** /256/ «թափել», **անսալ** /278/ «սել», **զենել** /124/ «զոհել», **ագի** /69/ «պոչ», ինչպես և՝ **վաչ** /5/, որից՝ **վաչկատուն** /146/, **քրամիդ** /72/, **գետնախշտի** /72/, **հուշկապարիկ** /72/, **ուռան** /52/ և այլն:

Նախորդ դեպքում, երբ հնանում են իրությաները, գործ ունենք պատմաբանների (խստորիզմ) հետ, որոնք, ըստ լեզվի շրջանափուլերի, լինում են նախաաշխարհաբարյան, որ գործածվել են աշխարհաբարի կազմավորումից առաջ՝ գրաբարում և միջին հայերենում, և աշխարհաբարյան, որոնք գործածվել են 17-րդ դարից հետո:

Ոճական ակտիվությամբ առանձնանում են գրաբարյան բաներն ու բառակապակցությունները, քերականական ձևերն ու դարձվածքները, քանի որ հենց դրանք են դառնում գեղարվեստական ստեղծագործությունների, հատկապես պատմական երկերի ժամանակաշրջանը երանգավորող գունանյութն ու հենքը: Դրանք գրաբարաբանություններն են, որոնցից վարպետորեն օգտվել է Ս. Խանգադյանը պատմավեպերը գրելիս՝ մասնավորապես «Թագուհին հայոց» երկում՝ վաղնջական Հայաստանի պատմաքաղաքական իրադրության, հասարակական կյանքի, ժողովրդի կենցաղի, վարքուբարքի, կրոնածիսական արարողակարգերի հնարավորինս համոզիչ և հավաստի նկարագրության համար: Պատմաբանների գործածությունը տվյալ պարագայում դարձյալ ձեռք է բերում ոճական արժեք, ուստի և դիտարկելի է որպես գրաբարաբանություն: Նշված բառամթերքից կարելի է առանձնացնել իմաստային մի քանի խմբեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի հեթանոսական անցյալի կենցաղին, կյանքին և գործին, մարտավարությանը, ծիսական արարողություններին, պետական ու վարչական գործին:

Կենցաղ և հագուստ նշող բառեր՝ կահ /219/, **կապա** /190/, **տաղավար** /204/, **գահավորակ** /218/, **այծենի** /240/, **արջենի** /108/, **մաքենի** /75/, **կուր ու կերակուր** /244/, **կրճկան** /240/ «տղամարդու վերնագզեստ»², **անթել** /266/, **նգույր** /72/ «եռոտանի», **ճրագթաթ** /174/, **ամպհովանի** /5/, **օթոց** /3/, **ակույթ** /32/, **պատգարակ** /6/, **փսիաթ** /57/ «եղեգից, ծղոտից հյուսած փոռց, խսիր»:

² Հեղինակը բառ գործածել է որպես գրաբարաբանություն, բայց այն հայերենի բառարաններում ընդգրկված չէ. առկա է միայն Սյունիք-Արցախ բարբառներում՝ **կրճճեգան/կրճճեկան**՝ «կարճ գզեստ, որ հագնում են շապիկի վրայից»/Ա. Մարգարյան, Ղարաբաղի բարբառը, Ե., 2013, էջ 371/:

Ռազմի բառեր՝ գումակ /208/ «մեծ սայլ, ռազմակառք», դրանիկ գունդ /209/, սաղավարտ /201/, լանջապանակ /201/, կուրծկալ /213/, գեղարդ /188/, աշտե /193/, լախտ /204/, պարսատիկ /204/, կապարճ /205/, ուսակալ /205/, պարսաքար /192/, ճոպան /192/, աղեղ ու տեգ /284/, դիակապուտ /281/ «դիակ կո դոպտող», փղամարզիչ /188/, փղավարժ /199/, մարտուսույց /32/, երեսակալ /196/, տապար /194/, ոտնագրահ կոթուր /54/ «կոթուրն, կոթուրնոս՝ բեմակոշիկ»: Այս բառերից կազմվել են նաև բաղադրություններ՝ տեգակիր /193/, զինակիր /193/, ասպարակիր /193/, սորամուտ և քարագնաց մարտիկների ջոկատ /24/: Մրանց մեջ առանձին շերտ են կազմում մարտակառքերը նկարագրող բառերը՝ կառախումբ /218/, սոնապան /199/, կումբ /57/ «վահանի ուռուցիկ զարդ», որից ունի նաև կմբաձև /57/, կառամարտիկ /199/, երասանակ /200/, հեց /200/ «անվագոտի, շրջանակ», կամար /200/, քեղ /200/³ «կառքի երկար ձող», ակիշ /200/ «թոնիքը խառնելու երկար ձող»⁴. «Նրանց երասանակները փղոսկրե շերտեր ունեին, զարդարված էին նաև կառքերի հեցերը, կամարները, թոփերը, կառակողովի ցանցը, նույնիսկ ակիշները, առջև ցցված քեղ, փորքաշ...» /200/:

Պետական և վարչական գործ, զբաղմունք՝ արքունի տիրայր /265/, տնայետ /265/, մեծամարդ /265/, մական /170/, միապետական նշանակ /196/, գայիսոն /196/, կուսակալ /180/, ծերակույտ /197/, գահակալ /56/, ցեղապետ /28/, բանբեր /181/, տիկնունի /210/, աղախին /226/, մատույակ /266/:

Ավելի հետաքրքրական պատկեր են ներկայացնում կրոնաձիսական բովանդակության բառերը, քանի որ դրանց միջոցով ներկայացվում են հեթանոս հայերի բազմակուռք պատկերացումներն ու դրանցով պայմանավորված մասնատված Հայասա երկրի ներքաղաքական և տնտեսական ներհակությունները: Այդպիսի բառերից են՝ պարեգոտ /208/, կնգուղավոր շուրջառ /294/, իխտոն /294/, ուխտեկություն /216/, հմայիլ /269/, բժժանք /139/, դյութ մարդիկ /293/, դյութ և գուշակ կանայք /10/, ծառահմա /8/, հավահմա /47/, քուրմ /19/, դիցուեի /5/, ջրաձոն /165/, անալութ /13/ «...«Աստվածներն ինձ

³ Այն գրաբարում հայտնի է քեղի ձևով:

⁴ Այն հեղինակը գործածել է «ռազմակառքի ձող» իմաստով:

հրավիրում են իրենց անալուծը»⁵: Երևույթն ընդգծվում է, երբ հեղինակը գործածում է բազմաթիվ աստվածների անուններ՝ կապված շրջապատող աշխարհի իրերի և երևույթների հետ: Ներկայանում է հայոց դիցընտանիքը, որի գլխավոր աստվածն է **Մածան-Արամազդը** /288/ իր կնոջ՝ **ուկեճոյի Հեպիտ-Անահիտ** /207/ աստվածուհու հետ: Ստեղծագործության տարբեր պատկերներում հանդես են գալիս **Աստղիկ դիցուհին** /5/, **Ջիվաղը** /154/, **Շանթ** աստվածը «խեթերի Մանթան» /236/, **Ցուլ** /24/ աստվածը, որի անունով էլ կոչվում է ցեղը՝ ցուլ ցեղը, **Հայկ** /26/, **Վանատուր** /27/, **Անգեղյան Տորք** /28/ աստված, **Հիվ** /57/ աստված, **Խստոր** /193/, **Գարշ** /8/, ջրի աստվածուհի **Օովի-Նարը** /6/⁶, արևի աստծո համար գործածում է երկու դիցանուն՝ **Կումարսի** /186/ և **Արեգ** /104/, նաև **Արեգակ** /71/, **Մահ** աստված /243/, **Պսակ** աստված /70/, **Հատիկ** աստվածուհի /91/, **Հատիս** աստված /101/, **Ներգալա** աստված /66/, **Ար** աստված /62/, **Վահագն** /61/, **Վիշապ** աստված /18/, **Մուտ** աստված /47/, **Երազ** աստված /69/: Ընդհանրապես նախապատմական շրջանի կոյրբիտը հեղինակը առավելապես հաղորդում է հատուկ անունների, մասնավորապես տեղանունների չափազանց առատ կիրառությամբ, որը մի այլ քննության նյութ է: Դրանցից մեր ուսումնասիրության շրջանակն են թափանցել միայն նրանք, որոնք գրաբարատիպ կազմություններ են, ինչպես **Հայասա Փոքր** /220/, **Թեգարամա երկիր** /175/: Հեղինակը այն գործածում է և՛ համադրական, և՛ վերլուծական կազմություններով՝ **Թեգ Արամա** /242/՝ երկրորդ դեպքում ընդգծելով գրաբարի սեռական հոլովի գործածությունը՝ **Արամա**: Երկրորդությամբ է գործածում նաև **Թորգոմ տուն** /175/, ավելի հաճախ՝ **տուն Թորգոմա** /7/: Գործածվում է **Տավրուբերան** /26/ տեղանունը՝ նախնական ձևով: **Բիայնիլի-Վան** /278/ տեղանունը գործածում է սեպագրային և գործածական ձևերով: Այդպես նաև՝ **Հնդկաց ծով** /168/, **Այծեաց բերդ** /32/, **Արգավա երկիր** /50/, **Ավձ ամրոց** /26/, **Աղավն գետ** /109/: Անսովոր գործածություն է **Սանասուն** /285/ տեղա նունը՝ «անգեղ տան

⁵ Միայլ կիրառություն է. ունի «ինձ, ընձուղտ» իմաստները, ինչպես և՛ «երե, եղջերու». այս մասին տե՛ս նաև Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 79: Բնագրում գործածվում է նաև «ռազմական վերնագգեստ» իմաստով:

⁶ Ի դեպ, առանձին գրությամբ հեղինակը շեշտում է **ծովի** աստվածությունը, բայց արդի հայերենի սեռական հոլովաձևով՝ **Օովի Նար**:

Մանասունից ենք» արտահայտության մեջ, ինչը, կարծում ենք, ընդամենը խոսքին հնատիպություն հաղորդելու նպատակով է:

Պատմական շրջանի գուներանգը Մերո Խանզադյանը խտացնում է նաև հասարակ անունների գրաբարյան հոլովական ձևերով. օր՝ **մթան** /201/, **սգո** /230/, հոգնակի սեռականով՝ **կենաց ջուր** /213/, **թագավորաց** /291/, **հարսանյաց հանդես** /8/, **քաջաց** /66/, **անիծից** /9/, **արարածաց** /92/, **կողմն արևելից**, **կողմն արևմտից** /98/, հայցական հոլովով՝ **երկինս** /282/, **երիցս** /282/, գործիական հոլովը հանդիպում է ողջույնի արտահայտություններում՝ **բարյավ** (**զնաս բարյավ**, **մնաս բարյավ**) /259/, ըստ որում, հեղինակի՝ ան միօրինակություններին միտված լինելու հանգամանքը առավել շոշափելի է քերականական իրողություններում. այսպես. «Շտապիր քո **զավակներով**, **կանանցով**, **ընդոծիներով**, **աղիսիվ** և **աղիվ** ինձ հյուր» /18/ նախադասության մեջ ունենք գործիական հոլովի աշխարհաբարյան և գրաբարյան տարբերակների գուգակցում: Նույն հատվածում գործածել է գրաբարյան **դստեր** /32/ սեռականը և **դուստրին** /32/ աշխարհաբարյան հոլովածը: Կին բառի հոգնակին բազմիցս հանդիպում է խոսակցական **կիներ** /15/ և գրական, որ նաև գրաբարյան է, **կանայք** /16/ տարբերակներով:

Բայական համակարգում տուրք է տվել գրաբարյան անցյալ դերբայի գործածությանը և՛ բուն դերբայական արժեքով (**օրհնյալ երիցիք** /245/, ինչպես նաև՝ **սիրեցյալ**, **հիշյալ** և այլն), և՛ գոյականական ու ածականական կիրառությամբ՝ **մեռյալ** /280/, հանդիպում է ապառնի դերբայը **սուրք ու տալիք** /49/ կապակցության մեջ: Խոնարհված ձևերից են **կամիս** /282/, **կամիւ** /282/ անկատար ներկայի ձևերը (կամենում ես, եմ), հրամայական՝ **լուր աղերսանքիս** /324/, **սկանջ մի՛ լուր** /10/, **մի մեղադիր լեր** անմեղադրելիին /55/:

Խոնարհման համակարգում նկատվում են գրաբարյան և աշխարհաբարյան բառաձևերի համադրումներ. օր. **լինի** /196/, **եղիցի** /195/:

Կան նաև այսպես ասած «գրաբարի հանգով ստեղծված»⁷ բառաձևեր, օր.՝ **պիտի սատակես** /257/, **կկորուսվես** /271/, իր **կորուստըն է փութացնում** /268/, որոնցում հնատիպությունն արտահայտ-

⁷ Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Ե., 2002, էջ 171:

վում է բառերի միջոցով (սատակել, կորուսվել, փութալ), իսկ քերականական ձևերը աշխարհաբարյան են:

«Գրաբարատիպությունը» ընդգծում են նաև նախդրավոր կառույցները, որոնցից հաճախական են ի նախդրով ձևերը: **Ի** նախդիրը նախ և առաջ բացառականի նախդիրն է, ինչպես՝ **ի բնե** /241/, **ի ծնե** /281/, **ի սկզբանե** /269/, որոնք քարացած արտահայտություն են, ինչպես նաև՝ **ի գորու** /191/, **ի մի** /238/, **ի տրիտուր** /211/, **ի կատար ածել** /267/:

Ի նախդիրը հայցական խնդրով՝ տեղի նշանակությամբ՝ ձայնիկդ **ի սիրտ** /283/, մեր հողերը **հարքունիս** արին /297/, նաև ուղևորման տեղի նշանակությամբ՝ **ի մարտ** /204/: **Ի** նախդիրը բայանունների հայցական խնդրով արտահայտում է նպատակ. օր.՝ **կամքդ ի կատար** /8/, **ի կորուստ** /43/, **ի ցույց** /250/, **ի նշանավորումն** /248/, **ի լուր** /261/:

Գործածվել է նաև **ընդ** նախդիրը հայցական խնդրով՝ **ընդ արուս և ընդ անասունս** /55/՝ արտահայտելով միասնության հարաբերություն՝ արդի հայերենի **հետ** կապի նշանակությամբ:

Բառընտրության, բառակազմական տարբերակների հարցում հեղինակը դրսևորել է լեզվաբանական հմտություններ՝ ոճավորելով երկի լեզուն բառակազմական տարբեր օրինաչափություններով կազմված բարդություններով: Նորատիպ կազմություններին զուգահեռ գործածում է գրաբարյան հիմքով բարդությունները, ինչը խոսքը դարձնում է շարժուն ու արտահայտիչ, այսպես՝ **ափիբերան** /235/, **ապիկար** /228/, **քեռայր** /193/, **քրմակեց** /201/, **դիցընկեց** /161/, **նետընկեց** /163/, **այրաշեն** «քարանձավում շինված» /272/, **սևազգեսաց** /293/, **հայնկոյս** /116/:

Երբ խոսում է Շամիրամի մասին, գործածում է **առնաբաղձ** Շամիրամ /51/ արտահայտությունը, իսկ Մուրսիլիսի այրու մասին արտահայտվում է **կրքակարոտ** էգ /227/ ժողովրդախոսակցական կապակցությամբ:

Ս. Խանգաղյանը տուրք է տվել նաև հարադրական բարդություններին՝ հարկ եղած դեպքում ստեղծելով հնատիպ և վերամբարձ ոճ, օր.՝ **այր մարդ** /7/, **այր ազատ** /9/, **ողբի մայր** /251/, զուգահեռաբար նաև՝ **ձայնարկու** /251/, **արմ ու սերունդ** /92/, նաև՝ **զարմ ու սերունդ** /196/:

Պատկերն ամբողջացնում են հարադրական բայերը, որոնցից շատերը դարձվածային արժեք ունեն. **սլաղ առնել** /315/, **մեղադիր լինել** /159/, **զանց առնել** /40/, **բարձակից անել** /37/, **ծառս լինել** /220/, **ճախճախտո դարձնել** /171/ «ս պականել, կեղտոտել», **երկյուղ կրել** /56/, **ագդ անել** /182/, **խունկ արկանել** /43/, **պաշտոն մատուցել** /287/, **վահանափակ անել** /187/, **հանգիստ առնել** /10/, **թմուր պատել** /163/, **երկիր պագանել** /9/, **ուղի ելնել** /27/, **ողբ անել** /140/, **տաղտապիլ լինել** «տանջվել» /67/, **շեփոր հարել** /75/, **սպասին կանգնել** /238/ (գործածել է անվանական արժեքով՝ սպասին կանգնած «սպասարկելու պատրաստ»), որոնք խոսքը իսիստ վերամբարձ և ճնշող չեն դարձնում, քանի որ հակակշռվում են բայական համադրական կազմություններով՝ **երկրպագել** /31/, **մատաղել** /177/, **ռազմարշավել** /169/, **պատանել** /229/, **ասպատակել** /175/, **տարափել** /306/, **զերծվել** /263/, **ճամբարել** /14/, **վիպասանել** /13/, **հանգրվանել** /32/, **խրախճանալ** /42/, **խարկանել** /136/, **ճեպել** /164/, **շամշել** /171/:

Գրաբարյան քերականական, բառակազմական, իմաստային իրողությունները պատումին չէին հյուսվի, արհեստածին կթվային, եթե դրանք չգործածվեին մեր նախնյաց մտածելակերպն ու կենսակերպը հատկանշող շարահյուսական կապակցություններում ու կադապարներում: Բերենք տիպական օրինակներ.

«**Քո տգիտության խավարին հասու չէ մտքի լույսը**» /299/, «**Գուցե սիրտը որոշ-ինչ դատարկի**» /224/, «**Ոչ ևս է** (այլևս չկա, մահացած կամ սպանված է), որը հանդիպում է **ոչ է ևս** շարադասությամբ («**ոչ է ևս աստվածներին կործանող չարը**» /326/), «**Ղու կապրես երկար կենոք ու բարի վարոք**» /76/, «**Ժամը ի նպաստ քո է**» /72/, **ինչպես և՛ կարգ չէ** /230/, **հաճո է** /238/, **կամ է քեզ** /221/, **կամ լինի** /20/, **արզել չէ** /30/, **մնացեք բարյավ** /50/, **մեծավ ուրախությամբ** /84/, **կամքս է** /23/:

Այլևս մակբայը գործածված է նախնական իմաստով, որ վերջին շրջանում ակտիվանալու միտում ունի, օր.՝ «**Մի՞ թե ես այլևս ամուսնուս պետք եմ իբրև կին** (դեռևս)» /173/:

Հնատիպությունն առավել ցայտուն է դրսևորվում գրաբարին բնորոշ շարադասության հաճախական գործածությամբ, որը հիմնականում դրսևորվում է կերպարների խոսքում, հատկապես «**դից գարմ**» /267/, ընդունվող տերերին կամ աստվածներին դիմելիս: Այսպես՝ **արքա հզորների** /169/, **տեր ողորմած** /177/, **Կարաննի հզոր** /194/, **թագածառանգ հայոց** /213/, **Հայասա Փոքր** /220/, **պաշտամունք**

իմ /253/, թագուհի մեծ /300/, թագուհի ներող /300/, թագուհի լքված /300/, թագուհի հզոր /300/, ստորադրյալ իմ /218/, գաղափար իմ /217/, ձայնը մեր ցնծության /277/, ճանապարհ բարի /297/, աստղ իմ երկնային /31/, աստղ իմ լուսաբացի /31/, սիրելիդ իմ /15/ և նման օրինակներում ունենք որոշիչների և հատկացուցիչների՝ գրաբարին բնորոշ հետադաս գործածություն:

Կերպարավորման նպատակադրմամբ թերևս պետք է բացատրել շարահյուսական մի սխալ կառույց, որը, ըստ ամենայնի, ընդգծում է Հայասա երկրի թշնամի Խաթթիի Մուրսիլիս արքայի անգրագետ ճոռոմաբանությունը. «Եվ որովհետև նրանք, ովքեր իմ դեմ չար խոսքեր են ասում, ես թշնամանում եմ» /30/:

Չուգորդումներ կան նաև հնչյունական, ուղղագրական համակարգում: Կան ամբողջական հատվածներ, որոնք շարադրված են գրաբարով, բայց գրաբարյան ուղղագրության մասնակի պահպանմամբ, օր.՝ «Ով մեծ և արի արարիչ երկրի և երկնքի, ողջույն: Ողջույն հասեալ և շենություն դիցուհուդ օգնականութեամբ լիություն և պարարտություն այրվոյն Մաժան-Արամազդի» /288/: Կամ՝ «Խնդրել ի քենե փշրանս ողորմութեան և ոչ թե քո գուրթը» /311/, «Քեզանով կա և կենդանություն կրե երկիրս Հայասա» /290/:

Եկին յիս ի վեր առին,

Հավա դ, է...

Այս իմ կարմիր տոտիկս

Կռճերովս ի վայր կտրեցին,

Հավա դ, է...

Այս իմ կարմրիկ արյունս,

Որ գետին ի վայր որեցին...

Այս իմ հատ ու մատ փետրիկս

Մեկն ի սար եղև, մեկն ի ձոր,

Հավա դ, է... /100/

Ուղղագրական երկձևություններ կան նաև առանձին բառերի գրության մեջ. հանդիպում է խոյր /225/, որից՝ խոյրակիր /150/, խույր /72/, իյուղ /325/, խուղ /22/, Մինայ /20/, Մինա /20/, Հայկայ||Հայկա/24/||Հայկի /162/, Կոտակ||Կոդակ /88/:

Նման գուգորդումները կարող են թողնել այն տպավորությունը, թե հեղինակը առանձնապես հետամուտ չի եղել խոսքի ճշգրիտ կառուցմանը, սակայն բազմաթիվ օրինակներ փաստում են, որ նա

ամենայն պատասխանատվությամբ է ընտրել բառանյութը, իսկ եղած անմիօրինակությունները ժամանակաշրջանի պատմագունապնակը հարստացնելու, հեթանոս հայերի բազմատարր կենցաղի ու հարաբերությունների, ցեղախմբային, կրոնաձիսական անմիաբանությունների քողածածկույթը բացապարզելու միտումն ունեն:

Հիշյալ օրինակներով գրաբարաբանությունները չեն ավարտվում. կան իմաստային այլ խմբերում ընդգրկվող բառեր՝ **ձիալախուր** /199/, **կաղիճ** /235/, **կիվ** /8/, **աղբույս** /227/, **արույրե** /230/, **գուկակ** /47/ «խո դոց», **խոչ** /170/, **կապերտ** /237/, **խստոր** /193/, **սինյրոր** /313/, **բամբառակ** /257/, **ստահակ** /257/, **կաթնաշուրթ** /175/, **պատրական** /175/, **ծնկածալ** /243/, **վահանախիտ** /203/, **լայնալիճ** /289/, **մույկ** /9/, **փանդիո** /251/, **գիսակ** /10/, **կապա** /190/, **տավիղ** /201/, **տիվ ու գիշեր** /66/, **գուժկան** /170/, **հետիտուն** /180/, **հեղել** /182/, **տատամսել** /185/, **խանդակ** /189/ և այլն:

Այսպիսով՝ Ս. Խանգաղյանը «Թագուհին հայոց» պատմական երկը շարադրելիս դրսևորել է «պատմաբան-լեզվաբանի գիտելիքներ ու դիտողականություն, արվեստագետի նուրբ լեզվազգացողություն, որպեսզի վաղնջական ձևերը թոթափեն իրենց դարավոր փոշին, պոկվեն գրքային մեռած միջավայրից ⁸» ապահովելով պատմական լայնածավալ կտավի հնքնաբուխ ընթացքը:

⁸ Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., 1970, էջ 189:

Лусине Нерсисян
Горис


Лексика грабара в исторической повести «Царица армянская» С.
Ханзадяна
Резюме

Повесть «Царица армянская» С. Ханзадяна особенно уникальна использованием различных языковых выражений. Однако, из языковой специфики наиболее выразительным является использование слов из грабара, таких как **արույրե, աղբյուս, կաղիճ, խոյր, բմուր պատել, ճեպել** и т. д. Это в основном забытые или малоиспользуемые слова и сочетания из грабара, которые автор применил для более выразительного описания исторической среды и героев.

Lusine Nersisyan
Goris

Grabar expressions in S. Khanzadyan's "Queen of Armenians"
historic novel
Summary

S. Khanzadyan's historic novel titled "Queen of Armenians" is especially unique for the usage of various linguistic expressions. However, the most prominent linguistic originality is the involvement of grabar words, like **արույրե, աղբյուս, կաղիճ, խոյր, բմուր պատել, ճեպել**, and so on. These are generally forgotten grabar words and expressions, which are used very seldom. The author involved them in the novel in order to describe the historic background and the heroes more expressively.



Ինգա Մարգարյան
Գորիս
Inga--1987@mail.ru

Գեղարվեստական արձակի խոսքի կարևոր հատկանիշները ոչ միայն զուտ համեմատությունների, դարձույթների, փախաբերությունների և ոճական այլ ձևերի առատ կիրառությունն է, այլև լեզվի տարբեր մակարդակների լեզվաոճական իրողությունների հստորեն գործածումը, հեղինակային միջամտության շնորհիվ լեզվի գեղարվեստականացումը: Քերականական ձևերը լեզվաոճական առումով տարարժեք են: Ակնհայտ է, որ ձևաբանական իրողությունների դեպքում ստեղծագործողը չի կարող ունենալ այն ազատությունը, որն առկա է լեզվի մյուս բաժիններում: Բայց այս դեպքում էլ, իբրև խոսքի ձևավորման վարպետ, նորագույն շրջանի ամենահայտնի հեղինակներից մեկը՝ Մերո Խանգադյանը, կարողացել է գտնել ուղիներ, որոնք որոշակի նրբիմաստային ու գեղագիտական արժեք են հաղորդել արձակ ստեղծագործություններին: Օգտագործվել են հատկապես ձևաբանական մի շարք կարգերի ընձեռած հնարավորությունները (տարբեր խոսքի մասերին բնորոշ հատկանիշներ, հոլովում, հոգնակիի կազմություն, առկայացում, խոնարհում և այլն): Առանձին դեպքերում նույնիսկ նորմից կատարված շեղումները դարձել են հերոսների տիպականացման, նրանց մտածողության ու հոգեբանության բացահայտման, խոսքի ոճավորման յուրատեսակ միջոցներ:

Աշխատանքում ներկայացվում են ձևաբանական ոճագիտության մի քանի իրողություններ, որոնց գործածություններն արձակում հատկանշվում են խանգադյանական ինքնատիպությամբ:

Գոյականի ոճական դրսևորումները ձևաբանական մակարդակում առանձնանում են իմաստային-քերականական խմբերի յուրահատուկ կիրառություններով: Հասարակ գոյականները ստանում են անձնավորման նրբերանգներ. «Հե՛յ, հեյ...**Ջրաղաց** քանում է, քանում է...Ո՛չ իր ձայնը հասավ գյուղի ականջին, ո՛չ էլ **ջրաղացի**» (ՋՁԶ, 294): Առավել բնորոշ են անձնանուն գոյականների՝ հերոսնե-

րի անունները ընդհանրական, ամբողջական հասկացությամբ արտահայտող կիրառությունները՝ **մարոներ** (ԵՏՕ, 533), **մանաններ** (Կ, 529) և այլն: *Հոգնակի թվի* կազմությունը հիմնականում համապատասխանում է գրական լեզվի նորմերին, սակայն ոճական նպատակով հանդիպում են նաև շեղումներ, որոնք խոսքը դարձնում են բազմանշանակ: Հանդիպում են **ք**-ով և առանց **ք**-ի կազմություններ, որոնցում **ք**-ն կարող է տարբեր գործառույթ ունենալ. «Էդ թևավոր մանր **հարամիքք**...» (Հղ, 372), «Նա բռնում էր մեծ **կուրծ** ունեցող այծերից մեկին» (ԼՀ, 7), «Եթե ձեռքը խաչ էր անում **կրծքին**...» (ԼՀ, 5), **-ք** և **-եր** մասնիկների գուգորդումներ՝ **տղերք**, **փողերք** և ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ հոգնակերտ վերջավորություններով կազմություններ՝ **գեղացիք**, **աղջկերք**, **կնանիք**, **ճամփեք**¹:

Առկայացման կարգի դեպքում նկատելի են որոշյալ հոդերի՝ բարբառին բնորոշ հատկանիշներով գործածություններ. «Երևի վախից է բռնել գելի **վզիցը**» (Հ, 298), «**Գլխովը** ման տամ» (ՄՁԳ, 108), «Ես դուրս եմ գալու **մղակումը** աղոթք անեմ» (Պ, 324): Ինչպես նաև անհող կիրառություններ, որոնք հիմնականում կրում են խոսակցական լեզվի ազդեցությունը. «Գնանք պահապան կանգնեք **մեր տան**, մեր օջախին» (ՄՄ, 49): Յուրակական հողի գործածությունը նպաստում է խոսքի սեղմությանը՝ արտահայտելով տարբեր նրբիմաստներ. «**Աշխարքս** մուրտառեց» (ՄԵ, 553), «**Գիշերս** անձրև է գալու» (Հ, 211): Հերոսների խոսքում հատկապես շատ են ստացական հոդերով կազմությունները՝ թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով՝ **արևդ կծեմ**, **աչքիս վրա**, **վիզները** կախել և այլն:

Շղթվական համակարգն արձակում արտահայտվում է գրական օրինաչափություններին համապատասխան², իսկ նկատվող շեղումները, որոնք բնորոշ են բարբառներին, ժողովրդախոսակցականին, ինչպես նաև գրաբարյան կազմությունները հերոսների խոսքում պայմանավորված են թեմատիկայով և ոճավորմամբ: Հանդիպում են ուղղականի՝ այլ հղթվական նրբերանգներով կիրառություններ. «**Դուրսը** մույժ է, հոգյա կս» (ՕԵ, 561), «Աչք ածեցի, **տունը** չէիր» (Ա, 48), «Թագավորը նստել է **Կարապաբերդը**» (ՄՄ, 216): Սեռա-

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 179:

² Ռ. Մկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1992, էջ 85:

կան հոլովն առանձնանում է բարբառային ձևերի կիրառությամբ. «Նստի՛ր, **քվոր** տղա» (Ք, 349), «Չբեր **կնանոց** ոտքն էստեղից կտրվում չի» (Պ, 323), «Տանը թուրք կա, աղջի: Գնա **հորանց**» (ՔԹ, 595): Ժողովրդախոսակցական տարբերակին մոտենալու միտում են ա-ով վերջացող մի քանի բառերի սեռական հոլովաձևերի գործածությունները՝ **գուննի, փեսի, տղի, երեխի**: Բարբառային իրողություն են հայցականաձև տրականի գործածությունները. «Նշանածը թաղեմ, հա՛» (ՀՄԱ, 143), «Հետո արի ոչխարն ու **գողը** գտի» (Հ, 369), բացառականի ինքնատիպ ժողովրդախոսակցական դրսևորումները՝ «**Բանից-մանից** ուտո՞ւմ աս» (ԴԴ, 348), «Դուրս ընկած **ոսկորից, բանից** ունի՞» (ԴԴ, 346), գործիական հոլովի փոխաբերության և փոխանունության նրբերանգներով հանդես գալը, որոնք հիմնականում ունեն դարձվածային արժեք. «Ինքս ինձ **աղով** անում» (ՀՄԱ, 138), «Էդ մեկը **սրտովս** չի» (ՀՄԱ, 131), «**Երեխով** եմ» (ՀՀԱՀ, 280), ինչպես նաև վերացական գոյականների և առանձին դերանունների ներգոյական՝ **ուս**-ով կազմությունները. «Քիչ չբերներ եմ իմ **օրում** բերել էստեղ» (Պ, 324), «**Մերումն** սկի նշանդրեք էլ չի» (ՄՄ, 65):

Ածականի կիրառություններից առանձնանում են գույն արտահայտող ածականների փոխանվանական գործածությունները (հիմնականում՝ մակդրային, որը ածականի ամենակարևոր յուրահատկություններից մեկն է³)՝ **կապույտ-ձերմակ լռություն, սպիտակ լռություն, ձերմակ մեղք, ձերմակ մահագո, կապույտ հայացք, կապույտ բարկություն**:

Թվականների դեպքում հատկապես պետք է նշել կոնկրետ թվականների ոչ սովորական գործածությունները. «**Վեց անգամ տասը** գարուն է անցել այդ օրից, **յոթն էլ վերադիրք**» (ՀԿ, 553), «Գնել եմ **հինգ ու յոթանասուներկ**» (ՈԻԴ, 407): Դարձվածային արժեքով և հեղինակային մոտեցմամբ նորովի է թվականների գործածությունը բարդության կազմում. «Բա **երկու հոգի դառնալը** հեշտ բան ես համարո՞ւմ» (Պ, 325), «Շունը **մի երկու բերան հաչաց**» (ՔԶ, 226): Երբեմն էլ հենց ինքնուրույն ձևով զուգորդում է թվականը բային, որը գրական լեզվին բնորոշ չէ. «Պորտաքարի սուրբ գնալու մասին ոչ մի տեղ **բերանդ երկու չանես**» (Պ, 325):

³ Տե՛ս Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ե., 1990, գ. 1, էջ 223:

Հերոսներին անհատականացնելու և նրանց խոսքը տիպական դարձնելու նպատակով հեղինակը գործածել է *դերանունների* բարբառային, խոսակցական տարբերակները (ուղիղ և թեք)։ «Էն տրակտորը **քո մնն** ա» (ՄՁԳ, 111), «Ադ՛ ա, դու **ումանցի ց** ես» (ՄՁԳ, 97), «Էլի **իրա** ուրախությունը **իրա** տանն է գտնում, **իրա** երեխաների ու կնկա հետ» (Հ, 394)։ Հաճախակի **ոչինչ** ժխտական դերանվան փոխարեն գործածվում է **հեչ** պատասխանական բառը։ «Ոնց թե **«հե չ»**...աջը սպանեցիր ու **«հե չ»**...» (ՕՀ, 191)։

Հետաքրքրական են բազմիմաստ *բայերի* ու բայական հոմանիշ ձևերի կիրառությունները փոխաբերական կամ դարձվածային արժեքով։ «Ես քո **ճամփան էի պահում**» (ՕՀ, 205), «Մերին **փշրվեց**» (ՕՀ, 207)։ Հանդիպում են նաև նույն արմատի կրկնադիր գործածություններ⁴։ «Կին ու աղջիկ **լաց լացեցին** իրենց լեռների հանգով, **սուգ սգացին** երգածայն ու զիլ» (ՀԿ, 555)։

Բայի եղանակաժամանակային ձևերի ոճական կիրառություններն ավելի բազմազան են։ *Ներկա* ժամանակի իմաստը հաճախ տրվում է ոչ թե բայի ներկայի ժամանակաձևերով, այլ ստորոցյալի կողքին որևէ մակբայի կամ ներկայի իմաստ արտահայտող բառի գուգորդումով։ «**Ուր որ է** մինիստրը **կգա**» (ՉՍ, 370), «**Հիմա** դեղի կարոտներ **կգան**» (ԽՀԼ, 81), «**Մի քսանհինգ տարի կլինի**, որ ապրում է ձորում» (ԻՀՄ, 315), «Այսպիսի մատներով արված պատվաստը **պետք է որ բռնի**» (ՕՀ, 203)։ *Անցյալում* կատարված-ավարտված գործողություններ նկարագրելու համար գործածվում է նաև, այսպես կոչված, պատմական ներկան⁵։ «**Անցյալ տարի** Արդար Հաբուդը սարի ֆերմայից **գալիս է** քաղաք» (ՄԵ, 551)։ Օրինաչափորեն անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևով ներկայացվում են անցյալում չկատարված գործողություններ, եղելություններ, սակայն արձակում նման ձևով ցույց է տրվում կատարված գործողություն՝ **մինչև** շաղկապի հետ գործածվելով։ «**Մինչև ջգնացի, չտեսա**, որ էշին գտել են, **չհանգստացա**» (Հ, 299)։ Երբեմն *այպանիի* իմաստ կարող է արտահայտվել սահմանականի ներկայի կամ անցյալ կատարյալի ձևերով։ «Տղանե՛ր,- ասում է հրամանատարը,- **գնում ենք** հարձակման» (ԵՏՕ, 643), «**Հիմի** մարգերը **փուլ ածեց**» (ՄՁԳ, 101)։ Առանձին

⁴ Տե՛ս Լ. Եզեկյան, Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 67։

⁵ Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Ե., 1959, էջ 43։

դեպքերում էլ, հատկապես երկխոսություններում, կարող են գու-
գակցվել հրամայական և ըղձական բայաձևերը. «Մի անգամ էլ
սրսկի՛ր- **Սրսկենք**» (ՕՀ, 206), «Ուրախ չեք **արա**, Մաղաթե՛լ:- **Անեմ**»
(ՄԵ, 502):

Հատկանշական են հրամայական եղանակի **բ**-ի անկումով
կազմությունները. «Կուգես **խփի** ինձ, **սպանի**» (Անդ, 134), արգելա-
կան հրամայականի բարբառային կիրառությունները. «**Մի վախ-
նար**» (Ամռ, 40), «**Ամչի՛լ մի**» (ՇԱ, 482), օժանդակ բայի շարադասու-
թյան խախտումները. «**Գիտում չեմ, տեսել չեմ**» (ԼՀ, 9), նաև օժան-
դակ բայի **ա**-ով ձևերի գործածությունները. «Հրես ամսից **ավել ա,
տեղ ա թողել**, գնացել» (ՀՄԱ, 143):

Չթեքվող խոսքի մասերի ոճական կիրառություններից առավել
հատկանշական են *կապերի* գործածությունները, որոնք արձակում
առանձնանում են ոչ միայն արտահայտած հարաբերության համա-
պատասխան իմաստներով, այլև երկրորդական նշանակություննե-
րով⁶: Օր.՝ ժամանակի հարաբերության իմաստով են կիրառված
տեղի **մոտ**, **վրա** կապերը. «Կիրճի ճանապարհը ավարտելու **վրա**
էին» (Հ, 208), «Արդեն կեսօրին **մոտ** էր» (Պ, 323): Հեղինակային ինք-
նատիպությամբ առանձնանում են համեմատության նրբերանգով
փոխաբերական այնպիսի կառույցները, որոնցում **նման**, **պես** կա-
պերը կարելի է վերականգնել. «Ուլիկի **մազերը գառան գանգուր
էին**» (ԽՀԼ, 74):

Շաղկապների գործածության առումով հետաքրքրական են
ժողովրդախոսակցականին, բարբառներին բնորոշ ձևերը. «Օիժա-
ղեցինք, վերջը Սաքոն, **թե՛** Ավետի՛ս, վախի՛լ մի» (Հ, 298), «**Յա** մի
ճար արա, **յա** պիտի գնամ Լաչին քերձից ընկնեմ տակը» (Պ, 322):
Պատճառի, հիմունքի, ժամանակի և այլ իմաստային նշանակու-
թյամբ է հաճախ գործածվում **որ** շաղկապը. «Գոհ մնաց, **որ** Մանու-
շի բրիգադը լավ է աշխատում Մշկահանդում» (Հ, 99), «Բայց նա գոհ
էր, **որ** մարդկանց մոտ ամոթով չմնաց» (Հ, 315), «**Որ** մուրթ վրա
տվեց, կրակ արինք, կշտին պպեցինք» (Հ, 297):

⁶ Տե՛ս Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու
քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերե-
նում*, Ե., 1965, էջ 349:

Վերաբերականները առանձնանում են ոչ միայն խոսքին որոշակի երանգներ հաղորդելու տեսանկյունից, այլև ժողովրդախոսակցական ոճին բնորոշ լինելով. «Շուռ եկ, **հրե՛տ է՛**» (Պ, 323), «**Գոնյա** դու գնա, թե չէ մեր Ավետիսը կխոռովի» (Հ, Ա, 228), «Դու **խակի** խոսեցի՞ր բրուտի աղջկա հետ» (Ավ, 224): Շատ ակտիվ է **բա**-ն, որը տարածված է բարբառներում, խոսակցականում, ամրակայված է նաև գրական լեզվում և առանձին կառույցներում բավականաչափ հաճախադեպ է. «**Բա չասի՞**: Կաշի Ալեքսանը եղբորն էլ կմաշկի» (ՄԵ, 515), «**Բա սա բա՛ն էր**, որ արեց Խաչիպապը» (ՉՏԲ, 389):

Բնության երևույթների իրական վերարտադրման ու պատկերման գործում անմասն չեն նաև *ձայնարկություններն ու բնաձայնական բառերը*: Արձակում ձայնակությունների գործածություններ շատ կան, որոնք արտահայտում են ամենատարբեր զգացումներ՝ հաճելիություն, զարմանք, դժգոհություն, ավստսանք և այլն: Հաճախադեպ են ձայնարկությունների գործածությունները հարադրության կազմում. «**Ախ ու վիշ արավ** կովում «փչացածների» համար» (ՀՄԱ, 131), «**Հա յ-հարա յ արի...**» (ՄԵ, 552): Բնաձայնությունները տարբերվում են դատողական հատկանիշի բացակայությամբ. «Հրացանս ձեռաց կալա ու...**թրա՛խկ**» (Հ, 210), «Երկինք է սլանում նաև եկեղեցու զանգերի դողանջը՝ **դի՛ն-դա՛ն**» (ԽՀԼ, 37): Սրանք առանձնանում են իրենց բառակազմական արժեքով. ավելի շատ են մտնում բառական այլ կազմությունների մեջ՝ կազմելով գոյականներ, ածականներ, բայեր՝ **շրխկոց, դրմբոց, թրխկոց, փոթկոց, ծվծվան, շփշփալի, տումբալ, կաթկթալ** և այլն:

Լեզվառձական բոլոր տեսակի իրողությունները՝ անկախ նրանից, թե որ մակարդակին են առնչվում, Ս. Խանգադյանը լավագույնս ծառայեցրել է տարաբնույթ ու տարատեսակ դարձույթներ ու բանադարձումներ ստեղծելուն (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, համըմբռնում, չափազանցություն, նվազաբանություն, կրկնություն, շրջուն շարադասություն և այլն), որոնց դիպուկությունը, ինքնատիպությունն ու տեղին գործածությունը ամողջացնում ու արժևորում են խանգադյանական արձակի լեզուն:

**Инга Маргарян
Горис**

**Лингвостилистический роль морфологических реалий в прозе С.
Ханзадяна
Резюме**

В статье представлены несколько реалий морфологической стилистики, использование которых выделяется показывая характерную оригинальность С. Ханзадяна. Грамматические языковые реалии в пересчете на лингвостилистики отличаются с точки зрения стоимости. Очевидно, что автор морфологических реалий не может иметь свободу, которая существует на других уровнях. В этом случае С. Ханзадян – мастер слова – в состоянии найти способы, чтобы получить тонкую смысловую и эстетическую ценность. Он использует возможности, предоставляемые рядом морфологических категорий (свойства, характерные различным частям речи, склонение, составление множественного числа, спряжение и др.). Отклонения от нормы в некоторых случаях даже стали типичным для персонажей, показывая их уникальное мышление, психологию и стиль речи.

**Inga Margaryan
Goris**

**The linguistic-stylistic role of morphological facts
in S. Khanzadyan's prose
Summary**

The article represents some realities of morphological stylistics the usage of which is very characteristic of Khanzadyan's unique style in the prose. The grammatical facts are diverse in the sense of stylistics. It is obvious that in the case of morphological facts the author does not have the same freedom as in the other levels.

Even so, as a skilled master of speech Khanzadyan managed to find ways which are of subtle semantic and aesthetic value. The author particularly used some opportunities given by a range of morphological classes such as features typical of different parts of speech, cases, formation of plurality, declension, conjugation etc. In some cases the deviations from the norm even became unique means of making the characters typical, revealing their ways of thinking and psychology and style of speech.



Էդիտա Կարապետյան
Գորիս

edita.karapetyan.84@mail.ru

Հարազատ բնօրրանի՝ Չանգեգուրի կենսատու բնաշխարհից են ծնունդ առել Ս. Այվազյանի ստեղծագործությունները: Նրա «Տուր ձեռքդ, կյանք» վեպը գեղարվեստական ամփոփումն է հեղինակի տեսած ու ապրած կյանքի, տխուր ու դառն ապրումներով առլեցուն մանկության, մաքուր ու լուսավոր երազներով պարուրված պատանեկության: Այվազյանի վարպետ գրչի տակ կյանքի դժվարին ճանապարհի խաչառդիններում բախվող սուր բնավորություններն իրենց ապրումներով ու հույզերով հորձանք-հորձանք փոխարկվում են գեղարվեստական անկրկնելի պատկերների, որոնք հեղինակը ներկայացնում է պարզ ու հասկանալի լեզվով, բայց միաժամանակ հարուստ բառապաշարով: Այդ բառապաշարի մի փոքրիկ պատանիկն են կազմում վեպում գործածված դարձվածքները, որոնք թեև թվով այդքան էլ շատ չեն, բայց հանդես գալով ոճական ինքնատիպ նրբիմաստներով՝ խոսքը դարձնում են ավելի սեղմ ու դիպուկ, կենդանի ու ազդեցիկ: Այվազյանը մեծ կարևորություն է տվել ժողովրդական կենդանի լեզվին: Իսկ մենք գիտենք, որ դարձվածքների հարստության կենսատու ակունքը ժողովրդական խոսքն է, ժողովրդի կենդանի լեզուն:

Ուսումնասիրելով դարձվածքների գործածությունը նշված վեպում՝ տեսնում ենք, որ դրանք հարազատորեն արտացոլում են ժողովրդի լեզվամտածողության ինքնատիպությունը, ընդգծում են ազգային սովորույթներն ու բարքերը, այսինքն «կարևոր են ոչ միայն իբրև լեզվական շինանյութ, այլև որպես մտքի արտահայտման ազգային ձևեր»:¹ Վեպի դարձվածքները նպաստում են լեզվի ճոխությանն ու գեղեցկությանը, սեղմությանն ու պատկերավորությանը: Սակայն, որ ամենակարևորն է, դրանց միջոցով հեղինակը խտացնում է իր հերոսների հոգեկան ապրումները, աշխատավոր

¹ Ս.Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 200:

գյուղացու կռիվն անարդարության դեմ, մարդկային հակոտնյա ճակատագրերի բախումը, կյանքից դուրս շարտված, բայց կյանքն անսահմանորեն սիրող հայ մոր ու կնոջ ցավը:

Մանկան պարզ ու զուլալ աչքերով աշխարհին նայող հերոսը՝ ինքը հեղինակը՝ մանուկ հասակից որբացած, հիվանդ ու միայնակ մոր խնամքին մնացած Շումիկը, ամեն քայլափոխի բախվում է կյանքի անսանձ դառնություններին, անարդարություններին, բայց չի կոտրվում, չի հուսալքվում, չի չարանում ու ձեռքը կրկին մեկնում է կյանքին. «Տո՛ւր ձեռքդ, կյա՛նք»: Սևակ Արզումանյանի խոսքով՝ Այվազյանի հերոսը «որբության, դառնության քարեղեն դիմադրություններ է հաղթահարել, բայց միշտ «հավատի կրակով է դիմացել կրակներին»²:

Ո՞ւմ հարցնի որբ մանուկն իր դժբախտության պատճառը, ինչո՞ւ ուրիշ երեխաների նման ինքը նույնպես չի կարող ուսում ստանալ, իր հոր ձեռքից բռնած զբոսնել կամ գնալ դպրոց... Ահա այս ինչուներն են ծանրացած նրա սրտի վրա, որոնք խաթարում են հերոսի մանկության ջինջ երազանքները: «- Ինչո՞ւ ես **այք ու ունքդ իրար տվել**, հոգի ս,- մայրս փռվ հարթում է հոնքերս, իր **հոնքերն իրար է տալիս**, նայում է աչքերիս: - Խոսիր է, ի՞նչ է պատահել, ո՞վ է քեզ նեղացրել»: Որդին էլ մոր հարցին հարցով է պատասխանում. «-Ինչո՞ւ է մեռել հայրս,- հարցնում եմ: -**Քարացավ** աստծու **սիրտը**, տարավ...» (էջ 20): «**Այք ու ունքը իրար տված**» որդու և «**հոնքերն իրար տված**» (տխրած)³ մոր պատկերները կենդանի կտավի պես գծագրվում են ընթերցողի աչքի առջև: Հումանիշ դարձվածքների կիրառությամբ գրողը գեղարվեստորեն հասել է ապրումի հոգեբանական նկարագրության: Իսկ **սիրտը քարանալ** (անգույթ, անխղճմտանք դառնալ) դարձվածքի մեջ ամփոփվում են տառապյալ մոր կսկիծն ու բողոքը. հեղինակն ինքնանպատակ չի գործածել այստեղ նաև **աստված** բառը, որով բողոքի ձայնը հենց աստծուն է ուղղվում: Թվում է՝ առանց այս դարձվածքների ընթերցողի հոգուն չէին հաս-

² Ս.Այվազյան, Ասուր, հե՛յ, Ասուր, Ե., 1985, էջ 4:

³ Դարձվածքների բացատրությունները կարելի է գտնել՝ Պ.Բեդիրյան, Հայերենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, 2011, Մ.Սուքիասյան, Ա.Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

նի տառապյալ մոր խոհն ու զգացմունքը, որդու նուրբ ու փխրուն հոգու տառապանքն ու աղերսումները: Մեկ այլ հաստվածում նորից տեսնում ենք մորը, որը, ձեռքերը դեպի երկինք մեկնած, մրմնջում է. «**Տուր մեզ ձեռքդ**, տե՛ր, խեղճ ենք» (Էջ14). **ձեռքը տալ՝** օգնության հասնել, ձեռք մեկնել: Աստծուց օգնություն խնդրող մորը հեղինակը պատկերավոր մի դարձվածքի միջոցով ավելի ու ավելի է վեհացնում: Չնայած կյանքը իր հերթական հարվածն է հասցնում նրանց, բայց «ցավերով լցված էս աշխարհում» միայնակ մայրը չի հանձնվում, չի հուսալքվում, հանուն իր զավակների պայքարում է և օգնություն խնդրում տիրոջից: Վիպական մեկ ուրիշ հյուսվածքում ներկայացված է մոր և որդու բաժանումը. հուզիչ մի տեսարան, որտեղ մայրը որդուն ստիպված բատրակության է ուղարկում: Կսկիծն ու լացը հոգում խեղդած՝ ճանապարհում է նրան անհայտ ուղղությամբ՝ հույսով, որ այնտեղ որդին գոնե սոված չի լինի. «Գնա՛, մատաղ, էնտեղ և **կուշտ հաց կուտես** (կշտանալ): Տեսնում ես, չենք կարողանում ապրել» (Էջ15): Որդու ներկայությամբ արցունքը խեղդած մոր իրական ողբերգությունը սկսվում է հետո. նա ամբողջ օրը լալիս է և իր սփոփանքը գտնում ամուսնու գերեզմանին, որտեղ սրտի դարդն է պատմում, աղի արցունք թափում որդու համար: Ուժահատ մոր հոգեվիճակն ամփոփվում է խոսուն մի դարձվածքի մեջ. «Մեսրոպը հիմա **վիզը ծռել է ուրիշի դռանը**» (Էջ 16): Ուշադրություն դարձնենք ընդգծված կապակցությանը. հեղինակը երկու դարձվածքների յուրօրինակ համադրությամբ կազմել է նոր դարձվածք: Հայերենն ունի **վիզը ծռել** (մեկի առաջ խեղճանալ) և **ուրիշի դռանը մնալ** (անօթևան, անօգնական մնալ) դարձվածքները: Առկա դարձվածքների մասնակի փոփոխությամբ հեղինակը ստեղծել է զգացմունքային արտահայտչականությամբ օժտված նոր կապակցություն՝ իմաստային ընդլայնմամբ՝ խեղճ ու անօգնական մնալ ուրիշի հույսին:

Ընդհանրապես լեզվի ռճական-արտահայտչական կողմն ավելի բարձրարժեք է դառնում, երբ գրողը դիմում է ավելի խոսուն դարձվածքների (իդիոմների): Նա շատ հաճախ բառակրկնությունից ու միապաղաղությունից խուսափելու համար գործածում է այդ բառին հոմանիշ դարձվածքը: Այս պես, երբ մայրը խրատում է գո-ղության համար ուրիշի տուն մտած որդուն, հեղինակը **անվախ, աներկյուղ** բառերի իմաստը փոխարինում է **գելի սիրտ կերած** պատ-

կերավոր դարձվածքով. «-Բա դուք ինչպե՞ս մտաք ուրիշի տունը, հո **գելի սիրտ չե՞ք կերել**» (Էջ 44): Այստեղ հետաքրքիր է նաև **գել** բառի գործածությունը գրական հայերենի **գայլ** բառի փոխարեն: Գրողը խոսում է իր հերոսների լեզվով, իսկ նրա հերոսները բարբառախոս գեղջուկներ են, և ոչինչ չի փոխում նրանց կենդանի լեզվում՝ դրանով ևս մեկ անգամ ընդգծելով պարզ ու անպաճույճ գյուղական միջավայրը: Մեկ այլ գեղարվեստական պատկերի մեջ **խեղճ, անօգնական** բառերն իրենց տեղը զիջում են **վիզը ծուռ մնալ** խոսակցական դարձվածքին: «-Իսկ թշնամու համար ի՞նչ նշանակություն ունի, թե կկորչի Հախնազարյան Հակոբը, ... երեխաների **վիզը ծուռ կմնա**» (Էջ 53): Կամ **վախենալ** և **չհասկանալ** բառերի իմաստները համապատասխանաբար փոխարինվել են իրենց հոմանիշ **սրտաճաք լինել** և **խեղճները չկտրել** դարձվածքներով: «- Ինայի՛ր, խոխեքը **սրտաճաք կլինեն**, քորփա են, **խեղճները չի կտրել**» (Էջ 41): Կամ. «Զգիտեմ ինչու, Անտոնը ինձ **ցույց է տալիս բռունցքը** (իբ ուժով սպառնալ), **աչքերը չռում** է վրաս (զայրանալ, զարմանալ) (Էջ 38): Ուսուցիչը պինդ քաշում է Անտոնի ականջից, իսկ նա **աչքը չի ճալում** » (թարթել), (ոչ մի հուզմունք աչքերից չնկատվել) (Էջ 38):

Վեպի հերոսները սովորական աշխատավոր մարդիկ են՝ չար կամ բարի, ամաչկոտ կամ համարձակ, դաժան կամ մարդասեր, ուրոնց խոսքը խիստ բնական է, ու, ինչպես տեսնում ենք օրինակներից, միշտ ուղեկցվում է ժողովրդական կենդանի լեզվից քաղած դարձվածքներով:

Ինչպես արդեն նշեցինք, դարձվածքների միջոցով ավելի ցայտուն են դրսևորվում ժողովրդական մտածողությունն ու ազգային բնավորությունը, նրանց կենսակերպում դարբերով արմատացած ադաթներն ու սովորույթները: Ահա վիպական մի պատկեր, որտեղ երևում է Շոմիկի մոր սնտոխապաշտությունը. գյուղում բժիշկ չլինելու պատճառով նա կանչում է գրբաց Թագուհուն՝ հիվանդ որդուն բժշկելու, ով երեխայի հիվանդության պատճառը վախն է համարում և ասում, որ պետք է «**վախը քաղի**» (Էջ 21):

Ի դեպ, նշված դարձվածքի բացատրությունը դարձվածաբանական բառարաններում չհանդիպեց. նույն իմաստով ավելի շատ տարածված են **վախը բռնել**, **վախը չափել** դարձվածքները: Բայց ահա Մ.Աբեղյանը Վահագնի վիշապաքաղ մակդիրը բացատրելիս մանրամասն ներկայացնում է քաղել բայի իմաստը՝ նշելով նաև **վա-**

խը վեր քաղել կապակցությունը. «Քաղել Հայկ. լեզվի նոր բառգրքի մեջ բացատրած է իմիջիայլոց. «ժողովել՝ խլել հանել»... Այս իմաստով «քաղ» բառը գործ է ածվում և ժողովրդի մեջ, որից և բաղադրյալ բայը՝ քաղը տալ, կամ քաղհանել, որ է ցանքի միջից վնասակար խոտերը կտրել, հանել, ժողովել... Այս իմաստի վրա պետք է ավելացնել և ժողովրդի մեջ գործածական վեր քաղել ձևը, որ նշանակում է հանել, վերացնել, վերցնել և գործ է ածվում նաև հմայության մեջ, օրինակ «վախը վեր քաղել»: Ըստ Աբեղյանի՝ այս բայի նշված իմաստը նոր չէ մեր լեզվում. այն «կա արդեն և միայն «քաղել» բայի մեջ... Արդ վիշապաքաղ բառացի նշանակում է վիշապ հանող, վիշապ վեր քաղող կամ ցածից վերցնելով ժողովող, այլև վիշապ քաղհանող, այսինքն, ինչպես քաղհանքի ժամանակ, վնասակար վիշապները հանող, վերցնող»⁴: Այս տեղից էլ՝ վախը քաղել բառացի նշանակում է վախը՝ որպես վնասակար երևույթ, հանել, ժողովել, իսկ արդեն դարձվածային արժեքով՝ վախենալուց հիվանդացածին սնտի միջոցներով բժշկել: Նույն սնտիապաշտական հավատքը դրսևորվում է վիպական պատկերի շարունակության մեջ՝ մեկ այլ դարձվածքի գործածությամբ. իր գործը «պատվով» կատարելուց հետո գրբաց Թագուհին խորհրդավոր կերպով ասում է. «**Աստուած չարը խափանի**» (էջ 21), որ նշանակում է Աստված գերծ պահի, ազատի փորձանքից: Խոսքի արտահայտչականության, իմաստային խտացման վառ օրինակներ են **աչքը բաց** (կենդանի, չմեռած), **սիրտը կոտրած** (վշտացած, հուսահատված) դարձվածքները: Կյանքի դժվարությունների տակ կքած Խասա բիբու մեծագույն երազանքը որբ թոռանը գրաճանաչ տեսնելն է: Նրա «մշուշապատ աչքերն» ու «թոնրի կրակով թրծված կնճիռները» լուռ վկաներն են այն դառն ու դժվար կյանքի, որի առջև, սակայն, ծնկի չի եկել «որբասատար» տատը, որովհետև կյանքում դեռ մեծագույն նպատակ ունի, և «...քանի **աչքս բաց** էր, ասի տեսնեի իմ որբ, **սիրտը կոտրած** Բարկենս էլ տիրացել է էդ լուսի շողին, նոր մեռնեի: Բւ **սիրտը կոտորված** Բարկենս: ... Եվ լաց են լինում մայրս ու Խասա բիբին իրենց **սիրտը կոտորված** որբուկների համար» (էջ 49): Մի փոքրիկ նկարագրության մեջ միևնույն դարձվածքը գործածվում է երեք անգամ, որը ինքնանպատակ չէ. դարձվածքի կրկնության միջոցով նկարագրվող իրավի-

⁴ Մ.Աբեղյան, Երկեր, հ. Ը, Ե., 1985, էջ 120:

ճակի տպավորությունը կրկնակի ազդեցիկ է դառնում, սրանով ևս մեկ անգամ հեղինակն ընդգծում է իր որք հերոսների՝ Շումիկի ու Բարկենի ծանր ու դժվարին ճակատագիրը:

Առհասարակ միևնույն դարձվածքի կրկնությանը կամ հոմանիշ դարձվածքների գործածությանն է դիմում գրողը հերոսների հոգեբանական անելանելի իրավիճակները պատկերելիս: Ահա սարսափած Շումիկը. «Անտոնը որ ձեռք է բարձրացնում, իմ **ծնկները թուլանում են**, դասարանում ամեն ինչ **խառնվում է իրար, մթնում են աչքերս**» (էջ 46): **Ծնկները թուլանալ, իրար խառնվել, աչքերը մթնել** (վախենալ, հուզմունքից (վախից) իրեն կորցնել, վախից տեսողությունը թուլանալ) հոմանիշ դարձվածքներով հեղինակը խտացված խոսքի մեջ կրկին ամփոփում է մեծ ասելիք: Այստեղ հետաքրքրական է նաև այն, որ դարձվածքներով են ձևավորվել ամբողջական նախադասությունները: Այս հատկանիշը, ի դեպ, բնորոշ է բայական դարձվածքներին, որոնք «կարող են «իրենցով լցնել» ամբողջ նախադասությունը»⁵:

Միրտ մրմռացնող, հոգի տակնուվրա անող պատկերներով հարուստ է վեպը, որոնք ավելի ջերմ ու անմիջական են դառնում կրկին դարձվածքների առկայությամբ: Քեռու տանն ապավինած Շումիկին ձմռան մի ցուրտ գիշեր դուրս են անում տնից, և խեղճ մանուկը, ցրտից դողալով, քայլում է խավարում՝ անհայտ ուղղությամբ: Իր հերոսի թշվառ ու անօգնական վիճակը հեղինակն ամփոփում է նվազաբերության հենքով առաջացած մի դարձվածքում. «Գնում եմ անհույս, ահից ու ցրտից կծկված, **դարձած մի բուռ** ու լաց եմ լինում» (էջ 60): **Մի բուռ** (փոքրամարմին) անվանական դարձվածքը, խոսքի բովանդակությամբ պայմանավորված, բնագրային գործածության մեջ ձեռք է բերել նաև խեղճ ու անօգնական իմաստը (**մի բուռ +դառնալ**): Որք Շումիկի միակ ու անփոխարինելի պաշտպանը մայրն է, որի կերպարը էական դեր է խաղում վիպական ողջ հյուսվածքում (այս մասին վկայում են վերը նշված օրինակները): Ահա նա՝ աշխարհով մեկ եղած, անչափ ուրախացած մայրը, երբ իմանում է, որ իր որդին վերջապես պիտի դառնա գնա: Մոր սերն ու անսահման նվիրումը որդուն հեղինակը արտահայտում է դիպուկ մի դարձվածքով. «Գնանք, **աչքի լույս**: Կյանքը **ձեռքը մեկնել է** մեզ,

⁵ Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 184:

կայրենք...» (էջ 135): Ոճական յուրահատուկ արժեք ունեն **աչքի լույս, ձեռքը մեկնել** դարձվածքները՝ հետևյալ իմաստային կողմերով. **աչքի լույս**՝ շատ սիրելի, պաշտելի անձ, **ձեռքը մեկնել**՝ օգնել, սատարել: Նույն միտքը արտահայտվում է քեռի Մոսու խոսքում մեկ այլ դարձվածքով. «**Բացվել է կյանքի դուռը** ձեր նման որբուկների առաջ...» (էջ 135): Ընդգծված կապակցությունը հանդիպում է առանց հոդի, սակայն, մեր կարծիքով, այվազյանական խոսքում (չնայած որ գործածվել է հոդով) հանդես է եկել դարձվածային արժեքով. դուռ(ը) բացվել, բանալ, բաց անել՝ ելք, հնարավորություն ստեղծել, օգնել, փրկել (նեղությունից դուրս գալու):

Վիպական մեկ այլ հյուսվածքում դարձվածքի գործածությամբ հեղինակը վեր է հանում այն անասելի տառապանքն ու գրկանքները, որ կրել է միայնակ մայրը՝ «դեռ չթևավորված ճուտերն պահելով՝ աչքերի մեջ կորած մի հույս»: «Մայրս գլխի է ընկնում, բացատրում է, որ ինքը **արյուն-քրտինք չի թափել** (դառն աշխատել, չարչարվել), անհեր երեխա պահել, որ տա օտարին» (էջ 31): Ինքնատիպ է նաև **աղ ու կրակը թափել** դարձվածքը, որը գործածված է սովորական **լաց լինել** հարադրության փոխարեն: «-Վարդանուշ,- գոմում թնդում է Առաքելի ձայնը,- **աղ ու կրակդ մի՛ թափի** մեզ վրա, պետք չէ, թող մնա» (էջ 15): Ընդգծված օրինակը, կարելի է ասել, հաճախադեպ գործածություն չունի, սակայն առկա է ժողովրդախոսակցական լեզվում և հեղինակային գործածության մեջ լրացուցիչ նրբիմաստով է առկայացել. արտասվել իմաստին հավելվել է նաև բողոքել, ընդվզել իմաստը:

Վեպում հաճախ հանդիպում են նաև **աչք**, **սիրտ**, **գլուխ**, **լեզու**, **խելք** բաղադրիչներով ընդհանուր տարածում գտած դարձվածքներ, որոնք կրկին յուրահատուկ նրբերանգներով են գործածվում գյուղական կորած ու մոռացված, աներևույթ աշխարհում բնակվող շինականների խոսք ու զրույցում: Բերենք բնագրային օրինակներ. «Այն օրից, երբ իմ **աչքի առաջ** սպանեցին քեռի Ալեքսանին, այդ օրվանից Յապոնը ինձնից չի հեռանում» (էջ 20): «-**Լեզուդ** շատ ես **երկարացրել**, Ավան, կկտրեմ...» (էջ 78) : «...Բամբասողի **լեզվի տակ** հո **փուշ չկա**» (էջ 245): «-Քեռի Մոսին հարձակվում է , - **ես վերցրու խոսքդ**: -Լա՛վ, հորեղբայրս **խելքը թոցրել** է, ձե՛զ ինչ է պատահել: - **Խելքդ գլուխդ հավաքիր**, հորեղբայր...» (էջ 78): «Հետո էլ ինքս ինձնով հպարտանում եմ, որ թեկուզ գողությամբ, բայց կարողանում եմ

Եղեգնաձորում **պահել իմ գլուխը** և մորս վրա բեռ չդառնալ» (էջ 88): «-Հիմա դու իմ **ձեռքից** չես **արծնի**, ինձ Եգոր կասես...» (էջ 88): «**Աչքերն են վառվում** մի տխուր կրակով» (էջ 17): «...Իհարկե մեր **սիրտը** պիտի **ցավի** մեր երեխայի համար, որ սրտովը ամուսին չունեցավ, դժբախտացավ» (էջ 245):

Աչքի առաջ (մեկի ներկայությամբ, բացահայտ), **լեզուն երկարացնել** (խոսելու չափ ու սահմանից դուրս գալ, հոխորտալ), **լեզվի տակ փուշ չլինել** (անարգել խոսել), **խելքը թոցնել** (խելքից, բանականությունից զրկվել, հիմարանալ), **խելքը գլուխը հավաքել** (սթափվել, ուշքի գալ, իրեն հավաքել), **գլուխը պահել** (մի կերպ ապրել, գոյությունը պահել), **ձեռքից արծնել** (ազատվել), **աչքերը վառվել** (մեծ հուզմունքից աչքերը փայլել, ներքին ապրումներն արտահայտվել աչքերի փայլով), **սիրտը ցավել** (վշտանալ, տխրել) և նման դարձվածքներով ոչ միայն տիպականացվում են վիպական կերպարները, այլև ընդգծվում է նրանց սոցիալական հոգեբանությունը:

Այվազյանի վեպում գործածված դարձվածքների քննությունը վկայում է, որ դարձվածքների հարստության ու հարատևության հորդահոս աղբյուրը ժողովրդախոսակցական լեզուն է, որին անխարդախորեն հավատարիմ է մնացել մեծ գրողը: Դարձվածքների ընձեռած անսահման հնարավորություններից օգտվելով՝ գրողը սեղմ ու դիպուկ խոսքի մեջ կարողացել է խտացնել իր մեծ ասելիքը: Ս. Մելքոնյանն է նկատում. «Դարձվածքները խտացված խոսքի անզուգական արտահայտություն են: Դարձվածքների սեղմությունը պայմանավորող հիմնական հանգամանքը բառը ընդհանրացման մեծ ուժով օգտագործելն է... Խոսքի սեղմությունը պայմանավորվում է ոչ միայն նրանով, որ սրանց մեջ ավելորդ ոչ մի բառ չկա, այլ որ շատ սովորական, «հասարակ» բառերը հանդես են գալիս որպես խոր բովանդակության կրողներ, որպես խորհրդանիշ»⁶:

Չափազանցված չի լինի, եթե ասենք, որ դարձվածքների տեղին և ճիշտ գործածությամբ Ս.Այվազյանի խոսքն արդեն ինքնատիպ է ու հարուստ ժողովրդայնությամբ, որ հնչում է գյուղական մաքուր ու անաղարտ բնաշխարհից ծնունդ առած շինականի շուրթերից և նորից վերադառնում հեղինակի ակունքներին:

⁶ Ս.Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 193:

**Эдита Карапетян
Горис**

**Смысловое-стилистическое значение фразеологизмов в романе
Сурена Айвазяна «Дай руку, жизнь!»
Резюме**

Фразеологизмы используются как в устной, так и письменной речи, особенно в художественной литературе. Великий писатель Сурен Айвазян, который остался верен народному мышлению и языку, свою речь (тема изучения - роман «Дай руку, жизнь») украсил глубокими и меткими фразеологизмами, чье стиливое применение придало смысл тяжелой жизни и переживаниям своих героев.

**Edita Karapetyan
Goris**

**Notional and stylistic meaning of phraseological units in Suren
Ayvazyan's novel "Give your hand, life!"
Summary**

Phraseological units are used not only in oral, but also in written speech, especially in fiction. Loyal to the popular language and way of thinking of the nation, the prominent writer Suren Ayvazyan flavored his language with profound and precise phraseological expressions; with their stylistic usage presenting his heroes' complicated lives and experiences more vividly, (the object of the study is the novel "Give your hand, life!").



Հասմիկ Գրիգորյան
Կասյան

hasmik993@gmail.com

Միակազմ նախադասությունները մեր լեզվամտածողության դրսևորումներից են և հայոց լեզվի զարգացման յուրաքանչյուր ժամանակահատվածում ունեցել են իրենց դրսևորման զանազան ձևերն ու միջոցները: Դրանք ընդհանուր գծերով էապես տարբերվում են երկկազմ կառույցներից ոչ միայն արտահայտության ու բովանդակության պլանով, այլև կիրառության սահմանափակությամբ, ոճական երանգներով, գեղարվեստական արժեքով¹: Խոսքային ամեն մի իրադրության մեջ չէ, որ կարելի է գործածել միակազմ նախադասություններ, իսկ գեղարվեստական խոսքում հեղինակը դրանցով արտահայտչականություն է ստեղծում, ինքնատիպ դարձնում խոսքը:

«Միակազմ նախադասություններն այնպիսի կառույցներ են, ուր բառը կամ բառակապակցությունը որոշակի խոսքային իրավիճակում համապատասխան հնչերանգի միջոցով արտահայտում են ավարտուն նախադասության իմաստ և դրանով իսկ դառնում հաղորդակցման միավոր»²: Միակազմ նախադասությունները բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում են նաև գրական լեզվի ոլորտ՝ գործածվելով գեղարվեստական ստեղծագործությունների մեջ, որոնց ժողովրդայնություն են հաղորդում:

Բազմաբնույթ է միակազմ նախադասությունների ոճական երանգավորումը գեղարվեստական ոճում: Իրենց կառուցվածքով ևս միակազմ նախադասությունները միատարր չեն. լինում են *անենթակա*, *անդեմ*/բայական և անվանական/ և *բառ-նախադասություններ*:

¹ Գ. Խաչատրյան, Միակազմ նախադասությունների ոճական արժեքը հայրեններում, Ե., 2011, էջ 158

² Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2006, էջ 309:

Սահյանի «Ինձ բացակա չղներ» ժողովածուում գործածված չեն բառ-նախադասություններ, ուստի կանդրադառնանք անենթակա և անդեմ միակազմ նախադասություններին: Նրա ստեղծագործություններում իրենց ոճական զանազան դրսևորումներով առկա են դիմավոր միակազմ /անենթակա/ նախադասություններ:

Անենթակա նախադասություններն ամենից առաջ նպաստում են խոսքի սեղմությանն ու հակիրճությանը, սովորաբար արտահայտվում են բայի եզակի երրորդ դեմքով /կարող են արտահայտվել նաև երկրորդ դեմքով՝ էլի ընդհանրական դիմային իմաստով/, միադիմի բայերով: Դրանք էլ բնորոշ են ժողովրդական լեզվամտածողությանը և ստեղծագործությանը ժողովրդայնություն են հաղորդում:

Դե արի ու բան հասկացիր,
Շուրջդ **ամպ ու մեզ է**,
Կուզես ժպտա, կուզես լացիր,
Դարի համար **մեկ է** /156/³:

Բնության նկարագրություններում շատ գործածական են միադիմի բայերով ձևավորված միակազմ անենթակա նախադասությունները /դրանք հիմնականում գործածվում են օրվա կամ տարվա ինչ-որ ժամանակահատված նշելու համար /լուսանալ, մթնել, ցրտել, անձրևել...:/:

Գիշեր է սև, սևակնած.
Ա՛խ, ձիերս, ձիերս /40/:

Երեկ **ամպ էր ու ամպամած** /83/:

Խոր գիշեր է /88/:

Ժամն է լռելու /166/:

Մութ է /198/:

Հավատացեք՝ **սև կայծակ է ու սև կարկուտ** /33/

Շուրջդ **ամպ ու մեզ է** /156/

Երբ **ոչ արև է, ոչ էլ անձրև**,

Ձեռքից գնում են ծաղիկները /131/:

Երբեմն Սահյանը դիմային վերագրումներ է արել միադիմի բայերին, ինչը ևս պատկերավորություն է ստեղծում.

Մթնում է օրն...արտին ինչ.

³ Հ.Սահյան, Ինձ բացակա չղներ, Ե., 2004, էջ 156 /այսուհետ բնագրային հղումների էջերը կտրվեն տեքստին կից/:

Արտը աստղեր է խմում /16/:

Մթնում են օրվա բոլոր պահերին,

Իրար են բախվում **ամպերն** անխնա /232/:

Այս ժողովածուում բնության երևույթներ համեմատաբար քիչ են նկարագրվում, ավելի շատ հոգեվիճակային, դատողական, կենսափիլիոփայական խոսքն է գերիշխում, դրա համար անենթակա նախադասության այսպիսի օրինակները շատ չեն:

Ճարտասանական հարցով արտահայտված այս նախադասության մեջ ևս գործածված է միակազմ անենթակա նախադասություն. «Մի՛ շտ է թռհուրոհ աշխարհում» /240/:

Անենթակա նախադասություններից Սահյանի այս ժողովածուում հաճախական կիրառություն ունեն նաև ընդհանրական դիմային իմաստով նախադասությունները: Այսօրինակ միակազմ նախադասություններ շատ են գործածվում առածներում, ասացվածքներում, հայրեններում, ժողովրդական ակունք ունեցող ստեղծագործություններում, այսինքն՝ սա ևս ժողովրդայնությունն ապահովող գերազանց միջոց է:

Ընդհանրական դիմային իմաստով նախադասություններում մեծավ մասամբ գործողությունը վերագրվում է բայի խոնարհման համակարգի հոգնակի թվի 3-րդ դեմքին՝ ցույց տալով անորոշ անձանց /լինում են նաև 2-րդ դեմքով ձևավորված ընդհանրական դիմային իմաստով նախադասություններ/:

Բերենք ընդհանրական դիմային իմաստով անենթակա նախադասությունների օրինակներ.

Ինձ խաբեցին ամենուր,

Խաբեությամբ **խաչեցին**:

Ձեռքիս խաչբուրդ **առան**

Ու վրաս **խաչ քաշեցին** /11/:

-Հիվանդ է ձեր խոնարհ երգիչը,

Երևի հոգեվարք է ապրում,

Ասում են.-Այդքանը դեռ քիչ է,

Արժանի պատիժը դեռ չի կրում /216/:

Ինչ էլ որ լինի, ինչ էլ որ **ասեն**,

Փուշը զինված է, ծաղիկն՝ անզեն /63/:

Մեզ **ասում են**. Դուք մերը չեք,

Մինչև անգամ դուք ձերը չեք,

Ձեր տեղը չեք, ձեր տերը չեք,
Դուք տերը չեք ձեր երգերի,
Տաճարների ու բերդերի /140/:

Ինչ էլ լինի, **ասում են**, թե
Խառն է մատը սատանայի /132/:

Միակազմ նախադասության մյուս տեսակը, որ լայն կիրառություն է ստացել «Ինձ բացակա չդնեք» ժողովածուում, անդեմ նախադասությունն է: Մրանց գործածությունը պայմանավորված է հաղորդվող նյութի թելադրանքով, ինչպես նաև՝ հեղինակի ոճական անհատականությամբ ու որոշակի նպատակադրմամբ: Անշուշտ, պիտի համաձայնել լեզվաբանության մեջ արտահայտված այն կարծիքին, որ անդեմ նախադասությունների զգալի քանակը հիմնականում 2 հանգամանքով է բացատրվում՝ սեղմ խոսք ստեղծելու ձգտումով /լեզվի տնտեսման, սեղմության օրենք/ և ավելի շատ զգացմունք, հույզ և տրամադրություն արտահայտելու հակումով՝ ի հաշիվ դատողությունների կամ սովորական նկարագրական-պատմողական ոճի:

Անդեմ նախադասությունները բաժանվում են երկու ենթախմբի՝ անվանական և բայական:

Անվանական նախադասությունները գործածվում են գեղարվեստական գրականության բոլոր ժանրերում՝ հատկապես հեղինակային նկարագրություններում: Այսպես՝

....Առավոտ: Մահվան խորհուրդ:

Անմահության համ ու հոտ... /9/

Խելոք, խելոք, բարի, բարի

Ու մարդամոտ լեռներ,

Դուք վկաներ նախնադարի,

Նախնադարոտ լեռներ /239/:

Շիրիմի վրա տազնապ ու ժխոր /35/:

Օրհնված օր,

Արև ու ձյուն, ձեր դաշնության հեքիաթ /89/:

Խուլ կրակոց... /78/

Այսպիսի նախադասությունների գործածությամբ հեղինակը մատնանշում է առարկաների, երևույթների գոյությունը, դրանց թվարկումով ստեղծում տեսողական, առարկայական պատրանք, ինչպես նաև՝ հանդիսավոր, առարկայական, պատկերավոր ոճ:

Լեռներն ի վար քարերի երթ,
Քարերի լուռ տեղատարափ...
Քանդուքարափ Որոտնաբերդ,
Որոտնավանք քանդուքարափ /158/
Քո մեռնելուց հետո...
Սև դագաղ, ճերմակ պարան,
Լուռ մի լաց՝ մեռնելուց հետո
Հոգու պարտք, հոգեհանգիստ,
Հոգեհաց՝ մեռնելուց հետո /122/:

Անվանական նախադասությունները մեծ մասամբ հուզական լիցքով հագեցված նախադասություններ են, կապվում են զանազան մտապատկերների հետ, արտահայտվում հատուկ հնչերանգով, միաժամանակ ծառայում են մտքերի արագ փոփոխումներն արտահայտելու համար և առաջ են բերում «ընդհատավոր ոճ»⁴:

Իմ երազները-չվող թռչուններ... /72/
Ճարտասանական հարցով ձևավորված՝
Ի՞նչ հոգեհանգիստ և ի՞նչ հոգեհաց:
Ի՞նչ սգո թափոք և ի՞նչ հոգեհաց /226/
Հետո՞ : Ի՞նչ հետո /8/:

Այս կարգի նախադասություններն արտահայտում են նաև խառը, լարված իրավիճակ, ամենաուժեղ հուզական ապրումներ, ինչպես՝

Ով բաբելոնյան թեժ խառնակություն,
Բայց և համր ու պաղ հմայքի աշխարհ... /181/

Անվանական անդեմ նախադասությունները գերակշռող են Մահյանի խոսքում: Այսպիսի նախադասությունները հաճախ բանաստեղծական պատկերի հիմքն ու կորիզն են դառնում, ինչպես, օրինակ «Ձիեր» բանաստեղծության մեջ, որը պատկերավոր խոսքի արժեքավոր նմուշ է:

Ախ, ձիերս, ձիերս...
Գագաթների հողմից թևեր խլած ձիերս,
Սուրբ ափերից Աստծո
Երկինք խմած ձիերս:
Երկինք խմած ...ու վայրի

⁴ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ե., 1990, էջ 352:

Հաճարի հասկ, առվույտի
Ծաղիկ կերած ձիերս,
Ախ, իմ Քուռկիկ Ջալալի,
Քո սիգապանձ, սիգավոր
Տոհմից սերած ձիերս,
Ախ ձիերս, ձիերս...
Դունչ ու սմբակ ցողաթաց,
Մորեմերկ ու կողաբաց,
Արևի մեջ լողացած,
Կրակ կտրած, պաղացած,
Ախ, ձիերս, ձիերս...
Ճերմակ, կարմիր, ոսկեգույն,
Բոց ու կրակ ձիերս,
Հեքիաթներից կյանք մտած
Ղաշխա քուռակ ձիերս /39-40/:

Հատվածը բաղկացած է բազմաբաղադրիչ բարդ նախադասություններից, որի անդամները համագոր միակազմ նախադասություններ են: Այս միակազմ նախադասությունները, ունենալով ընդամենը մեկ անդամ, իրենց մեջ ներառում են ու հաղորդում անսպառ նյութ, որը պիտի պատկերացնի ընթերցողը: Ձիերի այսօրինակ նկարագրությունը հիմքն է անցյալի հիշողությունների, ապրումների, հույզերի: Նմանատիպ նախադասությունների միջոցով Մահյանը մի տեսակ ազատ դաշտ է բացում նաև ընթերցողի՝ որպես տվյալ գործողության մասնակցի համար:

Միակազմ նախադասությունների համակարգում ոճական բազմազան կիրառություններով աչքի են ընկնում այսպիսի կամային-հոգեկան վերաբերմունք արտահայտող անվանական նախադասությունները, որոնց միջոցով հաճախ առարկան, երևույթը կամ որևէ իրողություն ներկայացվում և գնահատվում են խոսողի անհատական վերաբերմունքով: Նման նախադասությունները ձևավորվում են խոսքային որոշակի իրավիճակներում, հաղորդակցման այլևայլ հանգամանքներում և հիմնականում բնորոշ են խոսակցական լեզվին, քանի որ հատկապես հոգեկան լարված, հուզված իրավիճակներում խոսողը անմիջապես չի կարող ձևավորել իր միտքը կանոնավոր կառուցվածքով, տրամաբանական կապակցությամբ, ուստի և նախընտրում է տվյալ իրավի-

ճակում միտքն արտահայտող հիմնական գերադաս բառը կամ հասկացությունը, և ընթերցողը պատկերացնում է իրավիճակն ամենայն մանրամասնությամբ:

Ախ, իմ խելոք, խոնարհ, խելացնոր աշխարհ,

Միշտ երեխա, միշտ ծեր,

Միշտ հին ու նոր աշխարհ /76/:

Ակնհայտ է, որ այստեղ հուզական-արտահայտչական երանգավորում է հաղորդում նաև «աշխարհ» բառի կրկնությունը:

«Ինձ բացակա չղնեք» ժողովածուում սակավ գործածությունն ունեն բայական անդեմ նախադասությունները:

Բայական անդեմ նախադասությունները կառուցվում են հիմնականում անորոշ դերբայով, ուր քերականորեն չի արտահայտվում ոչ միայն գործողություն կատարողը, այլև ժամանակը, եղանակը, ժամանակը, թիվը և դեմքը, որոնցով պայմանավորված են նրանց ոճական արժեքն ու տարաբնույթ կիրառությունները: Այս կարգի նախադասություններից կիրառական մեծ հաճախականություն ունեն հատկապես հարցական հնչերանգ ունեցող կառույցները, որոնք արտահայտում են ներքին հարցում, ճարտասանական հարցադրում, խոսողի երկմտանքը, կասկածը որևէ գործողության կատարման վերաբերյալ: Դրանք հատկապես բնորոշ են գեղարվեստական ոճին, երբ խոսողը գտնվում է հոգեբանորեն բարդ, անորոշ, անելանելի իրավիճակում:

Ի՞նչ ասել, կածան /74/:

Այս նախադասության մեջ անդեմ բայով արտահայտված ճարտասանական հարցի մեջ խտացված են հույզը, ապրումները.

Ի՞նչ ասել, կածան,

Ոտքիդ տակի հողն եմ,

Մի հին ցավ ունեիր,

Ես այդ ցավի դողն եմ:

Քեզ կանչելիս հաճախ

Իմ անունն են տալիս,

Ինձ անգիր են անում,

Ես քո երգի տողն եմ /74/:

Բայական անդեմ նախադասությունները կարող են հանդես գալ նաև բացականչական հնչերանգով և արտահայտել խոսողի իղձը, ցանկությունը որևէ գործողության կատարման նկատմամբ:

Մրանք առավել գործածական են չափածոյում և դրանով իսկ ավելի պատկերավոր, արտահայտիչ են դարձնում խոսքը:

Ի՞նչ բլին մնալ: Թող Աստված չանի.... /208/

Բայական անդեմ նախադասությունները կարող են նաև արտահայտել իդձ, ցանկություն.

Արթնացնել ավագ ու քար,

Լվանալ ու պարզաջրել

Ապականված մի ողջ աշխարհ /128/:

Այստեղ անորոշ դերբայներով ըղձականի նշանակության հետ մեկտեղ արտահայտված է նաև հրաման, կոչ, հորդոր:

«Ինձ բացակա չդնեք» ժողովածուում հանդիպում ենք նաև «Լավ է + անորոշ դերբայ» կառույցով բայական անդեմ նախադասություններ, ինչպես՝

Լավ է պայթել, քան թե հնալ,

Լավ է փլվել, քան երերալ,

Արվեստի սուրբ տաճարի մեջ

Լավ է լինել, քան երևալ /199/:

Այս օրինակում ևս արտահայտված է իդձ, ցանկություն, կոչ, հորդոր, որ կերպաձևում են հեղինակի դավանանքը:

Այսպիսով, համաձայն ասելիքի պահանջների՝ Սահյանը հաճախ միտքն արտահայտում է միակազմ նախադասություններով:

Մրանք, լինելով հաղորդակցման համառոտ ձևեր, առավել բնորոշ են ժողովրդական լեզվամտածողությանը: Որքան գեղարվեստական ստեղծագործության ակունքները մոտ են ժողովրդախոսակցական լեզվին, այնքան այդպիսի գործերում ավելի հաճախադեպ են միակազմ նախադասությունները: Հ. Սահյանի «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն, որի մեջ ժողովրդական մեծ շունչ կա

և ժողովրդայնություն, հարուստ է միակազմ նախադասություններով: Շարահյուսական այս միավորները սահյանական խոսքում ունեն լայն կիրառություն և ոճական ուրույն գործառույթներ:

Դրանց կիրառությունն ապահովում է նաև խոսքի հուզական կողմը, հաղորդում բանաստեղծականություն: Միակազմ նախադասության տարբեր տեսակները Սահյանի այս ժողովածուում տեղ են գտել ոչ միևնույն հաճախականությամբ, առավել

հաճախ հանդիպում են անվանական նախադասությունները /սրանք այս ժողովածուում զգալիորեն գերակշռում են/: Դա բացատրվում է նրանով, որ ընտրելով խոսքի այդ կարճառոտ ձևերը՝ Սահյանը խուսափել է խոսքի միօրինակությունից: Այս պարագայում ստորոգումն իրականանում է ոչ թե բառաքերականական միջոցներով, այլ հնչերանգով՝ տալով տարբեր հաղորդակցման միավորներ: Անվանական միակզավ նախադասությունների միջոցով Սահյանը սովորաբար ներկայացնում է որևէ առարկայի, երևույթի առարկայականությունը՝ առանց բայ-ստորոգյալի. այս ձևով նկարագրվող պատկերն ավելի տպավորիչ է դառնում, և մեծանում է պատկերի հուզական ներգործությունը, խոսքը դառնում է կենդանի ու սովորական, քանի որ փորձ է արվում խուսափել երկբաղադրիչ նախադասությունների միապարզադ շղթայից և կիրառել ընթերցողին ավելի հոգեհարազատ հաղորդակցման միավորները:

**Асмик Григорян
Капан**

**Односоставные предложения в сборнике стихов Амо Сагияна
"Не считайте меня отсутствующим! "**

Резюме

В этой статье мы изучили односоставные предложения и их проявление в сборнике Сагияна "Не считайте меня отсутствующим ! ". Автор щедро использует односоставные предложения.

Изучив виды и формы их употребления /односоставных предложений/ мы заметили в них превосходство назывных предложений.

**Hasmik Grigoryan
Kapap**

**One_member sentences in Hamo Sahyan's collection of poems "
Don't mark me absent "**

Summary

In this article we have studied the use of one-member sentences in Hamo Sahyan's collected poems Don't Mark Me Absent. In that collection the author has used abundantly one-member sentences. Studying the frequency of types of one-member sentences we have noticed that nominal sentences prevail.



ՄԻՖԱԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԵՐՈ ԽԱՆՁԱԴՅԱՆԻ «ՀՈՐՄ ՀԵՏ ԵՒ ԱՌԱՆՑ ՀՈՐՄ» ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԻՊԱԿՈՒՄ



Ռիմա Ստեփանյան
Գորիս

rima_stepanyan_1976@mail.ru

Գրապատմական զարգացման ընթացքում միջև և գրականություն կապը տարբեր փուլերում տարբեր դրսևորումներ է ունեցել: Միջակիրառման բնույթը հատկապես ուշագրավ է 20-րդ դարի գրականության մեջ, որտեղ հաճախ ենք ականատես լինում միջի և իրականության սահմանազանց վիճակների. միջը նույնքան իրական է թվում, որքան իրականությունը՝ միջական: Պատահական չէ, որ հենց այս դարը համարվեց միջական վեպի դար:

Հայ գրականության մեջ նույնպես միջը յուրահատուկ դերակատարում ստացավ 20-րդ դարում: Այն դարձավ առավել միջախիտ, քան երբևէ: Մեծ տեղ գտան ազգային միջականացված հիշողությունները, հեղինակությունները:

«60-70-ական թվականների սովետական գրականության գեղարվեստական որոնումների մեջ,- գրում է Սերգեյ Սարինյանը,- էական տեղ է զբաղեցնում ժողովրդական ոգու նախահիմքերի խնդիրը, ձգտումը դեպի կեցության սկիզբը: Այս հանգամանքը պայմանավորեց գրողների հետաքրքրությունը վաղնջական միջերի, առասպելների և ավանդությունների նկատմամբ, որոնք իրենց մեջ խտացնում են նախակերտ ճշմարտություններ և ընդհանրացնող մեծ ուժ ունեն»¹:

Միջապոետիկայի առումով բավականին ուշագրավ է Սերո Խանզադյանի «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակը, որտեղ իրականը, առասպելականը, բանահյուսականը երբեմն այնպես են միաձուլվում, որ սահմանազատումն անգամ անկարելի է թվում:

¹ Ս. Սարինյան, Առասպելաբանությունը Զորայր Խալափյանի արձակում, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1988, թիվ 9, էջ 34:

Գրքի կրկնաշապիկի վրա գրված հանձնարարականով հեղինակն ընթերցողին ուղղորդում է դեպի վիպակի մտադրույթը. «Ինչ ծանր ու դժվարին վիճակների մեջ էլ ընկնում են վիպակի հերոսները, մնում են վաղվա բարի արևի ծագման հավատով, անընկճելի, անկոտրում և որ ընդգծված է՝ հավատարիմ հայրենի հողին ու ժողովրդին»²:

Վիպակի սյուժեն ուրվագծում է գործողությունների ընդհանուր պատկերը՝ խորքում գլխավոր հերոսի ապրումներն ու խոհերը. «Սոխրացած ժամանակների հեռավորությունից ահա տեսնում եմ Չագեձորի՝ Բաբելոնի տարիքի ավերակ բերդի մեջ խորացած մեր տոհմատունը: Նաև սկսել եմ նշմարել կյանքիս ճանապարհի մշուշոտ վերջը: Անցած-գնացածները դարձել են առասպելներ: Նրանց հիշատակներն օր ու գիշեր կանչում են ինձ: Ես շտապում եմ վերջացնել իմ այս գործը, որ ինձնից հետո եկած իմ տոհմակիցները ճանաչեն իրենց դուրսգն նախնիների ոգին: **Մարդ չպիտի կորցնի իր արմատը: Լուսը չգոյից չի ծագում**» (էջ 5) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

«Եղելությունների թելերից» հյուսված այս քառաձյուղ ասքի միջոցով հեղինակը ոչ թե իրականությունն է ներկայացնում, այլ նրա ասքը, որտեղ օր օրի հյուսվում է և ասքագրի «կյանքի առասպելը» (էջ 238):

Խորհրդանշական իմաստ ունի վիպակի սկիզբը: Ձորահովտից դեպի հեռավոր սարերն է փախչում սարերի կապույտ աղբյուրի մոտ ծնված մի ոսկեգույն հովատակ: **«Թռչում է նժույգը սև կայծակի պես՝ դեպի իր սկիզբը, ինքն իրեն գտնելու...»:** Ահեղ ամպերի մթության խորքում ուր որ է կորչող ոսկեգույն հովատակի կրակված գլխին պիտի սանձ դնի տասներկուամյա տղան, այլապես տանը՝ ժայռերի մեջ սպասող **«մեծ պապը նրա առաջ կփակի քարայրի քարե դուռը ու կմնա, ինչպես Մհերը՝ Մասիսի վիհի մեջ»** (էջ 4) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

Հատվածը որոշակի փոփոխությամբ (սկզբում հովատակը փախչում է դեպի սարերը, իսկ վերջնահատվածում՝ ճախրով գալիս դեպի բերդաթաղ) կրկնվում է նաև վիպակի վերջում: Ծառայելով որպես կառուցվածքային մոդել՝ հատվածը, որտեղ, ինչպես

² Ս. Խանգաղյան, Հորս հետ և առանց հորս, Ե., 1986, էջ 318: (Սյունիեան Խանգաղյանի գրքից կատարված մեջբերումների մոտ կնշենք միայն էջը):

նկատեցինք, Փոքր Մհերի առասպելն է, շրջանակում է վիպակը: (Վիպակն ունի նաև ենթաշրջանակ՝ Բաբելոնի սիմվոլիկան, ինչի մասին կխոսենք շատ ավելի ուշ): Կնշանակի՝ վիպակն առնված է այս առասպելի ոլորտի մեջ: Ի՞նչ խորհուրդ է հայտնաբերում հեղինակը՝ Փոքր Մհերի՝ քարայրում փակվելու առասպելի մեջ, ինչո՞ւ է դիմում մեր էպոսի (և ոչ միայն) միջական կառույցների օգնությանը. տարին բոլորող չորս եղանակները ներառող ճյուղեր, քարայրի քարե դուռ, ոսկեգույն ձի, ձիու վրնջոց և վերջապես Մասիսի վիհի մեջ փակված Փոքր Մհեր, ում կերպարն արմատների միջոցով ինքնաճանաչման հասնելու հնարավորություն է ընձեռում:

Դեյֆյան տաճարի վրա գրված «Օանեա՛ զբեզ» պատգամն այսօր էլ արդիական է: Այո՛, դեպի ներս բացված աչքի շնորհիվ է միայն հնարավոր հասնել ինքնագիտակցության, ինքնիմացության: Սա է բանաձևը: Այս իմաստով է մեզ օգնության ձեռք մեկնում մեր առասպելը, նաև էպոսը:

Այս առումով ուշագրավ է Վալերի Փիլոյանի դիտարկումը, ըստ որի՝ հասարակական ցանկացած՝ երկարատև կամ կարճատև թմբիկից, քնից, անտարբերությունից կամ փակուղի մտնելուց հետո մենք նորից ենք վերադառնում առասպելին, քանի որ «սա այնպիսի համընդգրկուն ու ընդարձակվող պայմանաձև-բանաձև է, որ հնարավորություն է տալիս նորովի ու նորահայտ դիտարկելու իրողությունը, տեսնելու աշխարհի ու մարդու ամբողջությունը: ... էպոսը նույնպես ներառվում է առասպելի մեջ, և հազարամյա երիտասարդ չէ այն, այլ միքանիհազարամյա թաքնախորհուրդ իմաստուն, որի ամենախորհրդավոր հանելուկը Փոքր Մհերն է՝ նստավայրը՝ Ագռավաքար-Մհերի դուռը»³:

Քրիստոնեական դարաշրջանում ձևավորված Փոքր Մհերի արմատները ձգվում են մինչև հեթանոսական շրջան: Նախկին արեգակնային աստծու կերպարը Միիր-Մհեր, ներքին թելերով կապվում է հարության, վերածննդի գաղափարի հետ, ուրվագծվում է Արա արքետիպը՝ փակվող և բացվող, մեռնող-հառնող: «Բայց առասպելի Արտավազը, էպոսի Փոքր Մհերը, հավաստի Արշակ Երկրորդը, Իսահակյանի Օհան ամին, Մաթևոսյանի Սիրուն Թևիկը, Լևոն Խեչոյանի Մհերը նույն արքետիպի մասնակի (փակվելու

³ Վ. Փիլոյան, Կանչվածի փնտրտուքը (Լևոն Խեչոյանի «Մհերի դռան գիրքը» վեպը), «Գրական թերթ», Ե., 2014, 19 սեպտեմբերի:

իմաստով միայն) արտահայտություններն են, և չկա բացվելը, ինչը մեզ մղում է նրանց վերադարձի սպասման ու այդ վերադարձի փնտրտուքին»⁴:

Հատկանշական է՝ Խանգաղյանի հյուսվածքում բացվում է քարայրի դուռը, և իրենք իրենց գտած նժույգն ու թոռնիկը թռչում են դեպի իրենց նախնիների սկիզբը: «Ամեն ինչ վերադառնում է իր նախնական ծագումին, որպեսզի նոր սկսվի» (էջ 254), - գրում է հեղինակը:

Լևոն Խեչոյանի «Մհերի դռան գիրքը» վեպի առաջին դասախոսության բնաբանը («Որտեղ էլ լինենք, դռան հակառակ կողմում ենք: Ներսիսներն այն՝ էլքի, դրսիսները մուտքի դուռ են անվանում»⁵) այսպես է բանաձևում Վալերի Փիլոյանը. «Սա հանգում է գաղափարի ու կեցության խզման, ինքնության կորստի, ինչին էլ հակադրվում է Մհերին վերադարձած տեսնելու ձգտումը, ասել է՝ Մհերի դուռը բաց տեսնելը: Այս դեպքում էականն անգամ Մհերը չէ, այլ Մհերի դուռը»⁶:

Փոքր Մհեր - Արտավազդ - Արշակ Երկրորդ - հեղինակ կերպարային հաջորդականությունը պատումում արմատավորվում է հեղինակի ներքին խռովքով, ինքնախոստովանություններով և նշյալ միֆերի ու հեղինակ-կերպարի սահմանախախտ վիճակներով: Նրանք են վիպակի գլխավոր հերոսները և երբեմն նույնիսկ նույնանում են: Հեղինակը, Ալեքսան պապի Արտավազդը և միֆական Արտավազդն այնքան են նույնանում, որ հաճախ ես տարակուսում՝ միֆի հետ գործ ունես, թե իրականության:

«Հայրս ինձ ու Արտավազդին տանում է: ...Ես ու Արտավազդը հռոռացինք:

-Եկեք օգնեցեք:

-Չե՛նք օգնի: Մենք քեզ անհարազատ անձնավորություն ենք:

Հայրս մեզ հայիոյեց:

-Գնացեք մի ուրիշ քաղաքում ապրեցեք: **Կարող եք անե՞ծքով**

հիշել ինձ: Ես չկարողացա ձեզ համար լուսավոր դուռ բացել: ...Ինձ մխիթարում է Արտավազդի ներկայությունը, որ աշխարհի դառնության փորձն ունի իր ուսերին և դիմացկուն է, ինչպես ողջ կյան-

⁴ Նույն տեղում:

⁵ Լ. Խեչոյան, Մհերի դռան գիրքը, Ե., 2014, էջ 11:

⁶ Վ. Փիլոյան, նշվ. աշխ.:

քում զինվոր եղած մեկը» (էջ 225-227) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.): Միֆական ներքին խոր շերտերում՝ ենթատեքստում, Արտաշես Ա-ռաջինն է իր անեծքով: Մեր էպոսում էլ Դավիթն է անիծում Փոքր Մհերին:

«Հողը հեկեկում է... Լեռները ճեղք են տալիս... Ո՞վ եմ ես... Ի՞նչ է, ես Արշակ արքա՞ն եմ... Արձագանքեցին լեռները... և ինքը՝ նորին սրբություն ջուրը» (էջ 223): Հիրավի, հավաստի Արշակն է իր հողուջրի առասպելով:

«Ես... փոքր եմ: Դե համաձայնում եմ՝ փոքր եմ» (էջ 6), «Ամեն օր մի առեղծված է բացվում ինձ համար: Այս ինչ հրաշալի է փոքր լինելը...» (էջ 15), «Ես նայեցի քարից ձգվող իմ ստվերին: Փոքր եմ: Ախր ինչո՞ւ եմ փոքր: Ինչո՞ւ չեմ շուտ մեծանում: Հրես կոխվն էլ վերջացավ, բա ես չպիտի՞ զինվոր դառնամ. կռվեմ, կրեմ ամենակեցոյցի խաչը, որ, իհարկե, չգիտեմ էլ, թե ինչ բան է: Հո ես անխաչ չե՞մ մնալու» (էջ 19): Իսկ երբ կռիվ է գնում, մղկտում է սիրտը. «Գոնե մի զավակ ունենայի, հետո սկսվեր այս անտեր պատերազմը: Մտածում եմ՝ կսպանվեմ, կմեռնեմ: Սպանվելուց չէ ահս, այլ որ կվերջանամ անժառանգ... Մեր տունը տղա-երեխայի շունչ չի՝ տեսնի: Մեր տոհմը կմարի...» (էջ 255): Եվ որպեսզի չմարի, կվերադառնա հայրենիք (նկատենք՝ հյուսվածքում Արտավազդը չի վերադառնում), կբացի քարայրի քարե դուռը ու կկենդանացնի Քրմանց տոհմի երեք հազար տարեկան տունը:

Պատումում ասքագիրը երբեմն բացում է նաև **փոքր** քաղաքի **մեծ** բանտի երկաթե դուռը: Այստեղ փոքր քաղաքը սուր կոնտրաստի մեջ է մեծ բանտի հետ, որը, «ճանկերը խոր խրած հողում, քարե ժանիքները ցցած, ուր որ է կուլ կտա ձորի նեղշերտ երկինքը, և աշխարհը կխավարի»: Այս մետաֆորապատկերի ենթատեքստում խավարող աշխարհն է, որտեղ մարդը փոքր ու տրորված էլեմենտ է: Իսկ բանտի մոտ մսի խանութի ներկայությունը հուշում է՝ կյանքը մարդկային ճակատագրեր խժոռոդ-խեղող բանտ-մսադաց է, ինչին էլ հակադրվում է մայր բնությունը. ձորը կռավեց, գետը պղտորվեց, արահետը սևացավ, հորիզոնը արնագույն է, վախեցնող էր մայրամուտի կարմիրը, կարծես արևն սպանվել ու արնաքամ է դառնում և այլն:

Վիպակի դիպաշարի հանգույցներում քնարական հերոսը բազմաթիվ անգամներ է կանգնում մահվան դեմ հանդիման. «Մեռ-

նելն ինձ համար խորթ էր, սակայն խորթ զավակն էլ երբեմն սիրելի է լինում: Ինձ թվաց, թե ես շոշափում եմ մահվան թաթը: Դա այնպե՛ս ու թեթև ու մտերիմ էր, այնպես տենչալի» (էջ 230): Առավել հաճախադեպ կրկնվող մահվան միջոց, ըստ երևույթին, կապված է հեղինակի ներքին խռովքի, կրկնվող պատերազմների ակուսարսափի հետ: Մահվան շուրջ ծավալվող գրույցն սկսվում է հյուսվածքի սկզբնամասում (ձորը կռավում է՝ գուժելով Խանգաղյանենց ազգի Խաչու սպանվելը) և ավարտվում վերջնամասում՝ հեղինակի մոր «հավիտենական հանգստով»: Նկատենք՝ մահվան շուրջ պատվող տեսարանների ու խորհրդածությունների առատությունն ապրելու և ապրեցնելու նպատակ է հետապնդում: «Կյանքն ինձ համար դառնում է շոշափելի կարծրություն, իր դաժան, բայց և ապրեցնող իրականությամբ» (էջ 313),- խոստովանում է գրողը: Այստեղ մահը և կյանքը իմաստային նույն հարթության վրա են և կրում են սիմվոլիկ նույնարժեք գործառույթ: Կյանքն անցնում է մահվան, մահը կյանքի մեջ: Ըստ հեղինակի՝ «Կյանքից դուրս նույնիսկ մահ չկա» (էջ 242): Մահվան գաղափարում հողին վերադառնալու խորհուրդ կա նաև:

Պատումում փիլիսոփայական որոշակի խորհուրդ ունի հողը. հողային մասունք, հողե աչքեր, հողանյութ մարդ, հողը մարդուց կխռովի, հողի լաց («...Թաքուն լաց եղա: Անձայն: Ինձ թվաց, թե այդ լացը իմը չէ, այլ՝ հողինը: Ի՛նչ ծանր է հողի լացը» (էջ 232)): Մա պայմանավորված է մեռնելու և հարություն առնելու հավիտենական արարողությամբ, որն իրականացվում է հողում. հողից է ծնվում մարդը, բայց և հող է դառնում մարդը:

«Հող էիր, հող դարձիր:

Ես սարսափեցի՝ ուրեմն հորեղբայրը հո՞ղ պիտի դառնա: Ինչո՞ւ, ախր ինչո՞ւ հող: Թող մի ուրիշ բան դառնա, ասող կամ թեկուզ արծիվ, որը հրեն մեր տան գլխի բարձր քերձի ձեղքում բուն ունի» (էջ 9):

«Արխաիկ հավատի ռեալությունները ցույց են տալիս, որ հեթանոսական աշխարհագրացողությունը դեռևս պահպանում է իր կենսունակությունը, հանդես է գալիս որպես գոյաբանական տրվածություն,- գրում է Ս.Մարինյանը: -Հողի այսօրինակ փիլիսոփայական մեկնակետը իր հիմքով սկիզբ է առնում արխաիկ խտոնեզմից,

թե ամեն բան բաղկանում է հողից և կրկին վերադառնում է մայրական գիրկը»⁷:

Վիպակի հերոսին հետապնդող սովերները, ոգիների հիշատակությունները, նախնիների ոգու կանչերը մահվան ներկայությունն են հուշում նաև: «Հոգին երբեք չի մեռնում և միշտ արթուն հսկում է մեզ», - խոստովանում է հեղինակը: «Սև ձորեր, անիծված ձորեր: Բերանս փակում եմ՝ մեղա՛, մեղա՛, ինչո՞ւ անիծված, ձորն ի՛նչ մեղք ունի, որ ես արհամարհում եմ Մուսանին... Դեմս գծագրվում է ճերմակ հրաշքը՝ ճերմակ սյուն: Մուսանն է: Այս ի՛նչ հեթանոսական ոգի է ճախրում այս ժայռախոռոչների մեջ»: Կամ. «Մինչև լուսաբաց ես նստած եմ Խոսրովիդուխտի հետ՝ դեմ դիմաց: Նա հարություն է առել հազար յոթ հարյուր տարվա մոռացությունից»: Հեղինակը համոզված է. «Հիշատակները սուրբ են, սակայն՝ մեռած: Մեռածները չպետք է խանգարեն ապրողներին» (էջ 242):

Պատումում միֆական դրսևորումներ են նաև տեսիլներն ու երազները, որոնք նույնպես կառուցվածքային դերակատարում ունեն:

Ահավասիկ. «Իմ աչքին երևում է ձյունանուշը՝ աստվածուհի Անահիտի տեսքով: Ես ձիս քշում եմ, որ բռնեմ նրա ճերմակ փեշը, բայց աստվածուհի է, չէ՞, միշտ դաժան ու խայթող, քրքջում է մութիս ու ճախրում դեպի սպիտակ անդունդները» (էջ 248): Միրո, հեշտասիրության, պտղաբերության աստվածուհի Անահիտի միֆը մեր հերոսին դեռ դպրոցական նստարանից էր անհանգստացնում. դասընկերուհու՝ Անահիտի ծամն էր քաշում, փորձում էր կուրծքը բացել՝ համոզվելու՝ լույս կա՞ այնտեղ: Երբ կբլորի տասնյոթը, կհասկանա՝ սիրում է Անահիտին, բայց այդ սերը կմնա կիսատ: Հավելենք՝ միֆական աստվածուհու և հյուսվածքի հերոսուհու սահմանաձուլում կա այստեղ:

Միմվոլիկ է նաև հարևան գյուղի կաթնաճերմակ, թուխ հոնքերով, թուխ աչքերով հարսիկից կարմիր խնձոր ստանալը, որը պաշտամունքային միրգ է, սիրո խորհրդանիշ: Տղային խնձոր տալով՝ աղջիկը հուշում է իր սիրո մասին: Մեր էպոսում էլ Խանդութն է Դավթին խնձոր տալիս: Իսկ իր սերը, որն ավելի կիրք է հիշեցնում (մի քանի անգամ կրկնվող կարմիր-ը կարծես թե այդ է հուշում), վի-

⁷ Ս. Սարիյան, նշվ. աշխ., էջ 37:

պակի հերոսն այսպես է բանաձևում. «Խնձորը կարմիր կրակ է, վրան թուխ պուտեր: Հարսիկի ճերմակ վզին ևս թուխ խալեր կան» (էջ 247):

Հյուսվածքում առանցքային դերակատարում ունի նաև կրակի միջը: Գլխատան քարայրում գիշեր-ցերեկ վառ է Քուրմ Անձավ նախնու արած կրակը: Մեծ տատը երեկոյան խաչ է քաշում կրակի վրա, մի փշուր խունկ գցում մեջը, անթեղում՝ առավոտը բորբոքելու: Այս գյուղում «քարն ավելի պիտանի է, քան Քրիստոսի նշխարը»:

Գործ ունենք մի իրականության հետ, որտեղ արժևորվում է նյութը՝ քարը՝ ետնապլան մղելով հոգևորը՝ Քրիստոսի նշխարը: Սակայն այստեղ է երբեք չհանգչող կրակը, որը պարզապես բորբոքել է պետք խաչի և Քրիստոսի նշխարի օգնությամբ:

Անդրադառնալով Եղիշե Չարենցի վաղ շրջանի պոեզիայի միֆական սիմվոլիկային՝ Հենրիկ Էդոյանը ներկայացնում է «Մումա» և «Ամբոխները խելագարված» պոեմների «կենտրոնական սիմվոլային դաշտը»՝ «քարի» և «կրակի» «անտիթեզը», որը, ըստ գրականագետի, վերոնշյալ պոեմների «կառուցվածքային սկզբունքն է»⁸: Նույնը կարելի է ասել նաև Խանգաղյանի վիպակում տեղ գտած քարի և կրակի հակադրության մասին. առաջինում քարացման, անշարժացման, այսինքն՝ մահվան գաղափարն է, երկրորդում՝ շարժման, ընդարձակման՝ կյանքի գաղափարը: Քարի սիմվոլիկայի հետ են առնչվում գյուղը, գյուղի քարտաշը՝ քար դնող Մուխան ապերը, ում թավ հոնքերի վրա միշտ քարափռոշի կա, քարայրերը, փոքր քաղաքը, մեծ բանտը, կրակի սիմվոլիկայի հետ՝ Մեծ Տատը, հեղինակի հայրը, մայրը, ինքը հեղինակը. «Զգում եմ, որ մեջս կրակի պես մի բան է բորբոքվում, այն կրակի պես, որ պահում ենք մեր տանը անթեղած և երբեք չենք թողնում, որ հանգչի: Տեսնում եմ, որ կրակն ինձ մղում է լինել ինքնուրույն, նույնիսկ արտառոց: Ուրիշներին չնմանվել, սակայն ուրիշներին չխանգարել, երբեք չարհամարհել» (էջ 206): Ի վերջո, անխուսափելի է այս երկու սիմվոլիկաների բախումը. քարացած, բանտի վերածված կյանքը պիտի քարուքանդ լինի: Խաչի և Քրիստոսի նշխարի սիմվոլիկաները հուշում են այս ամենը կիրազործվի Քրիստոսի անունից (հոգևորի օգնությամբ): Այստեղ է նաև Քրիստոսի միջը՝ Քրիստոսի պատկերը՝ իբրև հոգևոր սկզբի մարմ-

⁸ Հ. Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Ե., 1986, էջ 113-114:

նավորում: Տատն աղոթում է Քրիստոսի պատկերի առաջ, իսկ դրսում բերդաթաղը հսկող տասներկու շներն են: Հասկանալի է՝ ենթատեքստում Քրիստոսի տասներկու առաքյալների միջև է: Սուրբգրային խոսքի մեջ մի քանի իմաստով հանդես եկող 12 թիվը, որը ավարտվածության, ներդաշնակ ամբողջության խորհրդանիշ է, հյուսվածքում հաճախ է շեշտվում. տասներկու տարեկան մի տղա էր վագում դեպի հեռուները, տասներկու տարեկան էր հեղինակի՝ բերդաթաղ վերադարձող տղա թոռը, հարյուրյակում ընդամենը տասներկու կովող կար, տասներկու խոշոր, ականջները ցցած գայլեր էին կանգնած, տասներկու կով տվեցին հեղինակի մորը, Մեծ Տատը տոհմատան կանանցից տասներկուսին ուղարկեց Չոչըռ, տանը տասը-տասներկու կով էին պահում, տասնմեկ ճյուղ ուներ Ծծախաչ կաղնու եղնին. տասներկուերորդն իրենով սկսվող ճյուղն էր և այլն:

Կերպարների անուններն անգամ հիշեցնում են տասներկու առաքյալներին՝ Պետրոս ամի, բժիշկ Պողոս, Հուդա և այլն: Ինչպես տեսնում ենք, պատումից դուրս չի մնացել նաև Հուդայի միջքը: Այո՛, պիտի լիներ Հուդան, որպեսզի միապաղաղ, միօրինակ գիշերները տարբերվեին «Հուդա գիշերներից»:

«Մազե կամուրջ» պատմավեպում Արմեն Մարտիրոսյանը գրում է. «Հուդան հարկավոր էր Քրիստոսին՝ միօրինակության գորշությունը թափ տալու իր վրայից, դրա համար էլ, ճանաչելով ապագա մատնիչին, նա ոչնչով չհակառակվեց, ինչ գրված է, կատարվելու է, ասաց»⁹: Պատմավիպասանի կարծիքով՝ Հուդան շատ ավելի նպաստեց Քրիստոսի փառքի տարածմանը, քան մյուս տասնմեկ առաքյալները:

Ժամանակներն իսկապես հուդայածին էին և մարդուն ստիպում էին երբեմն-երբեմն ապավինել շներին, որոնք հյուսվածքում տարաբնույթ գործառույթ ունեն: Ներկայացնելով «Մի դրվագ հայ առասպելաբանությունից»՝ Մարգիս Հարությունյանն անդրադարձ է կատարում նաև հայոց ավանդության մեջ շան առասպելաբանական ընկալման տարբեր դրսևորումներին: Այստեղ խոսվում է Առնակ անունով շնակերպ հոգեառի մասին, որին Ղևոնդ Ալիշանը հանդիպել է Հովհան Ավետարանչի առասպելախառն պատմության

⁹ Ա. Մարտիրոսյան, Մազե կամուրջ, հ. 2, Ե., 2002, էջ 164:

մեջ՝ Պրոխորոն¹⁰: Այն գուգամիտվում է հին անգլիական գրավոր ավանդության մեջ պահպանված Օդիինին ուղեկցող գայլերին տրվող անվանմանը՝ դժոխքի շներ: Արդյո՞ք սա չի նկատի ունեցել հեղինակը. «Ես սաստանային պատկերացնում եմ մեր շներից մեկի նման, այն, որ գգվոտում է յուրայինների հետ: Եվ ինչպե՞ս է այդ սաստանա շունն իր պոզերով տեղավորվել իր մոր փորում» (էջ 220-221):

Հայ հին ավանդության մեջ խոսվում է Արտավազդի շղթաները լիզող շների և Արային լիզելով հարություն տվող շնակերպ արալեզների մասին: Խոսվում է նաև սրանց ընդհանրության մասին (Վանական Վարդապետ): Կնշանակի՝ սրանց նպատակը գուգամիտվում է մահվան կապանքներից ազատ արձակելու, հարություն տալու գաղափարին:

Ըստ Սարգիս Հարությունյանի՝ շան այս երկակի առասպելաբանական ֆունկցիան՝ մերթ իբրև հոգեառ, կապված մահվան թագավորության հետ, մերթ իբրև երկնքից իջնող, կռվում ընկած դուրսագունների լիզող, հարություն տվող կամ արքայազներին սնուցող (հիշենք մանուկ Սանատրուկին և նրա դայակին օգնության հասած շան մասին), «վկայում է շան առասպելաբանական կերպարի միջնորդային դերը երկնքի, երկրի և ստորերկրայքի, կյանքի ու մահվան, այսրաշխարհի և անդրաշխարհի միջև: Նա և՛ մահացնող է, և՛ ... կյանք պարգևող»¹¹:

Կարդում ենք. «Մեր շները ցնծությամբ փաթաթվեցին ինձ ու ձիուս: ...Շունը լիզում է երեսս» (էջ 248): «Մեջքիս ծանր թաթ գգացի: ...Մեր շներից մեծն էր... Ես գրկեցի մեր շան գլուխը:.. Ես մեր շների մեջ եմ: ...Ես ապավեն ունեմ հիմա: Ես բարեկամներ ունեմ... Մեր շներն են իմ տերն ու պաշտպանները» (էջ 224):

Հայոց ավանդության մեջ ռոնացող շներին հալածելու կամ ծեծելու սովորույթ կար նաև: Շան ռոնոցը դժբախտության կամ մահվան հետ էին կապում: «Մեր շները միանգամից պոկվեցին իրենց մշտական տեղից ու ահուվախով, վիզները երկարած, մանրաքայլ գնացին դեպի բերդաթաղի կրնկահան բաց դարպասները... պպգե-

¹⁰ Տե՛ս Ս. Հարությունյան, Մի դրվագ հայ առասպելաբանությունից, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1989, թիվ 1, էջ 157:

¹¹ Նույն տեղում, էջ 165:

ցին խմբված ու ռոնացին» (էջ 10): Ռոնացին՝ գուժելով Հայրապետի մահը:

Բախվում ենք մի իրականության, որտեղ կյանքն ու մահը միախառնված-միաձուլված են. տարանջատումն անգամ անկարելի է թվում: Ու այդ ժամանակ սովորական մահկանացուին հանգիստ չի տալիս շներին մորթելու կամ չմորթելու միտքը: «Գուցե թե մեր շներից հինգը մորթեն:.. Շան կաշին, ասում են, տաք է պահում մարդու մարմինը,... չէ, շներին չեմ մորթի...»: Այնուամենայնիվ. «Գիշերը երագումս սառած ճանապարհներ տեսա, նաև՝ մորթված շներ: Իմ անցկացրած կյանքն ինձ երկար, շատ երկար է թվում, թեև ընդամենը քսաներկու տարեկան եմ...» (էջ 234-235): Մորթված (ասել է թե անզուլի) շների սիմվոլիկան գուգամիտվում է մահվան ու սարսափի վերացման գաղափարին, ինչին էլ հաջորդում է երգը. «Երգել եմ ուզում ես... Մի հեռավոր ձայն ճշում է՝ մի երգի: Իսկ ես երգում եմ: Լավ եմ հասկանում ինքս ինձ, իմ արժեքը: Մերժում եմ ճակատագրին հնազանդվելու պահանջը: Հպարտ եմ ինքս ինձնով, թեև ձմեռային գիշերվա սառնամանիքը քաշում է ականջներս, շալակիս բեռն ինձ ճնշում է իր անգիտակից ծանրությամբ: Ըստ երեվոյթին, իմ կյանքի էությունը հենց սա է՝ որին ինքս չեմ ձգտել, այլ փաթաթել եմ վզիս» (էջ 235-236):

Հիրավի, արմատներից էր սա, որ գրողին էր փոխանցել նրա՝ երբեք չհուսահատվող, առասպել դարձած հայրը, ով երեկոները ազգատոհմի փոքր ու մեծ տղաներին հավաքում էր Ատյան քարի մոտ ու երգում: Երգում էր այս «բարեկամ, բարձրահասակ, մուգ դեմքով, բարակ ու թուխ բեղերով» մարդը՝ համոզմունքով. «Մարդն իր երգը պիտի ունենա»: Իսկ նրա երգին ականջ դնող աղավիններն այստեղ հուշում են՝ խաղաղություն էր երգում այս մարդը, ով «երբեք չէր ծանրանում որևէ մեկի հոգու վրա, բեռ չէր դառնում» (էջ 70):

Հյուսվածքում իր արտահայտությունն է գտել նաև Նիոբեի միֆը, որտեղ նույնպես սահմանազանցում կա: Նիոբեի բոլոր զավակներին (իսկ նրանք քսանն էին) Ապոլլոն ու Արտեմիդա աստվածներն սպանում են: Այս եղերագործությունից հետո մայր Նիոբեն վշտից քար է դառնում: Միֆական Նիոբեն և «Նիոբե» անունով ֆոտո-նկարչատունը՝ մսի խանութին կից, երկում նույնանում են: Նկատենք սիմվոլիկ են և՛ մսի խանութը, և՛ ֆոտո-նկարչատունը. դարեր շարունակ հայի զավակները մատաղի գառան նման մորթ-

վում են, մայր Հայաստանը վշտից քար է դարձել: Ֆոտո-նկարչատունը մեզ հուշում է՝ ոչինչ չի մոռացվել, բայց քանի դեռ միակամ ու միաբուռ չենք, մեզ մնում է լալ. «Իմ աղբերների համար ալ լանք: Ղզտիկ-անուշիկ աղբերներիս թուրքը կոտորեց: Լա՛նք...» (էջ 76):

Իսկ միական և միաբուռ դառնալու, մատաղի գառան հոգեբանությունից ազատվելու համար մեզ հզոր ուժ է պետք՝ առյուծ: Ժողովուրդների մտածողության մեջ առյուծի սիմվոլիկան առ այսօր զուգամիտվում է գերբնական ուժի, հզորության, իշխանության և վեհության գաղափարին:

Կարդում ենք. «Մայրս մի հատիկ մոմ էր վառում, տանում կպցնում քարատան մի խոր խորշում դրած պղնձե առյուծի թաթին: Դա մեր մեծ կատվի չափ էր, ազին ոլորած, մի թաթը բարձր բռնած, որ կարծես ուզում էր մեկնումեկին հարվածել:... Մայրս ասում է, թե մեր առյուծը չլինի, չլինի, էլի երեք հազար տարվա կլինի: Մի ժամանակ, երբ մերոնք գնացել են պատերազմի, առյուծը տարել են ոսկե պատգարակի վրա» (էջ 37):

Չնայած փոխվել են ժամանակները, և հիմա կովի են գնում դրոշով, բայց միևնույն է, առյուծի շունչն ու ոգին շարունակում են օգնել կռվողներին:

Սիմվոլիկ է նաև մի շերտը՝ կարմիր, մյուս շերտը՝ կանաչ տոհմադրոշը՝ նման Մեծ Տատի ու էլի տոհմի հայավարի զգեստով կանանց մետաքսե լայն ու երկար գոտիներին: Վերջիններս, գրողի մոր հավաստմամբ, Տիգրան Մեծ արքայի դրոշակի ձևն ունենին: «Հայավարի հագնող կանաց պալտիների ճակատակալները հյուսված էին արծաթե ու ոսկե թելերից՝ երկու պճնված սիրամարգ՝ կտուց կտուցի, մեջտեղը անմահական ծառ: Դա էլ, ինչպես ասում էր մայրս, նույն Տիգրան Մեծ թագավորի զինանիշն է եղել: Երբ կործանվել է Հայոց թագավորությունը, մերոնք արքայական դրոշակը դարձրել են կանացի գոտի՝ պատվի ու անարատության խորհրդանիշ, զինանիշը՝ ճակատակալ, այսինքն թե՛ մեր իշխանության գաղափարը մեր գլխից վեր է» (էջ 18):

Հիրավի, Տիգրան Մեծի միջը մեզ ստիպում է ծովահոտ առնել: Կանանց լայն ու երկար գոտիները հուշում են ծովից ծով Հայաստանի մասին: Երկու պճնված, կտուց կտուցի տված սիրամարգերը երկատված Հայաստան աշխարհի արևմտյան և արևելյան թևերի միաձուլումն են հուշում, իսկ անմահական ծառը տանում է դեպի Բիբ-

լիս՝ հիշեցնելով՝ այստեղ է եղել դրախտը, բիբլիական է հայ ժողովուրդը: Տոհմադրոշի կանաչ ու կարմիր շերտերը խորհրդանշում են մեր ժողովրդի թափած արյունը (կարմիր)՝ հանուն հզոր և միավորված, ասել է թե կանաչ Հայաստանի: Պատահական չէ, որ տոհմադրոշի մի անկյունում արծիվն է՝ սուրը ճանկի մեջ: Իսկ արծվի կողքին՝ մի պատռվածք՝ «կարմիր թելով երքադած»: Մետաֆորային այս պատկերում արծիվը հայ ժողովրդի խորհրդանիշն է: Մեծ Տատն իր բալաներին, իր թռռներին արծվի ճտեր էր համարում, հեղինակի համար արծիվ էր նաև հայրը. «Մի ժամանակ նա թևավոր էր, այժմ՝ հագար տեղից վիրավոր, թևերը փշրված արծիվ...» (էջ 146): Սա հայ ժողովրդի այսօրվա պատկերն է, սակայն նա միշտ կանգուն է, սուրը ձեռքին, չնայած ցայսօր չեն սպիացել նրա վերքերը, «կարմիր թելով երքադած» են:

Ազգային դիմագծին հավատարիմ մնալու, հայրենիքի պահպանության ու պաշտպանության ոգով տոգորվելու, հոգին մաքրելու, չարն ու արատավորը հեռու վանելու գաղափարն առանցքային է երկում, որն իր արտահայտությունն է գտել մեկ այլ միֆակերպարի՝ գրքի միջոցով: Հեղինակն իր շղթայով ժամացույցից հրաժարվեց երկու ձեռագիր մատյանի համար. մեկն Ավետարանն էր, մյուսը՝ Նաղաշ Հովնաթանի պապի պատկերազարդումներով տաղարանը: Հեղինակի մայրը՝ մի ուսյալ կին, ազգատոհմի երեխաներին զանազան զրույցներ պատմելիս անընդհատ հիշեցնում էր՝ «ինքը խոսում է գրոց վկայություններով»: Միսակ Նահապետի թոռ Չագից սերած տոհմի պատմությունը նա կարդում էր «էն գրքից», որը «շատ սիրուն էր, թուղթը ոնց որ մետաքս, խշշացող: Կլիներ Մեծ Տատի թոնրում թխած կրկենու չափ: Կազմը սև կաշի էր, վրան քառակուսի խաչաձև դաջվածքներ» (էջ 46): Նկատենք՝ գիրքն ու կրկենին (հացը) նույնաչափ են այստեղ: Իմաստային է. հավասարաչափ է և նրանց դերը: Նկատենք նաև գրքի խաչաձև դաջվածքները: Գիրքն ու խաչը հոգևոր լույսի, բարոյականության, առաքինության աղբյուր են, բայց անհրաժեշտության դեպքում գիրքը պայքարի կոչ կհղի, իսկ խաչը՝ զենքի կվերածվի: Նպատակային է նաև Մովսես նախամարգարեի խոսքը. «Աստված իր պատկերի նմանությամբ ազատ կամք ունենալու պատիվը շնորհեց մարդուն, մեզ՝ հողանյութ էակներին սահմանեց որպես տեր իր ստեղծած բոլոր արարածների վրա»: Հավելենք՝ այստեղ նույնպես միֆի և իրականության սահմանաձուլում կա.

«Չլինի՞ այդ Մովսեսը մեր Մարդի ամու պապ Մովսեսն է, որին մե-
րոնք Մուսի են ասել: Մի՞ թե նա է» (էջ 108):

Միֆական է ոսկեգույն, հեռավոր սարերից դեպի բերդաթաղ
ճախրող կրակված գլխով հովատակը: Գալիս է՝ անտակ ձորը ձիու
վրնջոցով, խրխինջով լցնելու:

Քարայրի խորքից լսվող ձիու խրխինջի մասին ազգային վե-
պում հպանցիկ է հիշատակվում: Լևոն Խեչոյանն առավել քան հա-
մոզված էր, որ Սասնո հասարակարգի և քաղաքական հետագա
զարգացումների համար չափազանց վճռորոշ նշանակություն ունե-
ցավ հենց ձիու դողանջը՝ երիքովյան փողի անընդհատ ուժգնացող
ձայնի պես: Այս ձայնն էր Ագռավաքարի շրջակա բնակիչներին ու
երիտասարդներին ուղղորդել դեպի Սասուն: «Մեծ տան երիցա-
վագները... ինչքան էլ փորձում էին ոստիկանական կարգապահ
տեսուչների միջոցով աննախադեպ իրավիճակի դեմն առնել, ժո-
ղովրդի վրա ունեցած երբեմնի անվիճելի իշխանությունը ձեռքից
չթողնել, արգելել մասսայական տեղաշարժերը... միննույն է, բոլոր
ջանքերը գուր էին անցնում: Ամեն ուրբաթ Ագռավաքարից լսվող
խրխինջը գյուղ գյուղի, ավան ավանի, քաղաք քաղաքի հետևից ան-
դադար Սասուն էր ուղարկում՝ կանխելով իշխանության՝ ժո-
ղովրդին կրկին դեպի անցյալ տանելու բոլոր փորձերը»¹²: Ութսու-
նականների (գիրքը 1986 թվակիր է) ազգային զարթոնքի, վերելքի
տարիների գրված այս հյուսվածքում ի՞նչ էր ցուցում ձիու խրխին-
ջը՝ վերադարձ դեպի ավանդապահ ակունքները, դեպի հայրենիքը,
կորուսյալ հայրենիքը:

Այս խորհուրդն ունի նաև հեթանոսական կրակարանի զար-
դանախշ օջախը՝ Քրմանց տոհմի սիմվոլը: Այո՛, պիտի կենդանա-
նար Քրմանց տոհմի երեք հազար տարեկան տունը, փլատակների
տակից արթնանար բերդաթաղի ոգին, կապույտ դրոշակի պես
«Ֆոֆոար» տոհմատան կրակի ծուխը:

«Առասպելների ծանրությունից տնքացող» այս ժայռաթաղում՝
բերդաթաղի մի բարձունքի վրա, ասքազիրը կառուցեց իր տունը՝
օգտագործելով «փլված կամարների ու պատերի քարերը, որոնց
վրա դեռ մնում են ալևոր դարերի հետքերը (էջ 314): Իրավացի է աս-

¹² Լ. Խեչոյան, Սիերի դրան գիրքը, Ե., 2014, էջ 18-19:

ված. «Ոչինչ չի կորչում: Վերընձյուղումը շոշափելի է արևի ճառագայթների նման...» (էջ 314):

Իսկ Բաբելոնի սիմվոլիկան, որը, ինչպես խոսքի սկզբում նշեցինք, ենթաշրջանակում է հյուսվածքը, գալիս է վերահաստատելու այս գաղափարը: Թվում է՝ վախճանաբանական իմաստ պիտի ստեղծի այն: Մինչդեռ, ինչպես գիտենք, ցանկացած վախճանաբանական միջ շրջապտույտ է հուշում նաև: Բաբելոնի միջն այստեղ ոչ թե ավարտվածություն, այլ հաջորդող շրջան է ենթադրում: Կնշանակի՝ միննույն տարածքում մեկ այլ շինություն պիտի կառուցվի՝ Քրմանց տունը, այսինքն՝ անվերջ վերադարձ նույն սկզբին: Այստեղ են նաև նոր տան նոր պահապանները՝ տոհմատան շների ժառանգները: «Հեռվից դրանք՝ այդ սպիտակ շները,- գրում է հեղինակը,- առյուծների էին նմանվում, որ տեսել եմ Բաբելոնի ավերակներում, քարացած, բայց կենդանի ոգով:... Նրանք հոտոտեցին իմ ոտքերը, ապա վեհ թագնեցին իմ նոր շինած տան շեմին...» (էջ 315) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

Բաբելոնի ավերակներ և կենդանի ոգի կոնտրաստը հենց այս շրջապտույտն է ապահովում: Նկատենք՝ սպիտակ էին տոհմատան շների ժառանգները: Միջնադարյան մի քանի աղբյուրներում (Վանական Վարդապետ, Կիրակոս Արևելցի, Գրիգոր Խլաթեցի) նշվում է, որ Արտավազդի շղթաները լիզող շներից մեկը սև էր, մյուսը՝ սպիտակ: «Շների այս տարագույն սիմվոլիկան,- գրում է Սարգիս Հարությունյանը,- խորհրդանշում է շների առասպելական երկվակյան բնույթը. սև շունը խորհրդանշում է կապը «Սև ու մութ աշխարհի», այն է՝ մահվան թագավորության հետ (որի մեջ է գտնվում Արտավազդը), իսկ սպիտակ շունը սիմվոլացնում է կապը «լույս աշխարհի», այն է՝ կյանքի հետ, այսինքն՝ հարության, որին ձգտում են Արտավազդը և նրա կապանքները լիզող Սպիտակ շունը»¹³:

Հարություն էին խորհրդանշում նաև հյուսվածքի սպիտակ շները: Պատկերն ամբողջանում է վերջում. «Ձիու վրնջոցով լցվում է անտակ ձորը: Թռչում են իրար ձուլված նժույգն ու թռռնիկս. դեպի իրենց նախնիների սկիզբը՝ իրենք իրար գտած:

Բացվում է քարայրի վիհը:

-Պապի՛, ձին բերի:

¹³ Ս. Հարությունյան, Մի դրվագ հայ առասպելաբանությունից, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1989, թիվ 1, էջ 163:

Այսպես՝ սկիզբը անցած ժամանակների ծննդոց ակունքում, վերջը...

Վերջ չկա» (էջ 315) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

Հիրավի, սա արարչագործության հերթական սկիզբն է, որը հենց Ցիկլային շրջապտույտն է, Անվերջի շրջապտույտը: Կնշանակի՝ պատումում միֆական է և ժամանակը, որը «դուրս է պատմական ժամանակի միագիծ ընդգրկումից. ... ցիկլային է, ... գտնվում է հավերժ շրջապտույտի մեջ՝ հավերժական վերադարձի ըմբռնմամբ, որում սկիզբը միաձուլվում է վերջին, և վերջի մեջ արտացոլվում է սկզբի գաղափարը: Միֆական ժամանակի հետ զուգահեռ գծագրվում է և միֆական տարածությունը, որն անսկիզբ է և անվերջ»¹⁴:

Միֆական ժամանակի և տարածության գաղափարը հեղինակն առաջ է քաշել Փոքր Մհերի միֆի միջոցով. ժամանակատարածական այս շրջապտույտում «ծագումների արարումն էր դարձյալ հունցվելու»¹⁵: Ուստի՝ Փոքր Մհերի՝ պարբերաբար միննույն տեղանքում հայտնվելը շփոթմունք կամ մոլորություն չէր, այլ, ինչպես իրավացիորեն նկատում է Լևոն Խեչոյանը, «միլիոնավոր տարիներ հին ճանապարհներին ինչ-որ բանի թիզ առ թիզ մոտենալը, զգալն ու անապատի անշարժության մեջ նրան սպասել կարողանալն էր նպատակը: Փորձում էր տիեզերական շրջապտույտներում, մառախլածածկ անդունդներում հայտնված հուսալքված ազգային ոգին ամրապնդել, նեցուկ լինել, նրա համար ելքի դուռը որոնել»¹⁶: Իրավացի է ասված՝ մինչև Փոքր Մհերը ոչ ոք «հուսահատ ժողովրդին այդպիսի գեղեցիկ, համարձակ ու քաջասիրտ թռիչքի դեռ չէր տարել»: Իսկ խեչոյանական տեսակետը, թե այս պատմությունն «ազգի առաջն ընկած՝ գնալու է, ինքն ավելի երկար է ապրելու, քան ժողովուրդը», կարծում ենք, առավել քան համոզիչ է:

¹⁴ Ա. Մեմիքչանյան-Բեքմեզյան, Գրականության տեսության արդի խնդիրներ, Ե., 2016, էջ 134:

¹⁵ Լ. Խեչոյան, Մհերի դրան գիրքը, Ե., 2014, էջ 79:

¹⁶ Նույն տեղում, էջ 49:

**Рима Степанян
Горис**

**Применение мифа в автобиографической повести С. Ханзадяна
«С моим отцом и без него»**

Резюме

С мифопоэтической точки зрения весьма примечательна повесть С. Ханзадяна «С моим отцом и без него», которая обрамлена господством Младшего Мгера и Вавилонских мифов. Понятно, что в основе двух мифических образов лежит круговорот Бесконечности. В этом временно-пространственном круговороте есть также задача оставаться преданным своим корням и с их помощью достигнуть самосознания. Именно эту задачу выдвинул автор в образе Младшего Мгера.

**Rima Stepanyan
Goris**

**The use of myth in "With my father and without my father"
autobiographical novelette of S. Khanzadyan**

Summary

S. Khanzadyan's autobiographical novelette "With and without my father" is quite remarkable from the point of view of mythopoeitics. It is framed by the subframed Babylonian myths of Poqr (Small) Mher. It is clear that on the base of two mytho-characters there is a cycle of endless. In this periodical cycle, there is also a problem of staying loyal to roots, achieving self-knowledge through them, which the author represented with the help of Poqr Mher's image.



ԳՈՐԻՍԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ



Լուսինե Ներսիսյան
Գորիս
gorpetham@mail.ru

Գորիսի ոչ մի փողոցում չեզուն այնքան վճիտ չէ, ինչպես Հին ճանապարհի վրա: Այդ լեզու չէ, այլ կարոտ, տխրություն, զայրույթ. այդպես Ղաթրինի ձորում երգում է կաքավը, և մթնում կարկաչում է

Ցուրտ աղբյուրը:

Ակսել Բակունց

Ժողովրդի կերտած բանավոր ստեղծագործությունների ամբողջությունը, որ խտանում է սերնդեսերունդ պաշարվող ու փոխանցվող հիշողության ամբարում, արտացոլումն է մարդկային կյանքի ու գոյության փիլիսոփայական վերարտադրության: Պատմության առավել կարևոր դեպքերը, մարդկության դարավոր փորձն ու իմաստությունը, ձգտումներն ու իդեալները, կենցաղն ու ապրելակերպը գեղարվեստական ձևավորում են ստանում և փիլիսոփայական ըմբռնումների կանոնակարգերում են տեղաբաշխվում բանահյուսական հորինվածքների ձևով: Վերջինս, ըստ էության, զերծ է կանոնավոր և գիտատեսական ըմբռնումներից, և միևնույն ժամանակ դուրս չէ կյանքի ընկալման մարդկային սահմաններից: Բանահյուսությունը՝ որպես համակարգ, ըմբռնողականության առավել մեծ ու լայն ծավալներ ունի, քան պատմությունն ու գրականությունը:

Բանահյուսությունը հարուստ է այսօր մարդկության համար կենսական և հոգևոր արժեքներին ոչ միայն նյութ տալու հնարավորություններով, այլև այդ նույն արժեքների տարածման հատկանիշներով: Ցեղերի, ժողովուրդների, ազգերի կենսական ամեն մի փորձ կարող է արտացոլել բանավոր հյուսվածքը, որն էլ բերնեբերան, «հազար բերան» տարածվում է շրջակա ազգերի ու ժողովուրդների մեջ, ու այսպես իմաստնանում է մարդկությունը:

Սյունիքի տարածաշրջանը բանահյուսական, ազգագրական, լեզվագիտական առումներով շատ հաճախ առանձնակի ուշադրության չի արժանացել: Իսկ առաջադիր բազմաթիվ հարցեր քննվել են Արցախի տարածքի նույն հատկանիշների սահմանում՝ նույնացնելով Արցախն ու Սյունիքը¹: Իհարկե, լայն առումով բանահյուսական հատկանիշները կարող են լինել նման, գուցե և շատ հաճախ նույնական, բայց նեղ առումով տարբեր են ոչ միայն բանահյուսական երկերի բովանդակությունը, այլև արտահայտման ձևն ու մտածելակերպը: Այս տարբերությունը նկատվում է նաև, օրինակ, Սյունիքի տարբեր բնակավայրերի միջև: Ընդ որում, որքան էլ զարմանալի, բայց բոլորովին տարբեր է Սյունիքի խոսակցական տարբերակների նկարագիրը, որն էլ, անշուշտ, կազմում է բանահյուսական հորինվածքների հիմնական շաղախը, լեզվամտածողության արգասիքը: Պատմաաշխարհագրական առումով հաճախ են Արցախն ու Սյունիքը նույնացվել: Օրինակ՝ Վ դ. Արցախը հիշատակվում է նաև Փոքր Սյունիք անունով²: Արշակունիների թագավորության անկումից (428) հետո պարսից արքունիքը Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից ու բուն Աղվանքից կազմել է մեկ մարզպանություն, սակայն այս տարածքներն էլ իրարից բաժանվում են աշխարհագրական բարձրադիր ու ցածրադիր վայրերով, գետերով, և պատմականորեն միշտ չէ, որ նույն ճակատագիրն են ունեցել: Չենք կարող անտեսել այն հանգամանքը, որ բանահյուսության համար կարևոր են ժողովուրդների աշխարհագրական դիրքն ու պատմական ընթացքը: Այսպես՝ մինչև օրս շատ լեզվաբաններ Գորիսի բարբառը քննում են Արցախի բարբառային համակարգում՝ անտեսելով տարբերությունների քանակը ոչ միայն քերականական և հնչյունական, այլև

¹ Գորիսի բարբառի ճանաչման և ինքնուրույնության վերաբերյալ Ալ. Մարգարյանը առանձնացրել է տարբերություններ և նշել, որ Գորիսի բարբառը «ոչ թե ստորադասվում է Ղարաբաղի կամ Արարատյան բարբառին, այլ ունի տեղական բարբառներին բնորոշ իր յուրահատուկ հնչյունական համակարգը, բառային ֆոնդն ու քերականական կառուցվածքը և ամենայն իրավամբ էլ մի ինքնուրույն ու ինքնատիպ բարբառ է» /այս մասին տե՛ս Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 7/:

² Լեոնային Ղարաբաղ: Պատմական ակնարկ, Ե., 1988, էջ 8:

բառապաշարի մակարդակներում³: Բայց ակնհայտ է, որ Հայաստանի հարավարևելյան տարածքում տարբերակվել են Սյունիքի և Արցախի բարբառները դեռևս հին շրջանում. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառս զեզերականս որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Հայեցին և զՄպերացին և զՍյունին և զԱրցախայինն...»⁴: Ավելին, եղել են հեղինակներ, որոնք դեռևս 8-րդ դարում Ստեփանոս Սյունեցու կողմից թվարկված բարբառները ընկալել են որպէս առանձին լեզուներ⁵, որոնք տարածված են եղել Հայաստանում*:

Բանահյուսական նմուշների ուսումնասիրությունը, դրանց համակողմանի քննությունը պետք է դասել այն փորձերի շարքին, որոնք նպատակ են ունեցել առանձնացնելու Սյունիքի և Արցախի բարբառային, բանահյուսական տարբերակները: Այս կողմնորոշումը բխում է նաև հարցերի մանրամասն ուսումնասիրության շահերից. տարածքներին բնորոշ լեզվամտածողության բազմաթիվ հարցեր կարող են գտնել իրենց պատասխանները ոչ թե ընդհանուր համակարգում, այլ համակարգերից յուրաքանչյուրում:

Այսպիսով՝ Սյունիքի բանահյուսությունը քիչ է ուսումնասիրված: Ընդ որում՝ ուսումնասիրության կարիք ունի Սյունիքի տարբեր շրջանների բանահյուսությունը: Ընդհանուր առմամբ սակավ են բանահավաքչական աշխատանքները: Գոյություն չունեն ընդհանրական աշխատանքներ, որոնցում հավաքագրված լինեն նյութերը:

³ Այս մասին տե՛ս Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 36: Կարծում ենք՝ պատմական, աշխարհագրական, վարչական և լեզվաբանական նույն հարթության վրա հնարավոր չէ դնել Շահումյանի, Շուշիի և Շինուհայրի խոսակցականները: Գրեթե երկու հազար տարի այս տարածքները նույնական չեն եղել ու կողք կողքի զարգացել են ինքնուրույնաբար: Պատահական չէ, որ սրանց տրվել է առանձին նահանգների կարգավիճակ: Եվ ճիշտ է նկատում Ար. Ղարիբյանը. «Միչև այժմ բարբառագիտության մեջ սահմանված չեն որոշակի նորմաներ հայերեն բարբառն ու ենթաբարբառը միմյանցից տարբերելու համար»: /Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 85/:

⁴ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, ст. 187.

⁵ H. Hübschmann, Armenische grammatik, Leipzig, 1897, p. 519.

* Բնարկե, մենք հակված չեն այն տեսակետին, որ հիշատակված բարբառները առանձին լեզվի կարգավիճակ են ունեցել, բայց և այնպես ակնհայտ է, որ այդ բարբառները ունեցել են խիստ տարբերակված հասկանիշներ, որոնք ցայսօր էլ առկա են:

Իսկ ժամանակը մոռացության է տալիս բանավոր բազմաթիվ գոհարներ, որոնք սերունդների հիշողության մեջ մաղվում կամ մահանում են, իսկ ներկա ժամանակների հետաքրքրությունները գրեթե անտեսում են հինն ու ավանդականը:

Մեր խնդիրն է ոչ միայն գիտական մակարդակի վրա դնել Սյունիքի⁶, մասնավորապես Գորիսի բանահյուսությունը, այլև կատարել բանահյուսական երկերի հավաքչություն, դրանց վերաբերյալ մեկնություններ տալ:

Որոշակի աշխատանքներ թերևս արդեն առկա են այս բնագավառում: Ճիշտ չի լինի ասելը, թե Գորիսի բանահյուսության հավաքագրումը և ուսումնասիրությունը խոպան են մնացել, բայց, միննույն է, այն կարոտ է ընդհանրական կերպաձևումի, համահավաք տեսքի:

Գորիսի լայն առումով Զանգեզուրի շրջանի բանահյուսությունը գիտական հիմքերի վրա դնելու փորձ է արվել դեռևս 19-րդ դարի վերջից⁷ հանձին Ե. Լալայանի⁸, որը ազգագրական տարբեր

⁶ Սյունիքի բանահյուսական ակունքները վաղնջական են և կապվում են հայ ժողովրդի պատմության ընթացքին: Բանահյուսության հիմք կարող են ունենալ այստեղ կերտված բազմաթիվ ստեղծագործություններ: Սյունիքում ստեղծագործած շատ հեղինակների երկերում ուղղակիորեն ընգծված են բանահյուսական նմուշները: Դեռևս 8-րդ դարից մինչև հայրենների լույս աշխարհ գալը գրական տարբեր ժանրերի միջոցով կամ առկայությամբ պահպանվել են բանահյուսական նշխարներ: Դրանք այնպես նրբորեն են հյուսված ստեղծագործություններին, որ դժվար է գանազանելը հեղինակային ու ժողովրդականը: Չնայած այս դեպքում էլ սխալված չենք լինի, եթե ասենք, որ հեղինակային ստեղծագործությունների հիմքում էլ ընկած են ժողովրդական մտածողությունը, խոսակցականում տարածված դարձույթները, բանադարձույթները: Նման իրողություններ հանդիպում են պունեցի հեղինակներ **Մահակադրվա Սյունեցու, Մտեփանոս Սյունեցու, Առաքել Սյունեցու, Պետրոս Սյունեցու, Մտեփանոս Օրբելյանի, Գրիգոր Տաթևացու, Պետրոս Կապանցու** և շատ ուրիշների ստեղծագործություններում: Օրինակ Ս. Օրբելյանի պատմության մեջ վերաշարադրված են «Պարսից պատերազմ» վեպի առանձին դրվագներ՝ իբրև հին ավանդական գրույցներ, անշուշտ, կերպարանափոխված և հետագա դարերի պատմության ազդեցությանը ենթարկված: Հին վեպի այդ առանձին դրվագները պահպանվել են Հայաստանի այն գավառներում, որոնց դրանք վերաբերել են. Սյունյաց Անդրկ և Բաբիկ իշխանների մասին գրույցները պահպանվել են Սյունիքում: /Տե՛ս Ս. Հարությունյան, Հայ հին վիպաշխարհը, Ե., 1987, էջ 159/:

⁷ Բհարկե, Մտ. Օրբելյանի «Պատմությունը» աչքի է ընկնում բանավոր գրույցների առատությամբ, բայց, ցավոք, դրանք ամբողջովին չեն արտահայտում տարածաշրջանի խոսակցականի ընդհանուր պատկերը, ժողովրդական լեզվամտածողությունը:

նյութերի կողքին հավաքագրել է նաև զանգեզուրյան ժողովրդական երգեր*։ Ահա մի գեղեցիկ հատված այդ շարքից, որտեղ կինն է իր կենցաղավարության մեջ. «**Կյուլպա կանեմ խաշարա / Թխածըս յարիս պաշար ա,-** անիծում է թշնամուն իր յարին չարչարելու համար,- **Փանահ խան, քու մարը մեռնի, / Իմ յարը խէ մաշալ ա**»։

Մի այլ հատվածում էլ տղան այլևս չի դիմանում յարի հմայքին ու հայտնում է իր մտադրությունը. «**Ախչի անումդ Խանի, / Լեչակդ քամին տանի, / Ես քեզ նշանած պիտի, / Շորերդ իմ ձեռքով հանի**»⁹։

Այս հավաքածուում, ընդհանուր առմամբ, ընդգրկված են երկու երգ՝ **աղջա ու տղայի կատակերգ** և **վիճակի երգեր**։ Առաջինը կառուցվածքով կոտ է՝ կազմված ութ տողերից։ Հետաքրքրական և նորություն է կրկներգի կառուցվածքը. աղջկա խոսքում կրկներգը նույնական է. «**Ա տղայ, տու մի կ'ալ-կ'ալ**», որ հանդիմանությամբ ու դժգոհությամբ հրահրում է տղային՝ գալու դեպի իրեն։

Մեր տունը ճրճըռում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ,
Մեր շօնը հըջմաչում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ,
Մեր վօրցակը ծըկլթում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ,
Մեր խօխերքը լըցմացում են, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ,
Մեր ճըրաքը տըզվըգում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ,
Մեր կըրակը թըսվըսում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ,
Մեր պառավը մըռթմըռթում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ,
Մեր հիլիվերը տընքտընքում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'ալ-կ'ալ։

Երգը կառուցված է կենցաղային պատկերի վրա։ Աղջիկը նշում է իրենց տան խնդիրների մասին և պահանջում, որ տղան չգա, իսկ

⁸ «Ազգագրական հանդես», Շուշի, Դ. Գիրք, № 2, 1898:

* Շեղինակի նպատակը եղել է ազգագրական լայն ֆոնի վրա ներկայացնել Ջանգեզուրը, և միայն մի փոքրիկ հատվածում են տրվում բարբառով երգ-խաղիկները, որոնց մասին որևէ մեկնաբանություն չի տրվում։ Անգամ նշված չէ, թե ով է առացողը, որ բնակավայրից է գրի առնվել և այլն։

⁹ Ա. Բակունցին քննադատել են «Մթնածորի չարքը» և մյուս պատմվածքների բաց տեսարանների համար։ Բայց չպետք է մոռանալ, որ հեղինակը նման տեսարանների նկարագրության հանդիպել է իր հարազատ ժողովրդի բանահյուսության մեջ, ինչը անսովոր կամ զարմանալի չի եղել ոչ մեկին։ Բանահյուսության մեջ արտացոլված նման պատկերները, անշուշտ, տպավորիչ են եղել արձակագրի համար, որոնք էլ ստեղծագործության տարբեր մասերում արտահայտվել են գեղարվեստական մշակմամբ։

պատասխան մասում տեսնում ենք տղայի՝ ընտանիք կազմելու պատրաստակամությունը. նա աղջկա մոտ գալու էր նախ օգնելու համար.

Մեր տոննր ճրոճրոտում ա, մին ջամ ճիրսիվ կ'ամ-կ'ամ,
Մեր շօնը հըչմաչում ա, մին ճօթ հացավ կ'ամ-կ'ամ,
Մեր վօրցակը ծըկըլթում ա, մին հափուռ կօտավ կ'ամ-կ'ամ,
Մեր խօխերքը լըցմացնում են, մին ջուբ չամչավ կ'ամ-կ'ամ,
Մեր ճըրաքը տըզվըզում ա, մին բժուրիկ նօթավ կ'ամ-կ'ամ,
Մեր կըրակը թըսվըսում ա, մին պեռնը փեղավ կ'ամ-կ'ամ,
Մեր պառավը մըռթմըռթում ա, մին հաց մեղրավ կ'ամ-կ'ամ,
Մեր հիլիվերը տընքտընքում ա, մին կօլա կինավ կ'ամ-կ'ամ:

Գալու էր ջամ /ջրաման/ ջրով, որ մեղմացնի դռան ճռռոցը, ճոթ /կտոր/ հացով՝ շանը մտերմացնելու համար, հափուռ /բուռ/ կոտով՝ հավերի կչկչոցը կտրելու համար, ջուբ /գրպան/ չամչով՝ երեխաներին գրադեցնելու համար, բժուրիկ /բաժին/ նոթով՝ ճրագը ողջ գիշեր վառ պահելու հույսով, բեռ փայտով՝ մարմրող կրակը թեժացնելու նպատակով, հաց-մեղրով՝ պառավի սիրտը շահելու համար, կոլա /սափոր/ գինով՝ հալևորին խմեցնելու ու քնեցնելու հույսով:

Աղջիկը բարդացնում է խնդիրը և կարծես ստուգում տղայի կարողություններն ու հնարավորությունները: Այս անգամ էլ ձի-անքն են խրխնջում, հորթերը կմկմում են և այլն.

Մեր ծիանքը խըրխընջում են, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ,
Մեր եզինքը պըռմըռանչում են, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ,
Մեր կովերը [վեխճարնին] մըկմըկումեն են, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ,
Մեր վերթերը կըմկըմում են, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ,
Մեր կյո՛ւմաշնին դըռընկում են, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ,
Մեր իշերը զըռզըռում են, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ,
Մեր նանին ճըղճըղում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ,
Մեր ախպերը կըռվըռում ա, ա՛ տղա, տո՛ւ մի կ'սիլ-կ'սիլ:

Չափազանց հետաքրքրական է ավարտը. տղան բանակովում հաղթում է և մտնում տուն, որովհետև բոլոր խնդիրների համար նա

լուծման իր ճանապարհն ուներ, իսկ աղջիկը չընդունել չէր կարող.
«Տղան վերջը էլի ասում է, հաղթում և տուն մտնում».

Ծեր ծիանքը խրրիւրնջում են, մին խուռում յօնջավ կ'սւմ-կ'սւմ,
Ծեր եգինքը պըռմըռանջում են, մին ճուվարան տաւրմանսւվ
կ'սւմ-կ'սւմ,

Ծեր կովերը [վէխճարնին] մըկմըկումեն են, մին խուռում
խօտավ կ'սւմ-կ'սւմ,

Ծեր վերթերը կըմկըմում են, մին քթիչ կաթնավ կ'սւմ-կ'սւմ,

Ծեր կյունաշնին դըռնկում են, մին խուրցը փօքավ կ'սւմ-կ'սւմ,

Ծեր իշերը գըռգըռում են, մին կուշ կարավ կ'սւմ-կ'սւմ,

Ծեր նանին ճըղճըղում ա, շ[Շ]ամախի քթկալավ կ'սւմ-կ'սւմ,

Ծեր ախպերը կըռվըռում ա, մին մըղայի փափախավ կ'սւմ-
կ'սւմ:

Երգը մի նմուշ է, որ կատարվել է տոնական արարողու-
թյունների ժամանակ: Նման երգերի էությունն այն է, որ տեղում
պիտի ստեղծվեին հարցադրումներն ու պատասխանները: Խաղում
կհաղթեր նա, ով ավելի սրամիտ էր:

Սրանք վիճակի երգերի պատառիկներ են, որոնցից յուրա-
քանյուրը, հավանաբար, ունեցել է իր ամբողջական տեսքը:
Այդպիսիք հիմնականում Ջանգյուլումի և այլ արարողակարգերի
ընթացքում երգված երգեր են և արտահայտում են սյունեցի մարդու
կյանքն ու ձգտումները, զբաղմունքն ու իդեալները: Ահա դրանցից.

Անումս հա՛ անումս,

էս հ՞նչ դարդեր ա ջանումքս,

Յէս իմ մէռնէլի դարդքս քաշում չէմ,

Կըմնա մաղթուն անումքս:

Կյութանը հանդին լարած,

Մըշըկնին միչին շարած,

Մը՛ղափուն դուք [թո՛ւք] ա՛ մըշըկնին,

Մն հողին գերի տա՛նա՛ծ:

Գորիսի բանահյուսությանը մասնակիորեն անդրադարձել է

նան Ս. Լիսիցյանը¹⁰ «Զանգեզուրի հայերը» աշխատության «Հավատալիքներ» գլխում: «Ժողովրդական տոներ» ենթագլխում ներկայացնում է ավանդական կարգուկանոններ, ծիսական արարողակարգեր, որոնք կազմակերպվում էին բանահյուսական պատումներով: Այսպես՝ Նավասարդի տոնին «առավտը վաղ տնեցտուն իրար լուսեր էին ուղարկում-մեծմահու վրա ջուռա-ջուռա, խօշկաբար, միրգ, եփած հավ, կորկոտ գեղեցիկ շարած և մեջտեղն ու ափերին մոմեր վառած: Այդ ամենը հետո միասին էին վայելում»¹¹՝ երգերի, խաղերի, նվագակցությունների ներքո: Դրանից բացի բավականին հետաքրքրական է Չարչարանաց շաբաթի նկարագրությունը: «Չիք չըրըքշարթիին» ամբողջ տունը դուրս էր գալիս, և կանանցից մեկը կանգնում էր հերթի մոտ, մյուսը՝ տան մեջ՝ հերթի տակ: Տանիքին կանգնածը մի քար տանում-բերում էր հերթի շուրջը ու հարցնում.

«Աղամ, աղամ . . . հի՞նչ աղամ»,

Ներքևից մյուսը պատասխանում էր՝

-Մօկն աղա՛ :

«Աղամ, աղամ . . . հի՞նչ աղամ»:

-Վօթիս աղա՛ :

«Աղամ, աղամ . . . հի՞նչ աղամ»:

-Մն պըղօճ աղա՛ :

«Աղամ, աղամ . . . հի՞նչ աղամ»:

-Պուճուղ տակերը աղա՛¹²:

Երգ-խաղը բավականին հին է: Փաստորեն փորձում էին ոչնչացնել այն ամենը, ինչի բազմացումը օգտակար և ցանկալի չէր:

Հետագայում Գորիսի բանահյուսության ուսումնասիրության համար կարևոր և գիտական առումով հիմնադրային գործ կատարեց Ալ. Մարգարյանը՝ «Գորիսի բարբառը» մեծածավալ աշխատանքով: Այս գրքի շնորհիվ կանոնավորվում են Գորիսի բանահյուսական երկերի գրային ու արտահայտչական ձևերը: Հետագա բանահավաքչական աշխատանքների համար ևս հիմնավոր աշխատություն կարող է լինել այն, քանի որ հեղինակը

¹⁰ Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Ե., 1969:

¹¹ Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 260:

¹² Նույն տեղում, էջ 690

այստեղ Գորիսի բարբառի քերականական համակարգի, բառաֆոնդի ուսումնասիրությանը զուգահեռել է բանահյուսական նմուշներ. «Ականավոր հայագետ-լեզվաբան Ալ. Մարգարյանն իր գիտական և մանկավարժական գործունեությանը զուգահեռ գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, զբաղվել Գորիսի ժողովրդական բանահյուսության հարստացման խնդիրներով՝ պատմության խորքերից հանելով և ընթերցողի լայն շրջանների սեփականությունը դարձնելով հին գրույցներ ու ասքեր, տաղեր, այլ ստեղծագործություններ»¹³:

Ալ. Մարգարյանը ձգտել է «հաղթահարել այն մեծ դժվարություններն ու բարդությունները, որ հրապարակի վրա քիչ թե շատ ուշագրավ հետազոտություններ և հատկապես բավարար չափով բարբառային գրավոր նմուշներ¹⁴» չեն եղել: Մենագրության մեջ մոտ քառասուն էջ հատկացված է բանահյուսական նմուշներին՝ հավաքված Գորիսի շրջանի շուրջ 25 բնակավայրերից: Ալ. Մարգարյանը ոչ միայն ինքն է հավաքել, մշակել ու հրատարակել մինչ այդ հանրությանն անհայտ ժողովրդական բանահյուսության հիանալի նմուշներ, այլև ուսումնասիրել և առաջին անգամ ընթերցողին է ներկայացրել Ակսել Բակունցի «Վանդունց Բաղին» պատմվածքը Քարաշենի խոսվածքով, Ս. Խանգաղյանի «Թթենին Քարահունջում» պատմվածքը՝ Քարահունջի խոսվածքով, Գուսան Աշոտի «Ջանգեգուրի չոլ չոլերը ծաղկալ են» երգը, որոնք տեղի բանահյուսության հրաշալի նմուշներ են կամ քաղված են դրանցից¹⁵:

Վերոբերյալներից միայն Գուսան Աշոտի ստեղծագործությունն է չափածո: Ահա մի հատված.

«Ջանգեգուրի չճր չճլերը ծաղկալ են,
Յարիս օբան հեն ա կանաչ սարումը,
Էլ ծոն չի կյսմ, մեծ ըռոնին թախկալ ա,
Մարդկանց քեփը շատ լավ ա էս տարումը...»:

Մյուսները հիմնականում գրույցներ են, զվարճախոսություններ, որ արտահայտում են այս տարածաշրջանի մարդկանց առօրյան, կենցաղը, սրամտությունները, որոնք էլ իրենց հերթին

¹³ Է. Չոհրաբյան, Գորիսի ժողովրդական բանահյուսություն, Ե., 2004, էջ 4:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

լեցուն են խորհուրդներով, թևավոր խոսքերով, ժողովրդական հրաշագեղ բառ ու բանով, ինչպես՝ «-Թող կիրին, սեվրնան սիպտակը ճընաչին, վեր յենդան կիրեզմանըս անի՛ծին վէ»¹⁶, «Խուխաստար էմ, դորուղչութանավ կարալ չեմ խօխերքըս յօլա տանեմ» և այլն¹⁷:

Գորիսի բանավոր գրույցներին վերաբերող առանձին աշխատանք ունի Է. Զոհրաբյանը՝ «Գորիսի ժողովրդական բանահյուսություն» վերնագրով: Այստեղ ամբարված են հիանալի նմուշներ, և հեղինակը, փաստորեն, ոչ միայն մոռացությունից փրկել է Գորիսի շրջանի բազմաթիվ խաղիկներ, այլև այստեղ է հավաքել անվանի և ոչ անվանի հեղինակների՝ տարբեր ժամանակներում գրված ստեղծագործություններ: Այս աշխատանքի նախաբանում ներկայացնում է Գորիսի ժողովրդական բանահյուսության պատմությունը, ակունքները, նշում է ասացողների, բանահավաքների անուններ:

Բանահավաքչական արժեքավոր աշխատանքներ են կատարել նաև Գորիսի տարածաշրջանի շատ գրող-մտավորականներ, որոնք ստեղծագործելուց զատ խնամքով հավաքել են իրենց համայնքների բանահյուսական նմուշները:

Այս առումով հիշատակելի է Գրիգոր Կարապետյանի «Հայկական անեկդոտներ և հանելուկներ» աշխատությունը՝ չորս գրքերով, ռուսերեն և հայերեն: Այս հատորներում ընդգրկված են հայկական տարբեր բնակավայրերի բանահյուսական նմուշներ, որոնց շարքում քիչ չեն Գորիսի տարածաշրջանում ստեղծվածները:

Նախորդ դարի վերջին քառորդից մինչև հիմա Գորիսի տարածաշրջանի բանահյուսական աշխատանքները առանձնակի ուշադրության արժանացան գրող-մտավորականների կողմից՝ Մ. Խանգաղյանի, Գուսան Աշոտի, Է. Զոհրաբյանի, Ալ. Մարգարյան, Ն. Մկրտչյանի, Ա. Շատուրյանի, Լ. Սահակյանի և ուրիշների: Աշխուժացան ոչ միայն բանահավաքչական, այլև բանահյուսական նյութերի մշակման աշխատանքները:

Դժվար և երկարաժամկետ աշխատանք է պահանջվում Սյունիքի և նրա շրջանների՝ այդ թվում Գորիսի բանահյուսությունը ուսումնասիրելու համար: Դեռևս ուշադրության կարիք ունեն ոչ

¹⁶ Ա. Մարգարյան, Գորիսի բարբառ, էջ 280:

¹⁷ Նույն տեղում, էջ 285:

միայն առանձին անհատների բանահյուսական աշխատանքները և դրանց լուսաբանումը, այլև անվանի հեղինակների այն ստեղծագործությունները, որոնք ունեն բանահյուսական հիմք:

**Лусине Нерсисян
Горис**

**Фольклор Гориса
Резюме**

Фольклор Сюника еще окончательно не комбинирован и не изучен. Эта работа является первой попыткой поставить фольклорные образцы, созданные в Сюнике, особенно в Горисе, на научной основе.

**Lusine Nersisyan
Goris**

**Goris folklore
Summary**

Syunik folklore has not been fully combined and studied yet. This work is an attempt to put the issues regarding the folklore examples created in Syunik, particularly in Goris, on a scientific ground for the first time.

ԴԵՒԻ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ԳՈՐԻՍՈՒՄ ԳՐԻ ԱՌՆՎԱԾ
ԵՐԿՈՒ ՀԵՔԻԱԹՈՒՄ



Սոնա Ալավերդյան
Գորիս

sona.alaverdyan.2013@mail.ru

1835 թ. լույս է տեսնում Հակոբ Գրիվի «Գերմանական առասպելաբանություն» աշխատությունը, որով էլ համեմատական լեզվաբանության հետ գրեթե միաժամանակ առաջանում է համեմատական առասպելաբանությունը: Համեմատական լեզվաբանության առաջացմամբ հնարավոր է դառնում «իրար հետ համեմատելով զանազան լեզվակից ազգերի գրույցներն ու առասպելներն ու առասպելաբանական լեզուն»¹ բացատրել, որոշել «դրանց սկզբնական հիմքը»²:

Հայտնի է, որ հայերը իրենց ինքնուրույն գոյության ընթացքում մեկուսացած չեն եղել և ակտիվ փոխշփումներ են ունեցել հատկապես հույների և իրանցիների հետ: Զգալի է մասնավորապես իրանցիների մշակույթի ազդեցությունը կենցաղի, սովորույթների, բարքերի, լեզվի (հիշենք հայերենում իրանական փոխառությունների մեծ թիվ լինելը) և այլնի վրա:

Պարսկական ազդեցությունը զորեղ է եղել նաև կրոնական հավատալիքների ու պաշտամունքի նկատմամբ (իրանական ծագում ունի մեր դիցանունների մի մասը՝ Արամազդ, Անահիտ, Վահագն, Միհր, Տիր): Խոսելով այս մասին՝ Մ. Աբեղյանը նշում է. «Պարսիկներից են անցել հայերին նաև որոշ հավատալիքներ բարի ու չար ոգիների մասին, ինչպես են հրեշտակ, դև, վիշապ, շահապետ, պարիկ և այլն»³: Փաստորեն տեսնում ենք, որ բացի դիցանուններից հայերենում իրանական են կրոնի և հավատալիքների հետ կապված բազմաթիվ կարևոր բառեր, ինչպիսիք են՝ **բագին, զոհ, պաշտել, խոստո-**

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 10:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 29:

վանել, օրհնել, նգովել, դրախտ, դժոխք, հրեշտակ, դև, հմայել, կախարհ, մարգարե, հրաշք, հրեշ և այլն⁴:

Սույն հոդվածում անդրադառնալու ենք ոգիներից դևին՝ օգտագործելով Գորիսում գրի առված երկու հեքիաթները:

Դևերը գերբնական ոգիներ են, որոնք տարածված են ինչպես աստվածաբանական կոնտեքստներում, առասպելաբանություններում, այնպես էլ ժողովրդական բանահյուսության մեջ:

Նախ քննենք «դև» բառի ծագումը: Բառն իրանական փոխառություն է (dēv), որն էլ հնդեվրոպական *deivos- նախաձևից է առաջացել (որից՝ հայերեն տիւ «ցերեկ» բառը): Հետաքրքիր է, որ հնդիրանական լեզուների երկու ճյուղերում հնդեվրոպական այս արմատի ժառանգները հակադիր նշանակություններ ունեն. հնդկական դևները աստվածներ են, իսկ նրանց համապատասխան իրանական դևերը՝ հրեշներ:

Հնդեվրոպական մյուս լեզուներում էլ այս բառը հիմնականում նշանակում է «աստված, աստվածություն» (հունարեն, հնդկերեն, լատիներեն և այլն), սակայն Իրանում զրադաշտականության տարածման պատճառով հեթանոսական շրջանի աստվածությունների այս անվանումը ստացել է բացասական երանգավորում և դարձել չար ուժերի խորհրդանիշը: Ըստ իրանական վաղ աշխարհընկալման՝ daiwa-ները եղել են կարևոր աստվածություններ: Հետագայում զրադաշտական կրոնի դուալիստական ընկալումն է գերիշխում և հակադրության մեջ են դրվում չարն ու բարին, որոնցից մեկը հսկում է հավասարակշռությունը, իսկ հաջորդը քառսի պաշտպանն է: Զրադաշտական վարդապետության մեջ այն արտացոլվում է Ահուրամազդայի (բարի սկզբունքի մարմնացում) և Ահրիմանի (դևերի դևը) հակադրությամբ:

Պատահական չէ ուրեմն, որ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» «դև» բառահոդվածի նշանակության բաժնում կարդում ենք մի դեպքում «բարի ոգի, հրեշտակ»⁵, մյուս դեպքում՝ «սատանայ, չար ոգի»⁶, և մի երրորդ դեպքում՝ «կուռք»⁷:

⁴ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 576:

⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 657:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 658:

Իսկ ահա 15-րդ դարի իտալացի փիլիսոփա, Ֆլորենցիայի Պլատոնյան Ակադեմիայի հիմնադիր և հայր Մարսիփնո Ֆիչինոն պնդում է, թե աշխարհը կառուցված է աստիճանավոր հինգ մակարդակներից՝ Աստված, սատանա, ոգի, դև, նյութ-մատերիա, որոնց կապող օղակը ոգին է⁸:

Փաստորեն ոգին կարող է տարբեր **ենթատեսեր** ունենալ, և այդ ենթատեսերը՝ «Աստված»-ը, «սատանա»-ն, «ոգի»-ն, «դև»-ը, «նյութ-մատերիա»-ն, սկզբում կարող են միաձուլվել հանդես գալ իբրև մեկ ընդհանուր ոգի, ժամանակի ընթացքում տարանջատվել, մարմնաշին նոր ու առանձին վիճակներ ստանալ, բայց անգամ այս դեպքում հիմքում շարունակեն ունենալ նախասկզբնական ինֆորմացիան:

Վերը ասվածի համար բերենք մի օրինակ: Հայտնի է, որ ժողովրդական գրեթե բոլոր բանահյուսություններում ժողովուրդը սատանային, չարքերին, դևերին, վիշապներին ավելի ներդամտորեն է մոտեցել չնայած նրան, որ դրանք աստվածաբանական հաստատված չարի մարմնացումներ են ընկալվել:

Ուրեմն քննության առարկա դարձնելով Հայ ժողովրդական հեքիաթների VII հատորում ընդգրկված, Գորիսում գրի առնված երկու հեքիաթները՝ մեր նպատակն է ուսումնասիրել չար ոգիներից դևի կերպարը՝ այլ տեսանկյունից ներկայացնելով նրան, այսինքն՝ անդրադառնալ միայն նրա հումանիստական կողմին:

Առաջին հեքիաթը, որին պիտի անդրադառնանք, 1947թ. Սերո Խանգադյանի կողմից գրառված **«Քաջանց թագավորը»**-ն է, որի պլոտեն հետևյալն է: Երեք եղբայր ամուսնանում են երեք քույրերի հետ: Ամուսնությունից առաջ մեծ և միջնեկ քույրերը իրենց ապագա ամուսիններին դժվար իրականացվող խոստումներ են տալիս (մեծը՝ «Ես խալի կյործող եմ, էտ խալիտ վեր փռռես, թաքավերին հիշքան ժողովուրթ օնի, յիրան կընըստի, հալա մըն պան էլ էվել կմնա»⁹, միջնեկը՝ «Ես նրհենց խորակ կեփեմ, վեր թաքավերը ռւրան ումբրումը վեշ կերալ ա, վեշ տեսալ վեշ էլ լսա լ»¹⁰): Քույրերից միայն փոքրն է ամուսնությունից առաջ տված խոստումը իրականացնում և զույգ երեխա ունենում, ինչն էլ շարժում է մեծի և միջնեկի նախանձը: Նրանք կաշառում են տատմորը, որն էլ «խեխճին

⁸ Ս. Հակոբյան, Փիլիսոփայության տեսություն և պատմություն, Ե., 2009, էջ 93:

⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 7, Ե., 1979, էջ 398:

¹⁰ Նույն տեղում, էջ 399:

ըրկոքան խուխորցը տանում ա քյոնցմւն քոլը»¹¹: Բայց հայտնվում է **կաղ դևը**, որը, տ եննելով երկու երեխաներին այդտեղ գցված, վերցնում և տանում է տալիս Քաջանց թագավորին:

Ո՛վ է այս դևը, որ ոչ միայն բացասական գույներով չի ներկայացվում, այլև, ընդհակառակը, փրկող գործառույթ է իրականացնում:

19-րդ դարի երկրորդ կեսին Գարեգին Սրվանձտյանցը գրի է առել մի ավանդապատում Սուրբ Կարապետ վանքի կաղ դևի մասին, որտեղ ասվում է.

Սուրբ Լուսավորիչ ժողովեց դիվան լցեց զընդան.

Թոփալ դևն եկավ յաման

Ասաց, զիս մի՛ դներ զընդան.

Ես կեղնիմ սուրբ Կարապետու փոշեհան.

Տանիմ թափեմ Փրե պաթման.

Մինչ օր Քրիստոս գա դատաստան¹²:

Իսկ Հոգոց վանքի արջի գերեզմանի մասին խոսելիս Ե. Լալայանը գրում է. «Հոգոց վանքը կառուցանելիս մերձակայ այրում բնակուող դևերը շարունակ եկել՝ շինուածը քանդել են: Երբ շինողները յուսահատուել են, Տիրամայրը երևացել է նրանց և ասել, թե մի օրում շինեցէք վանքը և օծեցէք, որպէսզի դևերը չկարողանան մօտենալ: Երբ վանքը շինել և օծել են, դևերը հալածուել, փախել են, միայն մինը ոտը կոտրել է և չի կարողացել փախչել, աղաչել է, թե իմ կեանքը ինայեցէք, ես կը ծառայեմ վանքին, նրա թոնրի մոխիրը կը տանեմ կածեմ Փրաբաթման, որ գտնուում է Սղերդի Թուլլահ գիւղի տակ: Այդ կաղ դևին չեն վնասել, և այդ օրուանից մինչև այժմ Հոգոց վանքի թոնիրներում երբէք մոխիր չի մնում, նա հաւաքում, տանում, Փրաբաթման գետն է ածում»¹³:

Տեսնում ենք, որ դևը (տվյալ դեպքում՝ կաղ դևը) հնարավորինս մարդկայնացել է. նա օգտակար է, որովհետև փոշեհան դեր ունի, և իր գործը, ի դեպ, բավական պարտաճանաչ ու պատշաճ կերպով է անում, այնպես որ երբէք մոխիր չի մնում թոնիրներում:

Իսկ ահա հեքիաթի մեջ կաղ դևը, առանց որևէ մեկի դրդման, հրահանգի կամ պատվերի, փորձում է փրկել անօգնական երեխա-

¹¹ Նույն տեղում, էջ 400:

¹² Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 2, Ե., 1982, էջ 93:

¹³ Ե. Լալայան, Վասպուրական, էջ 49: <http://ethno.asj-oa.am/300/1/20.pdf>

ներին: Այստեղ դեր մարդկայնանալով վեհանում է, բայց հետաքրքիրն այն է, որ երբ նա երեխաներին տանում է թագավորի մոտ (որ մարդկային նորմալ գոյություն է), թագավորը պատվիրում է. «Էս տղաս նա ախճիկըս ըշտեղան պերալ ըս, տար ընդեղ էլ կուրցուրու»: Մարդու (թագավոր) և դևի հա մեմատության ժամանակ դեր փաստորեն բարձրանում է: Բայց չենք մոռանում, որ դեր մարդկայնացել է ու պիտի հնազանդվի: Ահա թե ինչու, նա ենթարկվում և կատարում է թագավորի պատվերը:

Հաջորդ հեքիաթը «**Թաքավորի տղան**» է, որը 1947 թ. կրկին Ս. Խանգադյանն է գրի առել:

Մի թագավոր երեք տղա և երկու աղջիկ է ունենում: Մեռնելիս պատվիրում է, որ տղաները ամուսնանալուց հետո իրենց քույրերին էլ «մարդի տան». «ըռաչի դո՞նումը հու եկը ծեր քվորցան ուզվի, ընդան էլ կտաք, հինչ օգում ա ինի»¹⁴: Դուստրերից մեկին տղաները, ըստ հոր պատվերի, տալիս են առաջին եկողին՝ դևին: Որոշ ժամանակ անց փոքր տղան իր խնդիրները լուծելու համար պատահականորեն հայտնվում է մեծ քրոջ տանը: Քույրը վախենում է, որ դեր կարող է գալ և ուտել եղբորը: Բայց դեր, տեսնելով տղային, «վընդը-ծերքն ա ինգում, թա. – Պարով ես եկալ, իմ ազիզ հաներ, մըն ասի տեսնամ հինչ քամի յա քեզ պերալ էս վերանա ա-շխարս՝ իմ դևերի թաքավերությունը»¹⁵: Փոքր եղբայրը պատմում է իր խնդիրների մասին, որոնք դժվար լուծելի էին, և դեր պատ-րաստակամություն է հայտնում՝ անելու հնարավորը և օգնելու նրան: Իրենից մի փունջ մազ է պոկում, տալիս տղային. «Քել ծեռ-քիտ պահի, հեփ վեր նեղը կինգես, հարկավեր կկյամ, մագս տո՛ւրո՛ւր կտաս, կիկյամ»¹⁶:

Հեռանալով դևի մոտից՝ փոքր տղան ծանր դրության մեջ է հայտնվում: Նշանածը հարցնում է. «Այ մարթ, բա ի՞շկի քեզ մըն ծանոթ-բարիկամ չօնե՞ս»¹⁷: Տղան, հիշելով «ո՛ւրան փեսա դեր» և նը-րա տված մագափունջը, շարժում է այն: Դեր իսկույն հայտնվում է և խնդիրները վերացնում:

¹⁴ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 7, Ե., 1979, էջ 417:

¹⁵ Նույն տեղում, էջ 421:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 423:

Այս հեքիաթում դևի կերպարի դրական երանգները աճման կարգով մեծանում են: Կետերով ներկայացնենք կերպարի ընկալման ընթացքը:

1. Սկզբում տեսնում ենք, որ դևը այնքան էլ սարսափելի չէ: Այս է պատճառը, որ տղաները համաձայնվում են իրենց քրոջը նրան կնության տալ:

2. Դևը իր տանը սիրով և ջերմությամբ հյուրընկալում է աներձագին՝ հակառակ կնոջ վախերի: Այստեղ հետաքրքիրն այն է, որ կինն է դևին ներկայացնում իբրև վախ ու սարսափ տարածող, այնինչ դևը իր պահվածքով հակառակն է ապացուցում առաջին հերթին կնոջը, ապա՝ կնոջ եղբորը:

3. Դևին մենք տեսնում ենք խորհրդատուի դերում. նա նախագգուշացնում է տղային սպասվելիք վտանգների մասին:

4. Դևը ներկայանում է իբրև իր օգնությունը բարեհաճորեն առաջարկող: Նա իր մարմնից մազեր է պոկում և տալիս մի մարդու, որը իր կնոջ եղբայրն էր: Սրանից կարելի է ենթադրել, որ դևը նաև սիրել կարող է. նա իր կնոջ նկատմամբ ունեցած սիրուց էր օգնում կնոջ բարեկամին, ուրեմն և իր բարեկամին:

5. Դևը ներկայանում է իբրև փրկիչ: Նա հասնում է և նեղ դրության մեջ հայտնված տղայի կյանքը փրկում:

6. Դևն է տղայի համար դառնում բարեկամ, որովհետև եթե մինչ այդ միայն դևն էր իր աներձագին ընկալել հարազատ, ապա տղան օգնության ժամանակ նշանաձի հուշումից («բա իշկի քեզ մըն ծանոթ-բարիկամ չօնե՞ս») հետո հիշեց, և հենց այդ պահին էլ դևը ներկայացավ նրա համար այն բարեկամը, որ պիտի գար ու օգներ:

Ամփոփելով երկու հեքիաթները՝ կարող ենք ասել, որ դևերը ժողովրդի մեջ պահպանել էին սկզբնական բարի և լուսավոր աստվածներ լինելու ինֆորմացիան, և ժողովուրդն էլ նրանց ընկալում էր նաև իբրև խելացի, խիզախ, ուժեղ (հիշենք, որ մեր էպոսի Գ. Սրվանձտյանցի մշակման մեջ Դավիթը և Մասնա «ճրժեր»-ը «դիւանական են» (դևերի գավակ են)), երբեմն էլ՝ մարդասեր արարածներ:

**Сона Алавердян
Горис**

**Гуманистические аспекты демона в двух сказках написанных в
Горисе
Резюме**

Данная статья изучает одну из духов армянского народа - демона, используя две сказки, написанные в Горисе. Цель статьи состоит в том, чтобы показать, что демоны хранили информацию о том, что они якобы были добрыми и светлыми богами. Поэтому, чтобы показать образ демона с другой стороны, мы предоставляем только его гуманистическую сторону.

**Sona Alaverdyan
Goris**

**The demon's humanistic aspects written in two tales in Goris
Summary**

The given article examines demon's spirit in Armeninan folk beliefs using two tales written in Goris. The article contains the information about the demons being kind and light gods. Thus, in order to present demon's character from another point of view, we have presented only its humanistic aspects.



Համլետ Գևորգյան
Երևան

hamlet.gevorgyan.51@mail.ru

Զանգեզուրի սահմանամերձ շրջաններում Հայոց ազատամարտի նշանավոր ռազմիկ Մեքաստացի Մուրադի գլխավորած զանգեզուրյան մարտական ուժերի հուժկու հարվածների հարկադրանքով թուրք պարագլուխները ճարահատյալ պարզում են սպիտակ դրոշը և հայերի նկատմամբ որևէ թշնամական քայլ չձեռնարկելու երդումով ու խոստումով հաշտություն են խնդրում: Այդ հաղթական կռիվներից հետո Մուրադը սահմանների պաշտպանությունը հանձնարարում է սահմանամերձ գյուղերի ինքնապաշտպանական ուժերի տնօրինությանն ու դարձյալ վերադառնում Ղափան:

Արդեն հասունացել էր գլխավոր խնդիրը լուծելու ժամանակը: Անհրաժեշտ էր հարձակվել և ոչնչացնել թուրք ցեղապետների՝ բեկերի որջը:

Ղափանի շրջանում իրենց ավազակային գործողություններով հայտնի Տանձավեր գյուղի բեկեր Սուլթանովները, թուրք հրոսակախմբերի գլուխն անցած, ամիսներ շարունակ անպատիժ ասպատակում էին հայոց գյուղերը: Օգոստոսի 1-ին թուրք զինյալ խմբերը հարձակվում են Տաթև գյուղի վրա և հանդիպելով տեղի քաջակորով գյուղացիների դիմադրությանը՝ նահանջում: Չանցած մի քանի օր ավելի մեծաքանակ ուժերով վերսկսելով հարձակումը՝ թուրքերը թալանում և մոխրակույտերի են վերածում հայերի ամառանոցները:

Թուրք ավազակախմբերի գազանային արարքներին անհրաժեշտ էր վճռական հակահարված տալ, և օգոստոսի 8-ին թշնամու ավազակաբայությունները ոչնչացնելու դիտավորությամբ Մուրադը, մարտական ջոկատի գլուխն անցած, արշավում է Տանձավեր և Աղվանիկ գյուղերը, ուր կենտրոնացել էին Սուլթանովների գլխավոր ուժերը:

«Մուրատը բաժանեց իր խումբը մի քանի տասնեակների: Առն իր տասնեակով գրաւեց գիւղի աջ կողմի բարձր դիրքը: Մի ուրիշ տասնեակ Սմբատ Եղիազարյանի ղեկավարութեամբ անցաւ գիւղի ձախ կողմը: Մուրատը, վերցընելով իր հետ Դրոյի, Մկրտիչի, Կնեազի, Կայծակ Առաքելի և Արսէնի տասնեակները, մտաւ գիւղը ...»¹:

Հարձակումը սկսելուց առաջ, համաձայն կովի մասնակից Սահրադի (Մկրտիչ Աղամալյան) վկայության, Մուրադը խստագույնս պատվիրում է. «...Ձեռք չտալ կնոջ, երեխայի, ծերերի և թալանի»²:

Քեռին, իր խմբով դիրքավորվելով գյուղի մոտակա բարձունքներին, պիտի հսկեր թուրքական այլ ուժերի տեղաշարժերը, որոնք կարող էին անսպասելիորեն հայտնվել և ծանր կացության մեջ գցել հայ զինվորներին: Ապահովելով իր մարտախմբի թիկունքը հնարավոր հարձակումից՝ Մուրադի հրահանգով մարտական խմբերը մրրիկի ուժգնությամբ ներխուժում են թուրքերի որջը:

Տանձավեր և Աղվանիկ գյուղերի կռիվների լուսաբանմանը նվիրված հուշագրությունում ներկայացնելով այդ ուշագրավ պահը՝ Սահրադը գրում է. «Հնչեց պատերազմական փողը: Տասնապետները առանց կանգ առնելու իրենց խմբերով, ուռաներով մտան գիւղերը: Հրդեհը սկսեց լափել թշնամու տները: Դիմադրողները իսկոյն եւ եթ ընկնում էին քաջերի գնդակներից: Այն բեզերը ու աւագակապետերը, որոնք ամբողջ երկու տարի սարսափի մէջ էին թողել, այժմ մի քանի բոպէ չէին կարողանում դիմանալ հայդուկի դիմադրութեան, անամոթաբար փախչում էին՝ թողնելով ամեն ինչ»³:

Չանցած մեկ ժամ ահեղ դատաստանին արժանացնելով թուրք բեկերի գլխավորած ավագակաբարո ամբոխին՝ հայ մարտիկները, բեռնված թշնամուց գրաված զենքով ու զինամթերքով, հեռանում են այրվող գյուղերից:

Տանձավեր և Աղվանիկ թուրքաբնակ գյուղերի կործանումը չափազանց կարևոր էր: Հայ ինքնապաշտպանական ուժերը կարողանում են վերջնականապէս ջախջախել հայկական բնակավայրերի վրա հարձակումներ ձեռնարկող թուրքական ցեղախմբերի գլխա-

¹ «Դրոշակ», 1906, թիւ 9, էջ 137:

² ՀՅԴ ԿԱ, թժ. 409, գ. 4, էջ 1:

³ Նույն տեղում, էջ 2:

վոր կազմակերպիչներին և առաջնորդներին՝ հանրահայտ ավագակապետեր Մուլթանովներին:

Օգոստոսի 2-ին թուրքական մեկ այլ հրոսակախումբ, հիմնականում Զանգեզուրում իրենց ավագակալին և թալանչիական գործողությունով հանրահայտ Ղաթար գյուղի բնակիչները, թարաքամաների (քոչվորներ) ձիավորների համագործակցությամբ հարձակվում են Ղափանի Մելիք-Ագարյանի գործարանի և Բեխ հայկական գյուղի վրա: Իսկ մի քանի օր անց՝ օգոստոսի 11-ին, թուրք ավագախմբերը, հավաքվելով թուրքաբնակ Ղաթար գյուղում, պատրաստվում են հարձակվել ու հողին հավասարեցնել Կավարթ գյուղը: Տեղեկանալով թուրքերի մտադրություններին՝ Մուրադը որոշում է կանխել հակառակորդին և ընդամենը 20 ձիավորներով գալիս է Կավարթ և իր ջոկատը համալրելով տեղի մարտունակ ուժերով՝ արշավում է թուրքական ուժերի հավաքատեղիի վերածված Ղաթար գյուղի վրա: Առավոտյան, երբ թուրքերը դեռևս քննարկում էին հայկական գյուղերի վրա հարձակվելու ծրագրերը, Մուրադը հասնում է Ղաթար և մարտախումբը երեք մասի բաժանելով՝ տարբեր ուղղություններից սրընթաց նետվում թշնամու վրա.

«...Մուրատը,- նշում է այդ կոիվը ներկայացնող վավերագրությունը,- հայդուկներով խուժեց գիւղ: Սկսեց կռիւր: Հրդեհը սկսեց կլանել տները: Այս կրակի ու տարափի տակ, որը կարկտի պէս թափում էր թուրքերի տներից, Մուրատը իր հետ ունենալով Աւօին, Մկրտիչին, Կայծակին, Դրօին. ճեղքեցին թշնամու շարքերը ու անցան գիւղի տակը՝ տարածելով մահ ու սարսափ»⁴:

Մուրադի սրընթաց գրոհից մի պահ շփոթահար թուրքերը, վերստին սթափվելով, պատսպարվում են տներում և գնդակների հեղեղով դիմավորում հայ զինվորներին: Հրաշքներ էին գործում ֆիդայիները. փորից վիրավոր Կայծակ Առաքելը, անտեսելով ընկերների թախանձանքները, համառորեն շարունակում է մարտնչել:

Մուրադը, ուշադրություն չդարձնելով թշնամու դիրքերից կարկտի ուժգնությամբ տեղացող գնդակներին, հայտնվում է ամենաշիկացած տեղերում:

⁴ Նույն տեղում, էջ 3-4:

«Կռիւր,- պատմում է Սարհատը,- թշնամու կողմից օրհասական էր: Ժամը 12-ին Մուրատը ձիօ պտտեց դիրքերը՝ խրախուսելով հայդուկներին»⁵:

Հանկարծ կովի ամենաթեժ պահին Մուրադին են ներկայանում գյուղում գտնվող պարսկահպատակ թուրքերը և խնդրում նրանից թույլ տալ գյուղից դուրս բերել իրենց ընտանիքները: Իրոք, զարմանք են հարուցում հայդուկի դրսևորած գթասրտությունն ու ասպետականությունը: Այս պարագայում կարող էր բնավ ուշադրության չարժանացնել պարսկահպատակ թուրքերի խնդրանքը, չէ՞ որ գյուղում նրանց ներկայությունը զուտ պատահական չէր: Բայց նա մեծահոգաբար ընդառաջում է նրանց խնդրանքը և ավելին. «... կարգադրեց կռիւր դադարացնել...Մուրատը առաջարկեց բացի իրանց ընտանիքներից թող դուրս գան գիւղի կանայք, երեխայք և ծերեր: Նրանց երկու հայդուկի հետ ապաօր ճանապարհեցին մօտակա թուրք գիւղը»⁶:

Պարսկահպատակների, ինչպես նաև գյուղի կանանց, երեխաների ու ծերերի դուրս գալուց հետո գյուղում մնում են միայն կովողները:

Անտեղի զոհերից խուսափելու նպատակով Մուրադը երեք անգամ թշնամուն առաջարկում է անձնատուր լինել՝ խոստանալով ինայել հանձնվողների կյանքը, սակայն թուրքերը, մերժելով հայերի առաջարկը, շարունակում են դիմադրել: Պայթուցիկ նյութերով խորտակելով հակառակորդի դիրքերը՝ հայ մարտիկները քաջարի Սեբաստացու առաջնորդությամբ ներխուժում են թշնամու պաշտպանության հանգույցն ու անխնա կոտորում արդեն երկրորդ տարին հայոց գյուղերն ասպատակող Մուլթանովների հրոսակախմբերին:

«Մեր կռիւր,- իր պատմությունը եզրափակում է Սարհատը,- տևեց 15 ժամ, այրեց ամբողջ գիւղը: Մուրատի ռազմագիտական տաղանդն ու սառնասրտութիւնը ու մեր հայդուկային խմբի անձնագոհությունն էր, որ հաղթեց Ղաթարի նման սհագին հուժկու կազմակերպւած գիւղը թարաքամաների (քոչվորներ) հետ միասին:

Այդ օրը թշնամին 300 աւել զօհ տւեց»⁷:

⁵ Նույն տեղում, էջ 5:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 6:

«Մուրատի,- հավաստում է այդ կովի լուսաբանմանը նվիրված մեկ այլ վավերագրությունը,- ռազմագիտական ձիրքի և մի բուռ հայդուկների ոգևորիչ անձնուիրութեան շնորհիւ էր, որ յաջողուեց յաղթել Ղաթարի նման լաւ կազմակերպուած գիւղը ու կոտորել թաւաքամաններին միացած ուժերին»⁸:

Ընդհարումների օրերին, թեև հայ ինքնապաշտպանական ուժերը հսկում էին գավառի սահմանները, այնուամենայնիվ, Ջանգեզուրի տարածքն են թափանցում Բարգուշատի, Ղարաբաղի, Պարսկաստանի կողմերից եկած մահմեդական հրոսակախմբեր, որոնք, միանալով տեղացի թուրքերին, ասպատակում են հայկական գյուղերը: Հայ ինքնապաշտպանական ուժերը հարկադրված գործում են բազմապատկված ծանրաբեռնվածությամբ: Ջարմանք է հարուցում, թե ինչպես է Մուրադը կարողանում ֆիդայիների և Ջանգեզուրի ինքնապաշտպանական խմբերի գլուխն անցած՝ արագ տեղաշարժերով հայոց գյուղերը պաշտպանել մահմեդական ջոկատների պարբերաբար շարունակվող հարձակումներից:

Ամռան ամիսներին Ջանգեզուրի տարածքում և մասնավորապես Ղափանի շրջանում ընթացող մարտերն աչքի էին ընկնում ոչ միայն իրենց սաստկությամբ, այլ նաև աննախադեպ ծավալվածությամբ ու ընդգրկումներով: Մի շարք բնակավայրերում կռիվներն ընթանում են միաժամանակ: Նույն օրերին, երբ Մուրադի գլխավորած մարտախմբերը Տանձավեր և Աղվանիկ գյուղերում տեղի ունեցած գոտեմարտերում ջախջախում էին Մուլթանովների հրոսակախմբերին, դաժան կռիվներ էին ընթանում Քաջարանում: Վերին Ղափանում գտնվող, երեք կողմերից բարձր լեռներով շրջապատված Քաջարան գյուղը, չնայած իր բնական ամուր դիրքին, բավականին վտանգավոր կացության մեջ է հայտնվում: Գյուղը, շրջապատված լինելով թուրքաբնակ բնակավայրերով, փաստորեն, հայտնվում է թշնամական ուժերի կիզակետում: Վերին Ղափանի հինգ գյուղեր էին. «Քաջարանց 75 տուն, Հանդ 35 տուն, Քուրդիկանց 40 տուն, Փուխրուտ 23 տուն և Մագրա 15 տուն»⁹:

Ի տարբերություն թուրքաբնակների, որոնք կենտրոնացված էին մի տեղում, հայկական գյուղերը գտնվում էին միմյանցից զգալի հեռավորության վրա: Հայկական գյուղերի անջատվածության

⁸ «Դրօշակ», 1906, թիւ 9, էջ 139:

⁹ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 6, էջ 1:

աննպաստ իրողությունը լրացուցիչ խոչընդոտներ է հարուցում ինքնապաշտպանությունը առավել ամուր հիմքերի վրա դնելու և վտանգի պահին փոխհամագործակցությունն ու փոխօգնությունը ժամանակին ապահովելու գործում: Չնայած առկա դժվարություններին՝ Մուրադին իր զինակիցներով հաջողվում է տեղի մարտական ուժերի համագործակցությամբ կազմակերպել նաև Վերին Ղափանի գյուղերի ինքնապաշտպանությունը: Համակողմանիորեն արժևորելով այդ տարածքի աշխարհագրական դիրքի յուրահատկություններն ու հաշվի առնելով այն իրողությունը, որ հակառակորդի հարձակման դեպքում թուրքերը, անպայմանորեն հսկողություն սահմանելով հաղորդակցության ուղիների վրա, կանջրպետեն Վերին Ղափանի գյուղերը մեկը մյուսից, Մուրադը հրահանգում է հարևան շրջանի՝ Գենվազի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությանը առաջին իսկ ահազանգի դեպքում անմիջապես շտապել օգնության:

Հայկական գյուղերի բնակիչները, խուսափելով ընդհարումներ սանձազերծելուց, մեծ ջանքեր են գործադրում այլադավան հարևանի հետ հաշտ ու խաղաղ ապրելու ուղղությամբ, սակայն. «...չնայած դրան, Օղջի-Ղաթարի պղնձահանքերը տանող ճանապարհը փակ էր հայերի համար, և պատահած հային որսում, անհետ կորցնում էին կիսաճանապարհին՝ Կոթաթաղ թուրք հասարակութեան հողում՝ Բաղաբերդի հին ամրոցների մօտ»¹⁰:

Նման իրավիճակ, իհարկե, երկար հանդուրժել չէր կարելի: Շուտով Հայիձորի մոտակայքում հայ վրիժառուների գոհն է դառնում թուրքերի գլխավոր պարագլուխներից մեկը՝ օխչեցի Հաջի բեկ Մելիք-Շաֆրիկը, և այդ սպանությունից հետո վերին Ղափանում ժամանակավորապես խաղաղություն է հաստատվում: Ավելին, թուրքերը հայերի զգոնությունը բթացնելու նպատակով հաշտության են կոչում իրենց քրիստոնյա հարևաններին և միաժամանակ գաղտնի տենդագին պատրաստություն տեսնում: Նրանք նպատակադրվում են մեծաքանակ ուժեր կենտրոնացնել և զանգվածային հարձակումներ գործել հայկական գյուղերի վրա:

Նրանց գլխավոր թիրախը պիտի լիներ Քաջարան գյուղը: Հայերը, իրենց հերթին հետևելով թուրքերի տեղաշարժերին, նկատում

¹⁰ Նույն տեղում:

են «...որ Շուբադին գիւղում երևում են օտարոտի անձնատրութիւններ, և ճանաչում են Նախիջևանի գաւառի թևի գիւղից եկած աւագակապետ Սուլէյմանին, Շիրալուն և յայտնի Մուրթուզին»¹¹:

Թուրքերի կողմից ձեռնարկած քայլերը այլևս որևէ կասկած չեն հարուցում, որ նրանց կողմից հայկական գյուղերի վրա իրականացվելիք հարձակումը հաշված օրերի հարց է:

Օգոստոսի 10-ի առավոտյան, վաղօրոք խիստ հսկողություն սահմանելով հայկական գյուղերը միմյանց կապող ճանապարհների վրա, Օխչի, Փիրվարտան, Ատկզ և Շաբադին գյուղերի բազմահազար զինյալներն ու նրանց միացած, Նախիջևանից Ջանգեզուրի տարածքը սողոսկած մահմեդական հրոսակախմբերը նախիջևանցի հայտնի ավագակապետ Սուլէյմանի գլխավորությամբ հարձակվում են Քաջարանի վրա: Գյուղի ինքնապաշտպանական ուժերը, հայտնվելով պաշարման երկաթյա օղակում և մեկուսացած լինելով արտաքին աշխարհից, առանց խուճապի մատնվելու, համապատասխան դիրքեր են գրավում և սառնասրտորեն ընդունում անհավասար մարտը: Երեք օր ու գիշեր քաջարի քաջարանցիները, անկոտրում համառությամբ դիմագրավելով, հետ են մղում թշնամու բոլոր գրոհները ու խափանում գյուղ ներխուժելու նրա փորձերը: Նույն պահին «Վերին Ղափանի հայ գիւղացիները Մազրայի բարձունքներից նկատում են հրեղեն բոցերը, բայց չնչին թիւ կազմելով՝ անկարող են լինում օգնութեան գնալ, մանաւանդ որ թուրքերը նախօրոք թէ դիրքերն են բռնած եղել և թէ Քաջարան մտնելու և օգնութեան գալու համար՝ պէտք է նախ 300 տնից բաղկացած Օխչին և 25-30 տնից բաղկացած Ատկզը հիմնահատակ կործանել, կոտորել և ապա նոր անցնել»:¹²

Քաջարանցիների պաշտպանական կարևորագույն հենակետը գյուղի եկեղեցին էր: Հակատակորդը, որպեսզի կարողանար ներխուժել գյուղ, նախ և առաջ պիտի հաղթահարեր եկեղեցու մերձակա պաշտպանական դիրքերը: Թուրքերը, հաշվի առնելով գյուղի պաշտպանության գործում եկեղեցու դիրքի վճռորոշ նշանակությունը, վճռական հարձակում են ձեռնարկում հենց այդ ուղղությամբ և կարողանում են պայթեցնել նախ եկեղեցուն կից քահանայի տունը, ապա, մեծ քանակության պայթուցիկ դինամիտ բերելով,

¹¹ Նույն տեղում, էջ 2:

¹² Նույն տեղում:

փորձում պայթեցնել նաև եկեղեցին, որի պատերի հետևում, կտուրի վրա ու մերձակա դիրքերում այդ պահին մարտնչում էին ավելի քան 590 քաջարանցիներ¹³:

Ամենավճռորոշ պահն էր. եթե թուրքերին հաջողվեր պայթեցնել եկեղեցին և խորտակել այնտեղ պաշտպանվողների դիմադրությունը, ապա դյուրությամբ կներխուժեին գյուղ, և քաջարանցիները կհայտնվեին օրհասական, անելանելի իրավիճակում: Գյուղի պաշտպաններին ի զորու էին փրկության ձեռք մեկնել միմիայն հարևան շրջանների հայ ինքնապաշտպանական ուժերը: Ահա այստեղ էր, որ վճռորոշ խոսքը պիտի ասեին ինքնապաշտպանական տարբեր շրջանների միջև հաստատված կապն ու փոխհամագործակցությունը և ինքնապաշտպանության ընդհանուր կազմակերպվածության կայունությունն ու կենսունակությունը:

Վաղորոք ստանալով վտանգված գյուղերին անհապաղ օգնության շտապելու Մուրադի հրահանգը՝ Գենվազի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը թուրքերի հարձակման լուրը ստանալուն պես տեղի մարտախմբերով անհապաղ ուղևորվում է պաշարված Քաջարանին օգնության:

«Կրիտիկական,- հավաստում է այդ կռիվները լուսաբանող թղթակցությունը,- մօմենտ էր: Եթե մի քանի ժամ ուշանար տղերանց օգնութիւնը, բոլորը անդառնալի կը կորչէին: Բայց ահա, Մեդրիից քաջ Ենոքի առաջնորդութեամբ Գենուազի անվեհեր մարտիկները՝ եղբայրներին և քոյրերին ազատելու տենչով հասնում են, և մի աննկարագրելի ուժգնությամբ գրոհ են տալիս»¹⁴:

Որպեսզի կարողանար հասնել քաջարանցիներին օգնության, գենվազի մարտախումբը նախ պետք է խորտակեր մինչև Քաջարանը ձգվող թուրքերի հարուցած արգելապատնեշները: Գենվազցիները սրընթաց հարձակումով հաղթահարում են հակառակորդի դիմադրությունը և արժանի դատաստանի արժանացնելով Ատկզ և Օխչի թուրքաբնակ գյուղերը՝ արագորեն մեկնում պաշարված քաջարանցիներին օգնության:

Գենվազցիների օգնությունը ճիշտ ժամանակին էր: Համատեղ ուժերով ջախջախելով թշնամուն՝ հայ մարտիկները, չբավարարվելով նվաճած հաղթանակով, զարգացնում են հարձակումը և մոտե-

¹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

նում Քաջարանին մերձակա 100 տուն ունեցող թուրքաբնակ Շաբադին գյուղին: Ոգևորված Գենվագցիների քաջագործություններով՝ մարտադաշտում են հայտնվում նաև Վերին Ղափանի, մյուս գյուղերի մարտախմբերը: Համաձայն Մուրադի հրահանգի՝ նրանք թուրքերի հարձակումը հետ մղելուց հետո անպայմանորեն պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում հարձակվեին և հողին հավասարեցնեին թուրքաբնակ գյուղերը: Այդ օրվա մարտերն ընթանում են հենց այդ ուղղվածությամբ:

Անշեղորեն կատարելով իրենց հրամանատարի հրահանգը՝ Գենվագի և վերին Ղափանի միացյալ ուժերը՝ Ենոքի ընդհանուր հրամանատարությամբ, հարձակվում են Շաբատինի վրա և ներխուժելով գյուղ՝ հիմնահատակ կործանում են այն, ապա գերեվարում ու արժանի դատաստանի արժանացնում այնտեղ ապաստանած մի քանի ցեղապետների: Իրենց հերթական անելիքները որոշելու նպատակով հայ մարտական ուժերը կենտրոնանում են Հանդ գյուղում, ուր գալիս է նաև Դաշնակցական Խեչոյի գլխավորած մարտախումբը: Նրանց վճիռը միակն էր, անհրաժեշտ էր իրագործել հրամանատարի՝ Մուրադի հրահանգը և լավագույնս օգտագործելով ընձեռված հնարավորությունը՝ հարձակվել թուրքաբնակ մյուս գյուղերի վրա: Նշանավոր Խեչոն այնտեղ եկել էր հենց այդ առաքելությամբ: Առաջնորդվելով Մուրադի սահմանած որոշմամբ՝ հայ ինքնապաշտպանական ուժերը շարունակում են իրենց հաղթարշավը և ներխուժում Փիլվարտան գյուղը:

Անդրադառնալով այդ օրերին ընթացող մարտերի լուսաբանմանը՝ Սարհաղը (Մկրտիչ Աղամայյան), որն այդ ժամանակ գլխավորում էր Ղափանի շրջանի մարտախմբերից մեկը, իր հուշագրությունում նշում է. «...Կալերից Ենօկը իւր խմբով և Խեչօն իւր խմբով, որին ուղարկել էր Մուրատը, թշնամուն քշում են իրենց գիւղերը և կրակում են թուրքերի Օխշին, Շաբատին և Ատկիչ գիւղերը: Տեղեկութիւն ենք ստացել, որ կոհիւր կենտրոնացել է Փիւրարտան («Դրօշակի» թղթակցութիւնում այդ գյուղը անվանվում է Փիւրարտան՝ Հ.Գ.) թուրք գիւղում»¹⁵:

¹⁵ ՀՅԴ ԿԱ, թծ. 409, գ. 4, էջ 6:

Հայ մարտական խմբերն արագորեն խորտակում են Փիրւարտանի պաշտպանների դիմադրությունը, քանդում և հրդեհում են ողջ գյուղը:

Վերին Ղափանում ընթացող կռիվների լուսաբանմանը նվիրված վավերագրությունում, ամփոփելով հայ ինքնապաշտպանական ուժերի նվաճումները, հեղինակը նշում է. «Թուրքական հինգ զիւղեր էլ ոչնչացած, աւերած են, և այժմ բնակիչները քաղցած, մի կերպ հաւաքւել են իրենց զիւղերը և քարշ են տալիս իրենց թշւառ գոյութիւնը:

Նրանք կորցրել են իրենց բոլոր ունեցւածքները: Թուրքական չորս զիւղերի սպանւածները 4-5 հարիւրի կարող է հասնել, իսկ վիրաւորները էլ աւելի»¹⁶:

Ինչպէս արդէն նշվել է, Ջանգեզուրում, մասնավորապէս Ղափանի շրջանում, կռիվները միաժամանակ ընթացել են մի շարք վայրերում: Նոյն օրերին, երբ հայ ինքնապաշտպանական ուժերը, դիմելով հակահարձակումների, հողին էին հավասարեցնում թուրքաբնակ գյուղերը, թուրքերը հարձակվում են հայկական Ուջանիս գյուղի վրա: Վտանգված գյուղին՝ Ուջանիսին, օգնության է հասնում Յապոնի (Հովհաննէս Պարոնյան, այդ օրերին Մուրադին օգնելու նպատակով Գորիսից մարտախմբով տեղափոխվել էր Ղափան՝ Հ.Գ.) գլխավորած մարտախումբը:

Պիտի նկատել, որ այդ օրերին Ջանգեզուրում, հատկապէս Ղափանի շրջանում, կռիվներն ընթացել են ոչ միայն միաժամանակ մի շարք գյուղերում, այլև եղել են դեպքեր, երբ թուրքական հրոսակախմբերը հայկական բնակավայրերի վրա հարձակումներ են ձեռնարկել մի քանի անգամ: Այս առումով ուշագրավ է Ուժանիս գյուղի համար մղված մարտերը:

1906 թ. մայիսի սկզբներին թուրքերը ռուսական բանակի նախկին սպա, Ջանգեզուրի թուրք բնակչության առաջնորդներից մեկի՝ Իլդրիմ Բեկի որդու գլխավորությամբ, որին միացել էին նաև Ղարադաղի խաներից Բադր խանի առաջնորդած 500 զինյալները, անակնկալ հարձակում են գործում Ուժանիսի վրա: Այդ գյուղի ինքնապաշտպանակն ուժերը թէև թվաքանակով զգալիորեն զիջում էին հակառակորդին, սակայն բնավ չենթարկվելով վախի ու խուճապի՝ դիմում են ինքնապաշտպանության: Եթե Ուժանիսի սակա-

¹⁶ Նույն տեղում:

վաթիվ մարտիկներին ժամանակին օգնության չհասնեին հարևան գյուղերի մարտական ուժերը, ապա գյուղն անկասկած կարող էր հայտնվել անելանելի իրավիճակում: Այդ նույն պահին, երբ թուրքերը պաշարում էին Ուժանիսը, Ջանգեզուրի մարտախմբերից մեկը՝ Յապոնի գլխավորությամբ, գտվում էր Ագարակ գյուղում:

«... մէկ էլ,- գրում է Յապոնը,- մի ոտաբոքիկ ու շապկանց հայ զիւղացի ներս ընկաւ սենյեակս ու` Պարոն Եսայօն, թուրքերը զիւղը կրակ տուին-ասաց ու ուշագնաց ընկաւ: Խեղճը արագ վազելուց ու վախից շունչը սպառել էր ու չկարողացաւ էլ ասել թէ խօսքը որ զիւղի մասին է»¹⁷:

Համաձայն Ջանգեզուրում սահմանված անխախտ զինվորական կարգապահության՝ նման դեպքերում որևէ հայկական բնակավայրին սպառնացող վտանգի մասին լուրն առնելուն պես հարևան գյուղերի ինքնապաշտպանական ուժերը պարտավոր էին անհապաղ շտապել օգնության: Գուժկանից տեղեկանալով Ուժանիսին սպառնացող վտանգի մասին՝ Յապոնն անմիջապես ոտքի է հանում Ագարակի, ապա նաև Եղվարդի զինված ուժերն ու արագորեն ուղևորվում Ուժանիս: Իսկ այդ ընթացքում թուրքերն արդեն հասցնում են գրավել գյուղի մերձակա բարձունքները և գրոհներ ձեռնարկելով՝ ներխուժել գյուղ: Ուժանիսի մարտիկները պաշտպանական դիրքեր են գրավում, և որպեսզի խնայեն փամփուշտի իրենց սահմանափակ պաշարները, սկսում են թուրքերի բուռն համազարկերին պատասխանել հատ ու կենտ կրակոցներով: Եթե Յապոնի գլխավորած մարտիկներին չհաջողվեր թուրքերին դուրս մղել գրավված բարձունքներից, ապա անհնարին կլիներ ներխուժել գյուղ և օգնել թշնամու օղակում համառությամբ մարտնչող ուժանիսցիներին: Ելքը միակն էր. անհրաժեշտ էր անշուշտ ու աննկատ մոտենալ թուրքերի դիրքերին և սրընթաց գրոհ ձեռնարկել: Ներկայացնելով այդ վճռական պահը՝ Յապոնը նշում է. «Տղաներին փռելով սարի կրծքովը մէկ՝ պատուիրեցին զոյգ զոյգ անծպտուն բարձրանալ մինչև թշնամիին նկատելի դառնալու կէտը ու այնտեղ տապարած՝ սպասել նշանին: Նշանը առնելուն պէս իւրաքաչիւրը պէտք է առնէր իր առաջը գնացող թշնամուն ու քշէր ցած, դէպի ձորը»¹⁸:

¹⁷ «Հայրենիք», 1941, թիվ 3, էջ 141:

¹⁸ Նույն տեղում:

Թուրքերի, որոնց ուշադրությունը գլխավորապես բևեռվել էր գյուղի վրա, տեսադաշտից վրիպում է Յապոնի մարտախմբի տեղաշարժերը: Հայ մարտիկներին հաջողվում է աննկատ բարձրանալ բարձունքներն ու ընդհուպ մոտենալ հակառակորդի դիրքերին:

«Երբ,- շարունակում է Յապոնը,- այնքան մտեցայ, որ թշնամու խօսակցութիւնը ականջիս հասաւ, անշուկ տեղումս նստեցի՝ նոյնը նշան անելով կողքիս զինուորին, սա էլ հարևանը ու այսպէս ամբողջ շարքին: Մի քանի րոպէ սպասեցի, որ շունչ առնիմք:

... Երբ շունչներս առել էինք՝ տասնոցս քաշեցի ու որքան կոկորդումս կար՝ տղե՛ րք, յառա՛ ջ գոռացի...»¹⁹:

Հայ մարտիկները, միասնաբար համագարկեր տեղալով և «ուռա՛» գոչելով ու միաժամանակ մարտական փողեր հնչեցնելով, սրընթաց գրոհում են հակառակորդի դիրքերին: Թուրքերը, այդ սրընթաց ու անսպասելի գրոհից խուճապի մատնվելով, լքում են դիրքերը և դիմում փախուստի:

«Իր,- նշում է Յապոնը,- փախուստն այնքան տարերային էր, որ զիւղի շուրջը գտնուող իրենց հսկայական բանակն էլ իրենց մէջ առին ու տարան (նկատի ունի թուրքական գյուղերի անգէն բնակչությանը, որը Ուժանիս էր եկել ուժանիսցների ունեցվածքը թալանելու նպատակով՝ Հ.Գ): Իրար խառնուած թշնամու հագարից աւելի ոյժը մեր մի հարիւրակի առաջ այդպէս փախչելիս մի պահ փորձեց զիւղից ցած «Վանքի Ձորում» կանգ առնել, բայց հայ զինուորի շեշտակի գնդակից խանձուած՝ նորէն թիկունք շուռ տուաւ»²⁰:

Այդ նշանավոր կռվից մեկ ամիս անց Իլդրիմ Բեկի որդին իր կորցրած հեղինակությունը վերականգնելու և հայերից վրեժխնդիր լինելու նպատակով դարձյալ արշավում է Ուժանիսի վրա: Այս անգամ թշնամու ուժերը նախորդի համեմատ եղել են սահմանափակ, քանի որ Բադր Խանը չի համաձայնվել մասնակցել հերթական գործողությանը: Քանի որ թշնամու ուժերն այս անգամ համեմատաբար թույլ էին, ուստի ուժանիսցիները սառնասրտորէն ընդունել են հակառակորդի մարտահրավերն ու կարողացել են հաջողությամբ դիմագրավել գյուղի վրա ձեռնարկված հարձակումները: Ինչպէս նախորդ, այնպէս էլ այս կռվի ժամանակ, ուժանիսցի պաշտպաններին

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 142:

դարձյալ օգնության է շտապել Յապոնի գլխավորած մարտախումբը:

«Ժամանակին,- վերհիշում է Յապոնը,- լուրը հասաւ ինձ ու կռուի էն տաք ժամին մօտ հարիւր հոգիով հասաւ Ուժանիս:

Հայերը իրենց դիրքերում նստած՝ յաջող կերպով պաշտպանուում էին:

Էլ ժամանակ չտուի, որ թուրքերը մեր գալն ու որքան լինելը իմանան: Ուժանիսի աղբիւրի գլուխ կոչուած ձորակից յանկարծակի դուրս ընկանք ու մի մասս կանոնաւոր համագարկերով ու մի մասս անկանոն կարկուտ մաղելով առինք զանոնք կռուի մէջտեղը:

Թշնամին հագիւ կէս ժամ դիմադրել կարողացաւ ու նորէն դաշտի ճամփան բռնեց»²¹:

Հայ ինքնապաշտպանական ուժերը տոնում են հերթական անվիճելի հաղթանակը: Այդ օրն ընթացող մարտերում նրանք պարտության են մատնում ոչ միայն Ուժանիսի վրա հարձակվող թուրք հրոսակախմբերին, այլև զարգացնելով հարձակումը՝ գրավում են Ուժանիսի հարևանությամբ գտնվող Ալմալու և մի քանի այլ թուրքաբնակ գյուղեր:

Ուժանիս գյուղի համար մղվող մարտերում Յապոնի գլխավորած մարտախմբերի քաջագործությունների մասին վկայում է նաև Սարհաղը (Մկրտիչ Աղամալյան), որն այդ օրերին Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Մուրադին օգնելու նպատակով գտնվում էր Զանգեզուրում:

Խիզախ գրոհով խորտակելով հաղորդակցության ուղիների՝ ճանապարհների վրա վերահսկողություն իրականացնող թուրքական ուժերի դիմադրությունը՝ Յապոնի մարտիկները հասնում են պաշարված գյուղին օգնության:

«...Քաջ Եապոնը,- նշում է Սարհաղը,- պատռում է թշնամու շղթան և հետ է քաշում թշնամուն: Թշնամին ամօթաբար հետ է նահանջում՝ թողնելով մի քանի դիակներ: Թշնամուն քշում են մինչև իրանց գիւղերը, օգնութեան է հասնում Արսէնը (Չոփուռ Արսեն) իւր խմբով ու կրակում են թշնամու իրէք գիւղերը...»²²:

Օգոստոսի 14-ին թուրք զինյալ խմբերը դարձյալ, այս անգամ ավելի մեծաքանակ ուժերով, պաշարում են Ուժանիս գյուղը: Տեղի

²¹ Նույն տեղում, էջ 143:

²² ՀՅԴ ԳԱ, թծ. 409, գ. 4, էջ 7:

բնակչությունը, չերկնչելով թշնամու բազմությունից, դիմում է ինքնապաշտպանության: Մի շաբաթ անց՝ օգոստոսի 22-ին, թուրք ամբոխին են միանում Ռահիմ ու Ալի խաների առաջնորդությամբ Պարսկաստանից Չանգեզուր անցած 1500 ձիավորներ, և թշնամին, գոտեպնդվելով ուժերի հսկայական գերակշռությունից, փորձում է ներխուժել գյուղ: Կովի ամենաձանր պահին անսպասելիորեն Յապոնի, Ավոյի ու Հայրիկի մարտախմբերի գլուխն անցած Մուրադը հասնում է մարտադաշտ և հողմի արագությամբ հարվածում մոտալուտ հաղթանակի ակնկալիքով հայ զինվորների դիրքերը գրոհող թուրքերի թիկունքին: Կես ժամ չանցած՝ քաղցն ու ծարավը հայի արյունով հագեցնելու հաճույքներից խանդավառված թուրքերը սարսափահար փախուստի են դիմում:

«Փախչելու ժամանակ քաջ Մուրադը կանչում է թուրքերեն. «Էյ, խանումներ, ո՞ւր էք փախչում, ի՞նչ լուր էք տանում ձեր կանանց, մի երեք-չորս ջան ֆիդայու կռիւ է, եկէք թէյ խմելու, հիւր եղէք, ա՛յ գեղեցիկ խանումներ»²³:

Հայ մարտիկները հետապնդում են փախչողներին և զնդակահարում մի քանի հարյուր թուրքերի: Ուջանիսի կովում հակամարտող կողմերի կորուստներն են. «...Ուջանիսը ենթարկել է երեք անգամ յարձակման. այրել են 42 մարագ, 15600 խուրձ ցորեն, անբլե են մի քանի ջրաղացներ, սպանել են 5 և վիրավորել 13 հոգի:

...Գաւառապետի ասելով Ուջանիսի կուում թուրքերից 600 հոգի են սպանել»²⁴:

Հայկական մարտական ուժերը նույն օրերին թուրքաբնակ գյուղերի վրա հարձակումներ են ձեռնարկում մի քանի ուղղությամբ: Օգոստոսի 26-ին Դաշնակցական Խեչոյի մարտախումբը և Ենոքի գլխավորած Գենվազի մարտիկները Վերին Ղափանում գրոհում ու հիմնահատակ քանդում, այրում են թուրքաբնակ Առաջածոր, Աջիլու և Թունիս գյուղերը:

Սեպտեմբերի 6-ին Եղվարդի ինքնապաշտպանական ուժերը, ի պատասխան իրենց տավարի նախիրը փախցնող Հալ գյուղի հայտնի ավազակ Իսմայիլ Աբաշ Օղլու ավարառության, հարձակվում են թուրքերի վրա «...յետ իլում տաւարները և թուրքերից բերում են 6 ձի, կրակում Սալդաշ գիւղի բոլոր խուրձերը և անցնում են

²³ «Դրօշակ», 1907, թիւ 2, էջ 27:

²⁴ Նույն տեղում, էջ 26:

դեպի Սալդաշի Հարթիգա սարի վրայ գտնուող 8 օբաները, ոչնչացնում են բոլոր ունեցածները և գերի են վերցնում երեք հոգի»²⁵:

Սեպտեմբերի 7-ին Յապոնի գլխավորած մարտախումբն ու ինքնապաշտպանական ուժերը քշում են Ղարաչիմանին պատկանող 135 կով, 8 ձի, 9 ջորի և պատրաստվում հարձակվել նաև գյուղի վրա²⁶:

1906 թ. ամռան ամիսներին և սեպտեմբերին Ջանգեգուրի ինքնապաշտպանական ուժերի ծավալած հարձակողական գործողությունների նվաճումներն ավելի քան ակնառու էին: Եթե չլինեք գավառի իշխանությունների միջամտությունը, ապա արդեն բազմիցս պարտություն կրած թուրքերն արագորեն կարող էին վերջնականապես ջախջախվել:

Հայկական մարտական ուժերն իրենց կազմակերպվածությամբ և հերոսական գործողություններով հրաշալի հնարավորություն են նվաճում Ջանգեգուրի տարածքը մեկընդմիջտ մաքրելու մահմեդական բնակչությունից: Սակայն հակամարտող կողմերին սանձելու և գավառում խաղաղություն հաստատելու պատրվակով կոզակական և ոստիկանական զորաջոկատների գլուխն անցած՝ դարձյալ ասպարեզում է հայտնվում գավառապետը:

«Մեծ քաղաքի ընկերներին» հասցեագրած 1906 թ. սեպտեմբերի 10-ի նամակում Մուրադը գրում է. «...այժմ գաւառապետը 300 զօրքով գտնուում է մեր շրջաններում: Ռմբակօծեց հայերի գիւղերը ու անցաւ թուրք գիւղերը:

Չգիտենք՝ այստեղ ինչ է կատարւում, շուտով կը վերադառնայ...»²⁷:

Ջանգեգուրում ծավալվող դեպքերին գավառապետի և գորքի միջամտությունը փրկարար նշանակություն է ունենում արդեն անխուսափելի ջախջախման դատապարտված մահմեդականության համար:

1906 թ. սեպտեմբերի 10-ին «Մեծ քաղաքի ընկերներին» հասցեագրած վերոհիշյալ նամակ-զեկուցագրում Մուրադը ՀՅԴ Արևելյան բյուրոյին տեղեկացնում է իր գլխավորած շրջանների իրական կացությունը և միաժամանակ ներկայացնում երկու՝ հուլիս և օգոս-

²⁵ Նույն տեղում:

²⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁷ ՀՅԴ ԿԱ, թժ. 409, գ. 9, էջ 1:

տոս ամիսների ընթացքում այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների արդյունքները՝ նշելով. «... պարզ կլինի ձեզ համար, թե ինչ է կատարել, այժմ միայն տեղեկություն տամ քանդած գիւղերի մասին՝ թե հայի, թե թուրքի»²⁸:

Նույն նամակում նա նախ ներկայացնում է թուրքերի հարձակումների հետևանքով քանդված հայ գյուղերի ցուցակը. «1. Սողեքառասուն տուն, սպանւած 2 մարդ, 3 կին, 2. Դարաբաղ-քառասուն տուն. սպանւած 3 մարդ, 2 վիրաւոր, 3. Քաշարան- 70 տուն. Սպանւած 2 մարդ, 3 կին, 4. Մինիք. գործարանում սպանւած- 3 մարդ»:

Այնուհետև ներկայացնում է վերջին երկու ամիսների ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերի կողմից կենսագործած գործողությունների հետևանքով թուրքաբնակ քանդված գյուղերի ցուցակը, որտեղ նշում է միայն տների քանակը.

- «1. Բնջաւար-20 տուն
2. Չուլու-30 տուն
3. Քարխանայ-35 տուն
4. Էմիջլու-34 տուն
5. Ներքին Էմիջլու-15 տուն
6. Ալմալու-25 տուն
7. Չարուլու-15 տուն
8. Կօտակլու-10 տուն
9. Էմաջլու-315 տուն
10. Աղանիկ և Տանձաւէր-55 տուն
11. Ղաթար-Մալդաշ-Պալուղայիայ-Միջուրլու-800 տուն
12. Ատկզ-30 տուն
13. Օխչի-250 տուն
14. Շաբատին-100 տուն
15. Փիրարտան-80 տուն
16. Աւսարլու-20 տուն
17. Բողաջղ-22 տուն
18. Աջիլու-70 տուն
19. Տալաքլու-20 տուն
20. Օսանայլու-18 տուն
21. Մտնաձոր-10 տուն

²⁸ Նույն տեղում, էջ 2-3:

22. Քօրլուղլաղ-35 տուն»²⁹:

Նույն նամակում Մուրադը տեղեկություններ է հայտնում նաև թուրքաբնակ այլ գյուղերի մասին. «...տարտակ գիւղէր կան, որոնք թողել փախել են, մօտ 15 գիւղ: Մպանւածները մեզ հայտնի չեն, բայց մօտաւորապէս շատ են»³⁰:

Մուրադի ներկայացրած ցուցակը, ինչպէս արդէն նշվել է, արտացոլում է հայկական մարտական ուժերի միայն 1906 թ. հուլիս և օգոստոս ամիսներին ծավալած գործողությունների արդյունքները: Մակայն պետք է նկատել, որ նախորդ ամիսներին տեղի ունեցած մարտերի ժամանակ ևս հայ մարտիկների պատասխան գործողությունների գոհ էին դարձել զգալի քանակությամբ թուրքաբնակ գյուղեր և բնակիչներ:

Չանգեզուրում և հատկապէս Ղափանի շրջանում Մուրադի գլխավորած ինքնապաշտպանական ուժերի անվիճելի հաղթանակները ոչ միայն կտրուկ փոխում են գավառում տիրող հայերի համար աննպաստ կացությունը, այլև զգալիորեն ազդեցություն գործում մահմեդական վերնախավի դիրքորոշման և տրամադրվածության վրա: Ամենուրեք հայ մարտական ուժերի հարվածներից ջախջախված մահմեդական ցեղախմբերից շատերը ճարահատյալ դիմում են հաշտության: Համաձայն Ներսես Մելիք-Թանգյանի հավաստման՝ «Այնուհետև թուրքական խմբեր էին, որ գալիս էին Տաթևի վանքը, հաշտութիւն էին խնդրում, իմ միջնորդութեան էին դիմում, անհծում էին իրենց խաներին, որոնք կոտորածներին պատճառ էին եղած, անհծում էին, որ զուր տեղը կռուեցրին երկու հարևան ժողովուրդներուն»³¹:

Թուրք ցեղապետներից շատերը, մի շարք մարտերում ճաշակելով պարտության դառնությունը, հասկանում են կռիվները շարունակելու վտանգավորությունն ու կործանարար ազդեցության նշանակությունը: Մակայն այդ ճշմարտությունը բոլոր ցեղապետերը չէ, որ հասկանում ու գնահատում են: Նրանցից շատերը, պահպանելով մարտական տրամադրվածությունը, շարունակում են նախապատրաստվել և ուղիներ որոնել կռիվները դարձյալ

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 4-5:

³¹ Նույն տեղում:

վերսկսելու ու հայկական գյուղերի վրա վերստին հարձակումներ ձեռնարկելու համար:

Վերոհիշյալ նամակում անդրադառնալով այդ իրողությանը՝ Մուրադը գրում է. «...թուրքերը լուրջ պատրաստութիւններ են տեսնում մի քանի տեղերում խոշոր հարձակումներ անելու...»³²:

Երբ թուրքերը դարձյալ լրջորեն նախապատրաստվում էին, ապա, բնականաբար, համապատասխան քայլեր անպայմանորեն պիտի ձեռնարկեին նաև հայերը:

Երկարատև ու բազում կռիվների բովով նշանակալից հաղթանակներով անցած հայ ինքնապաշտպանական ուժերի համար դժվարին լուծելի խնդիրը եղել և մնում էր գենքի ու զինամթերքի ձեռքբերումը:

Նույն նամակում Մուրադը, «Մեծ քաղաքի ընկերներին» ներկայացնելով իրենց համար այդ ամենացավոտ հարցը, հայտնում է. «...մօտ վեց եօթ շրջանի է բաժանված (նկատի ունի իր հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական շրջանները՝ Շ.Գ.) և ոչ մի շրջանում փամփուշտ չկայ: Գիւղացիք մօսինէրը թօղել են, բերդան են բանեցնում: Եթէ շուտով հասցնէք այստեղ հարիւր մօսին, քառասուն հազար ծայր (նկատի ունի մոսինի փամփուշտ՝ Շ.Գ.), այն ժամանակ հանգիստ կլինենք... Ժողովուրդը պատրաստ է հատը 200 ռուբլի մօսինի տալ, 20 կոպ. ծայրերի հատին, բոլորը պատրաստ են առնելու...»³³:

Ինչպես որ սպասվում է, գավառի իշխանությունների ջանքերով հաստատված խաղաղությունը շատ խաբուսիկ էր և ժամանակավոր:

Շայ ինքնապաշտպանական ուժերի կողմից ավերակների վերածված Վերին Ղափանի թուրքաբնակ գյուղերի բնակիչները, որոնք փախել և ապաստանում էին Նախիջևանում և Օրդուբատում, տեղի մահմեդական պարագլուխների օգնությամբ և զինական աջակցությամբ հետ են վերադառնում և սեպտեմբերի 12-ի լուսաբացին հարձակվում հայկական Հանդ և Քուրդիքանդ գյուղերի վրա: Թեև մահմեդական հրոսակախմբերի հարձակումը անսպասելի էր, բայց գյուղերի մարտական ուժերը անմիջապես դիրքեր են գրավում և դիմագրավում հակառակորդի գրոհները:

³² ՀՅԴ ԿԱ, թժ. 409, գ. 9, էջ 1:

³³ Նույն տեղում:

Մուրադը հեռատեսութեն նախատեսել էր դեպքերի նման շրջադարձը և այդ գյուղերի պաշտպաններին օգնելու նպատակով վաղօրոք Քուրդիքանդ գյուղում էր կենտրոնացրել Թաղևոս Պետրոսյանի (Թաղե) լավ զինված մարտախումբը, որն այդ օրերին Նիկոլ Դումանի կարգադրությամբ զանգեզուրցիներին օգնելու նպատակով գտնվում էր Վերին Ղափանում:

Թուրքերը, օգտվելով իրենց քանակական գերակշռությունից, ձգտում են արագորեն ներխուժել գյուղ: Քուրդիքանդ և Հանդ գյուղերի մղած կռիվները լուսաբանող վավերագրությունը, ներկայացնելով այդ պահը, նշում է. «Անմիջապես Թաղևոսն իր քաջ տղերանցով դիմադրութեան է դուրս գալիս և յաջողում է կես ժամայ ընթացքում 27 թուրք սպանել: Երբ թուրքերը վճռական քայլեր են անում գիւղը մտնելու ու կրակելու, Թաղևոսն իր խումբը բաժանում է երկու մասի, ժողովրդին հաւաքում եկեղեցու մէջ և ճակատ կռիւ սկսում թշնամու դէմ»³⁴:

Ավելի քան 9 ժամ Քուրդիքանդի և Թաղևոս Պետրոսյանի զլխավորած մարտիկներն աննահանջ դիմազրավում են հակառակորդի գրոհները և մարտի ընթացքում գնդակահարում մի քանի ավագակապետերի և բազմաթիվ թուրքերի: Շուտով նրանց օգնության է հասնում Փարամազ Թումանյանցի և Ներսես Աբրահամյանի առաջնորդած Հանդի գյուղի ինքնապաշտպանական մարտախումբը և թիկունքից հարվածում Քուրդիքանդը պաշարող թուրքերի վրա: Համատեղ ուժերով հարվածներ տեղալով՝ հայ մարտիկները հարկադրում են հակառակորդին լքել մարտադաշտն ու դիմել փախուստի:

Մի քանի ժամ չանցած՝ թուրքերը, վերախմբավորելով և համալրելով իրենց մարտաշարքերը, դարձյալ գրոհ են ձեռնարկում Քուրդիքանդ գյուղի վրա: Հայ ինքնապաշտպանական ուժերն անվարան ընդունում են մարտահրավերը և տարբեր ուղղություններից անկասելի գրոհ ձեռնարկում թուրքերի վրա, որոնց անխուսափելի կործանումից այս անգամ դարձյալ փրկում է մարտադաշտում հայտնված ռուսական զորաջոկատը: Իսկ այդ ընթացքում օգտվելով ռուսական զորաջոկատի ներկայությունից՝ թուրքերը դարձյալ դիմում են փախուստի:

³⁴ «Դրօշակ», 1907, թիւ 3, էջ 41:

«Թուրքերը փախուստ տալուց թողել էին 43 դիակ, չորս ջուալ Օրդուբաթի սանգակ հացից և մի տակառ նաւթ, որ բերած են եղել գիւղերը հրդեհելու համար»³⁵:

Թեպետ այդ կոիվներում թուրք հրոսակախմբերը դարձյալ պարտություն են կրում, բայց հայկական գյուղերի ոչխարի հոտերի և տավարի նախիրների վրա ձեռնարկված հարձակումները ստեպ-ստեպ դեռևս շարունակվում են:

Այս անգամ առավել ակտիվություն են դրսևորում Օրդուբադի կողմից գավառի հարավային շրջաններ թափանցած հրոսակախմբերը, որոնք տեղի և մասնավորապես Գենվազի Թեյ և Բուղաքար գյուղերի թուրք զինյալների աջակցությամբ փորձում են ասպատակել հայկական գյուղերը: Այս անգամ արդեն վտանգավոր կացությունում են հայտնվում Չանգեզուրի հարավային շրջանի գյուղերը: Մուրադի գլխավորած ինքնապաշտպանական ուժերի տեսադաշտից և ուշադրությունից չէին կարող վրիպել թուրք պարագլուխների նոր ձեռնարկումները: Մուրադը, մարտախմբերն առաջնորդելով, գալիս է Գենվազի շրջան և պատրաստվում վճռական գրոհի թուրքական գյուղերի և այնտեղ ապաստանած ավագակախմբերի վրա ու մեկընդմիջտ հիմնահատակ կործանել ավագակառքերը, սակայն. «...գավառապետի և գործի գալը խանգարեց յարմար բռնելն, որովհետև եթե նրանց գալը չը լինէր, ամբողջ Գենուազի թուրք գիւղերը աւերակ պիտ դառնային...»

Գալիս են... ահա այն լուրը, որ կայծակի արագությամբ տարածւեց և ընդհատւեց Ղափանի թուրք-հայկական ընդհարումը»³⁶:

Թեպետ Չանգեզուրի մեծ մասում ընդհարումները, շնորհիվ հայ ինքնապաշտպանական ուժերի ջախջախիչ հարվածների, գրեթե արդեն դադարել էին, բայց և այնպես իշխանությունները հակամարտող կողմերի միջև կոիվները մարելու, վտանգված շրջաններում կարգ ու կանոն հաստատելու պատրվակով գավառի տարածքում են կենտրոնացնում կոզակական հեծյալ ջոկատներ և անգամ հրանոթներով զինված զորավաշտեր: Որևէ կասկած լինել չէր կարող, որ ցանկության դեպքում իշխանություններն այդ միջոցառումները կարող էին ձեռնարկել շատ ավելի վաղ, նույնիսկ ընդհարումների առաջին իսկ բռնկումների:

³⁵ Տե՛ս նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

Տվյալ ժամանակահատվածում ցարական իշխանությունը ներկայացնող աստիճանավորների ծավալած գործունեության մեջ նկատվում է մի ուշագրավ գործելաճ:

Հաշտության կոչելով հակամարտող կողմերին՝ նրանք, գավառի հայ և մահմեդական ազգաբնակչությանը կոիվներ սանձագերծելու, պետական օրենքները խախտելու մեղադրանքներ ներկայացնելով, սկսում են տուգանքներ սահմանել և անգամ ռմբակոծության ենթարկել ու այրել գյուղերը: Օրինակ՝ հակամարտության հայկական կողմին պատժելու նպատակով. «...Ղաթար և Քեարխանա թուրք գիւղերը ատերելու պատճառով իւրաքանչիւր գիւղացի ենթարկւեց 10 ը. տուգանքի: Իսկ երբ գեներալ Բաուերը եկաւ, տուգանքները դարձրեց 25-ական ըուրլի, իւրաքանչիւր ծխից: Եւ շնօրհիւ այդ կարգադրութեան տուգանքներ առան՝ Վաչագանից-10-75 ը., Բաղաբուրջից-925 ը., Կուտ կումից-1200 ը., Բե խից-425 ը., Կավարտից-1200 ը. և Բարաբաթումից-1025 ըուրլի: Ռմբակոծեցին այդ բոլոր գիւղերը: ...Հազարակից-1200 ը., Եղւարդից-1100 ը., Սիր քաթասից-480 ը. և Ուժանիսից-570 ըուրլի»³⁷:

Հակամարտությունը դադարացնելու պատրվակով նման միջոցների գործադրումը հիանալի հնարավորություն է ընձեռում ցարական իշխանությունը ներկայացնող պաշտոնյաներին և սպաներին խաղաղություն հաստատելու անվան տակ թալանել գավառի հայ և մահմեդական ազգաբնակչությանը, բազմաթիվ պաշտոնյաներ և անգամ հարյուրավոր զինվորներ, հրամանատարներ, կեղեքելով գյուղացիությանը, հարստություն են կուտակում և տրվելով ինջույքների հաճույքին՝ յուրաքանչյուր օր ճոխ կյանք վարում՝ ի հաշիվ հայ և թուրք գյուղացիների: Նահանգի իշխանությունները տուգանք են սահմանում նաև Գենվազի շրջանի գյուղերի վրա. «Մեղրեցիներից առան 800 ը., վահրաւարցիներից-1800 ը. օր դուրաթցիների ոչխարները քշելու համար, Կալերից-500 ը., Վան քից 700 ը., Լիշկից-800 ը., Տաշտունից-700 ըուրլի»³⁸:

Նպատակադրվում են մեծ տուգանքի ենթարկել և անգամ ռմբակոծել Զանգեզուրի մյուս շրջանները: Ցարական իշխանությունների կողմից գավառում հաստատած այդպիսի դժոխային իրավիճակի ու գյուղացիների նկատմամբ սպաների և զինվորների

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում, էջ 42:

դրսևորած սանձարձակությունների հետ այլևս հնարավոր չէր համակերպվել, այլապես, առանց այդ էլ ծայրահեղորեն քայքայված գյուղերը կարող էին վերջնականապես սովամահության մատնվել: Անհրաժեշտ էր ինչ-որ ազդու, կանխարգելիչ քայլեր ձեռնարկել և սանձել գյուղացիների նկատմամբ դրսևորած պաշտոնյաների և նրանց թողտվությամբ գյուղերում սանձարձակությունների տրված ռուս գլխավորների և կոզակների անհագուրդ կրքերը:

«Այդ ժամանակ Փուխրուտում (Վերին Ղափանի հայկական գյուղերից՝ Հ.Գ.) է լինում մեր հերոս Մուրատը. լսելով գաւառապետի մտադրութիւնը, պրիստաւ Շահգալղիի միջոցով սպառնում է և առաջարկում զօրքը դուրս բերել, հակառակ դէպքում գաւառապետին և օֆիցերներին տէռօրի պէտք է տայ...»³⁹:

Ցարական իշխանության ներկայացուցիչներին և Ջանգեզուրի գավառապետին, անշուշտ, շատ լավ հայտնի էր հայ վրիժառուի տէռօրի ենթարկելու սպառնալիքի արժեքը: Պրիստավ Շահգալղիից տեղեկանալով Մուրադի կողմից իրենց սահաբեկելու սպառնալիքին՝ գավառապետը դադարեցնում է հալածանքներն ու գյուղերի ռմբակոծությունը՝ բավարարվելով միայն թեթև տուգանքներով:

Ավարտվում են գրեթե երկու տարի շարունակվող արյունալի ընդհարումները:

Դաժան փորձությունների ենթարկվելով ցարական բյուրոկրատիայի և պանթուրքիզմի ախտով վարակված թուրք երևելիների կողմից սանձազերծված ազգամիջյան ընդհարումներում՝ հայ ժողովուրդը հերոսական ինքնապաշտպանությամբ նվաճեց ապրելու և հարատևելու իրավունքը:

³⁹ Նույն տեղում:

**Гамлет Геворгян
Ереван**

Страницы зангезурских сражений! 1906г.

Резюме

Демонстрированы сражения между армянами и татарами, а также героические акты Мурада, Япона и других армянских героев в Зангезуре, особенно в Капане. Многие армянские местожительства были спасены не только от погромов, но и от отчуждения только благодаря сильной защите и единству.

**Hamlet Gevorgyan
Yerevan**

Pages of Zangezur battles, 1906y.

Summary

Battles between the Armenians and the Tatars, and the heroic acts of Murad, Yapon, and other Armenian heroes in Zangezur, particularly in Kapan, are presented. Many Armenian residences were saved not only from pogroms, but also from alienation only thanks to strong resistance and association.

**ՄՅՈՒՆԻՔԻ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1722-1730թթ. ԵՎ
ԴԱՎԻԹ ԲԵԿԸ՝ ՈՐՊԵՍ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ (ԴԱՎԻԹ ԲԵԿԻ
ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ)**



Մալիկ Թելունց

Գորիս

malik-telunc@mail.ru

XVIII դարում ևս Արևելյան Հայաստանը մնում էր պարսկական տիրապետության տակ: Հիմնականում ներքին բացասական գործոնների ազդեցությամբ անկման եզրին հասած պարսկական կենտրոնացված պետությունը Մեֆյան արքայատան գլխավորությամբ իր մահկանացուն կնքեց ապստամբ աֆղանների կողմից մայրաքաղաք Սպահանի գրավմամբ (1722թ. հոկտեմբեր-նոյեմբեր): Ստեղծված վիճակից շտապեցին օգուտ քաղել օսմանյան թուրքերը՝ գրավելու պարսիկների տիրապետության տակ գտնվող տարածքները՝ այդ թվում անդրկովկասյան: Խնդիր էր նաև պարբերաբար կրկնվող լեռնականների (լեզգիների) հարձակումներից, ասպատակություններից երկրամասի՝ Անդրկովկասի, այդ թվում հայաբնակ տարածքների պաշտպանությունը: Այդ պայմաններում Հյուսիսային պատերազմում հաղթած Պետրոս Առաջինը՝ կասպիականի փերին ամրանալու Ռուսաստանի ծրագրերն իրագործելու, Օսմանյան Թուրքիայի առաջխաղացումը կանխելու համար ձեռնարկեց իր հայտնի պարսկական կամ կասպիական արշավանքը: Այս գործոնները նպաստում էին նաև Արևելյան Հայաստանում ներքին զինված միավորումների կազմակերպմանը, որի հավանությունը տրվեց Անդրկովկասի փաստական կառավարիչ՝ Պարսկաստանի անկումից հետո, Վախթանգ IV-ի (թագավոր, վալի) կողմից, որն իր հերթին Հայաստանը և Վրաստանը մահմեդական լծից ազատագրելու համար բանակցությունների մեջ էր մտել ռուսական արքունիքի հետ, որը, բնականաբար, իր շահերի տեսակետից արդարացված նվաճողական քաղաքականության մեջ լայնորեն կիրառում էր նաև քրիստոնյա հայերին, վրացիներին մահմեդական ծանր լծից ազատագրելու կարգախոսները: Անշուշտ, ստեղծված պայմանները նպաստում էին հայ ազատագրական պայքարի ծավալմանը՝ հայ ազատագրական ոգորումների իրացմանը:

Ինչ որ է. մեր համոզմամբ՝ Մյունիքի և Արցախի ազատագրական շարժումը 1722-30թթ. էապես խթանվեց նաև արտաքին գործոնի ազդեցությամբ: Պետրոս Առաջինը, իրոք, կատարեց Իսրայել Օբուն տված իր «խոստումը» և 1722թ. հուլիսին ձեռնարկեց իր հայտնի արշավանքը դեպի Անդրկովկաս՝ գրավելով Դերբենդը (արշավանքի հաջորդ տարում գրավվեց նաև Բաքուն). հետագայում նաև չվավերացված ռուս-պարսկական պայմանագրով Գիլյանն ու Մազանդարանը ևս «անցանե Ռուսաստանին ի տրիտուր Անդրկովկասի և «հայկական հարցի» զիջման...»^{*} Յուրաքանչյուր պետություն իր գերակայելի՝ սեփական շահերն ունի, և Ռուսաստանը ևս տվյալ դեպքում դեկլարվեց իր շահերով՝ բավարարվելով Կասպից ծովի ափերին ամրանալով՝ դրա փոխարեն Անդրկովկասյան մյուս տարածքները զիջելով Թուրքիային: Դա, իհարկե, ռուս-թուրքական 1724թ. հունիսի 23-ի պայմանագրով¹: Իսկ մինչ այդ, վերը նշված պատմական հանգամանքներում, Անդրկովկասում ստեղծված անիշխանական վիճակը, լեռնականների հարձակումներից և թուրքական ներխուժման սպառնալիքից պաշտպանվելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ռուսական առաջխաղացման՝ Անդրկովկասը ռուսական օգնությամբ ազատագրելու բավական իրական թվացող միտումները² բնականաբար հայերին ևս մղում էին ինքնահամախմբվելու, զինված կազմավորումներ, ամուր վայրեր՝ սղնախներ³ ստեղծելու և այլն:

Բնականաբար առաջանում էր նաև տեղական ուժերին համախմբելու, ընդհանուր, միասնական դեկլարություն ստեղծելու ու պայքարը գլխավորելու հարցը, դրա լուծման անհրաժեշտությունը և, ինչպես հաղորդում է «Ընտիր պատմությունը»⁴, վրաց արքու-

* Նադիր շահի տիրապետության ժամանակ այդ տարածքները վերադարձվեցին պարսիկներին:

¹ Տե՛ս Օ.Ս. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, с. 30.

² Այդ մասին մանրամասն տե՛ս մասնավորապես В.П. Лысцов, Персидский поход Петра 1-го, 1722-1723, Москва, 1951.

³ Թուրքերեն siginak «սպաստարան, պատսպարան», տե՛ս Турецко-русский словарь, Москва, 1977 Սղնախների մասին մանրամասն տե՛ս Զավեն Արզումանյան, Սղնախների առաջացումը և ռազմաքաղաքական նշանակությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 9, 1982, էջ 84:

⁴ Տե՛ս Ընտիր պատմություն Դալիթ Բեկին եւ պատերազմաց հայոց Խափանու, որք եղեն ընդդեմ թուրքած ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722-ի հայոց 1174,

նիքը իշխանաց իշխան Շահնավազի (Վախթանգ VI) գլխավորությամբ վրացական ծառայության մեջ գտնվող Դավիթ Բեկին ուղարկում է՝ գլխավորելու Սյունիքի, Ղափանի ազատագրման համար պայքարը «...գորք հավաքելու այնտեղ և հայոց աշխարհը պաշտպանելու»⁵: Ըստ որում, «Ընտիր պատմութեան» մեջ նշված է, որ Ստեփանոս Շահումյանի՝ որպես հայոց պատվիրակի խնդրանքով վրաց արքունիքը, Սյունիքի զինվորությունը գլխավորելու համար. «...կոչեալ զԴավիթ Բեզն **Սյունեցի** (ընդգծումը մերն է՝ Մ.Թ.) ի հայկազեանս տոհմ է ետ նմա զիշխանութիւն երթալ յուր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան, զօրաժողով լինիլ անդ պահել զերկիրն հայոց»⁶: Սա ըստ Գյուլամիրեանցի ներկայացրած 1871թ. հրատարակությամբ բնագրի: Ըստ Սամուել Արամեանի բնագրի, որը հրատարակվել է 1992թ. գրաբար և աշխարհաբար տեքստերով, նշված է, որ վրաց իշխանը (Շահնավազ՝ Վախթանգ VI), անսալով Ստեփանոս Շահումյանի խնդրանքին, «...և իր մոտ կանչելով մծխեթցի հայ Դավիթ Բեկին, նրան իրավունք տվեց գնալու Սյունյաց աշխարհը (այստեղ և բնագրում բացակայում են «Սյունեցի Դավիթ Բեկ», «Իր հայրենի Սյունյաց աշխարհը, որ այժմ Ղափան է կոչվում» բառերը Մ.Թ.)՝ գորք հավաքելու այնտեղ և Հայոց հողը պաշտպանելու⁷: Մատենադարանի մեկ այլ ձեռագրում՝ **Հովհաննես Զմյուռնացու** «Պատմության» մեջ, կարդում ենք. «Կոչեաց առինքն շահնաւագ զգօրպետ իւր զԴաւիթը՝ որ էր ի ցեղէ Սիւնաց Հայկազանց՝ ի զարմէ մեծ իշխանին ալահվերտի Սեպուհին...այր հօր և քաջաբազուկ...»⁸: Թեպետ մի շարք հեղինակներ (Աշոտ Հովհաննիսյան և ուրիշներ) նշում են, որ «Ընտիր պատմության» բնագրերում, մասնավորապես մեր հիշատակած Վաղարշապատի հրա-

1871 Վաղարշապատ, նաև նույնի աշխարհաբար թարգմանությունները «Պատմություն...» 1978, 1992 /այսուհետև Ընտիր պատմություն/:

⁵ Տե՛ս Ընտիր պատմութիւն..., նաև Դավիթ Բեկ կամ Պատմություն Ղափանցոց, Ե., 1992, էջ 19:

⁶ Ընտիր պատմություն, էջ 5:

⁷ Տե՛ս Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, բնագիրը՝ Ս. Արամյանի, Ե., 1992, էջ 18-19:

⁸ Տե՛ս Մատենադարան, ձեռագիր 2888. «Համառոտութիւն Պատմութեան Հայկազաց սկսեալ ի նախնոյ մերոք Հայկայ ցաւուրս Ղուկաս սրբազան կաթողիկոսին յամի տեառն 1784, Աշխատասիրեալ Զմիւռնացի Յուհանես Մելիք-Մելիմեանց յասուրս Յովհաննես սրբազան կաթողիկոսի ամ հայոց յամի տեառն 1829-ի սբ Էջմիածին», էջ 656 (334):

տարակության, Դավիթ Բեկի Սյունեցի լինելը հաստատող բառերը չկան, սակայն մեր նշանավոր պատմաբան **Միքայել Չամչյանը** (1738-1823) ևս իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ նշում է Դավիթ Բեկի սյունեցի լինելը⁹: «Կոչեաց առինքն շահնաւազ զգորպեւտ իւր զԴաւիթ՝ որ էր՝ ի ցեղէ սիւնեաց հայկազանց՝ այր հզոր և քաջաբազուկ, և խօսեցաւ ընդ նմա վասն այսր. և նա հաւանել յանձն էառ յօժարությամբ¹⁰», - գրում է Չամչյանը: Բնականաբար Չամչյանը չէր կարող օգտվել 1871թ Վաղարշապատի հրատարակությունից և նրա վերը նշված տողերը նույնությամբ չեն կրկնում այդ մասին մյուս հեղինակների մեջբերումները՝ ըստ որում նշենք, որ «Ընտիր պատմությունը» Ստեփանոս Շահումյանի պատմաձով գրի է առել Մխիթարյան միաբաններից Ղուկաս Մեբաստացին 1722-1730թ. դեպքերից առնվազն մեկ տասնամյակ անց¹¹: Հընթացս նաև նշենք, որ այն հանգամանքը, որ հիշատակված բնագրերում Դավիթ Բեկի սյունեցի լինելը նշված չէ, բոլորովին էլ չի նշանակում, թե Գյուլամիրեանցը, Չամչյանը կամ Զյունուռնացին տեղեկությունները «օղից են վերցրել»... Այժմ փոքր-ինչ մանրամասն լրացուցիչ Դավիթ Բեկի ծագման և ծննդավայրի մասին, քանզի նրա ծագման և ծննդավայրի հարցերն, ինչպես արդեն ակնարկեցին, առայսօր դիտվում են որպես վիճելի:

Իր «Նոր Վավերագրեր Դավիթ Բեկի ու նրա գլխավորած ազատագրական շարժման մասին» հոդվածում¹² պրոֆեսոր Ա. Աբրահամյանը, հետևելով Մատենադարանի թիվ 45 վավերագրի տվյալներին, այն ենթադրությունն է անում, որ «...Դավիթ Բեկը Գեղարքունիքից է, սերվում է Աստվածատրյան (Ալահվերդյան՝ Մ.Թ.) ցեղատոհմից, նրա (Դավիթ Բեկի՝ Մ.Թ.) հայրը եղել է Ալիխանը, նա Դավիթ Բեկը, ունեցել է նաև Մխիթար անունով մի որդի, որի զավակներն են ռուս բանակի փոխգնդապետ Ստեփանոսը և Էջմիած-

⁹ Տե՛ս Միքայել Չամչեանց, Հայոց պատմություն, Գիրք երրորդ, Ե., 1984, էջ 785:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Տե՛ս Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, էջ 9:

¹² Տե՛ս «Տեղեկագիր», թիվ 8, Ե., 1951, այսուհետև՝ «Նոր Վավերագրեր...»:

նի միաբանության անդամ Հովհան Վարդապետը»¹³: Նման հետևության համար հիմք է հանդիսացել Ստեփանոս Դավիդովին ազնվականական կոչում տալու համար Գրիգորուպոլսի մագիստրատի կողմից ռուսական իշխանություններին ներկայացրած 1797թ. նոյեմբերի 15-ի տեղեկանքը, որից երևում է, որ «...Դավիթ Բեկը ոչ թե դափանցի է կամ հալիձորցի, այլ բնիկ Գեղարքունիքից, պատմական Օմակ գավառից: Նշված տեղեկանքում այդ մասին ասվում է. «Աթաբեկը (Դավիթ Բեկի հորեղբայրը՝ Ա.Ա.) ինքը առանդ է կտակաւ երթորորոյ իւրում Դաւիթ Բեկին, որդւոյ Հախնազար բեկի՝ հանդերձ իւր սեփհական Օմակ կոչեցեալ նահանգան, հայրենի գիւղօրէիւք ծովակալ ծկնալի Գետորէիւք և այլովք ամեիւք»¹⁴: Ընդ որում Ա. Աբրահամյանը նշում է նաև, որ այդ ժամանակաշրջանում Գեղարքունիքը մտնում էր Սյունիքի մեջ¹⁵: Ա. Աբրահամյանը, հենվելով նաև Հովհաննես Զմյուռնացու՝ մեր կողմից արդեն հիշատակված պատմության ու ազգագրագետ Ե. Լալայանի այն տեղեկության վրա, որ Դավիթ Բեկը Վրաստանից վերաբնակեցված Ղափանի մելիքական Աստվածատրյան տոհմից կամ Ալլահվերդի իշխանի գարմից է,¹⁶ հետագայում ևս իր մեկ աշխատության մեջ նշում է, որ. «Դավիթ Բեկը գեղարքունիքից է, սերվում է Աթաբեկի ցեղատոհմից: Նա ունեցել է Մխիթար անունով որդի, որի զավակներն են ռուս բանակի փոխգնդապետ Ստեփանոսը և Էջմիածնի միաբանության անդամ Իսահակ Վարդապետը»¹⁷: Ի դեպ, Ա. Աբրահամյանի հետևության այն մասը, որը վերաբերում է Դավիթ Բեկի ժառանգներ ունենալուն կամ փոխգնդապետ Դավիդովի և Էջմիածնի միաբանության անդամ Իսահակի Դավիթ Բեկի թոռը լինելուն, դրա համար որպես **միակ** հիմք է ծառայել նշված 45 վավերագիրը¹⁸:

Պրոֆ. Պ. Հարությունյանը, անդրադառնալով Դավիթ Բեկի վերաբերյալ Ա. Աբրահամյանի վերը նշված հետևությանը, գրում է.

¹³ Ա. Աբրահամյան, «Նոր Վավերագրեր», էջ 72:

¹⁴ Նույն տեղում, էջ 70, Տե՛ս նաև Մատենադարան կաթողիկոսական դիվան, թղթապանակ 6, վավերագիր 45:

¹⁵ Նույն տեղում, էջ 71:

¹⁶ Տե՛ս ձեռագիր 2888, էջ 656 (334), Ե. Լալայան, Զանգեզուրի գավառը «Ազգագրական հանդես», գիրք 12, Թիֆլիզ, 1905, էջ 177-178:

¹⁷ Տե՛ս Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 94-95:

¹⁸ Տե՛ս վավերագիր 45:

«Աղբյուրները ցույց են տալիս, որ Դավիթ Բեկը եղել է Թիֆլիզեցի հայ, ուն Ալիխանի որդին»: Արխիվային փաստաթղթերում Դավիթ Բեկն անվանված է «ուն վրացի» կամ «ուն վրացահայ»¹⁹: Պ. Հարությունյանը նաև նշում է, որ Դավիդովին տրված այդ տեղեկանքը կեղծ է և նպատակ է հետապնդում վերջինիս Դավիդովի ազնվականության կոչում ստանալուն²⁰: Ինքը՝ Ա. Աբրահամյանը, ընդհանուր առմամբ պնդելով հանդերձ իր՝ մեր կողմից արդեն բերված եզրակացությունը, հետևությունը Դավիթ Բեկի վերաբերյալ, միաժամանակ նշում է, որ, իրոք, հնարավոր էր, որ Դավիդովին տրված տեղեկանքը կարող էր կեղծ լինել և հետապնդեր ազնվականության կոչում ստանալու նպատակ Դավիդովի համար²¹: Այս կապակցությամբ ճիշտ են թե՛ Ա. Աբրահամյանի, թե՛ Պ. Հարությունյանի այն կարծիքները, որ Դավիդովին տրված տեղեկանքում (վավ. 45) նշված տեղեկությունները ո՛չ ժխտող և ո՛չ էլ հաստատող ապացույցներ չկան²²: Ղուզանենց Փարսադան Բեկի որդի Թաղի հարյուրապետը, որը Դավիթ Բեկի ազգականն ու ապստամբության շրջանի ժամանակակիցն էր, գրում է. «Արդ մեր հայր Փարսատան պեկն յԱրտավել քաղաքումն վախճանեալք որոյ շիրիմն է անդ այժմ, և մայր մեր Լէլան, և քոյր մեր Հուսնիփերն և եղբայր մեր Կարսեանն, և միւս քոյր Ալամի Սուլթանն. սոքա ի Տիֆլիս քաղաքումն վախճանեալք են մեր մյուս եղբայր Աբտվմասին, որ Վրաստան պարոնի հրամանաւ գնացին տեղն Ջորաժողով առնելոց որ եղբայրս էլ Ջորպէր. որոնց գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւութ պէկ որ է իմ փեսայ որք ընդ պարսից և օսմանցոց բազում պատերազմս ետուն և ի վախճանի անկան ի մարտին, որ իմ եղբօր գերեզմանն այժմ Խոտի է ի Ղափանումն, ի Խոտի գեղումն է վախճանեալ և իմ եղբայր պըրն Ռափատեղին...»²³: Թաղիի հաղորդումից երևում է նաև, որ իր եղբայրները Սյունիք են գնացել **վրաց պարոնի** հրամանով՝ զորաժողովի, մի բան, որը լրացուցիչ կարգով հաստատում է «Ընտիր պատ-

¹⁹ П. Арутюнян, Освободительное движение Армянского народа в первой четверти XVIII-го века, Москва, 1954, стр. 257.

²⁰ Նույն տեղում:

²¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, «Մի էջ...», էջ 94:

²² Տե՛ս Պ. Արտյույան, նշվ. աշխ., էջ 257-259:

²³ Չաքարիա նկարչի ձեռագիրը և Դաւիթ Բեկի մասին հիշատակություն, Տե՛ս «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1921-22, էջ 135-136:

մութեան» հաղորդած տեղեկությունները, և որ Դավիթ Բեկը Սյունիքի գորքերի, այն գորքերի հրամանատարն էր, որում ծառայում էին Վրաստանից գնացած Թաղիի եղբայրները: Թաղին նաև հաղորդում է ինչպես իր եղբայրների, այնպես էլ Դավիթ Բեկի՝ **մարտի ժամանակ** մահանալու մասին, թեպետ և չի նշում, թե երբ և ինչ մարտի ժամանակ: Հիշատակում է նաև, որ Դավիթ Բեկը Ալիխանի որդին էր ու իր փեսան: Թաղիի հաղորդումից անուղղակիորեն կարելի է նաև ենթադրել, որ ինչպես իր եղբայրները, այնպես էլ Դավիթ Բեկը ծառայել են Վրաստանում միասին: Մյուս կարևոր հանգամանքը, որ Թաղին նշում է, դա այն է, որ ինչպես եղբայրը, այնպես էլ Դավիթ Բեկը «ի մարտին անկան», չի նշանակում, թե նույն ժամանակ, նույն մարտում մահացան, եթե այդպես լիներ, ապա նույն տեղում Թաղին կնշեր նաև, թե որտեղ է թաղվել Դավիթ Բեկը՝ իր փեսան, գորահրամանատարը, մինչդեռ բավարարվում է՝ նշելով, որ Ղափանի Խոտի (Խոտանան) գյուղում են թաղված իր երկու եղբայրները:

Դավիթ Բեկի մասին եղած այս հիշատակությունները, միմյանց լրացնելով, անառարկելիորեն հաստատում են, որ Դավիթ Բեկը վրաց բանակում ծառայող գորական էր, որ նա Սյունիքի զինվորությանը գլխավորելու համար Հայաստան՝ Սյունիք էր եկել վրաց արքունիքի հանձնարարությամբ և մի շարք այլ հանգամանքներ (օրինակ՝ որ հայրը Ալիխանն էր, որ Դավիթ Բեկը Թաղի հարյուրապետի փեսան էր և այլն), սակայն ինչ վերաբերում է նրան, թե Դավիթ Բեկը դափանցի էր, հալիձորցի, սիսիանցի, թե մցխեթցի կամ գեղարքունիքցի, կոնկրետ որ գավառից ու բնակավայրից, իշխանական տոհմից էր, թե ոչ, ապա դրա վերաբերյալ տեղեկությունները դեռևս անհաստատ են: Ուրեմն մնում է ընդունել միակ վավաստի աղբյուրը՝ «Ընտիր պատմությունը» իր աղքատիկ հաղորդմամբ, որ Դավիթ Բեկը պունեցի էր, իսկ Սյունիքը 18-րդ դարում ընդգրկվում էր **Ղափան**-ի հասկացության մեջ: Իսկ 17-18-րդ դարերում Ղափան անվան տակ հասկացվում էին տարբեր մեծություն ունեցող երկու տերիտորիալ միավորներ: Դրանցից մեկը բուն Ղափան կամ փոքր Ղափանն էր, որ իր մեջ ընդգրկում էր նախկին Չորք (կամ Կապան), Բաղք (Ղափան) և Կովսական (Չանգեղան) գավառները: Փոքր Ղափանը 18-րդ դարում կոչվել է նաև «Յոթնաբերդ գաւառ»: Երկրորդը Մեծ Ղափանն էր, որ, բացի Փոքր Ղափանից, իր մեջ էր ընդգրկում նաև նախկին Արևիքը, Հաբանդը, Գորիսը՝ բուն

Զանգեզուրը, Օդուկքը, Աղահեջքի մեծ մասը և ավելի հյուսիս ընկած մի քանի շրջաններ²⁴: Ավելի հյուսիս ընկած մի քանի այլ շրջաններ արդեն ընդգրկում են Գեղարքունիքի տարածքը, որը, ինչպես Ա. Աբրահամյանն է պնդում, նույնպես մտնում էր Սյունիքի, ուրեմն նաև Ղափանի մեջ, **ապա միանգամայն ճիշտ պետք է համարել այն պնդումը, որ Դավիթ Բեկը սյունեցի էր՝ ղափանցի:**

Ի դեպ, բանահավաքային տվյալները (Ե. Լալայան, Ստ. Լիսիցյան և այլք) հաստատում են, որ Դավիթ Բեկը սյունեցի էր²⁵, ըստ որում, Լիսիցյանը նշում էր, որ Դավիթ Բեկը Ղափանի Մելիք Փարսադանյան տոհմից էր ու Ասատուր անունով հայր է ունեցել, որը հետագայում մահմեդականություն է ընդունել՝ կրելով Ալա(հ)վերդի (թուրք. Աստոն տված) անունը, անցնելով պարսիկ խաների կողմը. նրա որդին էր Դավիթ Բեկը կամ Մեծ Դավիթ Բեկը, որը հոր դավաճանությունը չի ներել և փախել է Հալիձոր՝ Ասատուրի եղբոր որդի Մելիք Փարսադան II-ի մոտ: Վերջինս էլ, որպեսզի ժողովրդի հնարավոր զայրույթը չվնասի Դավիթ Բեկին, նրան տեղափոխում է Տփղիս (Թիֆլիս)՝ խոջա Սարգսի մոտ, որի մոտից էլ Դավիթ Բեկը մտնում է զինծառայության վրաց թագավորի մոտ²⁶ (ենթադրվում է, որ Բաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում հիշատակված Թամարը՝ Դավիթ Բեկի սիրած աղջիկը, հենց խոջա Սարգսի աղջիկն էր): Հետագայում այս Դավիթ Բեկն էլ գլխավորում է Սյունիքի ապստամբությունը, ազատագրական պայքարը՝ մինչև իր մահը՝ ըստ «Ընտիր պատմության» (1728 թվականը): Հիմք պետք է ընդունել նաև «Ընտիր պատմության» այն հաղորդումը, որ Դավիթ Բեկը ազնվական էր, ծանոթ գրոց, բարեպաշտ, վրեժխնդիր թշնամեաց և այլն²⁷:

Դավիթ Բեկը, գալով Սյունիք, հավաքում է տեղական ուժերի և ռազմական հաջողությունների հասնելով՝ ազատագրում զգալի թվով տարածքներ: Դավիթ Բեկի մահից հետո պայքարը, ըստ «Ընտիր պատմության», գլխավորում է նրա զինակից Մխիթար Սպարապետը մինչև 1730 թվականը: Հայաստան՝ Սյունիք և Արցախ ներ-

²⁴ Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968, էջ 76:

²⁵ Տե՛ս Ե. Լալայան, նշվ. աշխ., Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Ե., 1969, էջ 313-314:

²⁶ Տե՛ս Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ.:

²⁷ Տե՛ս Ընտիր պատմություն, էջ 6:

խուժած ավելի հզոր թշնամու՝ օսմանյան թուրքերի դեմ անհավասար պայքարում, սակայն, ազատագրական պայքարն անկում է ապրում*:

* Մյունիքի և Արցախի այդ շրջանի ազատագրական շարժման վերաբերյալ մեր մի քանի փոքրածավալ աշխատություններ են լույս տեսել (տես օր.՝ Телунц М., Россия и освободительное движение Сюника и Арцаха в первом тридцатилетии XVIII века. Некоторые вопросы самоопределения НКР, Ереван, 2014) այց այդ հիմնական դրոյ մենք նախապատրաստում ենք ծավալուն աշխատություն, որը կներկայացնենք Մյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնին՝ տպագրման, ուսանողներին, մասնագետներին և ընթերցող լայն հասարակայնությանը ներկայացնելու:

**Малик Телунц
Горис**

Освободительное движение Сюника и Арцаха в 1722-1730-годах и Давид Бек как предводитель освободительного движения (о личности и месте рождения Давид Бека)

Резюме

В статье на основе первоисточников автор обсуждает считающийся спорным вопрос о некоторых аспектах: о личности и месте рождения одного из известных предводителей освободительной борьбы Сюника и Арцаха в 1722-1730 годах - Давида Бека – и делает довольно убедительный вывод о том, что место рождения предводителя освободительного движения армян в Сюнике 1722-1730 годах: Давид Бек был на военной службе у грузинского царя и по его велению и по просьбе армянских меликов возглавил армянское освободительное движение в Сюнике того периода.

**Malik Telunts
Goris**

The liberating movement of Syunik region and Artsakh in 1722 - 1730 and Davit Bek as the leader of the liberating movement (about Davit Bek and his place of birth).

Summary

In the article, on the basis of the analysis of primary source, the author describes the issues concerning to the place of birth and personality of Davit Bek- the leader of the liberating movement in 1722-1730, by coming to the conclusion, that Davit Bek was a professional soldier, who served for the georgian King Vakhtang. He was from Syunik region and came to Armenia at the request of Armenian meliks in order to lead Armenian liberating movement against the Persian yoke.



Գրիշա Սմբատյան
Կապան

Smbatyangrisha@gmail.com

Կրթական գործի սկիզբը. հոգևորականության դերը

1828 թ. Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումով զարգացում ապրեցին հայ դպրոցն ու մանկավարժական միտքը, վերելք ապրեց կրթությունը: «Սկսած 1830-ական թվականներից, տարբեր ժամանակներում ռուսաստանյան կայսրության սահմաններում բացվել ու գործել են շուրջ 1200 հայ դպրոցներ, այդ թվում՝ Երևանի թեմում՝ 550»¹: Ելի գավետալի նահանգի Երևանի թեմի Տաթևի վիճակի Միսիանի, Գորիսի, Ղափանի և Մեղրու շրջաններում բացվել և գործել է 59 դպրոց, որից 24-ը՝ Ղափանում: Թեև դպրոցները կրել են եկեղեցական ծխական անունը, սակայն ունեցել են աշխարհիկ ուղղվածություն: Դպրոցների մեծ մասը կարճատև կյանք է ունեցել և փակվել է միջոցների բացակայության պատճառով: Հայտնի են փակված դպրոցների վերաբացման դեպքեր:

Դպրոցների պատմության ուսումնասիրության գլխավոր աղբյուր պիտի հանդիսանան վիճակագրական տեղեկությունները, հաշվետվությունները, այլ վավերագրեր: Սակայն 19-րդ դարի 30-60-ականներին ընդհանրապես չի եղել վիճակագրություն, իսկ հետագայում թեև որոշ չափով կարգավորվել է գործը, բայց ամեն բան արվել է չհամակարգված, կիսատ-պռատ: Կան դպրոցներ, որոնք արխիվներ են ունեցել, սակայն դրանք կորել են անվերադարձ: Այս բոլորը վերաբերում է նաև այնպիսի մի շրջանի, ինչպիսին Կապանն է: Կապանյան դպրոցի մասին մենք խոսում ենք գրավոր ու բանավոր հիշողությունների, մամուլի հրապարակումների և արխիվային վավերագրերի հիման վրա: 1836թ.մարտի 11-ի Ռուսական կառավարության ընդունած «Հայ լուսավորչական հավատի հոգևոր գործերի կառավարման կանոնադրությունը» (Положение) հնարավորություն տվեց գյուղերում ունենալ ծխական դպրոցներ:

¹ Ս. Խուրդյան, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Ե., 1987, էջ 8:

Եկեղեցական ծխական դպրոցները բացվում էին եկեղեցիներին կից, պահվում էին եկեղեցու, բնակչության, բարերարների, բարեգործական հաստատությունների միջոցներով և ուսման վարձավճարներով: Դրանք տարրական դպրոցներն էին՝ երկու տիպի՝ մի-դասյան /երկամյա/ և երկդասյան /չորսամյա/: Դպրոցները մշտապես կարիքի մեջ էին: Պետությունը, ինչպես ստում են, ձեռքերը լվացել էր դպրոցից:

Ինչպես Հայաստանի այլ շրջաններում, Ղափանում ևս կրթական գործը իր վրա էր վերցրել հոգևորականությունը: Ղափանյան հոգևոր տոհմերը խոր ազդեցություն ունեին հասարակության վրա, այքի էին ընկնում իրենց անհատականություններով, ժողովրդին ծառայելու, նրան օգտակար լինելու բազմաթիվ օրինակներով: Արդյոք ղափանյան հոգևորականությունը կարող էր իր վրա վերցնել տարածաշրջանի կրթության գործը: Սկզբնական շրջանում՝ այո՝:

Հոգևորականների զավակները գյուղերում սովորելուց հետո մեկնում էին Տաթև, Գորիս, Շուշի, Էջմիածին, Թիֆլիս, կրթություն էին ստանում և վերադառնում էին խավարից ու անգիտությունից հայրենակիցներին դուրս բերելու մտադրությամբ: 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հոգևոր այս տներից ծագող քահանայական ընտանիքի շատ ու շատ զավակներ կրթություն էին ստանում հիմնականում Շուշիում և վերադառնում էին ոչ որպես հոգևորականներ. իրենց համար նոր աշխարհիկ զբաղմունքներ էին գտնում: Մի մասը ուսուցչություն էր անում դպրոցներում:

Ղափանյան հոգևոր տոհմերը ծագում էին գյուղերից, ապրում էին գյուղերում, այքի էին ընկնում իրենց ուսյալ զավակներով²:

Ձևավորվել էր ուսուցչության երկու խավ՝ ծխական դպրոցների և պետական դպրոցների: Առաջինը կապված էր եկեղեցու հետ, վարձատրվում էր նրա կողմից, երկրորդը վճարվում էր պետության

² Հոգևոր տոհմերն ըստ գյուղերի՝ Տեր-Հարությունյան, Տեր-Օհանյան /Արծվանիկ/, Տեր-Ավագյան, Տեր-Էլչիբեկյան /Գյուտկում/, Տեր-Մովսիսյան /Զեյվա/, Տեր-Դավթյան, Տեր-Ստեփանյան, Տեր-Հարությունյան, Տեր-Պետրոսյան /Խոտանան/, Տեր-Մինասյան /Խլաթաղ/, Տեր-Մարգարյան /Քաջարանց և Ծավ/, Տեր-Մարտիրոսյան /Խղրանց/, Տեր-Մարտիրոսյան /Կեմանց/, Տեր-Գրիգորյան /Ներքին Հանդ/, Տեր-Ստեփանյան /Վերին Հանդ/, Տեր-Ղարախանյան / Ջակատեն/, Տեր-Խաչատրյան /Մողես/, Տեր-Մովսիսյան, Տեր-Գևորգյան, Տեր-Կարապետյան /Շիկահող/, Տեր-Գրիգորյան /Շիշկերտ/, Տեր-Մարգարյան /Շրվենանց/, Տեր-Կարապետյան /Սրաշեն/, Տեր-Գրիգորյան /Սևաբար/:

կողմից: Հասարակական կյանքում առաջընթաց էր այն, որ այս երկու խմբերը համերաշխվել և համագործակցում էին միմյանց հետ:

«Ուսուցչության այս երկու հատվածները,- գրում է Ստ. Լիսիցյանը,- չնայած այն հանգամանքին, որ ենթարկվում էին տարբեր իրավասությունների, հավասարապես համերաշխ ակտիվությամբ էին մասնակցում տեղական հասարակական խնդիրների լուծմանն ու ծավալվող դասակարգային, ինչպես և ազգային պայքարին՝ հարելով այս կամ այն կուսակցական խմբավորմանը և իրենց ետևից տանելով տեղական մտավորականությանը, որը կազմված էր առավելապես պետական և հասարակական հիմնարկների, ինչպես և հանքավայրերում ծառայողներից»³:

Շատ են հոգևորական գործիչների այն զավակները, ովքեր հեղափոխականներ, ազգային-հասարակական-քաղաքական գործիչներ ու մտավորականներ դարձան: Բայց և չի կարելի պնդել, որ հոգևոր դասի գործունեությունը ամբողջովին նվիրվածություն էր և համաժողովրդական համակրանք էր վայելում: Եղել են և այնպիսիք, ովքեր ժողովրդի հիշողության մեջ մնացին իբրև շահագործողներ:

Գյուղական առաջին դպրոցները Ղափանում: Ոգևորությունն ու անտարբերությունը կողք կողքի

Մեզ հայտնի առաջին դպրոցի հիմնադիրն էր Տաթևի վանական դպրոցի շրջանավարտ Սողոմոն Մելիք-Աղամիրյանը /1817-1895/, որը մասնավոր դպրոց է բացել հայրենի Նորաշենիկ գյուղում: 40-ականներին նա իր տանը հավաքել է Աճանանի գավառի երեխաներին ու դասավանդել իշխանություններից գաղտնի: Հետագանդել են, մատնել, սակայն իր գործը համառոտ են առաջ է տարել չվախենալով արքայի սպառնալիքից: Պարապմունքներին հերթապահություն էր նշանակել՝ գյուղ մտնող ճանապարհները հսկողության տակ առնել, որ չլինի թե հանկարծ ցարական իշխանավորներ մտնեն գյուղ: Պատահել է, որ նրանց գալն իմացել և դասերը դադարեցրել են: Նա մտահոգ էր իր զավակների կրթությամբ: Դըպրոցում ընդգրկել է նաև դստերը, մի բան, որ հազվագյուտ երևույթ

³ Ստ. Լիսիցյան, Ջանգեգուրի հայերը Ե., 1969, էջ 254:

էր այն ժամանակների համար: «Նոր դար»-ում տպագրված անստորագիր թղթակցությունը գուժում է նրա մահը, գնահատում գործերը, այդ թվում՝ կրթականը. «Ուսման գործի մեջ հանգուցյալը միակն էր այդ երկրում և մինչև վերջին տարիներս պահում էր Նորաշենիկում մասնավոր դպրոց: Յուր կրթությունը ստացել է Տաթևի վանքում Սիմոն վարդապետից և ստացել է ավագ սարկավագության աստիճան: Հանգուցյալը յուր կուռ և քրտնաջան վաստակի համար արժանացած է Եփրեմ և Ներսես կաթողիկոսների կոնդակներին»⁴:

Ղափանը նախ և առաջ գյուղաշխարհ էր: Ծանր, անասելի ծանր էր հայ գյուղացու վիճակը Ղափանի գյուղերում՝ վաշխառուներ, ուժից վեր աշխատանք, համաճարակ, անբերրիություն և սով: Գյուղացին անկարող էր մեջքն ուղղել: Բայց այսքանից հետո նա իր մեջ ուժ էր գտնում խորհելու իր զավակների կրթության մասին՝ հույսեր փայփայելով, որ իրեն թշվառությունից հանողը լինելու են ուսյալ զավակները:

Իր ընչագուրկ վիճակը մոռանալով՝ հանգանակություն էր կատարում, օգնում դպրոցական շենքերի կառուցմանը: «Նա կրահորն էր վառում, գրաստներով քար կրում, գերանների ու մարդակների համար անտառ գնում, որպես բանող ուժ մասնակցում շինարարությանը: Որպես կանոն, կառույցի պատերը շարում էին գյուղի ամենահմուտ որմնադիրները, ատաղձագործությունը վստահում էին ճանաչված հյուսներին: Շենքերի շահագործման առիթով կազմակերպում էին տոնախմբություններ»⁵:

Ղափանին բնորոշ պատկեր էր: Բայց Ղափանն առանձնահատուկ էր⁶: Երբ խորանում ենք դպրոցական շենքերի կառուցման, դպրոցների հիմնադրման պատմության մեջ, մեծ ակնածանքով ենք

⁴ «Նոր Դար», Ե., 1895, N 118:

⁵ Ա. Ադամյան, Կրթության ոսկեդար, Ե., 2000, էջ 278:

⁶ Ղափանում դպրոց բացելու վերաբերյալ նույնիսկ լեգենդ է հյուսվել: Իբր իշխանություններն արգելել են Ծավ գյուղում դպրոց բացել, ու մարդիկ մեկնել են Պետերբուրգ, հանդիպել ցար Նիկոլայ 2-րդին: Ցարը համակ ուշադրությամբ լսել է Ծավի պատվիրակներին, ժպտացել և անմիջապես հրաման է արձակել դպրոցի բացման մասին հրովարտակ պատրաստել: Այս մասին տե՛ս Գ. Սմբատյան, Սյունիքը փորձության ճանապարհին (19 և 20-րդ դարերի սահմանագծում) /տպագրության ընթացքում/:

լցվում հայ գյուղացու նկատմամբ: Գյուղացին խնդրագրեր է ուղարկել ուր ասես, վերջին լուսման է դրել դպրոցի համար, պատրաստ է եղել չարքաշ աշխատանքի, քար և փայտանյութ է քարշ տվել, վարպետ շինարարների համար հերթով հյուրասիրություն է կազմակերպել, բայց կառույցի համար հողակտորը չի զիջել... Ծառ չպիտի հատվեր, սևահողը չպիտի քերվեր: Սա գյուղացու հավատամքն էր: Չի նահանջել, չի ընկրկել, չի կաշառվել, ոսկեդրամի փայլից խելքը չի կորցրել: Գյուղացին մատնացույց է արել լերկ ու ամայի վայրը:

Ղափանի գյուղերում հողի հարցում չզիջեցին բարերարներ Մանուշար Ավագովին, Փարսադան Նուրիջանյանին, Գևորգ Եղիազարյանին, Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանին, Հովհաննես Արախանյանին և նույնիսկ Գասպար Տեր-Մարգարյանցին:

Բոլոր գյուղերում դպրոցական շենքերը քարոտ, բուսագուրկ, մացառուտներով պատած վայրերում կառուցվեցին:

Շիկահողում դպրոց կառուցելու ցանկություն ուներ Մեսրոպ Մագիստրոսը: Սրբազանի պատվիրակների խնդրանքը՝ հող հատկացնել գետափնյա այգիներից դպրոց կառուցելու համար, մերժվեց: Գյուղացիք արևկող ձորակլին հարող թեք լանջը մատնացույց արին: Դպրոցը կառուցվեց այստեղ Մագիստրոսի հանգանակած միջոցներով: Հրաշալի շենք էր. ծառայեց տասնամյակներ, երկու երկրաշարժ տեսավ, բայց ճաք անգամ չտվեց: Հիասքանչ շենքն այլևս չկա, ավերիչ ձեռքերը այն քանդեցին 20-րդ դարի 80-ականներին:

Բարերար Տեր-Մարգարյանը Բաքվից հասավ հայրենի Շրվենանց գյուղ և խնդրեց համագյուղացիներին դպրոցի կառուցման համար քիչ ծախսեր պահանջող և հարմար հողակտոր հատկացնել:

Գյուղը մերժեց բարերարին:

Դիմեց իր հարազատ եղբայրներին՝ հայրական հողերից զիջել իրեն: Նրանք ևս մերժեցին:

-Ձեր երեխաների համար եմ կառուցում: Ձեր հողերի արժեքից ավելին կտամ,- հայտարարեց Տեր-Մարգարյանը:

-Հողն արժեք չունի,- համառեցին Շրվենանցում:

Լռեց...վիրավորված էր: Բայց դպրոցը պիտի կառուցվեր: Եվ ընտրեց քարքարոտ, լերկ ու ամայի լանջը: Մի օր՝ առավոտյան, քայլերն ուղղեց այստեղ, կանգնեց ցցված մի քարակտորի վրա և կարգադրեց. «Շրվենանց գյուղի դպրոցը այստեղ է լինելու: Փորե՛ք հիմքը»:

Փորեցին: Հիմքն իր ներկայությամբ լցնելուց հետո Տեր-Մար-
գարյանը վերադարձավ Բաքու:

Առաջին բացված դպրոցներից մեկը եղել է **Արծվանիկում**⁷ եկե-
ղեցուն կից, 1855 թվականին, և տառաճանաչություն սովորեցնելու,
պարզագույն հաշիվ սովորեցնելու նպատակ ուներ:

1870թ. Էջմիածնի թույլտվությամբ գյուղում դպրոցի հիմքերը
դրվեցին, բայց դպրոցը բացվեց 1872-ին: Դպրոց սկսեցին հաճախել
հարևան գյուղերից: Դասերը սկզբում անցկացվում էին խոջա Ար-
զումանի տանը: Դպրոցի առաջին ուսուցիչն էր Մեսրոպ քահանա
Տեր-Հարությունյանը՝ գյուղի քահանան, ով սովորել էր Տաթևի վա-
նական դպրոցում, ապա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Նա աչքի
էր ընկնում բարձր կուլտուրայով, գիտելիքներով, հարգանք ուներ
Ղափանում:

Դպրոցի կառուցմանը, պարապմունքների կազմակերպմանը
աջակցություն է ցույց տվել հաշտարար դատավոր Մովսես Բեկ-
Բեկզադյանը, որը բնակվում էր Արծվանիկում: Արծվանիկում էր
գործում դատարանը: Դատավորը նաև որոշակի գումար է նվիրա-
բերել դպրոցի կառուցմանը:

1881-1882թթ. ուստարին սկսվեց նորակառույցում: Դպրոցի
բացմանը ներկա էին նաև հարևան գյուղերի ներկայացուցիչները,
Տաթևի միաբանության հոգևոր առաջնորդը: Դպրոցի բացման հան-
դիսությանը ներկա էր նաև վիպասան Բաֆֆին, որը շրջագայում էր
Զանգեզուրում: Դպրոցի առաջին զանգը հնչեցնելու պատիվը
շնորհվել է վիպասանին⁷:

Դպրոցի ավագ ուսուցիչ ընտրվեց Մեսրոպ Տեր-Հարությունյա-
նը:

Արծվանիկի դպրոցում ավելի քան 10 տարի /1890-1901/ աշ-
խատել է Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ Եփրեմ Մելիք-
Շահնազարյանը: Նա ամուր հիմքերի վրա դրեց ռուսերենի ուսու-
ցումը, կարողացավ իրականացնել երկսեռ ուսուցում, օգտակար ե-
ղավ հասարակության ստորին խավերին: Ազգագրական ուսումնա-
սիրությունների հեղինակ էր, տպագրվում էր «Кавказ» ժողովածուի
համարներում:

⁷ Է. Մանուչարյան, Հ. Սահակյան, Արծվանիկ, Ե., 2009, էջ 122:

Մելիք-Շահնագարյանը 1900թ. Արծվանիկում կազմակերպել է առաջին թատերական ներկայացումը:

1890-ից Արծվանիկի դպրոցը ստացավ պետական /գեմստվոյական/ դպրոցի կարգավիճակ, որոշ առարկաներ սկսեցին ուսուցանվել ռուսերեն: Բազմաթիվ ուսուցիչներ աշխատեցին այս դպրոցում, սակայն առաջատարը մնաց Մեսրոպ Տեր-Հարությունյանը, ով անբասիր աշխատանքի համար արժանացավ Գանձակի նահանգական լուսավորության վարչության խրախուսանքին և պարգևատրվեց «Խաչ» մեդալով:

Գյուտկումի⁸ դպրոցի մասին. հասարակությունն այստեղ անտարբեր էր սերնդի կրթության ու լուսավորության հարցում: 1890-ականներին այստեղ բացված միդասյան ծխական դպրոցը փակվեց, սակայն վերաբացվեց պայմանով, որ ուսուցչի և բնակարանի ծախսերը պիտի հոգային Գյուտկումի հասարակության երեք գյուղերը⁹: Բայց նրանք հրաժարվում են կատարել իրենց խոստումը և «շատ մազալու բաներ են տեղի ունենում, երբ տարին մեկ պետք էր լինում հանգանակել այդ գումարը, էլ կռիվ, հիշոց...»¹⁰:

1902թ.-ին մի քանի օրով Բաքվից հայրենի Գյուտկում է գալիս մեծահարուստ Մանուշար Ավագյանցը: Հայրենակիցները, մտահոգ իրենց երեխաների ուսման խնդիրներով, դիմում են մեծահարուստին՝ խնդրելով կառուցել դպրոցական շենք և դպրոցն ապահովել ուսուցիչներով:

«Մի երկու տարուց հետո կատարվում է գյուղացոց խնդիրը իհարկե ոչ լիովին, այլ մասամբ: Պարոն Ավագյանցը շինել է տալիս իր ծննդավայրում մի շենք՝ 3-4 դահլիճից բաղկացած, և դրանով վերջացրած է համարում իր՝ դեպի հայրենիքն ունեցած պարտքը: Ուսուցիչներով ապահովելու համար խոսք լինել չէր կարող, որովհետև պարոնը լսել անգամ չէր ուզում այդ մասին: Ընդամենը 7-8 տարվա կյանք ունեցավ այդ շինությունը. անուշադիր վերաբերմունքի պատճառով համարյա կիսավեր դարձավ. տանիքը կաթում էր՝ պատերը՝ ճեղքված, հիմքի քարերը՝ բացված. ահա այն պատկերը, որ ուներ մեր հարուստ հայրենակցի «արդեամբք և ծախիւք» կա-

⁸ Գյուտկում, այժմ՝ Գեղանուշ գյուղը:

⁹ Այդ գյուղերն են Գյուտկումը, Ճակատենը և Բաղաբուրջը:

¹⁰ «Ղարաբաղ», 1912, N 19:

ռուցած շենքը: Տեսնելով այդ խղճուկ և անտեր շենքը՝ ակամա մտածում ես, որ սա ոչ թե մի կարևոր բարերարություն է՝ հայրենիքի մատաղ սերնդի կրթությանը նվիրված, այլ օձիքը մուրացիկներից թոթափելու համար՝ ակամա կատարած նվիրաբերություն: Եթե այդպես չլիներ, հիմնադիրը գեթ մի անգամ կհետաքրքրվեր իր կառուցած շենքի վիճակով:

Այս դպրոցի անփառունակ վիճակի համար պակաս մեղավոր չեն նաև գյուտկումցիք, մանավանդ բանիմաց ու կարող անձինք, որոնց համար խորթ զավակ էր դպրոցը: Նպատակ չունենալով վիրավորել ոչ ոքի՝ միաժամանակ չեմ կարող թաքցնել ճշմարտությունը: Մինչդեռ մեզնից 15-20 և ավելի տարիներ առաջ մեր հայրերն իրենց սուղ միջոցներով ոչ մի ջանք չէին խնայում գեթ գրագիտություն տարածել մանուկ սերնդի մեջ, այսօր մեր երիտասարդ և ինտելիգենտ համարվածները շատ անտարբեր և սառն վերաբերմունք ունեն դեպի գյուղացու կրթության գործը», - մտորում է Գեդեոն Տեր-Մինասյանը¹¹:

Եղվարդ գյուղի դպրոցը հիմնեց «Արամազդ» ընկերությունը: Եղվարդ գյուղի դպրոցի հիմնումը պառակտման, խռովությունների պատճառ դարձավ: Որոշվեց, որ Եղվարդի դպրոց պիտի հաճախեն Ուժանիսի երեխաները, բայց երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող գյուղը մերժեց իր երեխաներին հարևան գյուղ ուղարկել: Պահանջում էին դպրոց հիմնել Ուժանիսում:

Եղվարդի դպրոցի շինարարությանը մասնակցեց ամբողջ գյուղը: Բախումներից հետո էր. գյուղը տնտեսական ծանր վիճակի մեջ էր հայտնվել, բայց բնակիչները ուժ էին գտել իրենց մեջ թե՛ միջոցներ ներդնելու և թե՛ աշխատելու: Քար էին կրում, փայտ բերում, հող էին փորում...: Պիտի 1908-ին ավարտեին, բայց չհասցրին: 1908-1909 ուսումնական տարին դեռ չսկսած՝ դասերը ավարտվեցին /երեխաները դպրոց հաճախեցին 3 ամիս/: Կառույցն անավարտ էր մնացել, և «Արամազդ»-ը ուսուցիչ չուղարկեց:

1910-1911 թվականներին դպրոցը կանոնավոր գործեց, որը եռանդ հաղորդեց գյուղացիներին: Մարդիկ փող հավաքեցին, նույնիսկ իրենց նպաստ տրված 200 փուլ ջորենը ներդրեցին դպրոցի շինարարության ծախսերի համար:

¹¹ Նույն տեղում:

Դպրոց կառուցելու ծրագրեր էին կազմվում **Զեյվայում**. այստեղ ոգևորություն էր տիրում: Բազմիցս դիմել էին Բաքվի իրենց հայրենակիցներին, բայց ստացել անորոշ պատասխաններ:

1910թ. Հունվարին կազմակերպվեց ծխական ժողով, ուր ուսուցիչները հասարակությանը ներկայացրին դպրոցական շենքի կառուցման անհրաժեշտությունը: Ժողովականները նամակով դիմեցին Բաքվում բնակվող համագյուղացի Գևորգ Եղիազարյանին: Պատասխանը չուշացավ: Նավթահանքերում աշխատող, Բաքվում առևտրական տուն ունեցող Գևորգն իր վրա վերցրեց շենքի կառուցման ամբողջ ծախսը: Գյուղում վճռական էին, ոգևորությունը սահման չունեք: Շնորհակալական նամակ ուղարկեցին բարեգործին: Գյուղացիները փող հանգանակեցին և հողակտոր գնեցին:

Դպրոցական կառույցի հիմնադրմանը հրավիրվեց դպրոցների տեսուչ Գևորգբեկյանը, և մարտ ամսվա մի կիրակի գյուղում հնչեց գունան:

«Գավառը» հաղորդում է, որ առաջինը հիմքը փորելու պատիվը տրվեց Հ. Հարությունյանին, ապա հողի տերերին, հետո քլունգներն ու բահերն առան ուսուցիչները, հրավիրվածները, քահանան: Կրահորը պատրաստ էր, կիրը վառվեց...միանգամից անտառ մեկնեցին փայտանյութ բերելու: Զեյվայում առանձնապես ոգևորված էր երիտասարդությունը:

«Գյուղացիք գործում են համերաշխ սիրով և աշխույժով: Ահա մի հասարակություն, որ կարող է օրինակ լինել և մյուս գյուղերին: Թող մոտակա գյուղերն էլ վառվին բարի նախանձով և իրենք ևս շտապեն կատարել այն գեղեցիկ գործը, որը կարող է պատիվ բերել»¹²:

Շիկահողում դպրոցական շենք կառուցելու մտադրություն ունեին դեռ 1901 թվականից: 1906-ին բացված դպրոցը գործում էր մասնավոր տան մութ սենյակների մեջ, գույքի և պիտույքների խիստ պակասության պայմաններում:

«Շենքի կառուցման համար հսկայական կիր էր պատրաստվել, սակայն գյուղի մի քանի մեծատուններ, տեսնելով, որ շինարարությունը ձգձգվում է, «տարան ուսումնարանի համար ամբարած կրից և իրենց սև օթախները սպիտակեցրին: Դպրոցը մի քանի

¹² «Գավառ», 1910, N 14:

նկարներից և մի քանի համրիչից գատ գրեթե ոչ մի կանոնավոր պիտույք չուներ. բաղկացած է երեք բաժանմունքից, ուներ 60 աշակերտ աշակերտուհի: Ուսուցիչն է Ռուբեն Տեր-Հովակիմյանը՝ եռանդուն մի երիտասարդ: Ցանկություն կար ամբողջ շրջանի ուսումնարանները միացնել և Շիկահողում բացել մի կենտրոնական դպրոց,- «Գավառին» գրում է շիկահողի Հովհաննեսը¹³:

«Կապանյան կրթատների թագն ու պսակը»

Սա կապանցի ուսուցիչ, բանահավաք, մեծ մտավորական Ռոբերտ Էջանանցու գնահատականն է՝ տրված **Շրվենանցի** դպրոցին:

Շրվենանցը հեռավոր և խուլ գյուղ է, բայց այստեղ դպրոցական տիպային շենք է կառուցվել, նրանում նույնիսկ ռուսական ու եվրոպական բուհերի շրջանավարտ այրեր ու օրիորդներ էին դասավանդում, հայ և թուրք երեխաներ էին կրթվում և դաստիարակվում:

Այս դպրոցի պատմությունն արժանի է լուրջ ուսումնասիրության, բայց ինչպես որ շատ հաստատությունների, այս դպրոցի արխիվը ևս անհետ կորել է:

Միայն շնորհիվ դպրոցի շրջանավարտ Աղամիր Մելիք-Աղամիրյանի՝ մոռացությունից փրկվել են որոշ դրվագներ ու անուններ¹⁴:

Շրվենանցի դպրոցը լուսավորյալ հեղափոխություն էր Ղափանում:

Դպրոցական շենքը կառուցողը և հետագայում բոլոր ծախսերը հոգացողը հոգևորականի գավակ էր՝ նույն գյուղի քահանա Տեր-Հովհաննեսի որդի նավթատեր Գասպար Տեր-Մարգարյանցը: Նա իր մի քանի հայրենակիցների հետ Բաքվի «Արամագր»-ի հիմնադիրներից էր, հանդես է եկել բարեգործական լուրջ նախաձեռնություններով: 30 տարեկանում ամուսնանում է Միսիանի Լոր գյուղացի Շուշանիկ Ավանեսյանի հետ: Միմյանց անսահման սիրով կապված հրաշալի այս գույզը երեխա չի ունենում և որպես մխիթարությո-

¹³ «Գավառ», 1910, N 7:

¹⁴ Ա. Մելիք-Աղամիրյան, Ղափանի շրջանի Շրվենանց գյուղի դպրոցի պատմության անցյալի էջերից, պահպանվում է ժառանգների մոտ:

յուն որդեգրում են իրենց հարազատների զավակներին, օգնում սով-
յալներին, դպրոց բացում Լոր և Շրվենանց գյուղերում:

«Մեր կառուցած դպրոցները թող մեր զավակները լինեն», -
հայտարարել են ամուսինները:

Հայրենի գյուղում դպրոց բացելու մտադրության մասին Տեր-
Մարգարյանցը նամակով հայտնում է հայրենակիցներին և հարա-
զատներին ու խնդրում հող հատկացնել դպրոցի կառուցման հա-
մար:

Շրվենանցում դպրոցի գաղափարը առանձնապես ոգևորիչ չէր
գյուղացիների համար. նրանք ավելի շատ Աստծո հետ էին հույս
կապում, քան դպրոցի և լուսավորության:

Ավելի լավ կլիներ գյուղում եկեղեցի կառուցել:

-Մենք եկեղեցի չունենք, իսկ դասերը միշտ էլ կարելի է մեկի
տանը անցկացնել: Գասպարը քահանայի զավակ է, պիտի եկեղեցի
կառուցի, - առաջարկեցին ոմանք: Դպրոցին կողմ էր Տեր-Հովհաննե-
սը: Նա հորդորեց որդուն դպրոց կառուցել:

Դպրոցը իրականություն էր դառնալու: Բայց նրա հիմնադրու-
մը իշխանությունները դյուրությամբ չթույլատրեցին. պայմաններ
առաջադրեցին, որոնց բարերարը համաձայնեց:

Աղամիրյանի հուշագրությունը օգնում է մեզ իմանալու, որ
Տեր-Մարգարյանցը 1901թ.

հուլիսի 7-ին Ջանգեզուրի հաշտարար միջնորդին ուղղված
նամակում ներկայացրեց իր պարտականությունները.

ա/Դպրոցի ծախսերն ամբողջությամբ վերցնել իր վրա, վճարել
մանկավարժների աշխատավարձը:

բ/Կառուցել նախագծված շենք՝ իր միջոցներով:

գ/Հոգալ դպրոցի պահպանության ծախսերը:

դ/Հանրակրթական առարկաներից բացի ուսուցանել գյու-
ղատնտեսական գիտելիքներ, որի համար ձեռք բերել հող, գյու-
ղատնտեսական աշխատանքային գործիքներ, ստեղծել արհեստա-
նոց, այլ հարմարություններ:

Այս և այլ պարտավորություններից /խոստացավ, օրինակ,
գրադարան բացել և օգնել չքավոր երեխաներին/ հետո բարերարը
խնդրում է թույլատրել իրեն անձամբ իրականացնելու ուսուցիչնե-
րի ընտրությունը:

Ձեռքի տակ ունենալով վավերագրեր, դպրոցի կառուցման վերաբերյալ նյութեր, հուշեր՝ Աղամիրյանը գրում է, որ 1901թ. օգոստոսի 23-ին Կովկասյան Ռուսական ուսումնարանների օկրուգից հայտնում են, որ լուսավորության մինիստրը գոհունակությամբ է ընդունել և թույլատրել է կառուցելու նոր շենք: Գասպար Իվանիչը ձեռնարկում է շենքի կառուցումը Սմբատ Մելիք-Ստեփանյանի կազմած հասակագծով:

Շենքը պիտի լիներ երկհարկանի՝ հինգ դասասենյակներով, ունենար թատերական դահլիճ, ուսուցիչների համար չորս սենյակ, երկու խոհանոց, գրադարան: Ներքնահարկը արհեստանոցի և այլ հարմարությունների համար էր նախատեսվում:

Արդյո՞ք Մելիք-Ստեփանյանի նախագծով է կառուցվել շենքը: Այս ընթացքում Մելիք-Ստեփանյանը ուսանում էր Ֆրայբերգի լեռնային ակադեմիայում: Գուցե նախագծերն արել ու հայրենիք է ուղարկել Գերմանիա յից:

Այսպես թե այնպես, հեռվից հեռու Տեր-Մարգարյանը հետևում էր շինարարությանը, անհանգստացնում էր շինարարներին, անհրաժեշտ շատ նյութեր, նույնիսկ դռներն ու լուսամուտները ուղարկում էր Բաքվից: Շտապեցնում էր: Շինարարությունը, սակայն, ավարտել չհաջողվեց, և դպրոցական զանգը հնչեց կիսակառույցում:

Դասերն սկսվել էին, իսկ բարերարի եղբայր Աթան շարունակում էր անտառում փայտանյութի մշակումը:

Դպրոցի բացումը վերածվեց տոնախմբության: Ամենայն հավանականությամբ Գասպար Իվանիչը ներկա չի եղել դպրոցի բացմանը:

Դպրոցի ավագ ուսուցիչ /վարիչ/ ընտրվեց Եսայի Մելիք-Փարսադանյանը: Հետագայում ավագ ուսուցիչ նշանակվում է գորիսեցի Արշակ Ղազարյանը, ով զգալի աշխատանք է կատարել դպրոցի համար: Նրա ջանքերով բարեկարգվեց շրջապատը:

«1903թ. մարտի 10-ին գրված հաշվետվության մեջ նշվում է, որ դպրոցում սովորում է 136 մանուկ, որից աղջիկներ են 4-ը: Հետաքրքիր է երեխաների սոցիալական կազմի մասին տեղեկագիրը:

Ազնվականների երեխաներ 14-ն են, հոգևորական ծագում ունեցող՝ 12-ը, հարկատու՝ 110»¹⁵:

1903թ. հունիսի 12-ի օրենքից հետո թե ինչ է տեղի ունեցել դպրոցում, ստույգ հայտնի չէ, բայց որ դպրոցը գործել է, վկայում է Տեր-Մարգարյանցին ուղղված մի նամակ. «1904թ. հոկտեմբերի 19-ի նամակով դպրոցի ավագ ուսուցիչ Արշակ Ղազարյանը երկյուղ է հայտնում խոլերայի վտանգի մասին և խնդրում է Ղափանի միակ բուժակ Հովհաննես Դանիելյանին /մեղրեցի/ հինգ անգամ կատարած այցելության համար ուղարկել փողը»¹⁶:

Վերին Խոտանանցի Արտեմ Գալստյանի և տեղացիների գրույցների համաձայն՝ մինչև 1905 թվականը պարապմունքներն անցկացվել են ռուսերեն լեզվով: Սա նշանակում է, որ դպրոցը պետական կարգավիճակ ուներ և չէր փակվել:

1905թ. հոկտեմբերից, երբ ցարական կառավարությունը վերաբացեց դպրոցները, ուսումը տարվեց հայերեն: Ռուսերեն էին անցնում «Ռուսաց պատմություն», «Ռուսաստանի աշխարհագրություն» առարկաները:

1906թ.՝ հայ-թաթարական բախումների շրջանում, դպրոցը չի գործել, չեն գործել նաև Ղափանի դպրոցները, և թեև տեղ-տեղ դպրոցներ հիմնվեցին, բայց կանոնավոր դասեր չանցկացվեցին: 1907թ.-ին Շրվենանցի դպրոցը վերաբացված էր: Դպրոցում ուսուցանում էին նաև «Հողագործություն» և «Մեղվաբուծություն» առարկաները:

Ազգամիջյան բախումները ավելացրին առանց այն էլ թշվառության մեջ ընկած գյուղերի վիճակը: Դժվար վիճակում հայտնվել էր նաև դպրոցը:

1907թ. հոկտեմբերի 24-ին Շրվենանցի դպրոցի հոգաբարձուներ Սահակ Աստվածատրյանը /առաջաձորցի Սահակ Վարժապետը/, Սարգիս Քոչարյանը /Նորաշենիկ/, Բախշի Հովհաննիսյանը /Խլաթաղ/, Սահակ Տեր-Պետրոսյանը /Վերին Խոտանան/ դիմում են Տեր-Մարգարյանցին՝ խնդրանքով: Նկարագրելով ժողովրդի թշվառ վիճակը՝ նրանք խնդրում են ուսուցիչների աշխատավարձի վճարման հետ միասին հոգալ մյուս ծախսերը, երեխաներից վարձավճար

¹⁵ Ա. Մելիք-Աղամիրյան, նշված հուշագրության մեջ, էջ 4:

¹⁶ Նույն տեղում:

չվերցնել: Որքան հայտնի է, երեխաները ուսման համար վճարել են 50 կոպեկից մինչև 3 ռուբլի:

1902թ.-ից մինչև 1917 թվականը Շրվենանցի դպրոցում կրթություն է ստացել 400 երեխա: Հայկական դպրոցում սովորել են նաև թուրքեր: Աղամիրյանը հիշում է նրանցից մտանց անունները:

Աշխատանքային կարգապահության, մանուկների կրթությանն ու դաստիարակությանը նվիրվածության ու մանակավարժական մտքի կենտրոնը Ղափանում Շրվենանցի դպրոցն էր: Այստեղ անցկացվել են մանկավարժական քննարկումներ, կարդացվել են դասախոսություններ, կազմակերպվել են ուշագրավ հանդիպումներ, բանավեճեր, եղել է առողջ քննադատություն:

Դժբախտաբար, 1910թ. փետրվարին տեղի ունեցած մի պատահար մթագնեց դպրոցի գործունեությունը:

1910թ. հունվարի վերջին՝ Սուրբ Սարգսի օրը, երեխաները դպրոց էին շտապում տոնը նրա հարկի տակ անցկացնելու համար: Բայց տարածվեց ուսուցչի սպանության մասին լուրը: Քննությունը պարզում է, որ խանդի հողի վրա ուսուցիչ Արմենակ Աղախանյանը դանակահարել ու սպանել է ավագ ուսուցիչ Հակոբ Այվազյանին:

Աղախանյանը բանտարկվում է, ուսուցչուհին, որի համար եղել է վեճը, թողնում-փախչում է գյուղից: Դպրոցը փակվում է:

Այվազյանի սպանության առթիվ Ղափանի ուսուցիչների շրջանային հավաք-քննարկում եղավ: Եվ ի՞նչ որոշեց այդ չարաբաստիկ հավաքը... իր մահվան համար մեղավորը ինքն է՝ ավագ ուսուցիչ Հակոբ Այվազյանը:

Այս սպանությունը, ինչպես երևում է, փորձել են քողարկել, կոծկել: Ջորավոր մի ձեռք ուղղորդում էր հավաքը, որը հանցավոր համաձայնությամբ պատվեր կատարողի դերում էր հայտնվել:

Ջարմանում, հիացմունքով ու ակնածանքով ես լցվում դարակզբի գավառական մամուլի անաչառության ու համարձակության վրա /համարձակություն Արմենակի թիկունքում կանգնած ուժերի դեմ պայքարում/:

«Գավառը» հիասթափված է բարքերից, սկզբունքի, կարծիքի նահանջից. «Տգետ հասարակությունը յուր հատուկ ակնոցով պիտի նայի այդ խնդրին և գուցե անհատական սիմպատիաները հրապարակ գալով քարշ կտան հասարակությանը և կմեռցնեն գուտ ճշմարտությունը: Ահա շրջանային ուսուցչական ժողովի եթե չա-

սենք սխալը, գոնե անփորձությունը: Եվ դրանից հետո այդ նույն ուսուցիչների, հասարակության գիտակիցների բարոյական պարտականությունն է տեղն ու տեղը վերջ տալ այդ անպատվաբեր խնդրին և հանցավորի շուտափույթ հեռացումով վերականգնել դպրոցի խաղաղ կյանքը: Մպասում ենք, որ հանուն մատաղ սերնդի հանցավոր կողմը մի կողմ կքաշվի, իսկ եթե նա այդ բարեխղճությունը չունենա, այն ժամանակ արդեն դպրոցական վարչությունները պետք է դնեն իրենց վճռական վետոն»¹⁷:

«Գավառը» մեղադրանք է կազմում նաև դպրոցի ղեկավարների և իշխանությունների հասցեին:

Ղափանում ավագ ուսուցչի սպանության հետևանքների մասին քիչ բան է հայտնի: Հասարակությունը խստորեն դատապարտել է, ատելությամբ և արհամարհանքով լցվել հանցագործի նկատմամբ, բայց սա միայն Շրվենանցի և Աճանանի հովտի գյուղերի կորցրած հիշողության փշրանքներն են:

Եղած գրավոր տեղեկությունները զուսպ են ու ժլատ: Իսկ անհա Գորիսում շատ ավելի մոտ են եղել իրականությունը, դատապարտել են հանցագործին, նրա արարքը կոծկողներին ու արդարացնողներին: Տեղի ծխական հնգամյա դպրոցի կոլեկտիվը «Ի ցավ սրտի հայտնում է, որ Շրվենանցի ավագ ուսուցիչ Յակով Բ. Այվազյանի ընկերացավ մահվան մասին» և տեղեկացնում է, որ հոգեհանգիստը կլինի Մրբ. Լուսավորիչ եկեղեցում փետրվարի 21-ի կիրակի օրը՝ առավոտյան ժամը 10-ին:

«Գավառը» «Քստմեյի ոճիր» վերնագրով խմբագրականում իր, Զանգեզուրի հասարակայնության և բոլոր առողջ մտածողների մտորումներն է ներկայացնում շրվենանցյան դեպքի կապակցությամբ և ապտակ հասցնում ուսուցիչների շրջանային խորհրդին ու հանցանքը կոծկող - արդարացնողներին:

«Գազանային վայրենի բնագոյները չեն հանգստանում մեր դժբախտ իրականության մեջ, նույնիսկ այն մարդկանց շրջանում, որոնք հավակնություն ունեն ինտելիգենտ անունը կրելու, որոնք կոչված են իրենց մտածողությամբ և գործունեությամբ օրինակ հանդիսանալու և տգետ ամբոխին դեպի մարդկային վեհ բարձրության տանելու:

¹⁷ «Գավառ», 1910, N 5, 31 հունվարի:

Ինտելիգենտ, գիտակից տարրերի, հենց Շրվենանցի հասարակության բարոյական պարտականությունն է լինել արդարամիտ, հանուն զոհված ավագ ուսուցչի պահանջել արդարադատություն և ոճրագործին արժանի պատիժ:

Թող հեռու լինեն մեզնից Արմենակ Ադախանյանները իրենց արյունածարավ և ընկերացավ բնագոյներով: Ժողովրդական գործի, հասարակական բարոյականության ամենամեծ թշնամիներն են: Զզվանք ու նողկանք ընկերասպան ոճրագործին: Ահա այն դատավճիռը, որն այսօր կարող է կարդալ նրա գլխին մամուլը, հասարակական գիտակցությունը¹⁸:

Ղափանում Հակոբ Այվազյանին¹⁹ հիշում են, իսկ մարդասպանին մոռացել են անգամ Ադախանյանները:

1912-1913 ու սումնական տարում դպրոցում աշխատանքի են նշանակվում Լայպցիգի համալսարանի բժշկական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Տիգրան Բոշնադյանը և օրիորդ Նինան: Երգի ու պարի խմբեր էին գործում, պարապում էին ետ մնացող երեխաների հետ, գրքեր էին քննարկում, նշվում էին տոնական օրերը, անցկաց-

¹⁸ «Գավառ», 1910, N 8:

¹⁹ Հակոբ Այվազյանը. դպրոցի պատմությանն անդրադարձողները նշում են, որ նա Բեռլինի համալսարանի շրջանավարտ էր: Եթե այդպես լիներ, «Գավառը» կհիշատակեր այդ մասին: Իսկ ուսուցիչ Բախշի Հովհաննիսյանի կողմից շրջանառության մեջ դրված կարծիքը, թե նա ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու հորեղբոր տղան էր, թյուրիմացություն է: Հակոբը Շրվենանցի դպրոցի ավագ ուսուցիչ է նշանակվել 1909 թ. և սիրով նվիրվել է երեխաների կրթության և դաստիարակության գործին: Հայտնաբերված աղբյուրների հիման վրա հնարավոր է գոնե փոքր-ինչ ճանաչել ուսուցչին: Աղբյուրներն են «Գավառը», Ադամիդյանի հուշերից մի պատառիկ, Սմբատ Մելիք-Ստեփանյանի արխիվից մի քանի դժվար ընթեռնելի նամակներ ու գյուղի հիշողությունը:

Այվազյանը Էջմիածնի Ալիբեկյու /Աթարբեկյան/ գյուղացի է: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ավարտելուց հետո դիմում է Պարսկաստանում ուսուցչություն անելու խնդրանքով: Այստեղ աշխատանքի է անցնում ֆրանսիական դեսպանատանը, դառնում է դեսպանի անմիջական թարգմանը: Աշխատանքի ընթացքում արժանացել է դեսպանի և բոլոր աշխատակիցների համակրանքին: Դեսպանի առաջարկով Այվազյանը մի քանի անգամ ուղեկցել է նրան, եղել Ֆրանսիայում, որտեղ կատարելագործվել է: Վերադառնալով հայրենիք՝ աշխատել է Ապարանի և Աշտարակի դպրոցներում: Այնուհետև առաջարկություն է ստացել աշխատելու Շրվենանցի դպրոցում:

նում էին էքսկուրսիաներ ու արշավներ դեպի Հալիձորի բերդ, Աղջկաբերդ, Բաղաբերդ:

1911-12-ին գործում էր 4 բաժանմունք, սովորում էր 149 աշակերտ: Քիչ էր աղջիկների քանակը՝ ընդամենը՝ 15:

Ուշագրավ փաստ. բախումներից հետո թուրքական Օխտար, Շահարջիկ, Դովրուս գյուղերից Շրվենանցի դպրոց հաճախում էր 6 թուրք երեխա:

Ի դեպ, Ղափանում դարասկզբին գոյություն ուներ միայն մեկ թուրքական դպրոց: «Ղափանի երեսուն թուրք գյուղերից միայն Օխտարը մի դպրոց, կամ, ինչպես տեղացիներն են ասում, մակթեբխանա ունի: Դպրոցում սովորում են մոտ քսան երեխաներ՝ հարևան գյուղերից, և ուսման վարձ վճարում են ամսական երկուսից-երեք ռուբլի /ոսկու արժեքով/: Ուսուցիչը կիսագրագետ էր: Նա իր գիտելիքներով ու սովորեցնելու մեթոդներով հիշեցնում էր մեր տերթոդիկյան տիպերը: Մանուկները տարիներ ի վեր սովորում են, սովորում, բայց հեռանում են դպրոցից դարձյալ տգետ ու անգրագետ»²⁰:

Շրվենանցի դպրոցում զբաղվում էի նաև երեխաների գեղագիտական դաստիարակության խնդիրներով: Մելիք-Աղամիրյանը վկայում է, որ ուուցիչ Ալեքսանդրը նոտաներ ու երգեր էր ուսուցանում:

Դպրոցն առանձնահատուկ էր նաև նրանով, որ գործում էին գիշերօթիկ խմբեր: Հեռավոր գյուղերի երեխաները գիշերում էին գյուղում:

Ղափանում առաջին տոնածառը դրվել է Շրվենանցի դպրոցում. դա 1910 թվականի Հունվարի 1-ին էր: Գասպար Տեր-Մարգարյանը հոգացել էր ծախսերը: Տոնածառը երևույթ էր Ղափանյան կյանքում, և շատերն էին շտապում այն տեսնելու:

Փառք ու պատիվ Տեր-Մարգարյանցին. նա մեծահոգաբար շարունակում էր տարեկան 2000 ռուբ. նվիրաբերել դպրոցին: Բայց մեծահարուստը հեռուն չգնաց: Երբ նա Շրվենանցում դպրոցի հիմնադրումն էր նախաձեռնում, Ներսես Մելիք-Թանգյանը խնդրում էր նրան, որ փոխանակ 30-40 հազար ռուբլի ծախսելու և գյուղում դպրոց բացելու, այդքան գումարով անհրաժեշտ է գավառում գյուղատնտեսական դպրոց բացել: Այդ նպատակով նա դիմում է Զան-

²⁰ Ադրբեջանական գյուղերի կուլտուրական վերելքը /առանց հեղինակի/: Պղնձի համար, 1957, N 101/:

գեգուրի մյուս մեծահարուստներին: Վանահայրը դեմ չէր Շրվենանցուն այդպիսի դպրոց բացելուն, պարզապես կարծում էր, որ այն կարելի է բացել՝ 3-4 հազար ռուբլի ծախսելով:

Միայն Տեր-Մարգարյանը չէր: Գյուղը լուսավորությամբ փրկելու առաքյալներ դարձան Ներսես Մելիք-Թանգյանը, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Աստվածատուր Վաչյանը, Մանուշար Ավագյանցը, Ստեփան Բայանը, Սմբատ Մելիք-Ստեփանյանը:

Գյուղատնտեսական դպրոց ունենալու առաջարկությունների հանդիպում ենք ժամանակի մամուլում, որտեղ այն միտքն է արտահայտվում, որ երկրամասի առաջադիմության համար հարկավոր է երկրագործության, անասնապահության և մեղվաբուծության զարգացում: Վաղուց Զանգեզուրում մտորում են գյուղատնտեսությունը առաջադիմական եղանակով վարելու, նոր ճյուղեր զարգացնելու մասին: Իսկ դրա համար անհրաժեշտ է գյուղատնտեսական ուսումնարան, դպրոց ունենալ: Միջոցներ են պետք դպրոցը կառուցելու, այն պահելու համար: Որտեղից ց: Գավառը ցույց է տալիս միջոցներ ձեռք բերելու ուղիները. «1. Տաթևի կալվածներից հատկացնել տարեկան 1000ռ. 2. Առաքել Ապեր-Ծատուրյանի կտակած 1000ռ. Տաթևի վանքին և 1000ռ. Գորիսու եկեղեցուն հատկացնել դրան, 3. Խնդրել Զանգեզուրի հարուստներին գավառական պատգամավորների միջոցով Ավագյանին, Տ. Մարգարյանին և այլոց տարեկան որոշ գումար հատկացնել նրան: Հանգանակություն բանալ Զանգեզուրի շրջանում և դրսում հոգուտ դրան»²¹:

Ավելին են մտածել Ղափանում. է ջանանցու վկայությամբ՝ Սմբատ Մելիք-Ստեփանյանը և Ակնունին (Խաչատուր Մալումյան) մտադրություն ունեին Ղափանի և Մեղրու լեռնաշղթայի Շիշկերտ գյուղում լեռնային գործի ուսումնարան հիմնել:

Իգական կրթությունը: Դպրոցը մոզական գավառան

Սկզբնապես աղջիկների կրթություն գոյություն չունեի: Առաջին իրենց աղջիկներին դպրոց ուղարկեցին Մողմուն Մելիք-Աղամիրյանը, Նուրիջանյանները, Անդրեաս Մելիք-Ստեփանյանը:

²¹ Նույն տեղում:

Անգրագիտությունն էր պատճառը, որ կնոջ հետ վատ էին վարվում: Սովորույթ էր դառնում այն մտայնությունը, որ աղջիկ երեխաները մտավոր կրթություն չպիտի ստանան: Ծնողները ցանկություն չունեին նույնիսկ իրենց գյուղում, հարևանությամբ գործող ծխական դպրոց ուղարկել աղջիկներին: Համոզված էին, որ տղաների հետ աղջիկներին դպրոց ուղարկել չի կարելի: Օրիորդաց դպրոց ստեղծելն այդ ժամանակ անհիմաստ բան կլիներ, գործը կարող էր տապալվել:

Դրական քայլ էր դպրոցներում ուսուցչուհիների երևալը: Դա փշրեց սառույցը, և ծնողները վստահեցին դպրոցին: Բայց լինում էին դեպքեր, երբ ծնողը կորցնում էր վստահությունը և աղջկան հանում էր դպրոցից: Նման օրինակ է Շրվենանցի դպրոցը: Հակոբ Այվազյանի սպանությունից հետո, երբ ուսուցչուհին հեռացավ դպրոցից, աղջիկները դպրոց չհաճախեցին:

Հեռավոր քաղաքներում աղջիկների կրթության մասին խոսք լինել չէր կարող: Ո՞վ կհամարձակվեր: Մեզ հայտնի միակ դափանցի օրիորդը, ով կրթություն ստացավ Պետերբուրգում, Վարսենիկ Մելիք-Ստեփանյանն էր: Մելիք-Ստեփանյան գերդաստանը, ի դեպ, աջակցում էր դպրոցներին: Նույնիսկ ողբերգական 1915-ին, երբ Երևանում՝ գաղթականների «Քաղաքների միության» հիվանդանոցում, բժավոր տիֆից մահացավ որպես գթության քույր ծառայող Վարսենիկ Մելիք-Ստեփանյանը, նրա հիշատակին մայրը՝ Աբիհայաթը /ծագում է Տաթևի Օրբելյաններից/, ու եղբայրները՝ Սմբատ և Ղահրաման Մելիք-Ստեփանյանները, Ղափանի դպրոցներին և Զանգեզուրի թուրք դպրոցին նվիրեցին 100-ական ռուբլի: Չմոռացան թուրք երեխաներին²²:

Ղափանի **Առաջաձորը** լուսավոր շատ զավակներ է տվել: Դրանում առանձնահատուկ դեր ունեին ուսուցիչն ու դպրոցը: Այստեղ

²² «Գթության քույր Վարսենիկ Մելիք-Ստեփանյանի հիշատակին նրա մայրը և եղբայրը սեփական հանքի ակցիաներից նվիրել են Ղափանի բարեգործականի ճյուղին՝ 300 ռ., Առաջաձորի և Շրվենանցի դպրոցներին՝ 200-ական ռուբլի, իսկ Ղափանում գտնված մյուս բոլոր դպրոցներին՝ 100-ական ռուբլի: Այդ դպրոցները գտնվում են հետևյալ գյուղերում՝ Վերին Խոտանան, Սևաքար, Զեյվա, Եղվարդ, Ագարակ, Շիշկերտ, Ծավ, Շիկահող, Գյուտկում, Ճակատեն, Վաչագան, Բեխ, Բաղաբուրջ, Բարաբաթում, Կավարտ, Վերին Հանդ և Զանգիլան (թուրքի գյուղ): Առաջաձորի եկեղեցուն՝ մի ոսկեգոծ խաչվառ: Հ.Տ.Յ», « Արև» թերթ, Բաքու, N 223, 16 դեկտեմբերի, 1915 Ղափան, 4 դեկտեմբերի:

Անդրեաս Մելիք-Ստեփանյանի ծախսերով դպրոց էր բացվել դեռևս 1883 թվականին: Բացառիկ էր այս գյուղի առաջին ուսուցչի ներդրումը, ով Անդրեաս բեկի բացած դպրոցում գրաճանաչություն էր սովորեցնում ուսումնաստենչ մանուկներին:

Այդ երախտավորը Սահակ վարժապետն էր՝ Սահակ Աստատրյանը: Սահակ Աստատրյանն ավարտել էր Շուշու թեմական դպրոցը, աշխատում էր գավառում իբրև գրագիր:

Անդրեասի մահից հետո, երբ փակվեց դպրոցը, «Սահակ վարժապետն իր տանը մասնավոր դասեր էր տալիս գյուղի ունևոր ու չքավոր հայ և թուրք երեխաներին: Չնչին ուսման վարձ էր վերցնում, որպեսզի հնարավորին չափ շատ մանուկներ գրաճանաչ դարձնի: Տարվա ընթացքում երեխաները սովորում էին 3-4 ամիս»:

Սահակ վարժապետը միաժամանակ գրական փորձեր էր անում, ուներ «Ջանունի» գրական անունը: Նրա «Ղափանի հայ-թուրքական թշնամական հարաբերություններից առաջացած վատ հետևանքների ու դառն արկածների ընդարձակ վեպը» արձակ գործը իր չափածո «Տխուր նախերգանք»-ի հետ միասին կարևոր աղբյուր է Ղափանում հայ-թաթարական բախումների պատմության²³:

Առաջաձորում զգալի հետք թողեց ուսուցիչ Աբգար Մուրադյանը /Ապարանից/: Նրա ջանքերի շնորհիվ սկսեցին դպրոց հաճախել նախ հարուստ խավի դուստրերը, հետագայում՝ նաև աղքատների: Ծայրահեղ աղքատ ընտանիքներից ուսման վարձ չէր գանձվում: Պարապմունքները սկսվում էին աշնանը, ավարտվում ապրիլ-մայիս ամիսներին՝ մինչև գարնան գյուղատնտեսական աշխատանքներն սկսելը:

Երեխաները սովորում էին գրել, կարդալ, կատարել թվաբանական պարզագույն հաշվումներ չորս գործողությունների սահմաններում: Ուսումնառության առաջին տարում կրոնական ծեսերի ու տոնակատարությունների համար սովորում էին շարականներ, տաղեր, հետագայում՝ կրոն:

1907 թվականի դպրոցն ուներ երկու բաժանմունք: Երկրորդ բաժանմունքն ավարտողը գրաճանաչ էր համարվում, գիտեր գրել ու կարդալ, առևտուր անել: Ունևորների երեխաները ուսումնառությունը շարունակում էին Շրվենանցի դպրոցում:

²³ Սևագիր ձեռագիր, վերծանված ու մեքենագրված, 18 էջ, անձնական արխիվ:

Միական դպրոց. ինչ կարող էր նա անել իր մեկ ուսուցչով, երկու-երեք դասարանով և կիսաքաղց ու ցնցոտիապատ երեխաներով: Երեխան գրաճանաչ է դառնում, կարողանում է գրել-կարդալ, ցանկություն ունի շարունակել ուսումը, բայց ո՞վ է նրա տերը, ո՞ւմ է պետք նրան սատար լինելը, գյուղացու հազար ու մի ցավերի կողքին դա ի՞նչ մի կարևոր բան է: Ու երեխան կրկին հայտնվում է փողոցում կամ էլ ծանր, ուժից վեր աշխատանքում կորցնում առողջությունը: Ի՞նչ կարող է անել ուսուցիչը, երբ մատների վրա հաշված մարդիկ են հասկանում դպրոցի և ուսման դերը: Սրան գումարվում են հասարակության մեջ խորացող քայքայումը, բարոյագրկումը, անտարբերությունը, հարստանալու տենչը, չարսիությունը, դրամի պաշտամունքը, հողի ու ունեցվածքի համար մահակակեղծիվը: Սրանք էին առաջնահերթությունները: Օրինակ՝ Ղափանի **Բեխը**՝ իր հնամենի Մելիք-Փարսադանյան գերդաստանով: Հնամենի՝ ... Բայց արի ու տես, որ բավական հողերի ու հարուստ Հալիձորի պղնձահանքերին տիրող 20 տնից բաղկացած այս տոհմը տառապում է անմիաբանությամբ ու նախանձով, միմյանց ոտքի տակի հողը քանդելով, ահա թե ինչու ո՛չ շահագործում են հանքերը, ո՛չ էլ թողնում, որ մեկը դրանց մոտենա:

Լավը, լուսավորը այնքա՛ն քիչ են այս գյուղում: Վկան՝ Ստեմեղը²⁴, ով որքան դիպուկ է բնութագրել ծննդավայրն իր հրապարակումներում: Մի տեղ ունևոր, հնարավորությունների տեր մարդիկ միջոցներ չեն խնայում դպրոց բացելու, գյուղացի մանուկներին, նույնիսկ թուրք մանուկներին լուսավոր դարձնելու համար, մի այլ տեղ, ինչպիսին Բեխն է, ունևորները արհամարհում են դպրոցը, անգամ իրենց հարազատ զավակների կրթության համար գրպանները դատարկ են ձևանում: Բեխցիները հարուստ էին, բայց ինչպես հաճախ է լինում ունևորների հետ, իրենց խելքով ու մտքով հետ էին: Բեխը, որը Մելիք-Քարամյանների Տանձատափայի պես հայտնի է Մելիքների գյուղ անունով, կանոնավոր դպրոց չուներ: 1897

²⁴ Ստեփան Ղազարի Մելիք- Փարսադանյան /1888, Բեխ - 15. 1964\$բեզն/, ավարտել է Շուշիի Թեմական դպրոցը, Կիևի համալսարանը: Գործուսում աշխատել է որպես ատամնաբույժ, ակտիվորեն մասնակցել է Զանգեզուրի գոյամարտին: 1927-ին ձերբակալվել է ու քստրովել: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ գերվել է գերմանացիների կողմից, ապա անցել է ԱՄՆ: Հրատարակվել է «Գավառ», «Ասպարեզ» թերթերում և «Հայրենիք» ամսագրում:

թվականին սրանք մի ուսուցիչ էին պահում իրենց երեխաներին տարրական կրթություն տալու համար: Առանձնապես կրթություն գնահատող չէին, իսկ դպրոցի համար հատուկ կառուցված շենքը այդպես էլ լրջորեն նպատակին չծառայեց:

Ունևորները չեն ուզում, չունևորները չեն կարող, Բեխը դպրոց չունի, որևէ մեկի մտքով դպրոց ունենալը չի անցնում, իսկ գյուղում թափառող երեխաներ՝ որքան ուզեք: Միայն մի քանի երեխայի կարելի է տեսնել հարևան գյուղերի ճանապարհներին դպրոց գնալիս: Բեխում գտնվել է մեկը՝ երիտասարդ Արսեն Գրիգորյանը, ով գյուղի համար արևելյան մասում գտնվող իր հողակտորը նվիրել է դպրոցական շենք կառուցելու, սակայն որտեղից միջոցներ: Եվ Բեխը՝ ազնվական ծագումով, ավանդույթներով, հերոսական անցյալով, 20-րդ դարասկզբին հոգևոր ու բարոյական անկում է ապրում²⁵:

Եվ ոչ միայն Բեխը: Գյուղը կործանման ուղու վրա էր, այն փրկելու ուղիներ էին որոնվում:

«Դպրոցը, ուսուցիչը, ժողովրդի լուսավոր գավակները կարող են փրկել գյուղը,- այսպես է ստաժում Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Սուլթան Տեր-Գևորգյանը՝ Արքայիկը²⁶, որի՝ հայրենի Շի-

²⁵ «Գավառ», 1910, N 18:

²⁶ Սուլթան Տեր-Գևորգյանց. ծնվել է 1880թ. փետրվարի 1-ին Շիկահողում, Ջումշուղ Բաբայան-Տեր Գևորգյանցի և Թագուհի Մկրտչյանի ընտանիքում: Ուսումնաստենչ ընտանիքի գավակ էր (երկու եղբայրները՝ Շահենն ու Մուշեղը, հետագայում անվանի մարդիկ դուրս եկան. Շահենը ՀՅԴ Ղափանի կազմակերպության հայտնի դեմքերից էր, Մուշեղը՝ կոմունիստ, կուսակցական աշխատող, երկուսն էլ՝ 1937-ի զոհ): Շիկահող գյուղի հասարակությունը 1894թ. մայիսի 2-ի աղերսագրով դիմել է Ամենայն հայոց կաթողիկոսին՝ խնդրելով Սուլթանին ընդունել Գևորգյան ճեմարան: Կաթողիկոսի միջամտությամբ Սուլթանն ընդունվում է Գևորգյան ճեմարան, սովորում, վերադառնում է Ղափան: Աշխատում է Գյուտկումի և Շիկահողի դպրոցներում: Չնայած վատ առողջությանը, թղթակցում է ժամանակի հանրահայտ պարբերականներին՝ «Մշակ», «Ալիք», «Աշխատանք», «Արև», «Ազգագրական հանդես» և այլն: Հանդես է եկել Արքայիկ, Չոբան, Ղափանցի Արքայիկ ծածկանուններով: Նրա նամակներում թվառության ու տգիտության մեջ խարխափող, սոցիալական անհավասարությամբ, ցավերով ու հոգսերով, մարդկային ճակատագրերով գյուղաշխարհն է: Նրան հուզում են գյուղերի քայքայումը, արտագաղթը, գյուղացու դաժան շահագործումը: Ժողովուրդների բարեկամության ջատագով է: Գրում է հայթորքական ընդհարումների մասին, ներկայացնում մեզ իրադարձություններ ու երևույթներ, որոնք կարող էին մեզ անհայտ մնալ: Ջբաղվել է բանահավաքչությամբ, գրել է նաև բարբառով, փրկել բարբառի մատունքներ: Հայրենի չնաշխարհիկ բնության ջերմ սիրահարն է, հավերժացրել է բնության չքնաղ պատկերներ: Գրադարանն ու արխիվը իրկիզվել են 1930-ականներին: Թղթերի մի մասը անհետացել է Գորի-

կահողի մասին նամակը հանգիստ կարելի է տարածել գավառի դարասկզբի ուզածդ գյուղի վրա: - Քանդվում, կործանվում են գյուղերը, օրեցօր մերկանում դեռ ետ պահած բարեմասնություններից, ամեն կողմից, ամեն գյուղ եկողը նպաստում է այդ անկման, մի արացի էլ ինքը տալիս ու մերձիմահ հիվանդին գերեզմանի դռան մոտեցնում: Ամեն ոք իր համար է, իր քսակի, իր բողոքի համար: Գյուղը շատ է սպասել ապարդյուն. նա կարոտ է սրտալի խոսքի, կարոտ՝ անձնվեր գործի»:

Չանգեզուրի գյուղերում շրջող Տեր-Գևորգյանը խնդրում, աղաչում-պաղատում է օգնության հասնել վերակենդանացնել մեռնող գյուղը: Կարեկից գավակների կարիք ունի գյուղը, որ «Չեն եկել, բայց պիտի գան... Ես հավատում եմ գյուղի վերակենդանության, հավատում, որ կործանվում է արդեն լուսարգել պարիսպը, ու ջերմ արևի կենսաշունչ շողերը կյանք են տանում այնտեղ... Ժողովրդի սրտում ապրող ուսումնարանն ու անձնագոհ ուսուցիչը կստեղծեն մոզական մի գավազան, որով տենչալի կերպարանափոխություն կստանան մեր թաքուն աշխարհներում հյուծվող գյուղերը»,- մարգարեանում է Արքայիկը²⁷:

Արժանին պիտի մատուցել «Արամագր», «Հայ կուլտուրական միություն», «Բարեգործական ընկերություն» հաստատություններին, որոնք լուրջ ուշադրություն էին դարձնում կրթության գործին Ղափանում: «Արամագր» նավթարդյունաբերական ընկերության նախագահ Աստվածատուր Վաչյանը, ով դպրոցներ էր բացում Սյունիքի հեռավոր ու աղքատ գյուղերում, իմանալով, որ Կոստյա Համբարձումյանը ժողովրդի մեջ մեծ հեղինակություն ունի, նրան նշանակեց Ղափանի շրջանի լիագոր՝ դպրոցական գործը կազմակերպելու համար: Կոստյան դպրոցներ բացեց գյուղերում, հրավիրեց ուսուցիչներ, ինքն էլ դարձավ դպրոցական տեսուչ: Նույնն էր անում Կուլտուրական միությունը՝ Կոստանդին Խատիսյանի գլխավորությամբ: Ամեն ինչ ուզածի պես չէր, բայց նաև շնորհիվ «Բարքիվ

ում: Մահացել է 1908թ. մարտի 8-ին՝ 28 տարեկանում, թաղվել Շիկահողի գերեզմանատանը:

²⁷ «Աշխատանք», 1906, N 19:

Հայ կուլտուրական միության» և «Արամագր» ընկերության նպաստների էր, որ Ղափանը քիչ թե շատ մի կողմ նետեց տգիտության քողը: Կաշառքի, անբարոյականության մեջ թաղված ցարիզմը ո՛չ ցանկություն ուներ, ո՛չ էլ ի վիճակի էր փրկել գյուղը և այն տանել առաջադիմության ու զարգացման ուղիով: Ըստ քաղաքական ուժերի, անհատների, բարի կամքի ու նույնպիսի ցանկությունների տեր մարդկանց՝ գյուղը փրկելու ջանքերը ապարդյուն էին ու ձախողված, բացվող դպրոցներն ու այլ բարեգործությունները կաթիլ էին թշվառության ծովում:

**Гриша Смбадян
Капан**

Эпизоды из истории школы Капана

Резюме

С присоединением Восточной Армении к России начали развиваться армянская школа и педагогическая мысль. Как в других регионах, так и в Капане открылись приходские школы. Первоначально образовательное образование взяло на себя духовенство, а в дальнейшем - образованная молодежь, у которой за плечами была учеба в вузах, училищах и семинариях. Несмотря на то, что в большинстве деревень действовали школы, большинство детей не получало образования. У царского правительства не было намерения организовать образовательное дело на окраинах. В капанской действительности не оценима роль местных меценатов и благотворительных учреждений в строительстве и содержании школ. Но они были бессильны просветить погруженную в нищету и невежество армянскую деревню, обучить подрастающее поколение.

**Grisha Smbatyan
Kapan**

Extracts from Kapan schools history

Summary

By Eastern Armenia's joining to Russia, the Armenian school and the pedagogical idea had progress. As in other areas, in Kapan, parish schools were opened. At the initial period, the clergy dealt with education, and later on it was controlled by young people, who had graduated from academy, college and higher educational institution. Though schools existed in most parts of the villages, however, the majority of children did not get education. The tsarist government did not have an aim to organize the educational process in the outlying districts of Kapan, the role of native benefactors and charitable institutions in building and preserving schools, is appreciable. However, they were helpless to illuminate /educate/ the village absorbed in poverty and ignorance and to educate the infant generation of working people.



Ժիրայր Միրումյան
Գորիս

mirumian-1971@mail.ru

Մյունիքը պատմականորեն առանձնահատուկ դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ: Առավելագույն լինելով լեռնային երկիր՝ այն զավթիչների ճանապարհին տեղակայված բնական միջնաբերդ էր, որի շնորհիվ դարերի ընթացքում պահպանել է քաղաքական ինքնուրույնությունը:

Պատմական Մյունիքը ընդգրկում էր արևմուտքում՝ Այրարատից մինչև Պարսկաստան, արևելքում՝ Արցախ ընդգրկող տարածքը և ուներ վարչատարածքային 12 միավորներ՝ գավառներ՝ 1.Երնջակ, 2.Ջահուկ, 3. Վայոց Ձոր, 4.Գեղարքունիք, 5.Սողոք, 6.Աղահեճք, 7.Օղուկ, 8.Հաբանդ, 9.Բաղք, 10.Ձորք, 11.Արևիք, 12.Կովսական¹:

Համաձայն Մովսես Խորենացու՝ Մյունիք (Միսական) նահանգը իր անվանումը ստացել է Հայկի ժառանգներից Գեղամի որդի Միսակի անունից, և Մյունի նախարարական տոհմը, որը բազում դարեր իշխում էր Մյունիքում, ըստ ավանդության, առաջացել է հենց այս Միսակից²: Ըստ Խորենացու՝ Միսակից են սերում նաև Ռշտունի և Գողթնեցիների իշխանական տները³:

Մյունյաց իշխանները մինչև Հայաստանում Արշակունյաց արքայատոհմի հաստատումը հավատարմորեն ծառայել են հայոց թագավորներին և բարձր դիրքի ու պատվի արժանացել նրանց կողմից: Դրա մասին է վկայում Մյունյաց պատմիչը. «Բազմաթիվ ու մեծամեծ քաջագործություններ ցույց տվեցին հայոց թագավորների պատերազմներին և բազում ու մեծամեծ պարգևներով և գահերով մեծարվեցին պարսից, հայոց, այլև հունաց իսկ թագավորների կողմից: Եվ այնքան անվանի եղան, որ մինչև անգամ արտոնվեց նրանց

¹ Ստ. Օրբելյան, Մյունիքի պատմություն, թարգմանությունը Ա. Աբրահամյանի, Ե., 1986, էջ 70:

² Մ. Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Ստ. Մալխասյանի, Ե., 1990, էջ 28:

³ Նույն տեղում, էջ 76:

արծաթե գահույք ունենալ և մարգարտե վարսակալ օգտագործել ու վարագագիր մատանի դնել, նաև կարմիր կոշիկ [հագնել] ու բռնել ոսկե գավազան՝ վրան նշված տոհմի անունը և պատվաստիճանը»⁴:

Կարմիր կոշիկ հագնելու իրավունք ունեին միայն թագավորները: Ավելի հավանական է, որ այստեղ խոսք կարող է լինել թագավորության մեջ երկրորդ գահը ունենալու կամ փոխարքա-կուսակալի պաշտոնի մասին և ոչ թե երկու ոտքին, այլ մեկ ոտքին կարմիր, մյուսին կանաչ կոշիկ հագնելու իրավունքի մասին, ինչպիսին ունեին կողմնակալ բդեշխները: Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Երվանդունիների և Արտաշեսյանների ժամանակ Սյունիները զբաղեցնում էին երկրորդական գահը և Հայաստանի արևելյան շրջանների փոխարքա-կուսակալի պաշտոնը: Նրանց բարձր դիրքը պահպանվեց նաև Արշակունիների օրոք: Ինչպես վկայում է Օրբելյանը, Վաղարշակը «հրաման է տալիս Միսակյաններին՝ լինել հրամանատար արքունի բոլոր գորքերին ու իր թագավորության երկրորդը և պատերազմով շարունակ դեմ կանգնել Հունաց դռանը»⁵: Հայտնի է, որ Միսակի ժառանգ Առանից է սերում Արցախի Առանշահիկ տոհմը⁶: Նա հայոց Վաղարշակ I արքայից կարգվում է նահապետ «Առանա մեծ դաշտի վրա, Երասխից մինչև Հունարակերտ»⁷ և նշանակվում հայոց արևելյան կողմի կուսակալ: Խորենացու վկայությամբ՝ «սրա գավակներից են սերվել ուտեացոց ազգը և գարդմանացոց, ծավղեացոց ու գարգարացոց իշխանությունները»⁸: Այս փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ I-III դարեր ընդ Հայաստանի արևելյան նահանգներ Սյունիքը, Արցախը և Ուտիքը կազմում էին մեկ ամբողջական քաղաքական միավոր՝ Սյունի իշխանական տոհմի գլխավորությամբ:

Հնարավոր է, որ սպարապետության պաշտոնը այդ ժամանակաշրջանում եղել է Միսակյան տոհմի ձեռքում: Վարագագիր մատանու մասին հիշատակությունը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ իշխանական տան զինանշանի վրա պատկերված է եղել վարա-

⁴ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 72:

⁵ Նույն տեղում, էջ 73:

⁶ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 72, Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 73:


⁷ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 73:

⁸ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 72:

զը, որին հետագայում փոխարինել է արծիվը: Այս կենդանին արևելյան մի շարք երկրներում, մասնավորապես Պարսկաստանում, բավականին հարգված կենդանի էր և խորհրդանշում էր ուժ, դիմացկունություն, հզորություն, անվեհերություն և այլն: Դրա ապացույցն է նաև այն հանգամանքը, որ Սյունյաց իշխանական տան բազմաթիվ ներկայացուցիչներ կրում էին Վարազ անունը՝ օրինակ, Վարազվաղան⁹, Վարազ-Տիրոց¹⁰:

Համաձայն «Ջորանամակի»՝ Սյունյաց իշխանները ունեին 19.400 զինվոր, իսկ «Գահնամակում» զբաղեցնում էին պատվավոր առաջին բարձր¹¹:

Ստորև ներկայացնում ենք Միսակից սերված իշխանական տոհմերի մոտավոր տոհմապատկերը.



Մինչև 4-րդ դարը իշխած Սյունիքի իշխանների մասին մեր տեղեկությունները բավականին սակավ են: Ստ. Օրբեյանը Սյունյաց նահապետներից նշում է Չագեձորի կառուցող Չագ նահապետին¹²: Մեզ հայտնի Սյունյաց իշխանուհիներից առաջինը Երնջակ

⁹ Ստ. Օրբեյան, նշվ. աշխ., էջ 95, 100-101, 109:

¹⁰ Նույն տեղում, էջ 199:

¹¹ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 292-294:

¹² Ստ. Օրբեյան, էջ 71:

ամբողջ կառուցած Երնջիկն է¹³: Միայն կարելի է ենթադրություն կատարել, թե Սյունյաց իշխաններից որի կինն էր նա, թերևս Չագ նահապետի: Մ.թ. 2-րդ դարի մեզ հայտնի միակ նահապետն էր Բակուրը, որն ապրել է Տիրան I և Տիգրան Վերջինի օրոք: Այդ տեղեկությունը կապված է Սմբատ Բագրատունու թոռ Տրդատի ռոմանտիկ պատմությանը Բակուրի հարձի հետ¹⁴:

Սյունիքի 3-րդ դարի իշխանների վերաբերյալ մենք քիչ տեղեկություն ունենք: Թերևս ընդունելի է Ալիշանի տեսակետը, որ 6-րդ դարի հռոմեական պատմիչ Պետրոս Պատրիկիոսի աշխատության մեջ պարսից արքա Ներսեհի (276-302թթ) շքախմբում հիշատակվող **Վարսավորս** մեծատոհմիկը հնարավոր է լիներ Սյունիքի այդ ժամանակաշրջանի իշխանը և կրեր **Վարազշապուհ** անունը¹⁵: Հ. Մանանդյանը ևս, հետևելով Ալիշանին և կրկին մեջ բերելով Պատրիկիոսի վկայությունը, նշում է, որ «Պարսկաստանի ջերմ կողմնակիցն է եղել այդ ժամանակ Սյունիքի Վարազշապուհ իշխանը, որին Պարսից Ներսեհ թագավորը, Գալերիոսի 297թ. հաղթանակից հետո, ուղարկել էր իբրև պատգամավոր խաղաղության դաշնագրի կնքման համար»¹⁶: Եթե այս ամենը համապատասխանում է իրականությանը, և Պատրիկիոսի հիշատակած Վարսավորսը¹⁷ իսկապես Սյունիքի իշխանն էր, ապա հավանական է, որ **Տրդատ Մեծը**, վերջնականապես վերահաստատվելով հայոց գահին, Վարազշապուհին զրկել է իշխանական տիտղոսից, իսկ Սյունիքի իշխաններին հատկացված բարձր կամ գահը հաստատել ցածր՝ 14-րդ տեղում: Հավանաբար հենց այս փաստաթուղթն է տրամադրվել պարսից Շապուհ II-ին, ինչը դժգոհության տեղիք էր տվել Սյունյաց Անդոկ իշխանին¹⁸:

¹³ Նույն տեղում, էջ 71:

¹⁴ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 127-128:

¹⁵ Ղ. Ալիշան, Միսական, Վենետիկ, 1898, յալիելուածք, էջ 523:

¹⁶ Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, Ե., 1978, էջ 124:

¹⁷ Византийские историки, Дексипп, Эвнапий, Олимпиодор, Малх, Петр Патриций, Менадр, Кандид, Ноннос и Феофан Византиец, переведенные с греческого Спиридоном Дестунисом “в типографии Леонида Демиса”, Санкт Петербург, 1860, отрывок 13, ст. 92.

¹⁸ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 83:

Իշխանական գահից զրկված Վարազշապուհին 297/8թթ. հաղորդել է Ջենոբ եպիսկոպոսի¹⁹, Ստ. Օրբելյանի²⁰, Ագաթանգեղոսի²¹ պատմություններում հիշվող Սյունյաց իշխանը, որի անունը չի հաղորդվում: Նրան հաջողվում է իր արիության ու նվիրվածության շնորհիվ վերականգնել Սյունիքի իշխանական տան հեղինակությունն ու դիրքը արքունիքում և նույնիսկ նշանակվել արևելյան կողմի հրամանատար, որին ենթարկվում էին 21 իշխաններ²²: Մեր կարծիքով, Սյունյաց այս **Անանուն** իշխանը եղել է Վարազշապուհի եղբայրը կամ որդին, չենք բացառում նաև նրանց՝ նույն անձնավորությունը լինելու տարբերակը, և ինչպես հաճախ է պատահում, ներում ստանալուց հետո կրկին տեր է դարձել Սյունիքին ու կառավարել է մինչև 320-ական թթ.:

Ալիշանը Անանուն Սյունուց հետո Սյունյաց իշխանների իր կազմած ցանկում հարցականով նշում է Պերուժավր իշխանին²³, իսկ Ս. Հախվերդյանը առանձին ուսումնասիրություն է նվիրել Պերոզավր Սյունեցու ինքնության պարզաբանմանը²⁴: Պերոզավրի մա-սին հիշատակվում է 10-րդ դարի վրաց Անանուն հեղինակի «Վրաս-տանի դարձը» երկի մեջ: Գրքի՝ «Նինոյի վարքագրության» մեջ Սալոմե Ուջարմեցու հետ հիշատակվում է նաև ոմն Պերուժավր Միվնիելի կամ Միվնիեթի²⁵: Վ.կայակոչված Պերուժավր Միվնիելին անշուշտ Սյունեցի է, ինչպես նշվում է նաև «Վրաստանի դարձի» և Լեոնտի Մրովելու «Վրաց թագավորների յեվ նախահայրերի ու տոհմերի պատմությունը» հայերեն թարգմանության մեջ. «Սալոմե Ուջարմացի տիկինն և Պերոժավր Սյունեցին և նրանց հետ գտնվող

¹⁹ Հ. Մամիկոնյան, Տարնի պատմություն, թարգմանությունը Վ. Վարդանյանի, «Խորհրդային գրող», Ե., 1989. էջ 37-40, 45-46, 53, 57:

²⁰ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 75:

²¹ Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմ. ներած, և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1977, էջ 126, 149:

²² Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 79:

²³ Ղ.Ալիշան, նշվ. աշխ., էջ 17:

²⁴ Ս. Հախվերդյան, Վրաց տարեգրության մեջ հիշատակված Պերոզավր Սյունեցի իշխանի ինքնության հարցի շուրջ, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտաժողովի նյութեր, «Իրավունք», Ե., 2009, էջ 82-85:

²⁵ Памятники Грузинской исторической литературы VII, издат. “Мецниериба”, Обращение Грузии, пер. Е.С. Такайшвили, Тбилиси 1989, ст. 15.

իշխանները դիմեցին»²⁶ և գրաճանաչ անձնավորություն. «Ապա Սալումե Ուջարմեցին և Պերոժավր Սյունեցին բերին թանաք ու գրիչներ, և Նունեն սկսեց պատմել, իսկ նրանք գրում էին»²⁷: Ըստ «Քարթլիս Յիսովրեպայի»՝ Սալումեն Վրաստանում Սասանյան արքայատոհմի հիմնադիր Միրիան կամ Միհրան III-ի (284-342թթ.) երկրորդ որդի Կախեթի ու Կուխեթիի կառավարիչ Ռևի (342-361թթ.) կինն էր ու Տրդատ Մեծ Արշակունու դուստրը²⁸: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պերոժավր Սյունեցին միշտ հիշատակվում է Սալումե Ուջարմեցու հետ, կարելի է եզրակացնել, որ նա մեծատոհմիկ անձնավորություն էր ու Սալումեի պալատականներից մեկը և ոչ թե իշխան էր, այլ իշխանուհի: Ամենայն հավանականությամբ Պերոզավրը Սյունիքի վերոհիշյալ Անանուն իշխանի դուստրն էր և Վիրք էր գնացել Սալումեի հետ որպես նրա շքախմբի անդամ ու մնացել է այնտեղ: Ինչ վերաբերում է Պերոզավր անվանը, ապա հավանական է, որ այն Պերոզդուխտ կամ Պերոզուհի անվան վրացերեն հնչյունափոխված ձևը լինի: Նշենք նաև, որ Պերոզավրին իշխանուհի է անվանել նաև Ե. Տակիաշվիլին «Վրաստանի դարձի» ռուսերեն թարգմանության ուսումնասիրության մեջ²⁹: Եթե ճիշտ է մեր եզրակացությունը, և Պերոզավր-Պերոզդուխտ իշխանուհին Սյունյաց իշխանի դուստրն է, ապա հավանական է, որ վերոհիշյալ Անանուն Սյունի իշխանի անունը եղել է Պերոզ կամ Պերոզ մասնիկը ունեցող նմանատիպ անուն, թերևս Վարազ-Պերոզ: Նրա որդին պետք է լինի Վաղինակ I-ը (մոտ 320-348թթ.): Նա առաջին անգամ հիշատակվում է Խոսրով Կոտակ թագավորի դեմ Աղձնիքի Բակուր բղեշխի ապստամբության նկարագրության մեջ: Բուզանդի վկայությամբ՝ Աղձնիքի **Բակուր** բղեշխը, պարսիկներից օժանդակ գործ ստանալով, ապստամբում է Հայոց թագավորի դեմ, սակայն պարտություն կրելով սպանվում է իր տոհմակիցների հետ: «Բակուրի գլուխը և մի նորածին աղջիկ բերին թագավորին: Եվ որովհետև նրա տոհմից ոչ ոք չէր մնացել՝ թագավորը այդ աղջիկը կնության տվեց

²⁶ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (V- XI դդ), Լ. Մելիքսեթ-Բեկ, Գիրք Ա, Ե., 2013, էջ 22, 174:

²⁷ Նույն տեղում, էջ 22:

²⁸ Картлис Цховреба, изд. “Артануджи”, Тбилиси 2006. ст. 43, Վրաց աղբյուրները, նշվ. աշխ., էջ 168:

²⁹ Памятники Грузинской исторической литературы, VII, նշվ. աշխ., ст 7:

իր սիրելի Վաղինակ Սյունիին, նրան տվեց նաև Աղձնյաց տունը և նրան դարձրեց բղեշխ³⁰: Վաղինակ I-ը իր բարձր դիրքը պահպանեց նաև **Տիրան II**-ի (329-340թթ.)³¹ և **Արշակ II**-ի (340-370թթ.) կառավարման տարիներին: Ճիշտ է, այս ընթացքում նրա ենթակայությունից առանձնացվեց Աղձնիքը, որի իշխանությունը վերադարձվեց Բակուր բղեշխի կենդանի մնացած որդի **Հեռային**³²: Նա մոտ 340 թ. Վահան Ամատունու փոխարեն Արշակ II-ի կողմից նշանակվում է Հայոց արևելյան կողմի սպարապետ³³: Չնայած Արշակունիների նկատմամբ իր հավատարմությանը և անձնական նվիրվածությամբ՝ Վաղինակ I-ը սպանվում է Անդոկի դուստր Փառանձեմի խարդավանքների հետևանքով, որը «Արշակի ձեռքով սպանել է տալիս Վաղինակին և նրա տեղ նշանակում իր հորը՝ Անտիոքին»³⁴: Ալիշանը Անդոկին համարում է Վաղինակի որդին. «Վաղինակայ որդի թուի Անդովկ իշխանն Սիւնեաց, որ ընդ այլոց տարաւ ի Կեսարիա զՍ. Ներսէս ի ձեռնադրութիւն»³⁵: Մեր կարծիքով, **Անտիոք-Անդոկը** (348-369թթ.) ոչ թե Վաղինակ I-ի որդին է, այլ եղբայրը: Առավել ևս անհավանական է, որ նա լիներ Վաղինակ I-ի և Աղձնիքի բղեշխ Բակուրի դստեր որդին, ինչպես նշում է Ալիշանը³⁶: Դրա վկայությո-

³⁰ Փ. Բուզանդ, Հայոց Պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունը Ստ. Մալխասյանի, «Երևանի համալսարանի հրատարակություն, Ե., 1987, էջ 37:

³¹ Մենք գտնում ենք, որ պետք է հետևել հայ պատմիչների, մասնավորապես Խորենացու կողմից հայոց թագավորներին, մանավանդ 4-րդ դարին վերաբերող գահակալության տարիներին և ըստ այդմ էլ՝ փորձել ենք կազմել հայ Արշակունիների գահակալման տարիները, ինչը ստորև ներկայացնում ենք սկսած Արտաշես II-ից. Արտաշես II՝ 41 տարի (65-106), Արտավազդ II՝ 1 տարի (106-107), Տիրան I՝ 21 տարի (107-128), Տիգրան III Վերջին՝ 42 տարի (128-170), Վաղարշ II՝ 20 տարի (170-190), Խոսրով I-ին Մեծ՝ 48 տարի (190-238), անիշխանություն 28 տարի (238-264), Տրդատ Մեծ՝ 56 տարի (264-320), Խոսրով II՝ 9 տարի (320-329), Տիրան II՝ 11 տարի (329-340), Արշակ II՝ 30 տարի (340-370), Պապ՝ 7 տարի (370-377), Վարազդատ 4 տարի (377-381), Արշակ II՝ 7, 5 տարի (381-389) և Վաղարշակ III՝ 2 տարի (381-383), Խոսրով III՝ 7 տարի (386-393), կրկին 8 ամիս (414-415), Վռամշապուհ՝ 21 տարի (393-414), Շապուհ Սասանյան՝ 4 տարի (415-419), անիշխանություն՝ 3 տարի (419-422), Արտաշիր III՝ 6 տարի (422-428): Արշակունի թագավորների գահակալման այս տարեթվերի հիման վրա էլ կազմել ենք նաև Սյունի և մյուս իշխանական տների իշխանների կառավարման տարեթվերը:

³² Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 169, Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 37:

³³ Նույն տեղում, էջ 178:

³⁴ Նույն տեղում, էջ 185:

³⁵ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 10:

³⁶ Նույն տեղում, էջ 10:

յունն է այն փաստը, որ դեռևս Խոսրով II Կոտակի թագավորության ժամանակ Անդոկը արդեն հասուն այր էր և արդեն ամուսնացած էր Մամիկոնյան իշխանուհու հետ³⁷, ամենայն հավանականությամբ **Վաչե I** (?-328թթ.) Մամիկոնյանի դստեր հետ, որի մյուս դստեր հետ ամուսնացած էր Արշարունիքի տեր **Արշավիր I** (325-360թթ.) Կամսարականը: Կարծում ենք, նրանց եղբայր էր նաև Տիրան II թագավորի սենեկապետ Փիսակ Սյունին, որի դավաճանության հետևանքով կուրացվում է Տիրանը³⁸:

Հավանաբար Վարագ-Պերոզի մահից հետո նրա ավագ որդի Վաղինակը դառնում է Սյունիքի տանուտերն ու նահապետը, իսկ Անդոկն ու Փիսակը որպես տիրույթ ստանում են Սյունիքի առանձին գավառները: Վաղինակ I-ի սպանությունից հետո Սյունյաց իշխանական տան տանուտերն է դառնում Անդոկը, որը մինչև այդ էլ արդեն ճանաչված քաղաքական ու ռազմական գործիչ էր: Նա ի թիվս այլ նշանավոր իշխանների ուղեկցել է Փառներսեսի և Ներսես կաթողիկոսներին դեպի Կեսարիա քաղաքը նրանց ձեռնադրություն ստանալու կապակցությամբ³⁹: Եղել է նաև Տիգրանակերտ քաղաքի բերդապահը և պարտության մատնել Շապուհ II-ի մեծաթիվ զորքերին՝ ստիպելով նրանց մեծ կորուստներ կրելով նահանջել Մրծբին⁴⁰:

Հետագայում՝ հավանաբար 369/70թթ., Անդոկը Արշակ II-ի և իր դուստր Փառանձեմ թագուհու գերեվարումից հետո, խուսափելով Շապուհ II-ի վրեժխնդրությունից, մեկնել է Կ. Պոլիս, կայսրից արժանացել պատրիկների պատրիկ տիտղոսին և այնտեղ էլ մահացել⁴¹:

Անդոկ Սյունին ունեցել է 3 որդի՝ Բաբիկ, Մամ և Վաղինակ⁴², ու մեկ դուստր՝ Փառանձեմ անուններով: Փառանձեմը, «որ շատ հռչակված էր իր գեղեցկությամբ ու պարկեշտությամբ»⁴³, ամուս-

³⁷ Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 47:

³⁸Նույն տեղում, էջ 79-85:

³⁹ Նույն տեղում, էջ 71: 115:

⁴⁰ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 186:

⁴¹ Մտ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 86, Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969, էջ 81-82:

⁴² Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 381:

⁴³ Նույն տեղում, էջ 183

նացել էր Արշակ II-ի եղբայր Տրդատի որդի Գնեղի հետ⁴⁴: Գնեղի եղերական սպանությունից հետո նրա հետ ամուսնանում է Արշակ II-ը⁴⁵: Նրանց միակ որդին էր Պապը: Հետագայում Փառանձեմը Արտագերս ամրոցում 14 ամիս հերոսաբար դիմադրություն ցույց տվեց պարսից զորքերին, սակայն, ի վերջո գերի ընկնելով, մահապատժի ենթարկվեց Շապուհ II-ի հրամանով⁴⁶: Շապուհը դաժան դատաստան տեսավ նաև Սյունյաց իշխանական տոհմի նկատմամբ. «Սյունյաց տոհմի բոլոր չափահաս տղամարդկանց կոտորեցին, կանանց սպանեցին...: Այս բոլորը նա անում էր վրեժ առնելու համար Անդոկից, երբ պատերազմ եղավ Պարսից Ներսեհ թագավորի հետ»⁴⁷:

Անդոկի ավագ որդի Բաբիկը հոր մահից հետո, ինչպես նշում են Ստ. Օրբելյանը և Մ. Կաղանկատվեցին, կարոտելով իր հայրենի հողը, գնում է պարսից թագավոր Շապուհի մոտ և իր խիզախության շնորհիվ հետ է ստանում իր հայրենի երկիրը և «արտոնեց գահակալ դառնալ՝ Բագրատունիների ու Մամիկոնյանների հետ համահավասար պատիվ ու աստիճան ունենալ⁴⁸»: Բաբիկը Սյունյաց նախարար է դառնում պարսից Շապուհ II Երկարակյաց (309-379թթ.) թագավորի կառավարման 68-րդ⁴⁹ (377թ.) տարում և կառավարել է 21 տարի⁵⁰: Այս դեպքերը այլ կերպ է ներկայացնում Փ. Բուզանդը. «Հետո եկան Մանուել զորավարի մոտ նաև Սյունյաց տոհմից մնացածները՝ երեք պատանի, որոնք պարսկական կոտորածից ազատվել էին, որոնցից մեկի անունն էր Բաբիկ, մյուսինը Սամ, իսկ երրորդինը Վաղինակ: Հայոց Մանուել զորավարը նրանց ընդունեց, նրանց օգնական դարձավ, նրանց իրենց երկիրը ուղարկեց, Բաբիկին նշանակեց այդ երկրի տեր, մյուս երկուսին էլ՝ յուրաքանչյուրին

⁴⁴ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 183, Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 82, . Բուզանդ, նշվ. աշխ., էջ 183:

⁴⁵ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 82, Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 185, Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 193:

⁴⁶ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 194-195, Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 163-165, 269:

⁴⁷ Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 373:

⁴⁸ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 87-88, Մ. Կաղանկատվեցի, նշվ. աշխ., էջ 82-83:

⁴⁹ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 88:

⁵⁰ Նույն տեղում, էջ 95:

իր չափով, և Բաբիկը նրա նիզակակիցը դարձավ նրա կյանքի ընթացքում»⁵¹:

Կարծում ենք, որ Բաբիկի կառավարման առաջին տարին **Շապուհ II-ի** (309-379) 68-րդ տարին նշելու Ստ. Օրբելյանի վկայությունը կարիք ունի լրացուցիչ ճշտման, քանի որ Օրբելյանը Շապուհ II-ին տալիս է 72 տարվա իշխանություն⁵², որի դեպքում Բաբիկի կառավարման առաջին տարին կհամապատասխանի ոչ թե 377թ., այլ 375 թվականին:

Բաբիկը (377-398թթ.) ունեցել է 3 որդի և 1 դուստր: Նրա ավագ որդին էր Արշակ III-ի սպարապետ Դարա Սյունին, որը գոհվեց 388թ.՝ Արշակ III-ի (381-388թթ.) և Խոսրով III-ի (386-393թթ.) միջև Վանանդի Երևել կոչված դաշտում տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ⁵³: Բաբիկի դուստրը Արշակ III-ի կինն էր⁵⁴, հավանաբար նրա առաջին կինը, քանի որ Փավստոսի վկայությամբ՝ Արշակ III-ը իր գահ բարձրանալուց մի քանի տարի հետո էր ամուսնացել Մանուել Մամիկոնյանի դուստր Վարդանդուխտի հետ⁵⁵:

Հավանական է, որ իր փեսա Արշակ III-ին տրամադրած օգնության համար Բաբիկը ենթարկվել է պարսիկների ճնշումներին: Հավանաբար այդ մասին է վկայում 10-րդ դարի վրաց Անանուն հեղինակի «Վրաստանի դարձը» երկի մեջ նշված վկայությունը, որտեղ գրված է, որ վրաց թագավոր Վարազ-Բակուրի (379-393թթ.) ժամանակ նրա մոտ է գալիս բդեշխ Կրամ-Խուարը. «Եվ նրանից հետո թագավոր դարձավ Վարազ Բակուրը: Նրա օրոք պարսից թագավորի մարզպանները մտան Սյունիք, և նա նահանջեց Խիդարի համար: Այդ ժամանակ պարսից թագավորի բդեշխ Կրամ-Խուար Բոր-Չադը մտավ Տփղիս քաղաքաբերդը, և Քարթլին նրան հարկատու դարձավ, [նույնպես] և Հայքը (Մոմխիթը) և Սյունիքը և Վասպուրականը...»⁵⁶:

Կասկածից վեր է, որ այստեղ հիշատակված բդեշխ Կրամ-Խուար Բոր-Չադը նույն Բաբիկն է, որը, մեկնելով Վիրք, նրա թագա-

⁵¹ Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 381:

⁵² Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 94:

⁵³ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 206:

⁵⁴ Նույն տեղում, էջ 201:

⁵⁵ Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 381:

⁵⁶ Памятники Грузинской исторической литературы, VII, նշվ. աշխ., ст 13:

վոր Վարազ-Բակուրի միջնորդությամբ կարգավորել է իր հարաբերությունները պարսից արքունիքի հետ: Մեջբերումից կարող ենք եզրակացնել, որ Կրամ-Խուարը Տփղիս է գնացել պարսից թագավորի կարգադրությամբ: Կարծում ենք, որ հենց այդ ժամանակ էլ Բաբիկի միջնեկ որդի Վասակը որպես պատանդ ուղարկվել էր պարսկական արքունիք⁵⁷, որտեղ մնում է մոտ 20 տարի: Ն. Ադոնցի կարծիքով՝ Բաբիկը կրել է պարսկական veh=lav՝ Փառապանծ մականունը⁵⁸:

Բաբիկը մահանում է 398թ. վերջին կամ 399թ. սկզբին՝ մինչև պարսից արքա Վռամ IV-ի (388-399թթ.) սպանությունը: Այդ բոթը պարսից արքունիք է հասցնում Բաբիկի սենեկապետ Սամ Գնթունին: Վռամ IV-ը, իր սենեկապետի հետ խորհրդակցելով, Սյունիքի իշխանությունը հանձնում Վասակին, սակայն Վասակը այդ լուրն ընդունում է բավականին սառն և հպարտ պատասխանում է. «Ինձ է տեր դարձնում, երբ Սյունիքի ժառանգությունը իմ հայրենականն է»⁵⁹: Վռամ IV-ը, տեղեկանալով այդ մասին, Սյունիքի իշխան է նշանակում Սամ Գնթունուն, որը կառավարում է 1 տարի և մահանում է թունավորումից⁶⁰: Հավանական է, որ Սյունիքի ավագանին, դժգոհ լինելով Սյունիքի իշխանությունը օտար, ոչ բնիկ իշխանական տան ներկայացուցչի հանձնելու փաստից, դավադրություն է կազմակերպել **Սամի** (399-400թթ.) դեմ և թունավորել նրան: Այս անգամ պարսից արքունիքը Սյունիքի իշխան է նշանակում Անդոկի կրտսեր որդի **Վաղինակ II-ին** (401-410թթ.): Վաղինակ II-ը մեծ դեր է խաղացել Սյունիքի կրթական-լուսավորչական գործում: Նրա օժանդակությամբ Մեսրոպ Մաշտոցը Սյունիքում բացեց դպրոցներ ու մենաստաններ, իսկ Սյունիքի եպիսկոպոս-տեսուչ (մեսրոպոլիտ) նշանակեց Անանիային⁶¹:

Ամենայն հավանականությամբ, Վաղինակ II-ի որդին էր Վասակ Սյունու փեսա Վարազվաղանը, այլ ոչ թե Վարդանանց պատերազմից հետո՝ 451թ., Պարսկաստան գերի տարված երկու եղբայր-

⁵⁷ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 94:

⁵⁸ Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 507:

⁵⁹ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 94-95:

⁶⁰ Նույն տեղում, էջ 95:

⁶¹ Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ե., 1994, էջ 47:

ները՝ **Բարգենն** ու **Բակուրը**⁶², ինչպես նշված է Ղ. Փարպեցու 1982թ. հրատարակության աշխարհաբար թարգմանության ծանոթագրության մեջ: Այստեղ չպետք է տարակուսանք հարուցի այն փաստը, որ Վարազվադանը փաստորեն ամուսնացել էր իր հորեղբոր թոռնուհու հետ: Մոտ ազգակիցների միջև ամուսնությունը այդ ժամանակ, ճիշտ է, հազվադեպ երևույթ էր և նույնիսկ արգելվում էր կրոնական գաղափարախոսությամբ, սակայն, այնուամենայնիվ, պատահում էր: Այսպես, օրինակ, Արշակ III-ը ամուսնացել էր իր տատ Փառանձեմի եղբայր Բաբիկի դստեր հետ⁶³: Էլ ավելի բարդ պատկեր էր ներկայացնում Ներսես Մեծ կաթողիկոսի տոհմագրությունը: Եթե վկայենք Բուզանդի տեղեկությունները, ապա ստացվում է, որ նրա հայր Պապն ու հորեղբայր Աթանանագինեսը ամուսնացել էին իրենց պապ Տիրան II արքայի քույրեր Վարազդուխտի և Բամբիշի հետ⁶⁴, քանի որ Պապի և Աթանագինեսի հայր Հուսիկ կաթողիկոսն ամուսնացած էր նույն Տիրան II-ի դստեր հետ⁶⁵:

Բաբիկի կրտսեր որդին էր Բաբկեն և Բակուր իշխանների հայրը, որի անունը պատմական սկզբնաղբյուրները չեն հաղորդում: Եղիշեն, նշելով Վասակի չարագործությունների մասին, հավաստում է, որ «Նույնիսկ իր երկրում նա երկու եղբորորդի ուներ առաքինության սուրբ ուխտի մեջ, նրանց մասին գրեց և հայտնեց արքունիքին և իրավունք ստացավ նրանց ստացվածքի վրա, նրանց հեռացրեց-քշեց երկրից, որպեսզի այլևս այնտեղ չվերադառնան»⁶⁶: Բաբկենը, վերադառնալով հայրենիք, հետագայում գործուն մասնակցություն է ունեցել 481-484թթ. Վահանանց պատերազմի ժամանակ և նույնիսկ նշանակվել Սյունյաց երկրի տանուտեր⁶⁷: Որ Բաբկենը չէր կարող լինել Վաղինակ II-ի որդին, վկայում է նաև այն փաստը, որ Վաղինակ II-ը մահացել է մոտ 410թ., և հետևաբար Բաբկենը պետք է ծնված լիներ այդ թվականից առաջ կամ ամենաուշը հենց 410թ.: Հետևաբար, նա 481-484թթ. կլիներ ամենաքիչը

⁶² Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Ե., 1994, էջ 136: Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 205:

⁶³ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 206:

⁶⁴ Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 71:

⁶⁵ Նույն տեղում, էջ 21:

⁶⁶ Եղիշե, նշվ. աշխ., էջ 70:

⁶⁷ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 295:

75-80 տարեկան ծերունի, նույնիսկ հաշվի առնելով պոստմոդերնիզմի երկարակեցությունն ու դիմացկունությունը՝ այդ տարիքում ոչ մի կերպ չէր կարող գործուն մասնակցություն ունենալ ռազմական գործողություններին: Այսպիսով, պետք է ընդունել Եղիշեի վկայության հավաստիությունը և Բաբկեն և Բակուր իշխաններին համարել Բաբիկի երրորդ՝ **Անանուն** (թերևս՝ **Անդոկ**) որդու ժառանգները: Գտնում ենք, որ Անանուն Սյունին մահացել է 440-ական թվականներին, որից հետո նրա պատանի որդիները Վասակ I-ի կողմից գրկվել են հայրական կալվածքներից ու տարվել Պարսկաստան:

Հավանական է, որ Մաշտոցը Սյունիք է այցելել Վաղինակ II-ի իշխանության վերջին տարում, քանի որ Կորյունի հաղորդմամբ Մաշտոցին այնուհետև մեծ օժանդակություն ցույց տվեց նոր իշխան դարձած Վասակը⁶⁸: Եղիշեի վկայությամբ՝ Վասակը «օրինավոր կարգով չէր ստացել իր իշխանությունը, այլ նենգությամբ ու քսությանմբ սպանել էր տվել իր հորեղբայր Վաղինակին և ինքը գրավել իշխանությունը ինչպես արքունիքի հանդեպ վարձատրության արժանի գործ կատարող»⁶⁹: Կարծում ենք, պետք չէ Եղիշեի այս վկայությունը ընդունել անվերապահորեն, քանի որ ձգտելով ամեն կերպ նսեմացնել Վասակին՝ նա Վասակին էր վերագրում բոլոր տեսակի հնարավոր ու անհնար հանցանքներ՝ կանգ չառնելով միջոցների խտրականության առջև: Կարծում ենք, որ Վասակը Սյունիքի իշխանությունը ստացել է օրինավոր ճանապարհով՝ ավագության կարգի համաձայն, քանի որ այդ ժամանակ ամենայն հավանականությամբ նա էր համարվում Սյունիքի իշխանների մեջ ամենաօրինականը և տոհմի ավագ անդամը: Պետք է ընդգծել, որ Արշակունիների և մարզպանության ժամանակ «տանուտերական իշխանությունը տվյալ տոհմում ժառանգական էր և մի անդամից մյուսին էր անցնում ավագության իրավունքով՝ ճիշտ այնպես, ինչպես Ֆեոդալական սենյորության մեջ»⁷⁰: Ամեն մի նախարարության մեջ իշխանությունը պատկանում էր նախարարական տոհմի ներկայացուցչին, որը կոչվում էր «տանուտեր», «տեր» կամ «նահապետ», իսկ

⁶⁸ Կորյուն, նշվ. աշխ., էջ 47:

⁶⁹ Եղիշե, նշվ. աշխ., էջ 98:

⁷⁰ Ն. Արոնց, նշվ. աշխ., էջ 517:

նրանց իշխանության տակ գտնվող երկրամասը անվանել են «տա-նուտերություն», «տերություն» կամ «նահապետություն»⁷¹:

Վասակ I Սյունին 5-րդ դարի հայ պետական ու քաղաքական գործիչներից առավել հակասական կերպարներից մեկն է: Մեր քննության շրջանակից դուրս է որևէ գնահատական տալ նրա գործունեությանը, պարզապես կարող ենք արձանագրել, որ նրա օրոք Սյունիքը և Սյունյաց իշխանական տունը հասավ իր քաղաքական հզորության և ազդեցության բարձրակետին, ինչին Սյունի տոհմը, չնայած բազմաթիվ փորձերին, հետագայում չկարողացավ հասնել: Կարծում ենք տեղին է Ն. Ակիկյանի հետևյալ բնորոշումը՝ «Վասակ գործած էր դեպքերու եւ պարագաներու ճնշումին տակ, կարճ ժամանակով: Իմաստուն ռազմագիտութեան եւ խոհեմ քաղաքագիտութեան թելադրութիւնը չէր չընդարձակել ռազմադաշտը եւ ապստամբութեան տալ բողոքի կերպարանք ահաւոր թշնամույն բռնապետութեան դէմ: Վասակ չէր սխալած իր հաշուին մեջ»⁷²:

Վասակ I-ը (410-452թթ.) կառավարել է 42 տարի, չնայած Օրբելյանը նրան տալիս է 39 տարվա իշխանություն⁷³, իսկ մոտ 10 տարի (441-451թթ.) եղել է Հայաստանի երկրորդ մարզպանը՝ հաջորդելով Վեհմիհր Շապուհին (428-441թթ.)⁷⁴: Նա հավանաբար ծնվել է մոտ 387թ.⁷⁵, և ինչպես նշում են աղբյուրները, մինչև Հայաստանի մարզպան նշանակվելը նա արդեն փորձառու պետական գործիչ էր և արդեն զբաղեցրել էր Վիրքի մարզպետի պաշտոնը⁷⁶: Թեև հստակ չենք կարող որոշել Վիրքում նրա մարզպանության տարիները, սակայն կարող ենք նշել, որ այդ իրադարձությունը պետք է տեղի ունեցած լիներ 430-ական թվականների վերջին և 440-ական թվականների սկզբին:

Վարդանանց պատերազմի ավարտից հետո Վասակը կանչվեց պարսից արքունիք և ապստամբության կազմակերպման համար

⁷¹ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Ե., 1934, էջ 47-48:

⁷² Ն. Ակիկյան, Կարմիր Վարդան եւ Ախարայի ճակատամարտը, Վիեննա, 1951, էջ 87:

⁷³ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 95:

⁷⁴ Նույն տեղում, էջ 99:

⁷⁵ Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1967, էջ 55:

⁷⁶ Եղիշե, նշվ. աշխ., էջ 96, Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 197:

բանտարկվեց, որտեղ էլ մի քանի տարի անց մահացավ⁷⁷: Հավանական ենք համարում, որ Վասակը մահացել է 455թ. 68 տարեկան հասակում⁷⁸:

Օրբեյանի վկայությամբ՝ Վասակ I-ը ունեցել է 2 որդի՝ **Բաբիկ** ու **Ատրներսեհ** անուններով, և 1 դուստր, որի անունը չի նշում⁷⁹: Վասակ I-ի երկու որդիները 449թ. Գուգարքի Աշուշա բղեշխի հետ որպես պատանդ մնացել էին Տիգրանում⁸⁰: Հավանական է, որ ստանալով ապստամբության լուրը՝ Հազկերտը հրամայել է մահապատժի ենթարկել Վասակի կրտսեր որդի Ատրներսեհին, չնայած այդ մասին վկայող փաստեր չունենք: Ամենայն հավանականությամբ, Վասակի ավագ որդի Բաբիկը, իր հորեղբոր որդիներ Բաբկենն ու Բակուրը աքսորված հայ նախարարների հետ 463/4թթ վերադարձել են հայրենիք: Չնայած աքսորին, հալածանքներին ու հայրենագրկմանը՝ նա պահպանել էր ոգու ամրությունն ու քրիստոնեական հավատքը: Կարծում ենք, հենց նրան է վերաբերում Գյուտ (461-478թթ) կաթողիկոսի ժամանակ՝ 470-ական թվականների սկզբին վերաբերող Փարպեցու վկայությունը, որ «այն ժամանակ թեպետ կային էլ բացառիկ քաջ ու արժանավոր մարդիկ, ինչպես քաջ տղամարդ Բաբիկ Սյունին կամ Առնակ Ամատունին, կարևոր էին համարում համբերատարությամբ քրիստոնեության հավատի մեջ մեռնել, քան թե փառասիրությամբ երերալով ուրացության մեջ կորչել»⁸¹: Նշանավոր պատմաբան Ն. Ադոնցի կարծիքով՝ Վասակ Սյունու որդի Բաբիկը, Անդոկի որդի Բաբիկը և Վահանանց պատերազմի մասնակից Բաբկենը մեկ անձնավորություն են, ինչը, կարծում են, միանգամայն հիմնավորված չէ⁸²:

Վասակ I-ի բանտարկությունից հետո Սյունիքի տանուտեր է դառնում **Վարազվաղանը** (452-477թթ), ով ամուսնացել էր Վասակի դստեր հետ, սակայն շուտով ամուսինների միջև ատելություն է առաջանում, և վախենալով Վասակի վրեժխնդրությունից՝ Վարազվաղանը փախչում է Պարսկաստան ու գործիք դառնում հազարա-

⁷⁷ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 203, Ստ. Օրբեյան, նշվ. աշխ., էջ 103, Եղիշե, նշվ. աշխ., էջ 99-100:

⁷⁸ Լեո, նշվ. աշխ., էջ 86:

⁷⁹ Ստ. Օրբեյան, նշվ. աշխ., էջ 100:

⁸⁰ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 129, Ստ. Օրբեյան, նշվ. աշխ., էջ 101:

⁸¹ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 271:

⁸² Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 307:

պետ Միհրնէրսեհի ձեռքին⁸³: Նա Սյունիքի առաջին ուրացող իշխանն էր և «բազում անիրավություններ կատարեց, Սյունյաց աշխարհում կառուցեց մոխրանոցի շատ տներ՝ իր տոհմը գայթակղեցնելու համար, և ... երկար ժամանակ դևից տանջվելով՝ սասկեց դառն ու չարաչար մահով»⁸⁴, 25 տարի իշխելուց հետո⁸⁵:

Բաբիկից հետո կառավարած Սյունիքի իշխաններին թվարկելով՝ Ստ. Օրբէլյանը Վարազվաղանից հետո նշում է 5 տարվա ընդմիջում. «Այսպես. Բաբիկը Սյունիքի իշխանությունը ստանում է Շապուհից և ապրելով [իշխանության մեջ] քսանմեկ տարի՝ վախճանվում է: Նրա սենեկապետ Սամ Գնթունին իշխում է մեկ տարի: Վաղինակը՝ ինը, Վասակը՝ երեսունինը, Վասակի փեսա Վարազվաղանը՝ քսանհինգ: Հինգ տարի ընդմիջում՝ [է լինում]: [Ապա իշխում է] Գդիհոնը՝ տասնյոթ տարի»⁸⁶: Կարծում ենք, այստեղ պետք է մեկ ճշտում կատարել. քանի որ Վարազվաղանի 25 և Գդիհոնի 17 տարիների իշխանությունը՝ 25+17=42 հաշվելով՝ Վասակ I-ի կառավարման վերջին տարուց՝ 452թ. ստացվում է Գդիհոնի սպանության՝ 484թ., դրանով 5 տարվա ընդմիջման տեղ չի մնում:

Վարազվաղանի որդիներից մեզ հայտին են 2-ը՝ **Գդիհոնը** և **Հազդը**: Հազդը, ի տարբերություն հոր՝ Վարազվաղանի և եղբոր՝ Գդիհոնի, հավատացյալ քրիստոնյա էր և ակտիվ մասնակցություն ունեցավ պարսիկների դեմ 481-484թթ. ապստամբությանը: Ճարմանայի ճակատամարտում գերի ընկնելով՝ հրաժարվում է կրոնափոխության առաջարկից, որի պատճառով էլ նահատակվում է Բագրևանդ նահանգի Բագավան գյուղի մոտ՝ Նպատ լեռան լանջին 482թ. սեպտեմբերին⁸⁷:

Վարազվաղանին հաջորդեց նրա ավագ որդի **Գդիհոնը** (477-484թթ.), որը, հոր նման լինելով զրադաշտական, նույնպես բացասական դեր է խաղացել Սյունիքի և Հայաստանի պատմության մեջ: Նա հատկապես աչքի ընկավ Վահանանց 481-484թթ. պատերազմի ժամանակ՝ թշնամական դիրք բռնելով ապստամբների նկատմամբ և ամեն կերպ աջակցություն ցույց տալով պարսիկներին: Նա, մի

⁸³ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 87, 89, Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 100:

⁸⁴ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 203

⁸⁵ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 95:

⁸⁶ Նույն տեղում, էջ 95:

⁸⁷ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 104-106, Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 329, 343:

քանի անգամ պարտություն կրելով ապստամբներից, ի վերջո սպանվում է 484թ. Շիրակի **Ըշտե** կամ **Շտեա** գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում⁸⁸: Գղիհոնին հակառակ Վահան Մամիկոնյանի հավատարիմ աջակիցներից էին Սյունի իշխաններ Բաբկենը, Բակուրը և Հագդը⁸⁹: Ինչպես նշել ենք, Բաբկեն և Բակուր եղբայրները Վասակ Սյունու Անանուն եղբոր որդիներն էին և 451թ. գրկվելով իրենց տիրույթներից՝ գերի էին տարվել Պարսկաստան: 12 տարվա գերությունից հետո՝ 463/4թթ. վերադառնալով հայրենիք՝ նրանք հավանաբար Վարազվադանից ստացել էին իրենց հորական տիրույթները, սակայն չէին հրաժարվել քրիստոնեական հավատից և միացան Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությանը: Ակոռիի ճակատամարտի նախօրեին՝ 481թ., ապստամբները **Սահակ II Բագրատունուն** (460-482թթ.) նշանակեցին մարզպան, **Վահան II Մամիկոնյանին** (451-505թթ.)՝ սպարապետ, **Բաբկեն Սյունուն** էլ նշանակեցին Սյունիքի տանուտեր⁹⁰: **Բաբկեն I-ը** (481-483թթ.), ծանր վիրավորվելով 482թ. Ճարմանայի ճակատամարտում, այլևս զործուն մասնակցություն չի ունենում ապստամբության հետագա ընթացքին⁹¹: Հավանական է, որ նա շուտով մահանում է ստացած ծանր վերքերից՝ այդպես էլ չկարողանալով իրականացնել իր երազանքը՝ իրական տեր դառնալ Սյունիքի իր պապենական իշխանությանը:


Այսպիսով՝ պատմական սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա մեզ հաջողվեց կազմել մինչև 5-րդ դարի վերջը կառավարած Սյունիքի իշխանական տան նահապետների հերթականությունն ու նրանց կառավարման մոտավոր ժամանակաշրջանը: Ստորև ներկայացնում ենք նաև մինչև 5-րդ դարի վերջը իշխած Սյունյաց իշխանների տոհմապատկերը.

⁸⁸ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 103, Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 371:

⁸⁹ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 104:

⁹⁰ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 295:

⁹¹ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 104: Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 329:



¹ Հաշվի առնելով Անանուն անվան անբարեհնչունությունը՝ Սյունյաց օրիորդների՝ մեզ անհայտ անունների համար օգտագործել ենք Սյունե անունը:

**Жирайр Мирумян
Goris**

Сюникский княжеский дом до 6-го века

Резюме

Исторически Сюник играл особую роль в истории армянского народа. До утверждения в Армении династии Аршакуни князья Сюника служили армянским царям и достигли высоких положений, заслужили уважение с их стороны. До четвертого века наши сведения о проващих князьях Сюника незначительны. Из первичных источников нам удалось составить очередность правителей княжеского дома Сюника и приблизительное время их правления до конца пятого века.

**Jirayr Mirumyan
Goris**

The princely house of Syunik till 6th century


Summary

Historically Syunik plays a special role in the history of the Armenian people.

Before the affirmation of Arshakunyats dynasty in Armenia, the princes of Syunik loyally served to Armenian kings and were awarded high positions and honors. Till the 4th century the information about the princes of Syunik is scarce.

With the help of the historical sources we succeeded to form the sequence of forefathers of the princely house of Syunik who governed till the end of the 5th century and the approximate period of their governance.

ՏԱԹԵՒԻ ԶՐԱՆՑՔԻ ԵՒ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ



Տաթևի կամ Ցաքուտի ջրանցքը միջնադարի ջրաշինարարական եզակի և հայտնի կառույցներից մեկն է: Այն եղել է դժվար կառուցվող ջրանցքներից և աչքի է ընկել իր երկարությամբ: Շինարարական խոշոր աշխատանք է կատարվել ջրանցքը կառուցելու համար. «Շատ չարչարանքով և մեծամեծ ծախսերով ջուրը բերել էր Ձագեձորի լեռներից և հասցրել մինչև Ցաքուտ, որը գտնվում է գետի այն կողմում՝ վանքի դիմաց»¹: Ցաքուտը Տաթևի վանքի արևելյան մասում է՝ Որոտան գետի ձախ ափին՝ մոտ 200 հա տարածքով: Այստեղ հողը քարքարոտ էր ու փշալից՝ ցաքուտ²: Որոտան գետը ոռոգման համար անհնար էր օգտագործելը, որովհետև այդ մասում գետը մտնում է Հարժիսի հարավային կիրճը: Մինչև Հալիձոր գյուղի սահմանը Որոտանը անցնում է 600-800 մետր խորությամբ³: Ցաքուտ վայրը մշակելու և բարեբեր դարձնելու համար վանական միաբանությունը որոշում է կառուցել ջրանցք: Տաթևը ունի առու-գետակներ՝ Ղանձու, Քրհանուց և Ջուղանի, որոնք կազմում են են Տաթև փոքրիկ գետակը: Այն Օփա քարի և Ցուրաբերդի մոտով հոսում ու Տաթևի մեծ անապատի մոտ միանում է Որոտանին: Այս գետակը, նրա վտակ-առուներն էլ հարմար չէին Ցաքուտի ոռոգման համար հատկապես ջրի սակավության պատճառով⁴:

¹ Ս. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 226:
² Ցաքը թփաման բույս է, որ ունի սուր փշեր և Սյունիքում օգտագործվում է ցանկապատերի համար:
³ Տե՛ս ՀՍՄՀ ֆիզիկական աշխարհագրություն, Ե., 1971, էջ 402:
⁴ Տաթևի տարածքի ջրերի մասին կարելի է տեսնել Ս. Պողոսյան, Տաթևի համառոտ պատմություն, Ե., 2007, էջ 20:

Տաթևի վանահայր և Սյունյաց եպիսկոպոս Հակոբը (918—958), «աներևոյթ իմն գորացեալ ի բանէն Աստուծոյ»⁵ Սյունյաց իշխան Վասակի որդի իշխան Փիլիպէից գնում է այսօրվա Վերիշեն և Ակներ գյուղերի հյուսիսարևմտյան մասով հոսող Վարարակնի աղբյուրների⁶ շուրջ «տասներկու հազար դրամով և մեկ փայլուն ջավահիրով, որի արժէքն ու որպիսությունը շատերը չգիտէին»⁷:

Տարածքը «վարդաստան ու ծառաստան» է դառնում: Ս. Օրբէլյանը նշում է, որ այստեղ տնկված այգիներում աճեցնում էին ձիթենիներ, թզենիներ, նոնենիներ, ազնիվ տեսակի խաղողի որթեր և գանազան պտղաբեր ծառեր՝ «ի վայելումն սուրբ հայրապետացն» և աղքատների համար. «Եվ ապա այստեղ տեսնելով մի գեղեցիկ բլուր՝ նրա գլուխը հարթել տվեց, պարսպապատեց, ներսի կողմը ծառայեցրեց իբրև հաճելի դիտանոց... շինեց գմբէթահարկ մի խորան՝ շատ հրաշալի կառուցվածքով»⁸: Մինչև օրս էլ կա այդ կառույցը՝ կիսախարխուլ վիճակում⁹. «Հեովից նայողը կասի, որ այդ բլուրը արհեստական է, իսկ եկեղեցու մի մասը կարծես գտնվում է բլրի տակ: Բլրակի չորս կողմում կան կիսավեր շինություններ»¹⁰: Ապա Հակոբ եպիսկոպոսը իր ձեռքով կազմում է կավածագիր-արձանագրություն՝ ջրի իրավունքի գնման մասին. «Ես՝ Յակոբ, շնորհիւն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս, գնեցի զՎարարակ ջուրն յաստուածապահ Փիլիպպէէ Սիւնեաց տեառնէ ընդ երկոտասան հազար դրամի և մի պատուական գոհարի, և բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ վերին օգնականութեամբն ածի զջուրն ի լեռնէն Չագէձորոյ և բերի ի Վարդուտս...»¹¹

Եպիսկոպոս Հակոբը նշում է, որ «ո՛չ նորիքցիները, ո՛չ խոտանանցիները, ո՛չ շնհերքցիները կամ հալիքցիները, ո՛չ էլ այլ որևէ մարդ» իրավունք չունեն ջրից օգտվելու: Ջրից բացառությամբ պիտի օգտվեն մարդիկ և կենդանիները միայն խմելու համար: Չի կարելի

⁵ Ս. Օրբէլյան, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 184:

⁶ Աղբյուրները հավանաբար անուններ ունեն, դրանցից երկուսի անունը ճշտեցինք՝ Երկար աղբյուր և Քաշկառի աղբյուր: Այս մասին տե՛ս www.sarc.am, Ա. Բաբայանի կազմած աշխարհագրական անունների բառարանում:

⁷ Ս. Օրբէլյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 226:

⁸ Նույն տեղում:

⁹ Ցաքուտի շինության մասին տե՛ս www.hushardzan.am:

¹⁰ Ս. Պողոսյան, Տաթևի համառոտ պատմություն, Ե., 2007, էջ 47:

¹¹ Ս. Օրբէլյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 186:

ջուրը կտրել ոռոգման նպատակով: Որքան էլ որ զարմանալի, բայց ջրի վրա նգովը¹² է դրվում. «...նգովված լինի աստծուց, սուրբ նշանից, Նիկիայում հավաքված երեք հարյուր տասնութ հայրապետներից, բոլոր սրբերից ու մեր կողմից»¹³:

Պարզվում է, որ մինչև եպիսկոպոս Հակոբի ջրաշինարարական աշխատանքները այստեղ եղել է ջրամբար, որով ոռոգվել են Ակներ գյուղի հյուսիսարևելյան լանջերը: Այսօր էլ նկատվում է, որ ջրի ակունքից ներքև նախկինում ծառաստան է եղել, այլն քարերից մաքրված տարածքներ, որ օգտագործվել են որպես վարելահող: Վայրը, ըստ էության, բարեբեր է բուսականության համար. խոնավ, բուսածածկ ավազաններ: Վարարակնի ակունքից¹⁴ մոտ 1 կմ ներքև՝ ձորափին՝ Վարարակնի ակունքից գառիվար, բնակավայրի հետքեր են պահպանվել: Այդ են վկայում նաև Ակների սարավանդից ժայռեղեն բլուրով բաժանվող մասի՝ Ղվլինդարայի շրջակայքի ժայռափոր քարանձավները և բերդի մնացուկները: Ակնեցիները այստեղ հնագույն սուրբ էլ ունեն՝ Խաչին օս: Այսօր նշված տարածքի հարթությունները օգտագործում են խոտհարքի և արոտավայրերի համար:

Բնակավայրը հավանաբար դատարկվել է Վարարակնի ջուրը վաճառելուց հետո. «Աստծու կամքով ես Սյունյաց տեր իշխան Վասակի որդի Փիլիպես, իմ կամավորությամբ Վարարակն ջուրը վաճառեցի սուրբ Գրիգոր եկեղեցուն...»¹⁵:

Հնարավոր է, որ այս հին բնակավայրը լինի Ս. Օրբելյանի նշած Նորաշենիկ՝ 6 միավոր հարկով գյուղը: Թե՛ եպիսկոպոս Հա-

¹² Ժողովրդի կողմից այս անեծքը խորն է ընկալվել, և նույնիսկ Քարահունջ գյուղի բանադրանքը, որ հետագայում հանել է Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը, կապում են այս ջրից միամտաբար գողանալու հետ: Ահա այսպես է ներկայացնում. «Ճանապարհին տեսանք Քարահունջ անունով մի ավեր գյուղ, որը բանադրված /անիծված/ էր Տաթևի առաջնորդների [կողմից]: Աղերսեցին ինձ արձակել [բանադրանքը], և ես, տեղի տալով, արձակում և օրհնություն տվեցի [այդ] գյուղին: Այնտեղ կար սրբատաշ քարով կառուցված մի եկեղեցի»: Այս մասին տե՛ս Ճանապարհորդություն ի մե՛ծն Հայաստան, մաս Ա, Բ, Ե., 2016, էջ 493 /Գրաբարից աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ս. Գրիգորյանի/:

¹³ Ս. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 226:

¹⁴ Վարարակնի ակունքը սխալ է տեղադրում Ե. Լալայանը. Նշում է Ուչ-թափալար լեռնաշղթա, բայց Ուչթափան այդ վայրում չէ, ու երբեք էլ Իշխանասարը չի համարվել Ուչ-թափալար լեռնաշղթայի մաս:

¹⁵ Ս. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 226:

կոբի, թե՛ Փիլիպի թողած գրություններում նշվում է «նորիքցի», որ համապատասխանում է Հաբանդ գավառի Նորաշենիկ գյուղին: Հաբանդում «նոր» բաղադրիչով այլ գյուղ չի հիշատակվում: Այս գյուղը Ս. Օրբելյանի մոսկովյան հրատարակության մեջ նշվում է Խանածախ և Վաղատուր գյուղերից առաջ¹⁶, իսկ նոր հրատարակության մեջ՝ Վաղատուր գյուղից առաջ¹⁷: Երկու դեպքում էլ համընկնում է այն տարածքին, որ ձգվում է Ակների հյուսիսային մասից մինչև այսօրվա Վաղատուր գյուղը: Մրանց միջանկյալ մասում միակ տեղն է, որ բնակավայրի հետքեր կան: Ս. Օրբելյանը Նորիք գյուղը նշում է Վայոց ձոր գավառում: Ակնհայտ է, որ ջրանցքը սրա հետ կապ ունենալ չի կարող: Նման անվամբ մի գյուղ էլ հիշատակում է Ծղուկ գավառում՝ 12 միավոր հարկով՝ Յուր գյուղից առաջ: Վերջինս գտնվել է Յուր գյուղի հարևանությամբ: Դա նկատելի է ոչ միայն հարկացուցակում նշված հերթականությունից, այլև պատմության մեջ ընդգրկված շարադրանքից. «...քանդեց և հիմնիվեր բնաջնջեց անիծարնակ Յուրա քարը, Ձագիկ իշխանի որդի Փարաջից հոգեբաժին նվեր վերցրեց Բոլորաքարը՝ իր ողջ սահմաններով, բացի Նորիքի վանքի բաժնից»¹⁸: Մյուս դեպքում Նորիք գյուղը հիշատակվում է պատմության ԽԱ գլխում¹⁹՝ որպես հայրապետ Տեր-Հովհաննեսի ծննդավայր: Մի ուրիշ մասում նշում է Բոլորաքարի գնման մասին, որ պատկանում էր Նորիքին²⁰: Խոսք չկա, որ վերոբերյալ երեք հիշատակումները վերաբերում են Ծղուկ գավառի Նորիք գյուղին: Մակայն եթե այս ջրանցքը հասած լիներ Ծղուկի Նորիք, որ գրեթե անհնար է, գրություններում պետք է հիշատակված լիներ նաև Հարժիսը /Հարժիքը/, որը ընկած է մինչև Ծղուկի Նորիք գյուղի մասերը, այսինքն՝ ջրանցքը պետք է կտրեր Հարժիսը և նոր միայն կոր տալով իջներ դեպի Խոտ /Խոտանան/, Շնհեր, Հալիձոր, Տաթև: Այդ կերպ ջրանցքի երկարությունը պետք է կրկնապատկվեր, որի դեպքում էլ ջրի կորուստ կլիներ: Բացի այդ՝ Ս. Օրբելյանի մեջբերած երկու հիշատակումներում էլ սկզբնապես դրված է «նորիքցիների» գյուղը, որին հաջորդում են մյուս երեքը, իսկ Հաբանդն գա-

¹⁶ Տե՛ս Ս. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 375:

¹⁷ Ս. Օրբելյան, Մյունիքի պատմություն, էջ 399:

¹⁸ Նույն տեղում, էջ 253:

¹⁹ Նույն տեղում, էջ 205:

²⁰ Նույն տեղում, էջ 271:

վառի հարկացուցակում նշված Նորաշենիկը ընկնում է Վաղատուրից առաջ: Այստեղ հնարավոր է հակասություն առաջանա, այսինքն՝ եթե նկատի է ունեցել Նորաշենիկը, ապա պետք է հիշատակվեին նորաշենիկցիները²¹: Նկատելի է նաև, սակայն, որ մյուս գյուղերի անվանումների պահպանմամբ չեն նշված բնակիչների անվանումները. հմտ.՝ խոտանանցի /Խոտ/, շնհերցի /Շնո հերք/, հալիքցի /Հալե/ և այսպես նաև՝ նորիքցի /Նորաշենիկ/²²:

Շուրջ 35 կիլոմետր երկարություն ունի Տաթևի ջրանցքը, որի կառուցման համար պահանջվել է ճեղքել ժայռեր, հարթեցնել բլուրներ, բացել ջրատար ճանապարհներ, որը կատարել են վանքապատկան գյուղերի շինականները՝ որպես հարկ Տաթևին:

Ջրանցքը վայրկյանում վերցնելիս է եղել մոտ 200 լիտր ջուր²³, բայց XIII դարում այն զգալիորեն ավերվել է, և պակասել նրա ջրթողունակությունը²⁴: Ականայի ջրամբարը 1294թ. վերանորոգում է վանահայր Հովհաննեսը²⁵, ով Պուգտին սարի բարձունքում՝ ժայռից պոկված մի մեծ վեմի վրա, որ կոչում են Ճղածքար, թողնում է արձանագրություն²⁶. «Յամի յորում էր թվ. ՉԽԳ (1294): Ես տէր Յոհաննես կաման Աստուծոյ և աղաթիւք հոգևոր հաւր իմո տէր Հայրա-

²¹ Չենք կարող վստահապես հաստատել բնակավայրերի այս տեղադրությունը կամ հերթականությունը: Սա ընդամենը կարծիք է և կարող է հակառակ տարբերակի հանդիպել: Այսպես, օրինակ, այս տեսակետին կարող է հակակշիռ լինել այն հանգամանքը, որ Ծղուկ գավառի սահմանները հատել են Խոտ, Շինուհայր և Հալիձոր գյուղերը: Ուրեմն հնարավոր է, որ նրանցից առաջ ընկած լիներ Նորիք գյուղը, որը գտնվում էր Ծղուկ գավառում՝ Խոտ, Շինուհայր, Հալիձոր գյուղերից հյուսիս-արևմուտք ընկած մի տարածքում՝ մինչև Հարժիս ընկած մի հատվածում:

²² Այս առիթով Սյունիքի պատմության մշակ, բոլորիս կողմից սիրված հեղինակ Ս. Հախվերդյանը այլ նկատառում ունի. «Օրբելյանը Նորիք անունով գյուղ Հաբանդի գյուղացուցակում չի նշում, այն մտնում էր Ծղուկ գավառի մեջ: Քանի որ Հաբանդ գավառի սահմանը Ծղուկի հետ վերջանում էր Հալիք-Հալիձորի տարածքում, պետք է կարծել, որ Նորիք գյուղը գտնվել է ջրանցքի վերջնամասում՝ Սասանայի կամրջի կիրճում, այնպիսի տեղ, ուր կարող էր հասնել ջրանցքի ջուրը»: /Այս մասին տե՛ս Ս. Հախվերդյան, Գործիսի ամփոփ պատմություն, Ե., 2005, էջ 89/

²³ Գր. Շիրմազան, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Ե., 1962, էջ 158:

²⁴ Ս. Վիրաբյան, Միջնադարյան հայաստանի ջրաշինարարության և ջրօգտագործման պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, № 1, Ե., 1975, էջ 148:

²⁵ Г. Григорян, Очерки истории Сюника IX-XV вв., Е., 1990, ст. 230.

²⁶ Բնակիչներն այդպես են անվանում մոտ երկու մետր երկարությամբ և մեկուկես մետր լայնությամբ վեմ-հուշակոթողը:

պետա տարա զջուրս Վարարական ի Վարդուտն, գոր աստուածա-
պատիւ և հոգևոր տէր Յակոբ գնեալ էր և արարեալ բազում աշխա-
տութեամբ և արդեամբք, զխափանեալն ի բազում ամանակաց
կրկին նորոգեցաք յիշատակ մեզ եւ նախնեաց մերոց. որք հանդի-
պիք սուրբ երրորդութեամբ յիշեցէք ի Քրիստոս»²⁷: Այն հավանաբար
գործել է մինչև 1386 թ. Լենկթեմուրի հորդանների՝ Սյունիքը ասպա-
տակելը²⁸:

Ճղածքարի (տեղացիների կողմից երբեմն անվանվում է Տեր-
տերի քար²⁹) շրջակայքում պահպանված են հին ջրամբարի հետքե-
րը: Պահպանված են նաև ջրամաքքման երեք ակոս: Այս տարածքը
տեղացիները կոչում են Ծիլիկա փոս կամ Թիփինի ձոր: Չարմանա-
լի ձորակ է. հոկտեմբեր ամսին այստեղ մասրենին ծաղկում է, իսկ
հանդիպակաց լանջերի և ձորերի համեմատությամբ աշնանն այս-
տեղ կանաչ է և բուսառատ: Պուզտին սարից քիչ հարավ գտնվում է
Ակների հայտնի ջրապահոցը, որը մատակարարում է ողջ տարած-
քին: Նրանից ներքև գտնվում է Սդեղին գյուղ տարվող նոր ջրամբա-
րը: Խորհրդային շրջանում նոր ջրամբարից ներքև կառուցել են եր-
կու հիդրոէլեկտրակայան՝ մեկը Ակներ գյուղի արևմտյան մասում,
մյուսը՝ Պուզտին սարի զառիվար հատվածում: Սրանք ժամանակին
ծառայել են Գորիսի հյուսիսային բնակավայրերի և այս տարածքի
գյուղերի էլեկտրականության մատակարարմանը: Այս գեղեցիկ շի-
նություններից վերինը անմխիթար վիճակում է, իսկ գյուղամերձինը
վերաշինվել և գյուղի արարողությունների համար սրահի է վերած-
վել:

Ճղածքարի տարածքում գտանք նաև մի խաչքար: Այն ավելի
շատ գերեզմանաքարի է նման՝ առանց արձանագրության:

Դրանից ներքև շրջված մի մեծ քար էլ կար: Տպավորությունն
այնպիսինն էր, որ այն մշակված է:

Մինչ գրությամբ վիմաքարին հասնելը՝ կենդանիներին ջրելու
համար կառուցած արհեստական ավազան-աղբյուրի մոտ գտնվեց
ծակոտկեն մեծ քար: Նման մի քար էլ գտնվել է Քարահունջ գյուղի

²⁷ Դիվան հայ վիմագրության, II, Ե., 1960, էջ 78:

²⁸ Հնարավոր է, որ ջրանցքի ավերումը կապվի 13-14-րդ դարերում Սյունիքի
երկրաշարժների հետ՝ 1295, 1309, 1319, 1321: /Այս մասին տե՛ս Լրաբեր
հասարակական գիտությունների, թիվ 6, 1975, էջ 84/

²⁹ Ջրամբարը այս տարածքում կոչվել է Տերտերի առու:

հարավում: Մեր ուսումնասիրության շրջանակից դուրս է նրանց վերաբերյալ կարծիք հայտնելը³⁰:

Վաղեմի այս ջրամբարը իսկապես նպաստավոր է եղել Տաթևի վանքի համար: Այսօր նրա հետքերը առանձնապես չեն պահպանվում մինչև Տաթև ընկած հատվածում. «...եթե եկեղեցու տեղը կիսավեր պահպանվում է, ապա ջրանցքի տեղը ընդհանրապես չի երևում: Վարդուտ դարձած տարածքը այժմ նորից դարձել է Ցաքուտ»³¹, սակայն Ս. Հախվերդյանը³² նշում է, որ Ցաքուտում ճանապարհի շինարարության ժամանակ բացվել են կավե զույգ խողովակներ՝ քյունգեր³³: Այո՛, կան կավե խողովակներ, բայց դրանք բավականին փոքր են, և կարծում ենք, որ թերևս նախատեսված են եղել ջրանցքի ջրի մի փոքրիկ մասը կիսելու համար: Այդպիսի խողովակներ գտնվել են նաև Սիսիանի Դարաբաս գյուղում:

Ցավոք բավարար ուսումնասիրված չեն ինչպես ջրամբարի անցկացման³⁴ ճանապարհը, այլև ընդհանրապես այս տարածքը: Բազմաթիվ հարցեր դեռևս մնում են առկախ, որոնք վերաբերում են ինչպես Ս. Օրբելյանի նշած գյուղերի տեղադրությանը, այնպես էլ պատմահնագիտական, ժամանակագրական բազմաթիվ հարցերի:

³⁰ Այս մասին կարելի է տեսնել *Д. Бродянский, каменные рельефы- «чашечная» традиция на дальнем востоке., Россия и АТР., 2006, № 1, ст. 105—109.*

³¹ Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 47:

³² Ս. Հախվերդյանի Գորիսի ամփոփ պատմության մեջ բերված է նաև ջրանցքի կառուցման հետ կապված մի ավանդություն, որն այստեղ չենք վկայակոչում ծավալուն լինելու պատճառով: /Տե՛ս Ս. Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 88/:

³³ Ս. Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 88:

³⁴ Ջրանցքի ջրագրական մասնակի տեղեկություններ հաղորդում է Գր. Շիրմազանը Ակների և Գնդեվանքի ջրանցքները., «Աշխատություններ», Պատմության ինստիտուտ, թիվ 1, Ե., 1935:

Յ ԱՐԻՅՈՐՈՒՅԵՌ ԹՎԷ ՉԻԳԵՍՄԻՅՈՆ ՆԱԿԱՆԿ
 Ն ԱՅ ԵՒ ԱՆ ԱԹԻՒՔ ՆՈԳԵԻՄՅ ԱՅԵՆՈՄԻՅԱ
 Յ ՈՒՊԵՆ ՆԱԿԱՆ ԱՄԿ ԱՆ ԱՎԻՎԱԿ ԴԻՄԵՆ
 ՈՒՍԱԳԱՏԻԵԻՅՈԳԵ ԱՄՄԻՅԱ ԿԻԳԵ ԱԼԵՆԵԻ
 ՆԱԵ ԱՔԱՂԱՄԱՆ ԽԱՄԻՈՒԲԵԵՆԴԵՔՉ ԱՔՅ
 Ե ԱՆԻԲԱՉԱՄԱՆ ԱՎԱՅԿԿԵՆ ՄՈՐԳԵՅԼԵՅԻՆ
 ԱՄԼԵՉԵԻՔԵ ԱՅ ԱՐՈՅՈՒՅԿ ԴԻՊԵՄԵՆՈՐ
 ՈՐՈՒՄԵՄՅԻՆ ԵՅԵՔ ԻՔՍ

Ճղածքարի արձանագրությունը: Վերականգնումը՝ Ս. Բարխուդարյանի:



Նորի՞ք /Ակներ՝ հյուսիս-արևմուտք. հին բնակատեղի/:



Ճղած քար:



Նոր ջրակայանը:



Ակների ծակ քար:



Քարահունջի ծակ քար:



**Ջրատար խողովակներ, կավ.
Դարաբաս գյուղը սնուցող
ջրատարի մասեր, 17-րդ դար:**



Հիդրոէլեկտրակայանի հին շենքը:



Գերեզմանաքար Պուգոսին սարի փեշին:



Ցաքուտի դիտավայր:

**Грайр Петросян
Мгер Кумунц
Goris**

О Татевском канале и нескольких явлениях связанных с ним

Резюме

Татевский или Цакутский канал является одним из самых ценных монументов средневекового Сюника. У него была длина в 40 км и орошал территорию в более 200 гектара. Правая часть Татевского монастыря стала плодородным после орошения, и там росли инжир, оливки, виноград и другие фрукты. Во время определения границ канала были обнаружены изначальные места происхождения нескольких сел-Норашеника, Шинуайра, Хота, Алидзора, Татева, о которых рассказывает С. Орбелян.

**Hrayr Petrosyan
Mher Kumunts
Goris**

On Tatev canal and some matters regarding to it

Summary

Tatev or Caqut canal is one of the most valuable medieval historical monuments in Syunik. It had around 40 km length and irrigated a territory of 200 hectares. The right part of Tatev monastery became fruitful after irrigation, and fig, olive, grape, and other fruit grew there. The origins of several villages – Norashenik, Shinuhayr, Khot, Halidzor, Tatev – were discovered during the defining of the borders of the canal, about which S. Orbelyan writes.



Զորիք Լոռյան
ԼՂ, Բերձոր
zoriknew@mail.ru

Այսօրվա Քաջաթաղի շրջանը, որն իր մեջ ներառում է պատմական Մեծ Հայքի Սյունիք և Արցախ աշխարհների մոտ 10 գավառ ու գավառակ, տարածվում է Արաքսից մինչև Մեծ Բևեռաթափ՝ ձգվելով գրեթե 200կմ: Տարածվում է Հակարի գետի և նրա 4 մեծ վտակների՝ Աղավնոյի (Արքուգետ), Հոչանցի, Շալուայ և Որոտանի, ինչպես նաև Ողջիի հովիտներում: Շրջանում պահպանվել են պատմական բնակավայրեր, որոնք ունեն հազարամյակների պատմություն:

Հոչանց գյուղը պատսպարված է համանուն լեռան արևելյան մասում, իսկ արևելյան կողմով անցնում է Հակարիի միջին վտակը՝ Հոչանց գետը, որը քիչ ներքև միանում է Շալուա գետին, և ծնվում է Հակարին: Հոչանցի մի փոքրիկ վտակ, որ սկիզբ է առնում ժայռակերտ Հոչանց լեռան մոտակա աղբյուրներից, դարերի ընթացքում ստեղծել է մի խոր ձոր, որի աջ ու ահյակ ափերին դարեր ի վեր գոյատևել է Հոչանց բնակավայրը: Այդ տեղից ավելի ցած մի կիրճ է, որի ձախակողմյան ափը կազմված է ուղղաձիգ ժայռերից, իսկ ժայռերի մեջ քարայրներ են, որոնք վաղնջական ժամանակներից եղել են բնակելի ու ճգնարաններ: Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Աղահեճք (հետագայում՝ Քաջաթաղ-Խոժոռաբերդ) գավառի այս բնակավայրի մասին Հունչաք ձեռով առաջինը հիշատակում է Սյունյաց աշխարհի XIII դարի տոհմական պատմիչ Ստեփանոս Օրբելյանը՝ «Պատմութիւն Տանն Սիսական» երկում, Աղահեճք (Քաջաթաղ) գավառի բնակավայրերի ցանկում՝ 12 միավոր հարկաչափով¹:

1692 թ. կազմված «Տաթևու թեմի պտուղն այս է այժմ ժամանակի: ԺԴ գաւառացն» հարկացուցակում գյուղը «Քաջաթաղուց գաւառն»-ի կազմում հիշատակվում է Հոչանց ձևով՝ «ԳԻ ԴՃԾ» (3450)

¹ Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 399:

միավոր հարկաչափով²: Այս տեղեկությունից հետևում է, որ բնակավայրը եղել է գավառի մարդաշատ, շեն ու հարուստ գյուղերից:

Հոչանցի մասին առավել տեղեկություններ է հաղորդում 17-րդ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին: Նա նկարագրում է, որ 17-րդ դարի սկզբին Տաթևի մեծ անապատից մի խումբ բարձրաստիճան հոգևորականներ են հեռացել: Նրանցից են Կիրակոս և Թովմա եպիսկոպոսները, որոնց մասին պատմիչը գրում է, որ նրանք եկել են Հոչանց եւ գյուղի մոտ հիմնել անապատ: Նշված անապատն այսօր էլ կա. գտնվում է Հոչանց գյուղից արևելք՝ խոր ու ժայռակերտ ձորի ձախակողմյան ժայռերի այրերից մեկում: Դավրիժեցին գրում է. Իսկ տեր Կիրակոսն, որ գնաց ի Հօճանց՝ կացեալ անդ կրօնաւորական ժուժկալութեամբ, ի նմին տեղուջ մերձ ի գիւղն Հօչանց՝ յիրւմ անապատին եղև վախճան սորա ի թուականութեան մերում ՌՀ. և գնաց առ սիրեցեալն իւր Քրիստոս, որում փափագեալ հանանշխարք մարմնոյ նորա, ի փառս Քրիստոսի Աստուծոյն օրհնելոյն յաւիտեանս ամէն»³:

Ժայռափոր եկեղեցու հիմնական մուտքի մոտ կա քարերով լի փոսորակ: Հավանաբար այս փոսում է թաղված եղել տեր Կիրակոսը: Սակայն հետագայում՝ տարածքի հայաթափումից հետո, այլազգիները քանդել են սրբի շիրիմը: Փորել ու ավերել են նաև եկեղեցու պատերի վրա եղած խաչերն ու հայատառ արձանագրությունները: Ու սումնասիրություններ կատարելու նպատակով վերջերս այցելեցինք անապատ: Ե կեղեցու մոտակա քարանձավներից մեկի դրսի պատին պատահաբար նկատեցինք խաչաքանդակ: Եկեղեցու ներսի մոտավոր չափերն են՝ 11-7 մետր, բարձրությունը՝ գրեթե 5 մետր: Սուրբ խորանի ձախ կողմում կա մեկ այլ խուց՝ նման ավանդատան՝ բացառությամբ այն բանի, որ չունի պատուհան, ինչպես ընդունված է: Սուրբ խորանի աջ կողմը համընկնում է դրսի պատին, եւ այս կողմում կան 3 կորանման, մոտ 1,5 մ տրամագծով պատուհաններ: Մի պատուհան էլ հետագայում վերածվել է մուտքի: Անապատը պատահական հայտնաբերվեց գյուղի վերաբնակեցումից հետո (այդ մասին իմ հեղինակած լրատ-

² Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատարակության պատրաստեց՝ Աշ. Աբրահամյանը, Ե., 1942, էջ 42:

³ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց: Աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Ե., 1990, էջ 222:

վությունն առաջինը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում (23.08.2002): Եկեղեցուն կից կան բազում քարանձավներ, որոնք ժամանակին եղել են բնակելի՝ հավանաբար ճգնարաններ, նաև օգտագործվել են պաշտպանական նպատակով: Անպատի դիմաց անտառապատ թեքություն է՝ իջնող մինչև գետակը:

Հոչանցի մասին մեկ այլ պատմական տեղեկություն է հաղորդում 17-րդ դարի պատմիչ Ջաքարիա Քանաքեռցին. «Իբրև լուսախանն Թահմազուլի, թե՛ մօտեալ է օսմանցին գալ յերկիրս Արարատեան, հրաման է հան ամենայն աշխարհին Երևանայ ցրուիալ և գնալ, ուր և կամիցեն, փախիցեն, զի օսմանցին եկեալ՝ աւեր տեսցէ. և ոչ կարգեաց նոցա վարիչս՝ և ասէ. «Ամենքեանքն իւրեանց կամօքն գնասցեն, ուր և կամին»... Իսկ Կարբեցիք ելին միահագոյն ի Վարդավառի բարեկենդան շաբաթի օրն և դիմեցին դէպ յերկիրն Քաշթաղու և հասին մինչ ի գիւղն Հօչէս. և անդ բնակեալ էին սեաւ վրանօք բազում տունս քրդաց. իբրև տեսին գնոսս, և ասացին. «Մոքա փախստականք են, եկայք կոտորեսցուք զսոսս և կողոպտեսցուք զինչսն»: Իսկ կարբեցիս իմացան զխորհուրդս քրդացն, զինեցան, և նոքա ընդ դէմ նոցա ի պատերազմ. և անկան քուրդքն ի վերայ կարբեցուցն սաստիկ բախմամբ և սպանին Ե այր՝ զտէր Մխիթարն, զՏաթուրբաբն, զԴաւիթն, զԳիլառն և զԱյվազն: Զի Թեպէտ և կարբեցիք ևս սպանին ի նոցանէ, սակայն յաղթեցան. քանզի նոքա հանգիստ էին և անաշխատ, և սոքա՝ վաստակեալք եւ անպատրաստ. և կողոպտեցին գնոսս և զկանայս մերկացուցին և հասուցին ի վերջին թշուառութիւնն և գերեցին զերիս մանկունս. և այնպէս կային մերկ և կողոպուտ, քանզի գեղականքն ևս ձեռնտու եղեն քրդացն»⁴: Պատմիչի վկայությունից հետևում է, որ 17-րդ դարի վերջին Աղահեճք գավառում հաստատվում էին քրդեր և մահմեդական այլ ցեղեր, իսկ տարածքը հայաթափվում էր: Գերության մեջ է հայտնվում նաև Հոչանցը, որն անվանվել է նաև Հոչէս, Յունչանք, Հոչաց, Գոչագ:

Բնակավայրի անվանումը հավանաբար կապված է քոչ և անցնել բառերի հետ (Հօչ-քօչ-դօչ): Միջնադարում այս գյուղի մոտով երևի կենտրոնական ճանապարհ է անցել: Աղավնոյի ձախափնյա

⁴ Ջաքարիա Քանաքեռցի, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ Ուխտին Յօհաննու վանից: Աշխատասիրությամբ Ա. Վիրաբեանի, խմբագրությամբ Ա. Մաղալեանի, Ե., 2015, էջ 95:

բարձունքներում միջնադարում գոյություն է ունեցել Զիրիկ գյուղը (այստեղ՝ խիտ անտառում պահպանվել է միջնադարյան գերեզմանատունը՝ խաչքարեր ու տապանաքարեր), որի մոտով ճանապարհը հասել է Հոչանց, այնուհետև շարունակվել դեպի Շալուայի հովիտ, ապա՝ Թարթառի ու Խաչենագետի ավազաններ: Այդ են վկայում Աղավնո, Հոչանց ու Շալուա գետերի վրա միջնադարում կառուցված կամուրջները, որոնք ավերակ, նաև կանգուն դեռ պահպանվում են: Այս կամուրջների գոյությունը նաև վկայություն է, որ Մեծ Հայքի Սյունքի և Արցախ նահանգները սերտ կապի մեջ են եղել: Անտառապատ սարալանջերին զգացվում է նաև պատմական ճանապարհի հետքը:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ժամանակ, հատկապես՝ 1992-93 թթ, թեժ մարտեր են ծավալվել գյուղում և նրա շրջակայքում: Շուշիի ու Լաչինի ազատագրումից հետո թշնամին փախուստ տվեց նաև Հոչանցից, սակայն 1992 թ. ամռանը նրան հաջողվում է ժամանակավորապես վերստին տիրանալ տարածքի համար ռազմավարական մեծ նշանակություն ունեցող բարձունքին՝ Հոչանց սարին և նրա ստորոտում գտնվող գյուղին: Նույն թվականի հուլիսի 28-29-ը գյուղում գտնվող հայկական ջոկատներն ընկան շրջապատման մեջ, տվեցին 30-40 զոհ ու վիրավոր, և գյուղին տիրացան ադրբեջանցիները: Այնուհետև սկսեցին այստեղից ուրբակոծել Արցախի համար կյանքի ճանապարհի հանդիսացող, ազատագրված Բերձորը, Գորիսի շրջանի մոտակա բնակավայրերը՝ սպառնալով տիրանալ նաև ճանապարհին: 1993 թ. գարնանը հայկական ուժերին հաջողվում է վերջնականապես ազատագրել Հոչանցից մինչև Օմար ընկած տարածքը: Մեզ բխտ է վիճակվել այդ օրերին լինել այդ վայրերում և ապրել հաղթանակի բերկրանքը:

1995 թվականից սկսած գյուղը վերստին հայացավ, սկսեց գործել դպրոցը, որն այժմ կոչվում է այստեղ նահատակված բանաստեղծուհի, մանկավարժ-ազատամարտիկ Ալվարդ Վարդանյանի անունով: Դպրոցում ստեղծվել է նաև Փառքի սրահ, որտեղ կան նահատակված բոլոր ազատամարտիկների մասին պատմող նյութեր, լուսանկարներ, անձնական իրեր և այլն: Այժմ դպրոցում (տնօրեն՝ Թուշիկ Մելքոնյան) սովորում է 9 աշակերտ:

Բացի վերոհիշյալ անապատ-եկեղեցուց, Հոչանցում պահպանվել է Սուրբ Ստեփանոս բազիլիկ, միանավ, թաղածածկ եկեղեցին

(հավանաբար կառուցվել է 17-րդ դարում): Կառուցված է անմշակ քարով և կրաշաղախով: Ժամանակին սրբատունը քոչվորների համար ծառայել է որպես հարդանոց, իսկ խորհրդային տարիներին՝ հացի փուռ: Եկեղեցին չունի ավանդատուն, մուտքը հարավից է: Իր չափերի պատճառով, արևմտյան պատի պատուհանը թողնում է մուտքի տպավորություն: Ավագ խորանից նույնպես բացված է մուտք: Խորանի ձախ կողմում մկրտության ավազանն է: Արտաքին չափերն են՝ 13,4-8,15 մ, պատերի հաստությունը՝ 105-110 սմ: Եկեղեցու արևմտյան պատի աջ անկյունում կա ագուցված է մի խաչաքանդակ քար հետևյալ արձանագրությամբ. «ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ՇԵԿԱԶ (ՄՐԱՆՈՑԻՆ ՀՍՅԸԷՆ/ԻՔՆ.Դ:/ ԲԱԺԻՆ): Ա: ԻՍ ԷՐ. ԵՏ/ՎԻ ՎԱԽՄ ԸՍՏ/ԵՓԱՆՈՍ...»: Վերջին՝ «Ըստեփանոս» անունից եզրակացվում է եկեղեցու անվանումը: Վերջերս, նույն պատի ներքևում սվաղի տակից բացվել է մի արձանագիր տապանաքար:

Եկեղեցու հարևանությամբ գոյություն է ունեցել միջնադարյան հայոց գերեզմանատունը: Այդ են վկայում հողածածկ մի քանի տապանաքարերը: Խորհրդային տարիներին եկեղեցին բարբարոսաբար քանդվել և ավերվել է աղբբեջանցիների կողմից: Եկեղեցու հարևանությամբ և գյուղի այլ մասերում աղբբեջանցիների կողմից կառուցված տների պատերի մեջ կան տապանաքարերի ու խաչքարերի բազում կտորներ և ամբողջական շիրմաքարեր: Մի մեծ ու գեղեցիկ խաչքար էլ վերջերս հայտնաբերվեց մոտակա տների այգում: Այն հանվել է, օծվել Հայր Աթանաս Վարդապետի կողմից և այժմ դրված է եկեղեցու բակում:

Գյուղի միջնադարյան հայկական հիմնական գերեզմանոցը գտնվել է հյուսիսային մասում՝ դեպի Սոնասար ընթացող ճանապարհի եզրին: Այստեղ պահպանվել են նաև նախաքրիստոնեական շրջանի դամբարաններ: Գերեզմանոցը նույնպես ամբողջությամբ ավերվել է. շիրմաքարերը կոտրվել են և օգտագործվել որպես շինաքար: Մակայն ծառերի տակ պահպանվել են մոտ 10 խաչքար ու տապանաքար:

Գյուղի մոտակա անտառներում նույնպես կան հայ միջնադարյան հուշարձաններ:

**Зограб Ркоян
Берцор, НКР**

Краткий обзор из истории села Очанц

Резюме

На основе летописных и эпиграфических источников кратко представляется история села Очанц, принадлежащего губернии Агаеджк-Кашатаг. Недавно обнаруженные лапидарные надписи подтверждают, что Очанц являлся одним из очагов армянской культуры. Сопоставляя исторические и топографические источники прошлого и настоящего, освещается ряд основополагающих вопросов села.

**Zohrab Erkoyan
Bercor, NK**

A brief overview from the history of Hochants village

Summary

The history of Hochants village in the province of Aghahachk-Kashatagh is presented based on the cursive and lapidary sources. Newly emerging lapidary inscriptions and archaeological sources confirm that Hochants was one of the Armenian cultural hearthes. By the combination of the past and future historical and topographic sources a number of issues related to the village are highlighted.



Մերգեյ Հախվերդյան

Գորիս

sergeyhaxverdyan@mail.ru

Գորիս քաղաքը յուրահատուկ է ոչ միայն բնական հուշարձաններով, այլև ճարտարապետությամբ: Այդ առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում գորիսյան տների հին դարպասները: Դրանք անխտիր կամարակապ-թաղակապ են. խորհրդային տարիներին կառուցված տների դարպասներին կամարներ չկան, դրանք ուղղանկյուն են:

Շատ քանդված դարպասներ են դարձել ուղղանկյուն: Գորիսյան ճարտարապետության խորագիտակ մասնագետ, ճարտարապետ Սևադա Ջաքարյանը իրենց ապրած տան օրինակով գտնում է, որ դա հիմնականում արվել է այն բանի համար, որ սայլերին փոխարինած ավտոմեքենաները կարողանան մտնել բակ:

Գորիսում բարեբախտաբար տասնյակներով պահպանվել են հնաշեն դարպասներ: Գորիսյան դարպասը հրապուրել է նաև մեծն Մարտիրոս Մարյանին:

Դարպասը կարող էր ունենալ երկու մուտք. մեկը՝ հետիոտնի համար, մյուսը՝ անասունների՝ ձիերի, ավանակների, ուղտերի, ինչպես նաև սայլերի կամ կառքերի համար: Դարպասի մեծ դուռը բացվում էր տան բակի վրա, իսկ փոքրով կարելի էր հարմարեցված հարթակից մեկ-երկու աստիճանով իջնել բակ կամ անմիջապես աստիճաններով բարձրանալ երկրորդ հարկ:

Որոշ դեպքերում տարածքի կամ շինարարության ծախսերը խնայելու նպատակով մեծ և փոքր դարպասները կարող էին մեկտեղվել*:

Արդեն նշել ենք, որ քաղաքի հին դարպասների «նախահայրը» անշուշտ եղել է Գորիս գյուղի կրկնակի թաղակապ դարպասը: Դարպասի վրա թափած աշխատանքում միահյուսվել են դարբնի և հյուսնի աշխատանքները: Դարպասների փայտը պարտադիր եղել

* Այս և հետագա նկարագրությունները հավաստված են համապատասխան լուսանկարներով:

է ամուր կաղնեփայտից, այն միմյանց կցվում-ամրացվում էր երկաթյա գամերով, պնդոցներով: Դարպասն ունեցել է զանգի դեր կատարող երկաթյա թակիչներ, մի քանի դռների վրա դրանք դեռ պահպանվել են: Դարբնի արհեստը Գորիսում շատ հարգի է եղել: Գորիս գյուղի բերդ-քերծում հայտնաբերվել է երկաթի խարամ, ու կարծիք է հայտնվել, որ այնտեղ երկաթ են ձուլել հին-հին ժամանակներում: Հանքաքար-հումքն այստեղ կարող էր հայտնվել Սևարանցի երկաթահանքից: Գորիսցի հին վարպետ-դարբիններից են Ա. Տատինցյանը, Ս. Միրաքյանը:

Այսօր նրանց գործն ու ավանդույթները շարունակում է Ռագմիկ Դոլունցը: Նա է պատրաստել ու տեղադրել քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խաչը:

Երբեմն դարպասների գետնամոտ աջ և ձախ մասերում դրվել են դարպասի շարվածքից դուրս պրծած նստարանի դեր կատարող քարեր: Դրանցից կարելի էր կապել նաև ձիու սանձը: Այդպիսի նստարան-քարեր կարելի է տեսնել մի քանի դարպասների մոտ /տեսնել նկարները/:

Գուցե տարօրինակ թվա, որ նստարանները բարձր են կանգնած: Բանն այն է, որ դրանք «բարձրացել են» փողոցի հարթեցման, ասֆալտապատման ժամանակ: Հողաշերտը իջեցվել է, և նստարանները հայտնվել են բարձր, նստելու համար ոչ պիտանի դիրքում:

Գորիսում հանդիպում են տներ, ուր կան միայն հետիոտնի համար նախատեսված մուտքեր:

Գորիսի հին տներին ուշադիր նայողը կգտնի, կտեսնի խուլ պատուհաններ կամ դռներ: Թվում է՝ այդպիսի պատերն ասելիք չունեն դիտողին, ի՞նչ պետք է ասեն: Սակայն պարզվում է՝ դրանք որմնադիր-վարպետի (անշուշտ տանտիրոջ համաձայնությամբ) ստեղծագործ մտքի արդյունք են, և այդ պատկերը կարող է անջնջելի տպավորություն թողնել՝ առաջացնելով որոշակի հետաքրքրություն:

Այստեղ պատի վրա գուցե ավելի աշխատանք է թափված, քան կարող էր լինել սովորական պատուհաններով, նույն ծավալի պատի վրա: Բայց վարպետը այդ կերպ նոր, բոլորովին անսովոր լուծում է տալիս փողոցին նայող տան արտաքին հարդարանքին, այն դարձնում տպավորիչ, առինքնող, նշմարելի ու հիշելի: Խլացված

պատուհաններով կամ դռներով մի քանի շենքեր կան Գորիսում: Թվում է՝ ն՛ տան տերը, ն՛ վարպետ-որմնադիրը խուլ պատուհաններով որոշակի կենցաղային խնդիր են լուծել. դրանք կա՛մ ուղղված են դեպի հյուսիս, կա՛մ դեպի արևմուտք՝ բնակարանները պաշտպանելով սառը, ցրտաշունչ քամիներից, որ Գորիսում ձմռանը փչում են հյուսիս-արևմուտքից: Հետաքրքիր է, որ գորիսյան քաղաքաշինության խորհրդային կամ հետագա էտապում այդ կարգի լուծումներ չկան:



Մ. Սարյան, Գորիս, 1935թ., թուղթ, գունավոր մատիտ, 19,5 x 32:



Մաշտոցի փ. թիվ 60: Այստեղ ապրում են Միրաքյանները: Տունը նրանք գնել են 20-րդ դ. 30-ական թվականներին:



**Մաշտոցի փ. թիվ 8: Տունը պատկանել է Պետրոս Բաղիբյանին (գրադարանի Պետյա)՝
հնարույր, արտասովոր հագուկապով, անբաժան ձեռնափայտով, կրթված, ազնական
մի մարդու:**



Հին դարպասի թակոց:



Մաշտոցի փ. թիվ 35: Դարպասի տնատերը եղել է քահանա, կնոջ անունն էր Պարունա, այդ տանն են ապրել նրա աղջիկները՝ Լուսիկը և Արփիկը: Ընկեր Լուսիկը եղել է քաղաքի առաջին մանկապարտեզի երկարամյա վարիչ: Տունը հիմա պատկանում է Միրաքյաններին:



Անկախության փ. թիվ 7: Տունը կառուցել է Պողոս Ամարյանը, այժմ ապրում են Գրիգորյանները, Հայրապետյանները:



Մաշտոցի փ. թիվ 13: Տունը պատկանել է Աղաջանյաններին, որոնք ապրում են պատկից հարևանությամբ:



Սյունիքի փ. թիվ 20: 19-րդ դարի վերջ: Կառուցել է Բագունց Մինասը:



Մուսիքի փ. թիվ 22:

**Сергей Ахвердян
Горис**

**Ворота старых домов Гориса
Резюме**

Горис один из древних городов Республики Армении. В старом центре города, которому более ста лет, выделяются внешние ворота домов.

В статье с помощью фотографии делается попытка представить эти ворота как органическую часть народного зодчества.

**Sergey Hakhverdyan
Goris**

**The gates of the old houses of Goris town
Summary**

Goris is one of the ancient towns of the Republic of Armenia. In the old center of the town – (the age of which is more than 100 years) external gates of houses are distinguished. In the article, with the help of photos, an attempt is made to present the gates as a part of national architecture.



Աշոտ Միմոնյան

Վայոց Ձոր

ashsimonyan.2017@mail.ru

Անկախ բևեռացված հայ հասարակության կողմից առաջ քաշված Գ.Նժդեհի ռազմաքաղաքական գործունեության ու գաղափարախոսության հակոտնյա գնահատականներից՝ նա մեր նորագույն պատմության մեծագույն դեմքերից է: Իրավամբ, հայ պատմագրության մեջ, հայտնի գործիչների և նաև տեղացիների հուշագրություններում առավելապես կարևորվում ու ներկայացվում է Նժդեհի՝ 1919թ. աշնանից մինչև 1921թ. հուլիս ամիսը ընկած ժամանակահատվածի գործունեությունը, որը նրա կյանքի աստեղային ժամն էր, երբ սկզբում որպես Կապարգողթի՝ Կապան-Արևիք-Գողթանի հայկական ուժերի հրամանատարն էր, իսկ 1920թ. աշնանից՝ նաև ամբողջ Զանգեզուրի փաստացի ղեկավարը:

Սակայն, չգիտես ինչու, անտեսվում, կամ քիչ ուշադրության են արժանանում 1921թ. փետրվարի վերջից մինչև մարտի կեսերը Վայոց Ձոր և Նոր Բայազետ նրա ուղևորությունն ու գործունեությունը, թեպետ այդ մասին քիչ չեն ժամանակակիցների թողած հուշերը, այդ թվում հենց իր «Ազատ Սյունիքը» և այլն¹:

Չնայած իր կարճատև այցելությանը՝ Գ.Նժդեհը մշտապես մնաց վայոցձորցիների հիշողության, նրանց գրույցների մեջ և՛ դրական, և՛ բացասական արժևորմամբ:

1. Վայոց Ձորը և Զանգեզուրի ինքնապաշտպանության գործը

Մինչև Լեռնահայաստանի զինական ուժերի և նրանց միացած տեղացի զինական խմբերի կողմից Վայոց Ձորի գրավմանն ու Գ.Նժդեհի՝ Վայոց Ձոր այցելությանն անդրադառնալը հարկ է հիշատակել, որ գրեթե 4 տարի Վայոց Ձորը միակ կենսարար երակն էր

¹ Հարկ չկա այստեղ քննարկել «Հին բոլշևիկների հիշողություններ» ժողովածուի / հ. II, Ե., 1961, / թեմային վերաբերող նյութերը, որոնք ամբողջովին խեղաթյուրումներ են:

մնացել ինչպես Ջանգեզուրի, այնպես էլ Ղարաբաղի ու Գողթանի հայության համար: Հիշենք, որ սկզբում Օսմանյան Թուրքիայի, ապա՝ Անգլիայի, իսկ հետագայում՝ Բոլշևիկյան Ռուսաստանի ճնշման տակ Հայաստանի Հանրապետությունը, չկարողանալով դեյուրե իրեն միացնել Ջանգեզուրն ու Ղարաբաղը, չէր կարողանում բացահայտ զինական ու այլ կարգի օգնություն ցույց տալ հայկական այդ երկրամասերին:

Վայոց Ձորի միջոցով կենտրոնի և Ջանգեզուր-Ղարաբաղի հայության հետ կապի, ռազմատնտեսական մատակարարումների շնորհիվ հնարավոր դարձավ կազմակերպել Սյունիքի հայության գոյապայքարը՝ 1918-1919թթ. Անդրանիկի, Արսեն Շահմազյանի, Պողոս Տեր-Դավթյանի, իսկ 1919-1921թթ.՝ Գ. Նժդեհի ու Պողոս Տեր-Դավթյանի գլխավորությամբ:

Ղա բարձր է գնահատել հենց Գարեգին Նժդեհը՝ հատուկ այդ գործի կազմակերպման համար Վայոց Ձոր ուղարկված Եղիշե Իշխանյանի մասին խոսելիս. «Անցնում եմ Քեշիշքենդով: Այստեղ է Վայոց Ձորի Փրկության կոմիտեի նախագահ Եղիշե Իշխանյանը, որը մեր գորքերի պարենավորման և մեզ ռազմամթերք հասցնելու գործում կատարել է եզակի դեր»²:

Իսկ Ե. Իշխանյանը գրում է. «Վայոց Ձորը, լինելով Սյունիքն ու Արարատյան նահանգը կապող օղակը, գերմարդկային ճիգեր է թափել շարունակ Ջանգեզուրին օգնություն հասցնելու: Երբ անհրաժեշտ է եղել ռազմամթերք տեղափոխել Ղարանլուխից³ Քեշիշքենդ⁴ ձմեռվա խստաշունչ եղանակին, հարյուրավոր վայոցձորցիներ իրենց մեջքով են կրել՝ խոր ձյան միջով 55 վերստ ճամփա կտրելով: Մեծ թվով անասուններ են ցրտահար եղել Սելիմի⁵ և Արխաշանի⁶ լեռնանցքներում»⁷:

² Ըստ Վարդան Գևորգյանի՝ կարճ ժամանակով այդ պարտականությունը կատարել է նաև ՀՀ Պառլամենտի անդամ Ենովք Միրաքյանը /տե՛ս Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը. 1919-1921թթ., Ե., 1993, էջ 87/, որը 1920թ. մայիսյան խոսքերումնից հետո ՀՀ Պառլամենտի կողմից Վայոց Ձոր էր ուղարկվել Գերասիմ Բալայանի հետ:

³ Ներկայիս Գեղարքունիքի մարզի Վերին Գեղիովիտ գյուղը:

⁴ Ներկայումս՝ Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքը:

⁵ Վայոց Ձորը Սևանի ավազանին կապող լեռնանցք Վայոց Ձորի հյուսիսում:

⁶ Վայոց Ձորը Ջանգեզուրին կապող լեռնանցք Գնդեվազից դեպի արևելք:

⁷ Ե. Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920թթ., Ե., 1999, էջ 697:

Թեպետ Նժդեհը, Ե.Իշխանյանը և ուրիշներ, անձնական հակերանքի և այլ դրդապատճառներից ելնելով, չեն հիշատակում, սակայն այդ գործում գլխավոր դերը խաղաց Վայոց Ձորի հայկական զինական ուժերի հրամանատար Յապոնը՝ Հովհաննես Պարոնյանը: Դեռ 1917թ. ամռանից ուղարկվելով Վայոց Ձոր՝ սկզբում որպես Դարալագյազի միլիցիոն գորքերի, այնուհետև վերակազմավորված պարտիզանական գորքերի հրամանատար՝ Յապոնը կարողացավ երկարատև, համառ ու հաղթական կռիվներով, իսկ հարկ եղած դեպքում՝ նուրբ դիվանագիտությամբ մաքրել Երևանից Վայոց Ձոր և դեպի Ջանգեզուր ձգվող ճանապարհներն ու ուղիները պարբերաբար փակող ավազակաբների վերածված, 100-ի հասնող թուրքական բնակավայրերը և ապահովել կենտրոնի հետ Ջանգեզուրի կապը:

2. Գ.Նժդեհը և 1921թ. Փետրվարյան ապստամբությունը

Այստեղ չի կարելի շրջանցել 1921թ. Փետրվարյան ապստամբությանը ոչ միայն նրա համար, որ Գ.Նժդեհի ժամանումը Վայոց Ձոր և այնուհետև Ն.Բայազետ անմիջականորեն կապված էր այդ իրադարձություններին, այլև որ ապստամբության ծրագրման գործում առանցքային է եղել Գ.Նժդեհի ունեցած դերակատարությունը, որը տարբեր նկատառումներով ուսումնասիրողների կողմից կարծես անտեսվում է⁸:

Թերևս այստեղ ինչ-ինչ փոխապայմանավորվածություն է եղել, կամ ավելի ճիշտ՝ գոյություն է ունեցել ՀՅԴ ղեկավար մարմնի որոշում՝ ապստամբության ծրագրումն ու նախնական կազմակերպչական աշխատանքները գաղտնի պահելու մասին⁹: Ըստ որի էլ՝ գրեթե բոլորը՝ ՀՀ վերջին վարչապետ և Հայաստանի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը, ակտիվ դերակատարներ՝ Կարո Սասունին, Եփրեմ Սարգսյանը, Ջաքար Յոյանը, Իրազեկը, գավառների գործիչներ՝ Արսեն Խաչիկյանը, Գրիգոր Մխիթարյանը և այլք,

⁸ Ժամանակին բոլշևիկյան իշխանությունների և հետագայում պատմագրության կողմից հնչած նման մեղադրանքները կրում էին զուտ պրոպագանդիստական բնույթ:

⁹ Կարծում ենք՝ ՀՅԴ արխիվի՝ այդ շրջանին վերաբերող փաստաթղթերի հրապարակումը պիտի բացահայտի այդ կիսասածություններն ու հաստատի հիշյալ վարկածը:

հատուկ շեշտում էին, որ Հայաստանի տարբեր շրջանների ապստամբական շարժումները ոչ մի կապ չեն ունեցել միմյանց հետ: Այս առիթով Գրիգոր Մխիթարյանը¹⁰ գրում է. «Ավելորդ է ասել, որ Դարալագյազի շարժումը ոչ մի կապ չի ունեցել Երևանի Փետրվարյան շարժման հետ: Դարալագյազում ոչ ոք ոչինչ չգիտեր, թե ինչ է կատարվում Երևանում»¹¹: Յապոնը ևս այդ է վկայում. «Մեր ուրախությունն ավելացավ այն բանով, որ իմացանք, որ Դարալագյազի գրավումը զուգահեյպած էր ամբողջ Հայաստանի Փետրվարյան հաջող ապստամբությանը: Հայ աշխարհը իր հաղթանակի օրն էր տոնում»¹²: Արսեն Խաչիկյանը¹³ նույն ոգով գրում է. «Ապստամբությունը Նոր Բայազետում սկսվեց Փետրվարի 20-ին՝ մոտ ժամը 4-ին, միանգամայն ինքնաբուխ՝ առանց որևէ կապ ունենալու Երևանի և առհասարակ մի որևէ ուրիշ շրջանի հետ: Ապստամբությունը Բասարգեչարում սկսվել էր փետրվարի 16-ին, չորս օր առաջ՝ Նոր Բայազետից դարձյալ միանգամայն ինքնաբուխ և առանց մի որևէ կապ ունենալու Երևանի հետ»¹⁴:

¹⁰ Գրիգոր Մխիթարյան՝ Մխ (1899թ. Երևան-1960թ. Իրան): Ակտիվ մասնակցություն է ունեցել Ալեքսանդրապոլում 1920թ. Մայիսյան խռովության ճնշմանը՝ հետախուզական գործունեությամբ: Երկրի սովետականացումից հետո անցնում է Լեռնահայաստան, ուր Նժդեհի հրամանով Նիկոլ Նիկողոսյանի հետ ստանձնում է հետախուզական մարմնի ղեկավարությունը, որը ստեղծել էր մի հետախուզական ցանց, իր աշխատակիցներին թափանցել էր տվել Վայոց Ձորում գտնվող թշնամու ուժերի մեջ: Մխն անդադար հաղորդակցության մեջ էր Վայոց Ձորի ընկերների հետ, և նրա տված տեղեկությունները շատ օգտակար եղան, երբ Լեռնահայաստանի ուժերը երկու անգամ գրավեցին Վայոց Ձորը: Նա 1921թ. երկրից վերջին հեռացողներից էր: 1920-ական թվականներին Չեխոսլովակիայի կառավարության կողմից տրված արտոնությամբ ու կրթաթոշակով ՀՅԴ այլ երիտասարդների հետ ուսանել է Պրագայի համալսարանում, այնուհետև վերադարձել Իրան, ուր 23.03.1960թ. վախճանվել է սրտի կաթվածից:

¹¹ «Հուշեր Վայոց Ձորի ապստամբական շարժումներից», «Փետրվարի 18» ժողովածու, էջ 52: (Պրագա, 1927թ., հրատարակություն ՀՅԴ Փրակայի ուսանողական միության):

¹² Եսպոն, Յուշեր, Հայրենիք, Բոստոն, 1941, հուլիս, հ. 9, էջ 116:

¹³ Արսեն Խաչիկյանը ծնվել է Բիթլիսում 1885 թվին: 1918-1921թթ. եղել է Նոր Բայազետ գավառի Ամերիկյան կոմիտեի ընդհանուր ներկայացուցիչը՝ վարելով որբանոցային և գաղթականական գործերը: 1921թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ ընտրվել է Նոր Բայազետի «Փրկության կոմիտեի» նախագահ:

¹⁴ Ա. Խաչիկյան, Ապստամբական շարժումը Նոր Բայազետում գավառում, Հայրենիք, Բոստոն, 1968, գարուն, էջ 74:

Կարծում ենք, որ ապստամբության սկզբնական կազմակերպիչ Խմբապետ Մարտիրոսի կողմից գլխավոր հրամանատարի տեղը վերջին պահին Կոտոյին՝ Մուրեն Թարխանյանին զիջելը ևս այդ պայմանավորվածության թելադրանքով է եղել՝ գաղտնի պահելու ապստամբությունը դրսից՝ առաջին հերթին Լեռնահայաստանի ու ավելի կոնկրետ Նժդեհի և այնտեղ «ծվարած» Ռուբենի կողմից կազմակերպված լինելը, քանի որ հայտնի էր դարձել, որ Մարտիրոսը նոր էր վերադարձել Լեռնահայաստանից (նա Դրոյի հրամանով ուղեկցել էր Ռուբենին՝ ապահով ու գաղտնի անցնելու Սյունիք) և նրանց կողմից պիտի որ որոշակի հանձնարարություններ ունենար:

Նույնիսկ պատմաբաններից շատերը, հետևելով հուշագրություններում շեշտվող այս դրույթին, կարևորում են միայն այն, որ Նժդեհը, նախօրոք գրավելով Վայոց Ձորը, ապահովել էր բոլշևիկյան կացնից փախչողների նահանջը, և Փետրվարյան ապստամբության մեջ կարծես չեն նկատում Գարեգին Նժդեհի կարևոր դերը դրա ծրագրման ու նախաձեռնման մեջ, ուստի և իմիջայլոց են անդրադառնում կամ բոլորովին անտեսում են Գ. Նժդեհի վայոցձորյան և նորբայազետյան գործունեությունը:

Խմբապետ Մարտիրոսի վերջին հուշագրական տեղեկությունները, կարծում ենք, իր ժամանակին քննադատվել են ոչ թե արժանահավատ չլինելու, այլ հենց որոշ գաղտնագերծումների համար: Ի մի բերելով՝ կարող ենք ասել, որ թեպետ Փետրվարյան ապստամբությունը համաժողովրդական և որոշ չափով նաև տարերային բնույթ կրեց, այնուհանդերձ, նախօրոք ծրագրված ու պլանավորված էր, և ապստամբության նախաձեռնողն ու ոգեշնչողը եղել է հենց Նժդեհը, որը, ի տարբերություն մյուս պետական գործիչների, սկզբից նեթ սին պատրանքներ և որևէ դրական ակնկալիք չունեք բոլշևիզմից. «Նժդեհին հանդիպեցինք Տաթևում¹⁵, նրա մոտ էր գտնվում նաև Յապոնը: Ռուբենի գրած նամակը հանձնեցի Նժդեհին: Երբ կարդաց, շատ ուրախացավ ու բացականչեց¹⁶»:

¹⁵ Ըստ հուշագրողի՝ այդ հանդիպումը Նժդեհի հետ տեղի է ունեցել 1920թ. դեկտեմբերի վերջին օրերին, երբ Ռուբենի ուղարկված նամակը հանձնելով Նժդեհին՝ ինքը վերադառնում էր Երևան:

¹⁶ Բնագրային ձևի համեմատությամբ կան որոշակի փոփոխություններ՝ մատչելիությունն ապահովելու ակնկալությամբ:

- Շատ ուրախ եմ, որ Ռուբենն էլ վերջապես եկել է այն համոզման, որ Լեոնահայաստանը պետք է շարունակի իր պայքարը Խորհրդային իշխանության դեմ: Այնուհետև դառնալով ինձ՝ ասաց.

- Շուտով, սիրելի՛ Մարտիրոս, շուտով, տաս օր հետո Դարալազյազ եմ ուղարկում Եսպոնին: Նա կարճ ժամանակում Դարալազյազը կմաքրի կարմիրներից և կմիացնի Լեոնահայաստանին:

Դու տեղ հասնելուդ պես կարճ ժամանակում կազմակերպիր մեր համակիր ու դժգոհ ռազմական ուժերը և այդ ապստամբ ուժերի գլուխը անցած՝ աշխատիր գրավել Երևանը և գնդակահարումներից ազատել մեր բանտարկված ընկերներին:

Ապստամբների ղեկավար մարմինը անվանիքի «Հայրենիքի փրկության կոմիտե»: Այս անունները անհրաժեշտ են. նախ՝ բոլոր դժգոհ տարրերին, առանց կուսակցական խտրության, շարժման շուրջը հավաքելու համար, երկրորդ՝ այս անունները կապացուցեն, որ ապստամբական շարժումը կուսակցական-դաշնակցական շարժում չէ, այլ համաժողովրդական, որի պատճառով էլ գուցե կանխած կլինենք մասամբ մեր բանտարկված ընկերների գլխին կախված գնդակահարման վտանգը:

Նույնը հաստատեց նաև Եսպոնը, և մենք Տաթևից ուղևորվեցինք դեպի Բազարչայ: Նժդեհն ու Եսպոնը եկան մեզ ճանապարհ դնելու: Խիստ հուզիչ էր բաժանման վայրկյանը: Երկու ընկերներն էլ փաթաթվեցին ինձ և արցունքի կաթիլներով թրջեցին երեսս: Ես նրանց ողջագուրանքներից ազատվելու համար բողոքեցի.

- Ինձ թաղե՛լ էք որոշել, որ այդպես լաց եք լինում, ընկերներ:

- Չէ, Մարտիրոս ս ջան,- հուզումով ընդհատեց Նժդեհը,- մեր սկսելիք ազատագրական մեծ գործի հետ կապված հրճվանքի, ուրախության արցունքներ են: Գնաս բարով. ուր էլ լինես, կապ պահիր մեզ հետ: Մենք Դարալազյազը գրավելուց հետո, կփորձենք միանալ ձեզ»¹⁷:

Սակայն Նժդեհի խոստումը՝ 10 օր հետո գրավել Վայոց Ձորը, հետաձգվում է ավելի պատեհ ժամանակ՝ փետրվարի 16-ին¹⁸, երբ Կարմիր զորամասերի մեծ մասը գտնվում էր Վրաստանում:

¹⁷ Մ. Աբրահամյան, Իմ հիշելի հուշերը, գիրք 2, Թեհրան, 1978, էջ 28-29:՝ Հայրենիք, Բոստոն, 1956, էջ 28:

¹⁸ Գառնիկ Ջաքարյանը գրում է, որ նախապես որոշված էր եղել ապստամբությունը սկսել Տեառնընդառաջի օրը՝ փետրվարի 14-ին:

Եվ իսկապես, ապստամբության հաղթանակից հետո իշխանության նոր մարմինները անվանակոչվեցին հենց «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ ըստ Նժդեհի խորհրդի: Ուշագրավ է նաև, որ խմբապետ Մարտիրոսի նախաձեռնությամբ նույնանուն կոմիտեներ էին ստեղծվել իր հայրենի Գառնիում և որոշ գյուղերում մինչև Երևանի գրավումը:

ՀՓԿ նախագահ Միմոն Վրացյանը ինքն է խոստովանում իր կրավորական ու պասիվ դերը ապստամբության նախապատրաստման գործում. «Որքան էլ պատվավոր նկատվի Փետրվարի 18-ի հեղինակ լինելը, հեղինակության այդ պատիվը մեզ չի պատկանում: Փետրվարի 18-ը հեղինակեցին իրենք՝ բոլշևիկները: Վատորեն ստում են և բոլոր նրանք, որոնք ինչ-որ կապ են փնտրում Փետրվարի 18-ի հեղաշրջման և «իմպերիալիստական պետությունների խարդավանքների» միջև»¹⁹:

Մարտի 8-ին Նժդեհը Վայոց Ձորից մեկնում է ապստամբած և բոլշևիկյան բռնատիրական լուծը թոթափած²⁰ Նոր Բայազետ գավառ՝ այնտեղից Երևան անցնելու մտադրությամբ:

Արդյո՞ք սրանք սովորական շրջայցեր էին Լեռնահայաստանին նոր միացված գավառները, թե՞ նախօրոք պլանավորված մեծ ծրագրի հերթական քայլերն էին:

Նժդեհն իր հայտնի «Ազատ Սյունիք»-ում գրում է. «Արարատյան Հայաստանի անկումով, Զանգեզուրը ճիշտ է, որ դադարել էր ինձ համար ինքնանպատակ լինելուց: Նա այլևս նպատակ չէր, այլ՝ միջոց: Ապահովելով մեր լեռնահայության ֆիզիկական գոյությունը սովետ-պանիսլամական վտանգից, վճռված էր փրկել Հայաստանի հողը մահացու անդամահատությունից, իսկ հայ մտավորականությունը՝ գլխովին ոչնչացումից»²¹:

¹⁹ Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Զ հատոր, Պեյրոյթ, 1967, էջ 6:

²⁰ Դեռ տիֆլից ամբողջովին չկազդուրված Գառնիկ Զաքարյանը, որը կապավոր էր, հիշում է. «Պատահեց այնպես, որ Կարմիր բանակը Ն. Բայազետի ճակատից ուժեղ սեղմեց, իսկ Ղարանլուղում ապստամբության լուր կար: Կարիք զգացվեց, որ Նժդեհն անձամբ Ղարանլուղ գնար, և մեր գործերը հետաձգվեց: Սյունյաց Սպարապետը, Արփայի կարմիր պարտիզանների ընտանիքները աքսորելուց հետո և Դարալագյազի իր մյուս գործերը լավ թե վատ դասավորելով, Եսպոնի մոտ իրեն տեղակալ, լիազոր թողնելով Գրիգոր Մխիթարյանին՝ հետախուզական մարմնի պետին, ինքն իր ջոկատով գնաց Նոր-Բայազետ: Գ. Զաքարյան, «Հուշեր», Անձնական արխիվ:

²¹ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2, Ե., 2002, էջ 114:

Եվ այնուհետև. «Երևանի ապստամբությունը նպատակ չունեի երկար ժամանակով վերականգնելու հանրապետական Հայաստանը: Ավելի պարզ էր նրա առարկան՝ փշրել խորհրդային բանտերի դռները, ուր հոգեվարքում էր հայ մտավորականությունը: Հաջողվելով իր այդ փորձի մեջ, նա պիտի ձգտեր վերագրավել Երևանը Սյունիքից բաժանող խորհրդային գավառներից մեկը կամ երկուսը»²²:

Հետևաբար՝ Նժդեհի նպատակը միայն Վայոց Ձորի գրավումը չէր: Նա, գալով Վայոց Ձոր, փորձեց կազմակերպել ու առաջ շարժել հայկական ուժերը և թուրք-բոլշևիկյան ուժերից մաքրել Լեռնահայաստանը Երևանից բաժանող տարածքները: Ցավոք, մեծ արդյունքներ չունեցավ: Հաջողվեց միայն մաքրել պատմականորեն Վայոց Ձորի մաս կազմող Չանախչիի շրջակայքը և Երևանից նահանջողների համար ճանապարհի բացել:

Յապոնի օգնական Մակվեցի Մեսրոպի փետրվարի 25-ի նամակը խմբապետ Աղաբեկին²³ նույնպես բացահայտում է, որ Փետրվարյան ապստամբությունը եղել է նախօրոք ծրագրված:

«Ամսույս 17-ին (փետրվարի), առավոտյան ժամը 6-ին Միսիանի գորամատով, Եապոնի ղեկավարությամբ, գրեթե առանց կովի գրավեցինք Դարալագեազը: Սովետական բոլոր ուժերը մեր ձեռքում են:

Ձեր շրջանի և մասնավորապես քեզ հետ կապ հաստատելու, տեղի տաճկահայ ուժերը կազմակերպելու համար, երեկ եկա մինչև Քարազուլիս²⁴, որտեղ լսելով քո հաղթական մուտքը Ն.Բայազետ և շրջանները՝ ուրախ ու բախտավոր եմ:

Երեկ Քեշիշքենդից մեկնելու ընթացքում մասնավոր լուր առինք մերոնց կողմից Երևանը գրավելու մասին, որին չուզեցինք հավատալ: Մեր սուրհանդակը այսօր պիտի վերադառնա Երևանից և ստույգ տեղեկություն բերի:

²² Նույն տեղում, էջ 142:

²³ Աղաբեկ Մելքոնյանը (1881-1921), որը հայտնի էր նաև Գյոզալդարցի կամ Տըղլարի Աղաբեկ անուններով, այդ ժամանակ Նոր Բայազետի գավառի հրամանատարներից էր՝ դիվտատորը:

²⁴ Քարազուլիսն այն ժամանակ դեպի Սևանի սվազանը տանող ճանապարհի Վայոց Ձորի վերջին հայաբնակ գյուղն էր:

Ամսի 27-ին Նժդեհը կլինի Քեշիշքենդում: Որոշված է մարտի 2-ին համագումար հրավիրել, որտեղ կորոշվի Դարալազյազը Մեծ Սյունիքին միացնելու խնդիրը:

Եթե դեռևս Երևանը գրավված չի, լավ կլիներ, որ համագումարին մասնակցեր նաև ձեր պատգամավորությունը: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է, որ հատուկ սուրհանդակ ուղարկես, թե՛ ընդհանուր դրության մասին հաղորդելու մեզ և թե՛ միևնույն ժամանակ տեղյակ պահելու մեր անելիքների մասին: Որովհետև, եթե մեր Երևանի սուրհանդակի բերած լուրերը նպաստավոր լինեն, կարող է պատահել, որ մենք շարժվենք դեպի Երևան: Այդ դեպքում նպատակահարմար կլիներ, որ շարժումը միաժամանակ լիներ և քո կողմից:

Եթե նույնիսկ մինչև այսօր Երևանը գրավված էլ չլինի, մեր և քո ուժերը բավական են ամբողջ Հայաստանը մաքրելու մեր այդ խելագար ու սրիկա թշնամիներից, որոնց ուժը կայանում է միմիայն ստորության և անբարոյականության վրա:

Ստույգ աղբյուրից գիտենք, որ Հայաստանում եղած ռուսական բոլոր ուժերը հեռացել են որպես թե Վրաստանի սահմանը: Իսկ իրենց հայկական ուժերը, թշնամիներ չեն կարող լինել, ինչպես փորձերը ցույց են տվել»²⁵:

3. Վայոց Ձորի ազատագրումը և Գ.Նժդեհի ժամանումը

Մինչև փետրվարյան ապստամբությունը սկսելը, կամ ավելի շուտ՝ որպես դրա առաջին քայլ՝ շատերի համար անսպասելի կերպով Նժդեհի հրամանով 1921թ. փետրվարի 16-17 Սյունիքի գեներալ-կոմիսար, միաժամանակ Արևմտյան ճակատի հրամանատար Յապոնի հրամանատարությամբ Լեռնահայաստանի գործերը՝ 400 հետևակ և 200 ձիավոր, Սիսիանի Բազարչայ գյուղից մտան Վայոց Ձոր և կայծակնային արագությամբ 1-2 օրվա ընթացքում գրավեցին ամբողջ գավառը՝ գերելով 11-րդ Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի 180-րդ գնդի առաջին գումարտակի զորքերը՝ որը կազմը՝ հրամանատար Կազլովի²⁶ հրամանատարությամբ՝ 500-ից ավել զինվորների ու սպաների՝ չհաշված կոմբոյներին մի քանի հարյուր զինված

²⁵ ՀԱԱ ֆ-37, ց-1, ց-24:

²⁶ Սրան հետագայում մի քանի այլ կոմունիստների հետ գնդակահարեցին Գնդեվազ գյուղի մոտերքում:

անդամներին, 4 թնդանոթ, 21 գնդացիք և այլ ռազմամթերք²⁷: Ընդհարումների ընթացքում մի քանի սպաներ սպանվեցին, իսկ մյուսները գերի հանձնվեցին ու քվլեցին թիկունք: Քեշիշքենդը գրավելիս սպանվեցին պարբերաբար Ջանգեզուր լրտեսության ուղարկվող սիսիանցի բոլշևիկ անգեղակոթցիներ՝ Արզումանը՝ (Արկյազի Սուրբ Խաչի վանքում), բուժակ Հովսեփ Դանիելյանը, Մկրտիչ Մկրտումյանը, Հովակիմ Պողոսյանը, Բագրատ Տեր-Օհանյանը, բռնակոթցի Կարապետ Ղազարյանը, Ղարաքիլիսա-Սիսիանից՝ Վահան Տեր-Ղազարյանը, հրամանատարի տեղակալ, սպա Բելովն իր համհարզի հետ և ուրիշներ²⁸:

Միայն կոմիսար Գրիգոր Բայթունին կարողացավ գավառի մի քանի կուսակցական գործիչների հետ տեղացիների օգնությամբ փախչել-ազատվել:

Յապոնը հիշում է. «Փետրվարի 16-ին ճանապարհվելով՝ կեսօրից անց հասանք Գնդեվազ, որը սպիտակ դրոշակով դիմավորեց մեզ ու իր զորամասը միացրեց մեզ հետ: Այստեղից, առանց դադար առնելու, արհամարհելով այդտեղի սար ու ձորի ձյունն ու սառնամանիքը, առաջ շարժվեցինք և հասանք Սուրբ Խաչ վանքը²⁹, ուր գիշերեցինք:

²⁷ Նոդեհը Ռուբեն Տեր-Սինայանին 26.02.1921թ. թվագրված նամակում հիշատակում է այլ ռազմավարի մասին. «Հենց այս բուպեիս մեկնում եմ Վայոց Ձոր, ստուգելու վերջին լուրերը: Ես կվերադառնամ տեղս ոչ շուտ, քան մարտի 5-7-ը: Արփայում վերցրել ենք 71.000.000 ռուբլի չեկերով, 12.000 արշին մանուֆակտուրա և 100 փութ աղ»: /տե՛ս Գ. Նոդեհ, Երկեր, հ. 2, Ե., 2002, էջ 322/:

²⁸ Հետաքրքիր է, որ նրանց մեծ մասին սպանել է բռնակոթցի Կրմենանց Նիկոլայը: Մ. Մկրտումյանը, լինելով Անգեղակոթի Հեղկոմի նախագահ, կազմակերպում է Գորիսից 6 փութ ոսկու սալիկների փոխադրումը Անգեղակոթ, այնտեղից Նախիջևան տեղափոխելու համար: Սակայն հենց այդ ժամանակ Լեռնահայաստանի ուժերը բոլշևիկներին քշում են Ջանգեզուրից, և Մկրտումյանը խնամքով թաքցնում է ոսկին, մինչև որ բոլշևիկները նորից են գրավում շրջանը և վերցնում այն: Իսկ բուժակ Հովսեփը դաշնակների իշխանության ժամանակ իր բնակարանը դարձրել էր Երևանից Ջանգեզուր եկող-գնացող կոմունիստների իջևանատուն:

²⁹ Արկյազի Մ. Խաչ վանքը շատ նշանավոր է եղել այն ժամանակներում: Ուխտի օրը (հոկտեմբերին) բազմահազար ուխտավորներ էին գալիս ոչ միայն Հայաստանից, այլև արտասահմանից: Տեր Առաքել քահանայի ղեկավարությամբ 1860-ական թթ. նորոգվելով՝ դարձավ Վայոց Ձորի հոգևոր կենտրոնը: Այն ուներ կացարաններ և այլ հարմարություններ, որոնք հաճախ գործածվում էին նաև գավառի իշխանությունների կողմից՝ ժողովներ կազմակերպելու և այլ նպատակներով:

Փետրվարի 17-ի առավոտյան մի քանի ուղղությամբ առաջ անցանք և այդ օրն էլ գրավեցինք ամբողջ Դարալագյազը՝ Քեշիշքենդ կենտրոնի հետ միասին: Մեր հարձակումն այնքան արագ ու անակնկալ էր, որ Կարմիրները չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ ու հատ ու կենտ հրացան պարպելով, ստիպված եղան զենքերը վայր դնել ու անձնատուր լինել: Հրամանատարներից ոմանք հնարավորություն ունեցան դեպի Շարուր փախչելու: Մնացածը, առավելապես հասարակ զինվորները, ուրախությամբ զենքերը վայր դրին: Այդ գործողության ժամանակ գերի առանք Դարալագյազի Կարմիրների շտաբի կազմը, հրամանատարներից ոմանց ու 500-ից ավել զինվոր: Մեր ձեռքն անցան լեռնային 4 թնդանոթ՝ իր կազմով ու ձիերով, Քեշիշքենդի, Մալիշկայի և Այնագուրի պահեստները, 21 գնդացիր, ռազմամթերք և այլն:

Դարալագյազը գրավելուն պես շրջանի մեջ հայտարարեցի պատերազմական վիճակ: Քաղաքացիական գործերը վարելու համար ընտրել սովի Շրջանային Ազգային Խորհուրդ՝ Եղիշե Իշխանյանի նախագահությամբ և նշանակեցի շրջանային կոմիսար»³⁰:

Յապոնն էլ իր հերթին է Նժդեհի մասին դժկամությամբ ու կարծես իմիջայլոց հիշատակում. «Դարալագյազը գրավելուց 10 օր հետո Նժդեհը եկավ ու անցավ Նոր Բայազետ՝ այնտեղից Արարատյան դաշտ իջնելու համար: Սակայն Օրդաքլուի³¹ ճանապարհին Կարմիրների դիմադրությանը հանդիպելով՝ նա հետ դարձավ ու Դարալագյազում էլ կանգ չառնելով՝ գնաց կրկին Զանգեզուր»³²:

Այսպես, փետվարի 28-ին³³ Նժդեհն իր փոքրիկ զորախմբով³⁴ ժամանեց Վայոց Ձոր և մեծ խանդավառությամբ ընդունվեց վայոցձորցիների կողմից³⁵:

³⁰ Եապոն, նշվ. աշխ., էջ 116 :

³¹ Ներկայիս Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղը:

³² Եապոն, նշվ. աշխ., էջ 116:

³³ Ըստ որոշ հուշերի՝ մարտի 1-ին:

³⁴ Տեղացի հուշագրողների (Բենո, Գարեգին) վկայություններով՝ նրանց թիվը եղել է 150-300 հոգի:

³⁵ Բազմաթիվ վկայություններ ու հուշեր կան Մալիշկայում, Քեշիշքենդում (Եղեգնաձոր) Ղոյթուրում (Գետափ), Աղավնաձորում, Արփայում և Վայոց Ձորի այլ գյուղերում Գ.Նժդեհին խանդավառ ընդունելու, հյուրընկալելու մասին, որոնք, սակայն, հետագայում պատրվակ դարձան Չեկայի կողմից շատերի բռնադատման համար:

Մարտի 3-ից 5-ը տեղի ունեցավ Դարալագյազի գյուղացիության համագումարը՝ Եղիշե Իշխանյանի նախագահությամբ, որը Դարալագյազը հայտարարեց Ինքնավար Սյունիքի մի մասը: Այն իր խանդավառ ողջույնը հղեց Նժդեհին:

«Ինքնավար Սյունիքի ազատարար սպարապետ հերոս Նժդեհին

Սիրելի սպարապետ, Դուք երկար ամիսների ընթացքում և հարազատ ՀՀ անկումից հետո Ձեր ուժեղ ձեռքում բարձր ու ամուր պահեցիք ազատ և անկախ Հայաստանի սրբազան դրոշը, որը ծածանվում էր Սյունյաց լեռնաշխարհում, և դեպի որն ուղղված էր ամբողջ հայության ուշադրությունը: Դուք գերմարդկային ճիգեր թափելով ազատագրեցիք Ջանգեզուր-Ղարաբաղը հայ դավաճանների և դրսի բռնակալ ուժերի տիրապետությունից:

Ազատագրված Վայոց Ձորի Ա գյուղացիական համագումարը, իր ողջույնն ուղղելով Ձեզ և Ձեր զինակիցներին, ցանկանում է Ձեզ ուժ և կորով նույն ոգով շարունակելու հայ հայրենիքի ազատագրման և հավաքման գործը:

Կեցցեք մեր հայրենիքի ազատարար հերոս սպարապետ և Ձեր զինակիցները:

Նախագահ Համագումարի՝ Եղիշե Իշխանյան

Քեշիշքենդ, 5 մարտի, 1921թ.»³⁶:

Այնուհետև Գ.Նժդեհն անցնում է Աղավնաձոր (Այնազուր) և իջևանում Երևանի նահանգում ճանաչված ու հարգված հանգուցյալ բժիշկ Մ.Ջաքարյանի³⁷ տանը: Բժշկի այրին՝ տ. Երանյակը, իրենց գյուղի տունը հավուր պատշաճի նախապատրաստել էր սպարապետին հյուրընկալելու համար: Մակայն Այնազուր և Արփա գյուղերում Նժդեհը կանգնեց մի անելանելի ու ողբերգական երկընտրանքի առջև:

³⁶ Վ. Գեորգեան, Լեռնահայաստանի հերոսամարտը, 1919-1921թթ., Ե., 1991, էջ 149:

³⁷ Ցավոք մենք չունենք այդ համագումարի տղագրությունները, և չկան այդ օրերին Վայոց Ձորում գտնվող Նժդեհի համագումարին ներկա լինելու մասին տեղեկություններ:

³⁷ Համառոտ կենսագրությունը տե՛ս «Զանգի» 18.12.1918թ., (թիվ 81) համարում տպված մահախոսականում:

Դեռևս փետրվարի 18-ին՝ Վայոց Ձորը գրավելիս, մի քանի տասնյակ տեղացի բոլշևիկներ³⁸ հիմնականում Արփա և Այնազուր գյուղերից, վախենալով պատժից, Գրիգոր Բայթունու գլխավորությամբ թրքաբնակ Տանձիկ էին փախել ու միացել Աբասկուլի բեկ Շաղիինսկու թուրք-բոլշևիկյան «Կարմիր թաբոր» ջոկատին³⁹: Տեղանքին քաջածանոթ լինելով՝ նրանք հաճախակի էին հետախուզական արշավներ կատարում դեպի հայկական ուժերի թիկունքը և գյուղերում մնացած իրենց հարազատների գործուն օգնությամբ փայլուն կերպով կատարում թուրք-բոլշևիկյան զորքերի հետախուզության դերը: Հետագայում որպես այդ ջոկատի ավանգարդ՝ նրանք անգնահատելի ծառայություններ մատուցեցին բոլշևիկյան ուժերի կողմից Վայոց Ձորի գրավման գործում:

Բոլշևիկ հրամանատարներն (Շ. Ամիրխանյան, Գ. Օզանեզով և այլք) էլ էին խոստովանում, որ առանց նրանց դժվար թե կարողանային այդքան համառ ու արդյունավետ պաշտպանվել Լեռնահայաստանի ուժերի հարձակումներից և փակել հայկական զորքերի առաջխաղացման ճանապարհը դեպի Շարուր, Հայկեղյոմի ուժերի թիկունքը, որին այդքան անձկորեն սպասում էին Երևանում: Շ. Ամիրխանյանը գրում է. «Դարալազյազի դաշնակների զորախումբը իմբապետ Եսպոնի հրամանատարությամբ ձգտում էր հարձակվել Նորաշեն կայարանի ուղղությամբ, նպատակ ունենալով ներխուժել մեր թիկունքը և անջատել մեզ Նախիջևանից: Ադրբեջանցի գյուղացիներից և Դարալազյազից փախած կոմունիստներից կազմված «Կարմիր թաբորը» Աբասկուլի բեկ Շաղիինսկու ղեկավարությամբ դիմադրեց դաշնակցական բանդաներին, մեծ ու պատվավոր դեր

³⁸ Հետագայում 3 արփեցի (սրանցից մեկին իր պարտիզան ընկերները հետապնդելով գյուղի մերձակայքում սպանեցին՝ որպես դավաճանի) և տասնյակից ավելի այնազուրցի պարտիզաններ հետ եկան, հանձնվեցին և ներում ստացան: Մյուս կողմից, մի քանի հոգի էլ՝ Արփայի արտաքավածներից, փախան և միացան պարտիզաններին:

³⁹ 1921-ի Փետրվարյան ապստամբությունից և Լեռնահայաստանի կողմից Դարալազյազի գրավումից անմիջապես հետո Կարմիր բանակի հրամանատարության ցուցումով Վեդիի թուրքերի հրամանատարներից Աբասկուլի բեկ Շաղիինսկին համալրում է իր «Կարմիր թաբոր» ջոկատը՝ այն հասցնելով մինչև 400 մարդու: Նրան հանձնարարվում է Դարալազյազի հետ բավականին երկար ճակատի պաշտպանությունը: Ջոկատն ունեցել է 4 վաշտ՝ Չանախչիի վաշտը, Գյուննուտ-Ջաֆարլուի վաշտը, Տանձիկի վաշտը, Ջղազիի վաշտը՝ /տե՛ս Գ. Սարգսյան, Հուշեր 1917- 1921թթ., Եղեգնաձորի երկրագիտական թանգարան/:

խաղաց հակահեղափոխական, ավանտյուրիստական բանդաների դեմ Ղամարլուի ռազմաճակատում մեր մղած պայքարի գործում»⁴⁰:

Կարծում ենք՝ Լեոնահայաստանի կողմից Շարուրի գրավման և Ղամարլուի ճակատի վերացման դեպքում հետագա իրադարձություններն այլ կերպ կընթանային, և գոնե Շարուր-Նախիջևանի ճակատագիրն ավելի հայանպաստ կլիներ:

Հետագայում Նժդեհը պիտի գրեր. «Մենք եղբայրասպան կոռիվներ չէինք վարել, լեռնաշխարհը քաղաքացիական պատերազմ չէր տեսել: Մենք կռվել էինք թաթարի, թուրքի և սրանց օգնության փութացած կարմիր ռուսի դեմ: Եվ սրանց հանդեպ մեր հարվածների մեջ եղել էինք ազատ: Այժմ հայն էր կազմում թշնամու ուժերի առաջամարտիկը, որին պարտության մատնելու համար չպիտի կարողանայինք գործի դնելու մեր վճռականությունը: «Մի՛ կրակեք, մենք էլ ենք հայ», - ահա, այունեցու բազուկը անդամալուծող ճիչը: Թշնամին գիտակցորեն կռիվներին տվել էր քաղաքացիական, եղբայրասպան բնույթ, համոզված, որ նման կռվի համար իր նետած ձեռնոցը չպիտի կարողանանք վերցնել»⁴¹: Այ նուամենայնիվ, ըստ Գառնիկ Զաքարյանի, ընդառաջելով Այնազուրի հասարակության թախանձանքին, Նժդեհը ներում շնորհեց Այնազուր գյուղի կոմբջիջի՝ մի քանի տասնյակի հասնող գերված անդամներին: Ներման խոստում ստանալով՝ վերադարձան ու հանձնվեցին գյուղի կոմբջիջի այն անդամները, որոնք կարճ ժամանակով միացել էին թուրք-բոլշևիկյան «Կարմիր թաբորին», սակայն հետո հեռացել էին: Նժդեհը նաև հրաժարվեց գյուղից արտաքսել թուրք-բոլշևիկյան «Կարմիր թաբորի» շարքերում կռվող 10-ից ավելի այնազուրցի կարմիր պարտիզանների ընտանիքներին:

Թվում էր, թե Սյունյաց սպարապետը ներողամտությամբ պիտի վարվեր նաև Արփայի պարտիզանների ընտանիքների ու կոմբջիջի անդամների հետ: Մակայն այստեղ դեպքերն այլ կերպ ընթացան: Կարմիր պարտիզան Գարեգին Մարգսյանը գրում է. «Փետրվարի վերջին և մարտի սկզբներին, Եսպոնն ուժեղ հարձակում սկսեց Տանձիկի և Ջաֆարի-Գյուննուտի ուղղությամբ: Նրա նպա-

⁴⁰ Գ. Մարգսյան, Դարավազազի աշխատավորության պայքարը դաշնակցության բռնակալության դեմ և սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումը 1917թ. փետրվարից մինչև 1922թ. հունվարը, 1966թ. անտիպ երրորդ տարբերակ:

⁴¹ Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք, հ. 2, Ե., 2002, էջ 172-173:

տակն էր ամեն գնով ճեղքել ճակատը, ոչնչացնել կամ հետ շարտել հայ և ադրբեջանցի պարտիզաններին և անջատել Ղարաբաղի կարմիր զորամասերը Նախիջևանից: Մարտի առաջին օրերին Եսպոնի զորքերը գրավեցին Արփայի ու Տանձիկի միջև ընկած լեռնաշղթան և շարժվեցին առաջ: Մակայն ավելին առաջանալ նրանց չհաջողվեց, և նրանք հետ քաշվեցին: Հակառակորդի կողմից զոհվեցին իրենց ճանաչված հրամանատարներից մեկը՝ Ենգիբարը և մի քանի զինվորներ»⁴²:

Կովի հաջորդ օրը սևաթույր ձին նստած՝ Արփա է ժամանում Նժդեհը: Գյուղացիք մինչև գյուղամիջում գտնվող ժամի դուռը գորգեր էին փռել սպարապետի անցնելիք ճանապարհին ու սեղաններ զցել: Գյուղի երևելիներից մեկը պաստառ էր գրել. «Այսօր Միսակ Ղարախանյանի ուրախ օրն է...»⁴³:

Նժդեհն իր շքախմբով իջևանում է գյուղի քահանայի՝ Տեր Հովակիմի տանը: Ի պատիվ մեծաշուք հյուրի և իր զինվորների՝ ոչխարներ էին մորթվել ու ճոխ սեղաններ բացվել: Մակայն, երբ նրան զեկուցեցին վերջին կովի մասին և հայտնեցին Ենգիբարի ու մյուս զինվորների զոհվելու բոթը, Նժդեհը մոռալվեց: Նա իր շքախմբի և գյուղի մեծամեծների ուղեկցությամբ գնաց եկեղեցի, ուր բերել-դրել էին զոհվածների դիակները: Այստեղ հավաքվեց նաև ժողովուրդը, որ մինչ այդ խռնված էր փողոցում: Սպարապետը հուզված էր իր սիրելի հրամանատար Ենգիբարի մահվան առիթով և խիստ զրգռված, որ Արփայի այդ մի խումբ երիտասարդները դավաճանել էին և միանալով դարավոր թշնամուն՝ կռվում էին հայկական բանակի դեմ. «Միրտս վիրավոր է. բառեր չեմ գտնում ասելու: Այն գնդակը, որը կպել է իմ սիրելի Ենգիբարին, այն միաժամանակ նաև իմ սիրտն է խոցել», - այսպես սկսեց իր խոսքը Մյունյաց սպարապետը, որը, հուզական լինելով, նաև այնքան բարձր է հնչել, որ լսվել է անգամ եկեղեցուց դուրս: Նրա խոսքից, որը ժամանակին շատ մեծ տպավորություն է թողել նույնիսկ հասարակ ժողովրդի վրա, ցավոք պատառիկներ են միայն պահպանվել վայոցձորցիների հիշողության մեջ:

⁴² Գ. Սարգսյան, նշվ. աշխ.:

⁴³ Տասնամյակներ շարունակ դա գյուղի կոմունիստների կողմից հալածանքների ու ծաղրանքի պատրվակ դարձավ վերջինիս և իր ընտանիքի համար:

Դիմելով կարմիր պարտիզաններ Գալուստ, Մարտիրոս (Ամո) և Հմայակ Բաղդասարյանների մորը՝ Գյուլիին, գոչում է. «Օձե՛ր ծնե՛իր, կարիճնե՛ր ծնե՛իր, այդ կարմիր սրիկաններին չծնե՛իր»:

Եվ այնուհետև դիմեց հավաքված բազմությանը. «Միրելի՛ մայրե՛ր, քույրե՛ր, հայ կանայք, արո՛ւ զավակներ ունեցեք, արի՛ զավակներ ունեցեք, որ հայրենիք պաշտպանեն, ձեզ ու ձեր ընտանիքների պատիվը պահպանեն, այլ ոչ թե դառնան փողոցային խուժան, դառնան հայրենիքի դավաճաններ»:

Լուսանքներ թափելով կոմունիստների հասցեին՝ միաժամանակ նա փորձում էր բացատրել բոլշևիզմի իսկական էությունը. «Կարմիր աղվեսները տանում են մեր հավի ձվերը: Բոլշևիկներն ասում են՝ «Դավա՛յ բոլշե»: Նրանք ոչ թե տալու են, այլ միայն վերցնելու են: Նրանք ձեզնից առնելու են ամեն ինչ, նույնիսկ ծիծեռնակի կաթ են պահանջելու:

Ժողովո՛ւրդ, հայ մարդիկ, լավ իմացեք, դրանք՝ բոլշևիկները որ գան, ստերջ կովից էլ են հորթ ուզելու, հավի ճտերից էլ են հավկիթ ուզելու, կենդանի ոչխարը կանգնած՝ մորթին են ուզելու»:

Հաջորդ օրը Նժդեհը մարդ ուղարկեց բանակցություն վարելու համար: Հանդիպումն անցավ սահմանազլխին՝ Արփայի աջ ափին, սակայն ապարդյուն: Այնուհետև նա հավաքել տվեց գյուղի մեծամեծերին և պարտիզանների հարազատներին՝ պահանջելով 24 ժամվա ընթացքում իր մոտ բերել փախած բոլշևիկներին: Պարտիզան Գարեգին Միմոնյանի հորը՝ Եղիային, ուղարկեց ճակատագրի դարձած մերձակա Կարմիր Քարը՝ հանդիպելու հայ պարտիզանների հետ, սակայն երբ նա հասնում է Կարմիրների դիրքերին, այնտեղից սպառնալով՝ կրակում և արգելում են մոտենալ: Բանագնացի վիրավոր կապույտ ձին գյուղ հասնելուց հետո ընկնում-սատկում է:

Բենտն, որն աքսորվածներից մեկն էր, պատմում է. «Ցերեկվա ժամը երկուսը կլինե՛ր, մեկ էլ տեսանք Աղավնաձորի թափից ⁴⁴ մոտ 300 հոգանոց կավալերիա է իջնում: Ասացին, թե Նժդեհն է գալիս: Նժդեհը մտավ եկեղեցի, բարձրացավ բեմը և սկսեց ճառել. «Կարմիր Քարը ⁴⁵ ես հող ու մոխիր կդարձնեմ և կթափեմ ձեր պարտիզաններ-

⁴⁴ Տեղացիները «թափ» են անվանում մերձակա սարահարթերը:

⁴⁵ Արփա գետի աջ ափից դեպի արևմուտք ձգվող բաժանարար լեռնաշղթա Վայոց ձորի Արփա և Շարուրի Տանձիկ գյուղերի միջև, որն այդ ժամանակ նաև ճակատի գիծ էր դարձել:

րի գլխին»: Այսպես ասաց և հավաքել տվեց պարտիզանների ընտանիքների անդամներին: Հավաքողները գյուղի կոմիսար Միսակ Մարգարյանն էր և իր օգնական Երվանդ Աբրահամյանը: Հետո մեզ եկեղեցու արևելյան դռնից դուրս հանեցին եկեղեցու բակը: (Եկեղեցին երկու դուռ ուներ, մեկը արևելքից էր, մյուսը՝ արևմուտքից): Մի քիչ սպասելուց հետո մեզ քշեցին դեպի Տերտերենց տան կողմը: Տերտերենց դռնից դուրս գալով՝ Նժդեհը կարգադրեց. «Մրանք հայեր չեն: Քշե՛ք բոլորին և անցկացրե՛ք սահմանը: Թող գնան իրենց դավաճան զավակների մոտ»: Միաժամանակ նա մի երկտող գրեց ու տվեց Եղիա Միմոնյանին, որ հանձնի պարտիզաններին, ուր վերջում ասվում էր. «Եթե դուք չգաք ու չներկայանաք օրինական իշխանությանը, տակնուվրա կանեմ ամբողջ Տանձիկը և սրի կքաշեմ ձեր բոլորին»:⁴⁶

Գառնիկ Չաքարյանը գրում է. «Արփեցիներից մի մարդ անգամ, նույնիսկ կոմունիստների բարեկամներից, դուրս չեկավ Սպարապետին խնդրելու, որ ների այդ անմեղ հասարակությանը, որ չարտաքսեն անտեղի կորստի, օտարի, թշնամի թուրքի դռներում: Ավելին, Արփո քյալաները թե. «Պարո՛ն սպարապետ, հանի՛ր էլ վարակը մեր գեղից, չենք ուզում, հանի՛ր թո՛ղ կորչեն»:

Այստեղ սպարապետը իր որոշումը փոխեց. «Գնդակահարվողներին արքորել Տաթև, իսկ պարտիզանների ընտանիքները՝ կանանց ու երեխաներին, արտաքսել Շարուր՝ իրենց տղերքի ու ամուսինների մոտ, սովամահության»: Նա կարգադրեց նաև վառել պարտիզանների տները⁴⁷:

Այսպես՝ Արփայի երևելիները չմիջամտեցին, և գյուղից մի մեծ բազմություն՝ տասնյակ ընտանիքներ⁴⁸, իրենց տներից հանվեցին ու արտաքսվեցին Շարուր թուրքերի մեջ, ուր ենթարկվեցին սուկալի գրկանքների ու տանջանքների: Իսկ գերի մնացած կոմունիստներին հանեցին ու քշեցին Զանգեզուր՝ դեպի ձմռան սառնամանիքի գիրկը:

⁴⁶ Այս 2-րդ արքորը եղել է մարտի 3-ից մինչև 5-ը ժամանակահատվածում:

⁴⁷ Իհարկե, ոչ բոլորի տներն էին այրել: Պատում են, որ երբ Աղավնաձորում մոտեցել ու գեկուցել են, որ կատարել են իր հրամանը և վառել են արփեցի կարմիր պարտիզանների տները, նա հանդիմանել է. «Ասենք ջղայնացած էի և ասել էի, հո անմիջապես չպիտի կատարեիք»:

⁴⁸ Բենոն արքորավաճների թիվը հաշվում է մինչև 14 ընտանիք՝ 57 հոգի:

Դրանից հետո, երբ նորից Նժդեհին հացի հրավիրեցին, չնստեց և առանց թաքցնելու ասաց. «Կեղտոտ մարդիկ եք: Մեկը չկա՞ր, որ դուրս գար, խնդրեր ինձ, որ խնայեի էդ ընտանիքներին, հաշվի առնեի փոքրությունները, ծերությունները, կամ գոնե իրենց կին լինելը: Եվ մի թե՛ Արփայում մի մարդ չկա՞ր»:

Շեռտ էլ ավստասանքով ասել էր. «Եթե Արփայում մի երեխա անգամ դուրս գար և ինձ ասեր, թեկուզ հրամայեյ, թե՛ ների՛ր, պատրաստ էի ներելու»:

Եվ երբ առիթը բացվեց, Արփայի կոմունիստ ընտանիքների արտաքսման ամբողջ մեղքը գցեցին Խաչոյենց Թաթոսի տղերքի՝ տերտերի ու եղբայրների վրա: Եվ ապրիլին Կարմիր քարից վերադարձած պարտիզանները Այնազուրի Խանի ձորում Արփո տերտերին ու իր 4 եղբայրներին կոտորեցին՝ իբր թե նա՝ տերտերն էր դավեր լարել»⁴⁹:

Իսկ Բենոն շարունակում է. «Միսիանցի երեք զինվորներ, Արփայից էլ Միմոն Սուքիասյանն ու Մելիքսեթ Առաքելյանը մեզ քշեցին և գյուղից դուրս հանեցին: Այստեղ մեր մայրերը լացով ասում էին, թե մեզ էլ քրդերի օրն են դնելու՝ տանում են Մենձաձորում⁵⁰ սպանեն: Այսպես լացով գնացինք ու այդ ձորի մոտով անցանք: Հասցրեցին Յանըղղաշա քարը և այստեղ մեզ առանց սաղաթի արձակեցին: Արագ կարգով անցանք քարի մյուս կողմը՝ հենց էինք իմանում հետևներիցս կխփեն: Անցանք բոլշևիկների սահմանը և շատ ուրախացանք:

Եղիա բիձեն, Օսանա Մկրտչյանից վերցնելով նրա սպիտակ գլխաշորը, կապեց փայտի գլխին և ընկավ առաջ, մենք էլ՝ նրա հետևից: Հասանք Յանըղղաշի տներին՝ տեսանք մի սպիտակ ձիավոր է գալիս: Եղիա բիձեն ճանաչեց, ասաց. «Ֆաթուլլան⁵¹ է»: Հասավ մեզ, առաջինը բարևեց Եղիա բիձի հետ և ասաց. «Լավ են արել, որ ձեզ աքսորել են մեզ մոտ, մենք ձեզ մեր աչքի լույսի պես կպահենք: Դուք եկեք, ես գնամ-հայտնեմ ձեր տղաներին: Համ էլ Աբասկուլի բեկն է Տանձիկում»: Ֆաթուլլան այս ասաց և ձին քշեց դեպի Տանձիկ:

⁴⁹ Գ. Զաքարյան, նշվ. աշխ.:

⁵⁰ Գյուղամերձ հանդամաս:

⁵¹ Ֆաթուլլան 1930թ.-ին դարձավ «Բանդիտական» շարժման ղեկավարներից և սպանվեց կռիվներից մեկում:

Աքսորյալները իրենց պարտիզան որդիներին հանդիպեցին Տանձիկից մի քիչ վերև գտնվող Սև քարի տակ: Մեզ կամրջով անցկացրին մյուս Տանձիկը⁵²: Մեր տղաները ապրում էին երկու տան մեջ, մեզ էլ տեղավորեցին իրենց մոտ:

Այդ ժամանակ Տանձիկ էին եկել Աբաս կուլի բեկն ու քաղբյուրոյի պետ Ֆարամազը՝ քննելու մի հարց. թե իբր Արփայի տղաները կեղծ պարտիզաններ են: Հենց այդ հարցը քննելիս էլ աքսորյալներս հասանք Տանձիկ և պարզվեց, որ կասկածը ճիշտ չի եղել»⁵³:

Գարեգինն այլ մանրամասներ է հաղորդում. «Բազմությունը դանդաղ մոտենում էր մեր դիրքերին: Դեռ սահմանի մոտից մեկը կանացի մի սպիտակ գլխաշոր դրոշի նման վերև պարզած գալիս էր առջևից: Դա Եղիա Սիմոնյանն էր: Պարտիզանների մի մասը մնաց դիրքերում, իսկ մյուս մասը ընդառաջ գնալով դեպի իրենց հարազատները, սկսեցին գրկախառնվել ու լաց լինել: Եղիան ծոցից հանեց և մեզ հանձնեց Նժդեհի նամակը: Պատասխան նամակը գրեցին Նախիջևանի քաղբյուրոյի պետ՝ Ֆարամազեկը, որն այդ օրը եկել էր մեր դիրքերը: Նամակը բոլորի անունից ստորագրեցինք 5 հոգի: Աքսորված պարտիզանների գալով մեր շարքերը համալրվեցին նոր մարտիկներով՝ Հմայակ Բաղդասարյան և այլն...»⁵⁴:

Չկարողանալով Վայոց Ձորում հասնել շոշափելի հաջողությունների և դառնացած այդ մի քանի տասնյակ հայերի անլուր դավաճանությունից՝ Նժդեհը մեկնում է ապստամբած և բոլշևիկյան բռնատիրական լուծը կարճ ժամանակով թոթափած Նոր Բայազետի գավառ, սակայն այստեղ ևս հուսախաբություն էր սպասում: Մոտ մեկշաբաթյա (մարտի 8-ից մինչև մարտի 15-ը) նրա ճիգերը՝ ճեղքել գավառը Երևանից բաժանող Կարմիր զորամասերի շղթան և միանալ Երևանյան ուժերին, չհաջողվեցին: Հետագայում նա պիտի գրեր. «Հոգեբանորեն տարբեր աշխարհներ են Սյունիքն ու Նոր Բայազետը»⁵⁵: Նրան չհաջողվեց ամբողջովին վերացնել ապստամբների ճամբարում առկա երկպառակությունները և կազմակերպել հա-

⁵² Կար երկու Տանձիկ՝ Ներքին և Վերին, որոնք գտնվում էին Արփա (ներկայումս՝ Արենի) գյուղից մոտ 5 կմ հարավ-արևմուտք: Այժմ դրանց տեղում Շարուրի ջրամբարն է:

⁵³ Բ. Բաղդասարյան, Հուշեր, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան:

⁵⁴ Գ. Սարգսյան, նշվ. աշխ.:

⁵⁵ Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 135:

ջող ինքնապաշտպանություն: Հուսախաբված նա կրկին անցավ Վայոց Ձոր և անմիջապես էլ վերադարձավ Զանգեզուր:

Այդ մասին նա «Ազատ Սյունիքում» գրում է. «Հրահանգելով Նոր Բայազետի հրամանատարությանը՝ ամեն գնով թուժր կանգնել թշնամու առաջխաղացման դեմ դեպի Ղարանլուխ և Մելիմի լեռնանցքը, ես վերադառնում եմ Վայոց Ձոր: Իսկ իմ Սյունիքի վաշտն ու ձիավորները այստեղ էլ կատարում են իրենց փրկարար դերը: Նրանք Նոր Բայազետի շրջանը թողնում են յոթ օր հետո, երբ Արարատյան գաղթականությունը արդեն գտնվում էր Վայոց Ձորում և Միսիանում»⁵⁶:

Հետևանքները

Չնայած Գ. Նժդեհի անունը հիմնականում կապված է Զանգեզուրի 1919-1921թթ. մղած հերոսական կռիվների հետ, սակայն նրա գործունեությունը բախտորոշ ազդեցություն է թողել նաև Հայաստանի և մասնավորապես Վայոց Ձորի իրադարձությունների վրա, թեպետ վերջինս Լեռնահայաստանի կազմում ընդգրկվեց համեմատաբար կարճ ժամանակահատված միայն:

Չի կարելի խոսել Լեռնահայաստանի կողմից Վայոց Ձորի գրավման և Նժդեհի՝ Վայոց Ձոր ու Նոր Բայազետ գալու մասին՝ 1921թ. Փետրվարյան ապստամբության ենթատեքստից դուրս և նաև չնշել Նժդեհի վճռորոշ դերակատարությունը նրա ծրագրման գործում:

Թեև Նժդեհի գլխավոր նպատակը մի կողմից՝ Վայոց ձորի և մյուս կողմից՝ Նոր Բայազետի վրայով երևանյան ուժերին միանալը և այդ երկու ճակատները վերացնելն էր (որպեսզի միասնական ուժերով կարողանային դիմագրավել հյուսիսից արշավող Կարմիր բանակին), չիրականացավ, սակայն Լեռնահայաստանի ուժերը, գրավելով արևմտյան Վայոց Ձորի՝ Չանախչիի շրջակայքի գյուղերը, ուղի բացեցին երևանյան ուժերի նահանջի համար⁵⁷: Իսկ մարտի 8-

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Յապոնը հիշում է. «Դարալացյազը մեր ձեռքում պահեցինք մինչև Երևանի անկումը: Արարատյան բանակի ու տարագրության Դարալացյազ հասնելուց հետո մեզ մնում էր այդ շրջանը մեր ձեռքում պահել այնքան ժամանակ, որ բազմահազար հայ տարագրությունը կարողանար անցնել Զանգեզուր, որպեսզի այնուհետև էլ մենք

ից մինչև 15-ը լինելով Նոր Բայազետի գավառում՝ Գ.Նժդեհը կարողացավ փոքրիշատե հաղթահարել այդտեղ տիրող անիշխանությունը և այնտեղի կազմալուծման հասած ապստամբ զորախմբերը կազմակերպելով՝ ամրապնդել ռազմաճակատի պաշտպանությունը, ինչի շնորհիվ գրեթե մեկ ամսով երկարաձգվեց դիմադրությունը՝ խոչընդոտելով կարմիր զորամասերին՝ Սելիմից անցնել Վայոց Ձոր և կտրել Երևանից նահանջող զինական ուժերի ու գաղթականության ճանապարհը:

Սակայն արդարացված չէին Վայոց ձորում Մսպարապետ Նժդեհի որոշ պատժամիջոցները նաև ռազմագիտական տեսանկյունից: Բացի այն, որ Շարուր արտաքսվածներից մի քանիսը համալրեցին թշնամու շարքերը, իրենց ընտանիքների՝ գյուղում չգտնվելն ավելի անկաշկանդ դարձրեց կոմունիստներին: Ապրիլ ամսին Արփան և մյուս գյուղերը գրավելուց հետո վրեժի պատրվակով սկսեցին սպանությունները, բռնությունները և թալանը: Դրա հետևանքով տասնյակ գոհեր եղան, շատ ընտանիքներ ու գերդաստաններ ընդմիջտ հեռացան հայրենի օջախներից:

Այստեղ ևս տեղին է հիշել Ռուբեն Տեր-Մինասյանի խոսքը. «Նժդեհը չեղավ այն մեծ ուժը, որ ամփոփեր իր մեջ այդ բոլոր ուժերին... Ես չեմ ուզում մեղադրած լինել Նժդեհին, որովհետև նա հարազատ գործիչն էր միայն Սյունիքի, և այն էլ Սյունիքի մի մասի՝ Ղափան-Գենվազի: Ես չեմ մեղադրում և նրա համար, որ այդ բարդ խնդիրը ինքը չէր առաջ բերել...»⁵⁸:

Հայության կրած այդ անդառնալի ծանր կորուստների ու պարտությունների շրջանում Լեռնահայաստանի ռազմական ուժերի հաղթանակները Երևանում շատերին էին ոգևորել, որոնք ավելի մեծ ու անիրականանալի հույսեր էին կապում Նժդեհի հետ: Սակայն հուսախաբությունն էլ մեծ էր. հետագայում Թավրիզում կազմակերպված դատավարության ընթացքում քննադատության գլխավոր թիրախը դարձավ Նժդեհը: Դրան ի պատասխան՝ նա դառնորեն

քաշվենք: Այդպես էլ արինք: Երբ տարագիր բազմությունն անցավ Դարալագյազի սահմանը, ամբողջ ճակատով քաշվեցինք հետ ու կանգ առանք Արփաչայի ձախակունքին, Ղուշի-Գնդևազի անառիկ բարձունքներում: (Եսապոն, Հուշեր, Հայրենիք, Բոստոն, 1941, հուլիս, հ. 9, էջ 116):

⁵⁸ Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921 թվականի Թավրիզի դատը, Ե., 2004, էջ 211-212:

պիտի հիշեցնէր. «Արդոյ՞ք հազարների հասնող հայ մտավորականների, ապօրինի սպանների, խմբապետների ամենաչնչին մասը գոնե մի անգամ հաշվի նստել է իր խղճի հետ, հարցրե՞լ է իրեն, թե ի՞նչ պիտի լինէր իր օրը, եթե ազատ ու անկախ Լեռնահայաստանը գոյություն չունենար:

Սև, եզակի, անլուր, հայի ապերախտություն, որը կյանքիս ամբողջ ընթացքում չպետք է հասկանամ ու ներեմ»⁵⁹:

Միայն այն, որ Նժդեհը համարվում է Հայոց ազգային պետականության վերջին հանգրվանի՝ Լեռնահայաստանի իրական հիմնադիրը, նրա անունը մի փողփողուն դրոշ դարձավ հետագա տասնամյակներում՝ հատկապես տարագիր հայության համար:

⁵⁹ Նույն տեղում:

Ашот Симонян
Вайоц Дзор

Гарегин Нжде в Вайоц Дзоре
Резюме

Освобождение Вайоц Дзора со стороны Горной Армении и короткосрочное прибытие спарাপета Г. Нжде в Вайоц Дзор с 1-ого по 7-ое марта и в провинцию Н. Баязет с 8-ого по 15-ого марта, были необходимыми шагами, продиктованными программой февральского восстания 1921 года (один из основных предводителей и вдохновителем которого и был Нжде). Правда, он здесь не смог достичь своей главной цели-сокрушить Красную армию и расщепить и ликвидировать тылы, разделяющее Вайоц Дзор и Баязет от Еревана. Однако ему удалось очистить территорию Чанахчи: линию Кеомурли-Харахач оккупированную турецко-большевитским отрядом "Красный табор" и обеспечить безопасный путь для отступающих из Еревана. А в Баязете смог некотором мере преодолеть неорганизованность и деморализацию повстанческих войск, благодаря чему на месяц было отложено вступление Красной армии в Вайоц Дзор. Это также поспособствовало безопасной эмиграции из Вайоц Дзора в Зангезур. Однако некоторые санкции главнокомандующего Сюника: ссылка семей красных партизанов в туркозаселенный Шарур и изгнание некоторых родственников в Зангезур (откуда вернулись очень немногие), стали новым толчком к братоубийственным сражениям, убийствам, грабежам и другим актам насилия. Воспоминания об этих событиях долгое время оставались в памяти народа Вайоц дзора и нашли место в мемуарах местных жителей.

Ashot Simonyan
Vayots Dzor

Garegin Njdeh in Vayots Dzor
Summary

The liberation of Vayots Dzor of Mountainous Armenia and the short arrival of Commander G.Nzhdeh to Vayots Dzor on March 1-7 and

to province of N.Bayazet on March 8-15, were necessary steps dictated by the program of February rebellion in 1921. It's true that there he was not able to achieve his main goal – to batter the Red army and to eliminate the fronts separating Vayots Dzor and province of N.Bayazet from Yerevan, but succeeded in clearing the Chanakhchy area – Kyomurlu-Karakhach line, occupied by Turkish-Bolshevik <Red Tabor> squadron, and thus secured the way for people reteanting from Yerevan, and in N.Bayazet he was able in some way to overcome non-coordination and demoralization of rebel troops to some extent, due to which the entry of Red units to Vayots Dzor was postponed for a month, which in its turn also helped refugees to go from Vayots DzortoZangezur safely.

However, some sanctions of the Commander – the expulsion of the families of Red partisans to Sharur where Turks lived and the banishing part of the relatives to Zangezur gave a new impetus to the fratricidal battles, assassinations, robbery and other acts of violence. The memories about those cases remained very long time in the memory of Vayots Dzor people and found their place in the memories of locals.



«ՄՊԻՏԱԿ ԳԱՌՈՒ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
/Փորձ/



Սուսաննա Գրիգորյան
Գորիս
susannagrig2017@mail.ru

Արդի ժամանակաշրջանում հասարակական կյանքի հարափոփոխ ընթացքի մեջ դպրոցը նույնպես որոշակի փոփոխություններ է կրում: Աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից վերաճում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի, ինքնուրույն որոշումներ կայացնողի: Ուսուցման ժամանակակից մեթոդների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռնի աշակերտներին՝ խորհելու, ստեղծագործելու և անկաշկանդ արտահայտվելու: Այս դեպքում ուսուցման գործընթացը կդառնա բովանդակալից, հետաքրքիր, ըմբռնելի ու առավել արդյունավետ:

Յուրաքանչյուր դաս մի ստեղծագործություն է և ուսուցչի յուրովի մոտեցման արդյունք: Դասի յուրաքանչյուր րոպեն պետք է նպատակային օգտագործել: Մակարենկոյի խոսքերով՝ «Դաստիարակության համար ոչ թե շատ ժամանակ է պետք, այլ քիչ ժամանակի խելացի օգտագործում: Մի դասի հաշված րոպեների ընթացքում պետք է լուծվեն ուսուցման ու դաստիարակության բազմաթիվ խնդիրներ»¹:

Այսօրվա դպրոցն անվերապահորեն է կատարում իր առաքելությունը, քանի որ այստեղ է դրվում ապագա քաղաքացու ձևավորման հիմնաքարը: Ուստի հարկ է ըստ ամենայնի կատարելագործել դպրոցում կիրառվող մեթոդներն ու հնարները:

Աշակերտների գիտելիքների արդյունավետ կիրառմանը և ինքնագնահատման կարողությունների ձևավորմանը նպաստում է

¹ Ա. Մակարենկո, Մանկավարժական պոեմ, երրորդ մաս, Ե., 1947, էջ 223:

համագործակցային ուսուցումը: Համագործակցային ուսուցումը աշակերտակենտրոն է: Երեխաներն ուսուցման գործընթացի մեջ ներգրավվում են խմբերով, որոնք անընդհատ փոփոխվում են: Այդ կերպ ապահովվում է շփումը դասարանի բոլոր աշակերտների հետ: Յուրաքանչյուրը պատասխանատվություն է ստանձնում ոչ միայն իր, այլև խմբի համար: Սովորողներն ակտիվորեն մասնակցում են գործընթացին, և ուսուցիչը կարողանում է աշխատել ոչ միայն մեկի, այլև ընդհանուր ճակատի հետ: Արդյունքում գիտելիքների յուրացման հետ մեկտեղ ձևավորվում են հանդուրժողականություն, համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Ուսուցումը դառնում է ոչ թե պարտականություն, այլ հաճելի զբաղմունք:

Ռազմավարական նշանակություն ունեցող այս տարածաշրջանում հատկապես կարևորվում է մայրենի լեզվի ճիշտ և խորքային ուսուցումը, որի էական բաժիններից է ընթերցանությունը և նրա դասավանդման մեթոդիկան:

Ընթերցանության հիմնական նպատակն է երեխաների մեջ կարդալու տեխնիկայի զարգացումը, աշխարհաճանաչողական և մտավոր ունակությունների ու հմտությունների ձեռքբերումը, բառապաշարի համակողմանի զարգացումը: Այս խնդիրներն իրականացվում են գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման միջոցով: Գեղարվեստական ստեղծագործության առանձին ժանր է պատմվածքը, որն իր ծավալով շատ փոքր է, քան վեպը, վիպակը, դեպքերի նկարագրությամբ՝ ավելի հակիրճ, գործող անձերի ընդգրկմամբ՝ սահմանափակ: Տարրական և միջին դասարանների մայրենիի դասագրքերում տրված են փոքրիկ պատմություններ, որոնք կյանքի տիպական օրինակներ են ներկայացնում՝ դրականն ընդօրինակելու և բացասականից խուսափելու համար, հնարավորություն են տալիս աշակերտների մեջ ազնվություն, հայրենասիրություն, քաջություն, անձնագոհություն և բարոյական այլ որակներ դաստիարակել: Այս տեսակետից շատ օգտակար են պատմվածքի գործողությունների պարզ, հստակ բնութագրումները, որոնք նպաստում են ոչ միայն բովանդակության ճիշտ ըմբռնմանը, այլև նրանից տրամաբանական եզրահանգումներ կատարելուն: Պատմվածքների շուրջ տարվող աշխատանքը ոչ միայն ճանաչողական, գեղարվեստական ճաշակի զարգացման ու լեզվի ուսուցման նպա-

տակ պետք է հետապնդի, այլն դաստիարակչական: Ընթերցվելիք պատմվածքի ունկնդրմանը հոգեբանորեն տրամադրելու, նրա թեմայի մեջ թափանցելու, հիմնական մտքի ընկալմանը հող նախապատրաստելու համար անհրաժեշտ է իրականացնել նախապատրաստական փոքրիկ գրույց: Այդ նախապատրաստումը կարող է կատարվել պատմվածքի ընդհանուր թեմայի շուրջ անցկացվող գրույցի, ուսուցչի խոսքի, աշակերտների ազատ պատմածի, գեղարվեստական նկարի, տեսաֆիլմի կամ համակարգչային դիտումների և նման այլ միջոցներով, որոնք օգնում են երեխային ընթերցվելիք նյութը ճիշտ հասկանալու և հուզական պահերը վերապրելու համար: Այսինքն՝ պատմվածքի դասավանդումը կամ առաջին ընթերցումը նախապատրաստելու ուղղությամբ կատարվող աշխատանքները կարող են իրականացվել տարբեր եղանակներով, սակայն դրանց ընդհանուր նպատակը նույնն է՝ երեխաներին մինչև բնագրի առաջին ընթերցումը մտցնել թեմայի ոլորտները, հոգեբանորեն նախապատրաստել ընթերցվելիքը ճիշտ և խորը յուրացնելու համար: Ինչպես բոլոր գեղարվեստական ստեղծագործությունները, այնպես էլ պատմվածքները սկզբից նեթ պետք է կարդալ ամբողջովին: Այն շատ կարևոր ու անհրաժեշտ նախապայման է ոչ միայն նյութի ամբողջականությունը պահպանելու, այլև երեխաների վրա նրա ունենալիք ազդեցությունն ուժեղացնելու առումով: Ժամանակակից մեթոդներով դասի պլանավորումն ապահովում է յուրաքանչյուր երեխայի մասնակցությունը դասին, նպաստում է սովորողների մտավոր աշխատունակությանը, ինքնուրույնության կայացմանը, զարգացնում է քննադատական մտածողությունը և ճանաչողական հետաքրքրությունները: **Խթանում, իմաստի ընկալում և կշռադատում** փուլերի հաջորդականության պահպանումն ամենին չի սահմանափակում դասավանդման մեթոդների ու հնարների ընտրության ազատությունը: Գ. Էդիլյանը գրում է. «Բազմազանությունը կազմում է դասավանդման հիմքը: Այսինքն՝ նյութի նպատակը և տեսակը որոշում են մեթոդը: Ուսուցիչը դառնում է ընտրող, բազմակողմանի մտածող, բովանդակային կարիքները ի նկատի առնող մի աշխատավոր: Նա պետք է ընտրի դասավանդելիք նյութը, ուսումնասիրի առանձնահատկությունները և տեսնի, թե այդ նյութը դասավանդման նպատակներից որի համար ամենից հարմարն է, բայց գործնականին անցնելուց առաջ պետք է քննի նաև այն

հարցը, թե այդ բոլորը որքան հարմար են այն դասարանի աշակերտներին, որոնց համար որոշված է մշակել այդ նյութը: Ահա այս հարցերը որոշելուց հետո ընտրում է համապատասխան մեթոդը և գործի անցնում»²:

Մեր գրականագիտությանն ու ժողովրդին հայտնի է Ս. Խանգաղյանի պատմվածքների ժողովածուն: Հեղինակը ստեղծագործություններում հարազատ է մնացել իր գեղարվեստական նախասիրություններին՝ ամեն ինչ ժողովրդի համար, ժողովրդի կյանքից: Նա չի շեղվել խոսքի բնականությունից, մարդկային հոգու ելևէջներից: Այդ է պատճառը, որ Խանգաղյանի պատմվածքները մեծ տպավորություն ու խոր ազդեցություն են թողնում ընթերցողի վրա: Պատմվածքներում կարմիր թելի նման ձգվում են հայրենի բնօրրանի հետ կապված մարդկանց անկեղծ ձգտումները, բնաշխարհին իր բանաստեղծական, կենսափիլիսոփայական նշանակությամբ, որը և դառնում է հայրենասիրության ու մարդկային արժանապատվության չափանիշ: Նա կարևորում էր ժողովրդական առողջ ու խոր արմատների պահպանման, հայրենի եզերքի շենացման խնդիրը, դրանք սերտորեն կապում, ինչու չէ, ժամանակակից գաղափարների ու ձգտումների հետ: Հեղինակն իր կերպարների ուժը որոնում էր բնօրրանի և նրա հետ կապված մարդու միջև եղած օրգանական կապի մեջ: Այն ստեղծագործողը, ով հոգեպես չի առնչվում այդ գեղագիտական իդեալին, իր ուրույն տեղը չի կարող գտնել ժողովրդի հոգու մեջ: Այս ճշմարիտ տեսակետից է հարցին մոտեցել հեղինակը «Մպիտակ գառը» պատմվածքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ փորձել ենք կրթության արդի պահանջներին համապատասխան ներկայացնել հիշյալ պատմվածքի ուսուցումը:

Խթանման փուլում գրատախտակին գրել դասի վերնագիրը և հետևյալ հենակետային բառակապակցությունները.

- | | |
|----------------|--------------------|
| -Նավասարդ ապեր | -պաշտոնավոր Արշակ |
| -միջօրեի տապ | -գոմի կտրին փլվել |
| -ուրախալի լուր | -երերալով քայլել |
| -առույզ քայլեր | -գլխին խփել |
| -գինեհոտ հող | -սրտամորմոք մայուն |

² Ա. Շավարշյան, Հայ մանկավարժներ, գ. 2, Ե., 1961, էջ 627:

Աշակերտներին հանձնարարել կատարել կանխագուշակություն՝ ըստ վերնագրի և արտահայտությունների:

Աշակերտներն ընթերցում են նախ լուռ, ապա՝ բարձրաձայն: Յուրաքանչյուր աշակերտ մտածում է, թե ինչ գործողություններ կարող են ծավալվել նշված արտահայտությունների շուրջ, այնուհետև ներկայացնում են իրենց տեսակետները:

Իմաստի ընկալման փուլում կիրառել «Ուղղորդված ընթերցանություն՝ կանգառներով» մեթոդը: Աշակերտներին նախապես հայտնել, որ պատմվածքի ընթերցումը կատարվելու է կանգառներով՝ հատված առ հատված:

Բնագիրը կարող ենք բաժանել երեք հատվածի: Յուրաքանչյուր հատված պետք է կարդալ երկու անգամ. առաջին անգամ լուռ են կարդում, իսկ երկրորդ անգամ՝ բարձրաձայն: Ընթերցումից առաջ տալ խթանող հարցեր, իսկ տվյալ հատվածի ընկալումից հետո՝ կշռադատող հարցեր:

Առաջին հատված.

Կարդալ և խորհել հետևյալ հարցի շուրջ.

• Ի՞նչ տրամադրություն և գույներ են տեսնում աշակերտները հատվածի ընթերցման ընթացքում:

Բարձրաձայն ընթերցումից հետո ուղղել հետևյալ հարցերը.

- Ո՞վ էր Նավասարդ ապերը:
- Ի՞նչ անողոք բախտ էր վիճակվել նրան:
- Ո՞վ էր Արշակը նրա համար:
- Ուրախալի լուրը լսելուց հետո ի՞նչ ապրումներ ունեցավ Նավասարդ ապերը, և ի՞նչ հիշողություններ արթնացան:

Պատասխանել կանխագուշակման աղյուսակի հարցերին.

- Ի՞նչ պատահեց:
- Ի՞նչ է պատահելու:
- Ինչո՞ւ են այդպես կարծում:

Աշակերտների ընտրած առավել հաջողված պատասխանները լրացնել պատին փակցված կանխագուշակման աղյուսակում և վերնագրել այդ հատվածը՝ **Նավասարդ ապոր երջանիկ ապրումները:**

Մինչ **երկրորդ հատվածի** ընթերցումն առաջարկել.

• Մտքում պատկերացնել տեսարանը: Կարդալիս նշել այն տեղը, որտեղ կզգան, որ ինչ-որ բան փոխվեց:

Բարձրաձայն ընթերցումից հետո տալ հետևյալ հարցերը:

- Ինչո՞ւ էր զարմացել Նավասարդ ապերը:
- Ինչո՞վ զբաղվեց տուն հասնելուն պես:
- Ինչպիսի՞ անհամբերությամբ էր սպասում պապը:
- Նավասարդ պապը ինչու՞ էր մտքում արդարացնում Արշակին:

- Ի՞նչ են մտածում երևույթի մասին:

Շարունակել լրացնել աղյուսակը և վերնագրել երկրորդ հատվածը՝ **Սպասում:**

Երրորդ հատվածն ընթերցելուց առաջ առաջարկել հետևյալ հարցը.

- Եթե իրենք լինեին Արշակի փոխարեն, ի՞նչ կանեին:

Բարձրաձայն ընթերցելուց հետո առաջարկել բացատրել պատմվածքի վերջին նախադասությունների իմաստը՝ «Ծերունին ձեռքերով խփեց գլխին ու փլվեց գոմի կտրին: Երկար ժամանակ ցնցվում էին նրա բարակ ուսերը: Նա հեկեկում էր:

«Քիչ հետո ճոճվող, բոլորովին ծերունական քայլերով նա իջնում էր դեպի այգիների ձորը: Քայլում էր երերալով, գլուխը կախ: Մեջքն ավելի կուգ էր երևում, իսկ աչքերը խոր էին ընկել»:

«Նրա հետևից գնում էր սպիտակ գառը ու երբեմն մայում արտամորմոք ձայնով.

-Մա...»³:

Հարցերի միջոցով վեր հանել պատմվածքի գաղափարը և վերնագրել՝ **Երախտամոռ:**

- Ի՞նչ էին մտածում ընթերցելիս:
- Արդյո՞ք պատմվածքն ավարտվեց այնպես, ինչպես ակնկալում էին:

- Ինչի՞ մասին այն ստիպեց մտածել:
- Ո՞րն է պատմվածքի ամենակարևոր ասելիքը:
- Որո՞նք են պատմվածքի լավ ու վատ կողմերը:

Կշռադասման փուլը անցկացնել վերլուծական մակարդակով՝ կիրառելով խմբային աշխատանք: Աշակերտներին բաժանել 4 աշխատանքային խմբերի և տալ հետևյալ առաջադրանքները.

1-ին խումբ. բնութագրել Նավասարդ ապոր հույզերը, ապրումները, սպասումները:

³ Ս. Խանգաղյան, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1983, էջ 82:

2-րդ խումբ. դատապարտել ու փնտվել Արշակի վերաբերմունքը:

3-րդ խումբ. փորձել արդարացնել Արշակին:

4-րդ խումբ. փոխել պատմվածքի դեպքերի ընթացքն այնպես, որ Նավասարդ ապերն իրեն երջանիկ զգար:

Աշակերտները խորհում են տրված հարցի շուրջ և ներկայացնում իրենց տեսակետը: Յուրաքանչյուր խմբի խոսնակ փաստարկներով ներկայացնում է իրենց կատարած աշխատանքը: Մնացած խմբերի ներկայացուցիչները կարող են հարցեր ուղղել խոսնակներին, նրանց կարծիքին հավանություն տալ կամ չհամաձայնել:

Խմբերի աշխատանքը քննարկելուց հետո կարող ենք կիրառել նաև «Տրամագիր» մեթոդը, որպեսզի աշակերտները վերջնականապես համոզվեն, որ Արշակին բացասական կերպարով ներկայացնելը ճիշտ էր:

Այս ստեղծագործության մեջ Նավասարդ ապոր վիշտը նեղ անձնական չէ: Հայրենի օջախի, հողի հետ անմիջական կապ չունեցող մարդը՝ Արշակը, կորցրել էր իր խիղճն ու ազնվությունը: Յուրաքանչյուր ոք, լինի պաշտոնյա, թե մեծահարուստ, ծնողի հանդեպ որդիական բարոյական պարտքի խնդիր ունի:

Պատմվածքի ուսումնասիրությունն ավարտվում է նրա ամփոփումով, որի ընթացքում շոշափվում են նրա ճանաչողական կողմը, դաստիարակչական կամ բարոյախրատական նշանակությունը և լեզվական արժեքը:

Որպեսզի դասարանում տիրի ստեղծագործական մթնոլորտ, և աշակերտներն անցնեն նոր գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման ուղին, անհրաժեշտ է ապահովել.

- գեղարվեստական կերպարների հոգեվիճակի, արարքների որդապատճառների զգացմունքային վերապրում
- զգացմունքների արտահայտման հնարավորություն
- յուրաքանչյուր երեխայի կարծիքի վերաբերյալ հարգանք և հանդուժողականություն
- որևէ հարցում անհամաձայնություն արտահայտելու բարեկիրթ ձևերի դրսևորում
- ուսուցչի կարծիքի պարտադրման կամ պատրաստի դատողությունների բացառում:

Հարկ ենք համարում նշել, որ այս և նմանօրինակ ստեղծագործությունների ուսուցումը կարևոր դեր ունի սովորողների հոգեկերտվածքի, հայրենաճանաչողության, բա բոյական դաստիարակության և մարդկային արժանիքների ձևավորման գործում:

Сусанна Григорян
Горис

Изучение рассказа „Белый ягненок ”

Резюме

В статье представлено изучение рассказа с современными методами. Рассказы для детей-это типичные примеры из жизни, с помощью которых выявляются сложные и разносторонние человеческие отношения. А современные методы обучения способствуют самостоятельному мышлению, анализу, дискутированию для формирования умений.

**Susanna Grigoryan
Goris**

The study of the story “White Lamb”

Summary

The teaching of the story with modern methods has been reflected in the article. Stories are typical examples for the children, where complex and comprehensive interrelations of humanity are revealed. And modern methods of teaching assist to the formation of the abilities of thinking independently, analyzing, contradistinguishing and debating.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
**ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

ՍՅՈՒՆԻՔ

2016, ԹԻՎ 1

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ГОРИСА
ЦЕНТР АРМЯНСКИХ ИССЛЕДОВАНИЙ СЮНИКА
**СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ АРМЯНОВЕДЕНИЕ
СЮНИК**

2016, N 1

THE MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF RA GORIS
STATE UNIVERSTIY SYUNIK CENTRE OF ARMENIAN STUDIES
**COMPILATION OF SCIENTIFIC ARTICLES ARMENIAN
STUDIES
SYUNIK
2016, N 1**

Գլխավոր խմբագիր՝ Մ.Ս. Քումունց

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա.Ա. Ղուկասյան

Խմբագրակազմ՝

Լ. Ներսիսյան, Ա. Գրիգորյան, Հ. Քումունց, Ի. Մարգարյան

Կազմը և համակարգչային ձևավորումը՝ Մ. Քումունցի

Տպագրված է «Նոր Տպագրիչ» ՍՊԸ, 2016թ.

Թուղթ՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ:

Չափսը՝ 60X84, 1/16, 9 մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ: